

## **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՇԻՐԱԿ ԱՐՏԵՄԻ ԹՈՐՈՍՅԱՆ**

**ԾՈՎԱՅՅԻՆ ԵԼՔԻ ՀԻՄՆԱՅՐՑԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
1919-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2017**

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Թ 822

*Տղագրության է երաշխավորել  
ԵՊՀ միջազգային հաւաքերությունների  
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., **Գ. Յ. Պետրոսյան**  
Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., արտակարգ և  
լիազոր դեսպան **Վ. Ա. Բայրուրդյան**  
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., **Է. Գ. Մինասյան**  
պատմ. գիտ. դոկտ., դոց. **Կ. Յ. Խաչատրյան**

### **ՇԻՐԱԿ ԱՐՏԵՄԻ ԹՈՐՈՍՅԱՆ**

**Թ 822 Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թվականներին/ Ը. Թորոսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 234 էջ:**

Գրքում համակողմանիորեն ներկայացվում է Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքական գերակայություններից մեկի՝ ծովային ելքի հիմնահարցը: Նշված խնդրի հետ կապված՝ գիտականորեն լուսաբանվում են Վրաստանի, Շունաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՍ-ի, Ռուսաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի հետ առնչությունները, քննվում և վեր են հանվում Կիլիկիայով, Տրապիզոնով, Լազիստանով կամ Բաթումով ծովային ելք ձեռք բերելու ՀՀ կառավարության քաղաքականությունը և դրա ձախողման պատճառները:

Նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, դիվանագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2163-9

© ԵՊՀ հրատ., 2017

© Ը. Ա. Թորոսյան, 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱՊԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԻՏԱԿԱՆ	
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ .....	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	8
ԳԼՈՒԽ I	
ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔԻ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԱԶԻՍՍԱՆԻ ԽՆԴԻՐԸ	
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ .....	21
1.1. Ծովային ելքի հարցը որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական առաջնահերթություն .....	21
1.2. Կիլիկիան որպես Միջերկրական ծով դուրս գալու հնարավորություն և Ֆրանսիայի դիրքորոշումը .....	26
1.3. Տրավիզոնը որպես Սև ծով ելքի հնարավորություն և Պոնտոսի հույների դիրքորոշումը.....	38
1.4. Լազիստանով ծովային ելք տրամադրելու հարցի վերաբերյալ հայ-վրացական տարակարծությունները: Դաշնակիցների դիրքորոշումը.....	49
ԳԼՈՒԽ II	
ԲԱԹՈՒՄԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	
ԾՈՎԱՅԻՆ ԵԼՔԻ ՀԱՐՑՈՒՄ .....	76
2.1 Տերությունների քաղաքականությունը Բաթումի խնդրում (1919 թ. հունվար-1920 թ. փետրվար).....	76
2.2. Բաթումի խնդիրը Հայաստանի սահմանները որոշող միջազգային հանձնաժողովում (1920 թ. փետրվար-մարտ) .....	93
2.3. Բաթումի խնդիրը Սամ Ունյոյի խորհրդաժողովում (1920 թ. ապրիլ).....	103
2.4. 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական դաշնագիրը և Բաթումի հանձնումը Վրաստանին.....	123
ԳԼՈՒԽ III	
ԱՐԴԱՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ	
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ .....	144
3.1. Կարսի մարզի միացումը Հայաստանին և Վրաստանի դիրքորոշումը (1919 թ. հունվար-ապրիլ).....	144

3.2. Արդահանի հարցը հայ-վրացական հարաբերություններում և խնդրի ժամանակավոր լուծումը (1919 թ. մայիս-դեկտեմբեր) .....	163
3.3. Իրադարձությունների հետագա զարգացումներն Արդահանի հարցում 1920 թ. հունվար-օգոստոս ամիսներին ..	175
3.4. Արդահանի խնդիրը թուրք-հայկական պատերազմի ընթացքում.....	191
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>208</b>
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	215
Անձնանունների և տեղանունների ցանկ.....	226

## **ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի վերանկախացումից հետո հայագիտական հետազոտությունների ճանաչողական արժեքն էլ ավելի աճեց: Պատմագիտության, բանասիրության, քաղաքագիտության, արվեստաբանության և այլ ոլորտներում իրականացված բազմաթիվ ուսումնասիրություններ ձեռք բերեցին կիրառական նշանակություն: Հայագիտությունն իրավամբ վերածվեց ազգային անվտանգության խնդիրներ լուծող, սերունդներին հայրենասիրական ոգով դաստիարակող բնագավառի:

ԱՅսկախ Հայաստանի կայացման ու զարգացման գործում հույժ կարևոր էր երկրի դիվանագիտական ծառայությունների ստեղծման խնդիրը: Հասկանալի է, որ համապատասխան դպրոցի բացակայության պայմաններում կադրերի հարցում ընտրությունն ականայից առավելապես կանգ էր առնելու պատմաբանների, արևելագետների, բարգմանիչ-բանասերների վրա, խնդիր, որը տարիների ընթացքում հիմնականում լուծվեց: Բայց խնդիրը վերաբերում էր ոչ միայն կադրեր պատրաստելուն, այլ նաև միջազգային հարաբերություններին, դիվանագիտության պատմության հիմնահարցերի գիտական հետազոտությանը: Այս ոլորտում ևս զգալի աշխատանք կատարվեց: Մասնավորապես ուսումնասիրվեց 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության փորձը:

Այդուհանդերձ, արդի փուլում՝ տարածաշրջանային բարդ ու հակասական գործընթացների հոլովույթում Հայաստանի առջև կանգնած ինչպես մարտավարական, այնպես էլ ռազմավարական խնդիրների վերլուծության ոլորտում ծանրակշիռ աշխատանքներ գրեթե չստեղծվեցին: Հատկապես անուշադրության մատնվեց այնպիսի մի կարևոր ոլորտ, ինչպիսին մեր տարածաշրջանում գոյություն ունեցող ստատուս-քվոյի փոփոխությունն էր՝ պայմանավորված Արցախի ազատագրման ու հայկական երկրորդ պետության ստեղծման հետ, և արդի փուլում՝ սիրիական ճգնաժամով թելադրված ռուս-բուլղարական հարաբերությունների ծայրահեղ սրումը, Թուրքիայի հանրապետության փլուզման հավանականության կտրուկ ա-

ճը, քրդական հարցի օրեցօր միջազգայնացումն ու Հայկական հարցի՝ Արևմտյան Հայաստանի խնդրի լուծման նոր հեռանկարի բացումը:

Վերոհիշյալ խնդրների մեջ հայ պատմագիտության ու դիվանագիտության խնդրների շարքում գրեթե անտեսվեց նաև Առաջին աշխարհամարտից հետո նորանկախ Հայաստանի առաջին հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող ծովային ելքի հարցը: Նենց այդ բացը լրացնելու մղումով պատմաբան-միջազգայնագետ Շիրակ Թորոսյանը ձեռնամուխ եղավ «Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թթ.» հույժ կարևոր թեմայի ուսումնասիրությանը:

Պատերազմում հաղթանակած Անտանտի երկրների ղեկավարները, ճիշտ գնահատելով իրենց դաշնակից Հայաստանի անկլավային՝ ներփակ վիճակի պատճառով ստեղծված անհեռանկարային վիճակը, ի վերջո համաձայնեցին Սկրի դաշնագրի մեջ ներառել Տրավիզոնի նահանգը հայկական կողմին հանձնելու մասին հոդվածը: Բայց այդ խնդրը գոնե փաստաթղթի մակարդակով ծևակերպում ստացավ դիվանագիտական լուրջ ու դժվարին աշխատանքի շնորհիվ:

Սույն գրքի հեղինակ Շ. Թորոսյանը հարուստ փաստական նյութի վերլուծության հիման վրա քննության է ենթարկել 1918-1920 թթ. ընթացքում տարբեր միջազգային խորհրդաժողովներում, Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության, Հունաստանի, մեծ տերությունների հետ ծանր բանակցությունների արդյունքում, Հայաստանին դեպի Սև ծով ելք տրամադրելու դիվանագիտական պայքարը:

Աշխատության առաջին մասում, որը կրում է «Դեպի ծով ելքի հարցը և Լազիստանի խնդրը հայ-Վրացական հարաբերություններում» խորագիրը, ծովային ելքի հարցը դիտարկվում է որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերխնդրներից մեկը, այն ներկայացվում հայ-Վրացական հարաբերությունների, երկկողմ տարածքային վեճերի ու այդ հարցում մեծ տերությունների դիրքորոշման համատեքստում: Անդրադարձ է կատարվում նաև Կիլիկիայով դեպի Միջերկրական ծով դուրս գալու խնդրին, պարզաբանվում են դրա ծախողման արտաքին պատճառները:

Յեղինակը հատուկ քննության նյութ է դարձնում Բարումի մարդու, համանուն նավահանգստի, Արդահանի գավառի պատկանելիության շուրջ ընթացող հայ-վրացական պայքարը: Նա իրավացիորեն նշում է, որ այդ հարցերում հայկական դիվանագիտության անհաջողությունների պատճառները պետք է փնտրել ինչպես «դաշնակից» տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի վարած երկինի քաղաքականության, Յայաստանի նկատմամբ Վրաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի կողտ ու թշնամական, Խորհրդային Ռուսաստանի՝ անբարյացական վերաբերնութիւնի, այնպես էլ ՀՀ իշխանությունների ոչ իրատեսական քաղաքականության մեջ:

Շիրակ Արտեմի Թորոսյանի «Ծովային Ելքի հիմնահարցը Յայաստանի Յանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թթ.» արժեքավոր աշխատությունը ծանրակշիռ խոսք է հայ դիվանագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում: Այն նոր լույս է սփռում հայ-վրացական, հայ-հունական ու հայ-թուրքական հարաբերությունների հիմնահարցի քազմաթիվ կողմերի վրա: Սույն մենագրությունը, որ արդի փուլում ունի գիտածանաչողական ու քաղաքական մեծ կարևորություն, ժամանակակից հայ դիվանագետների ու քաղաքագետների համար հրաշալի ուղեցույց է ներկայիս Յայաստանի Յանրապետության առջև ծառացած խնդիրների, մասնավորապես ծովային Ելքի կենսական հարցը լուծելու ճանապարհին:

Պատմական զարգացումների ու օրինաչափությունների վերաբերյալ պատմաբաններիս իմացությունը հուշում է, որ Միացյալ Յայաստանի, նրա կենսագոյության ողնաշարի կարևոր քաղադրանաս կազմող ծովային դարպասի հեռանկարը սարերի հետևում չէ: Կայսրություններն ի վերջո դատապարտված են, իսկ պատմական ճշմարտության հաղթանակն անբեկանելի է: Ընթերցողը դրանում կիանողվի՝ նաև սույն աշխատության հետ ծանոթանալով, և համոզված ենք՝ այդուհետ կլծվի համագգային այդ գաղափարի կենսագործմանը:

**Ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆ. Աշոտ Մելքոնյան**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի առաջին հանրապետության միջազգային դրության և արտաքին քաղաքականության խնդիրները գրեթե անսպառ թենա են ուսումնասիրողների համար: Դրանցից են Հայաստանի ծովային ելքի և դրա հետ սերտորեն առնչվող մերձականության տարածքների հիմնախնդիրները, որոնք դասվում են Հայաստանի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրների թվում: Այս հիմնահարցերի ուսումնասիրությունը շատ հետաքրքիր և ուշագրավ կողմեր ունի:

Ծով ունենալը յուրաքանչյուր պետության ընձեռում է ռազմավարական բազմաթիվ առավելություններ, որոնց նշանակությունն անգնահատելի է, սակայն գլխավոր առավելությունը բերնափոխադրումներն են, որոնք բոլոր ժամանակներում և նաև այսօր ամենարդյունավետն ու ամենաէժանն են այս ոլորտում, հետևաբար մեծ խթան են դառնում պետության ընդհանուր տնտեսական աճի համար: Այդ է պատճառը, որ հնագույն ժամանակներից մինչև օրս պետությունները կենաց ու մահու պայքար են մղել ծովային ելք ունենալու համար: Հայ ժողովուրդն էլ իր հերթին պետականության վերականգնման համար մղած դարավոր պայքարի համատեքստում մշտապես կարևորել է ծովային ելքի խնդիրը: Անգամ 1878 թ. Պոլսի Հայոց ազգային ժողովի կողմից Բեռլինի վեհաժողովին ներկայացված Հայաստանի ինքնավարության ծրագրում ինքնավարության սահմանների մեջ էր ներառված նաև Ռիզեի նավահանգիստը, իսկ 1914 թ. հունվարի 26-ի հայկական բարենորոգումների մասին ուսությօքական համաձայնագրում Տրապիզոնը ներառվում էր հայկական վարչական միավորի մեջ:

Ծովային ելքի հարցի լուծումը, հետևաբար, Հայաստանի նորանկախ Հանրապետության հետագա գոյության և զարգացման հեռանկարի տեսանկյունից դիտվում էր որպես արտաքին քաղաքականության հիմնական առաջնահերթություններից մեկը: Այդ պատճառով էր, որ Հ. Քաջազնունու կառավարությունը 1918 թ. դեկտեմբերին Ա. Ահարոնյանի գլխավորությամբ Փարիզ մեկնող ՀՀ պատվի-

րակությանը տված ցուցումներում սկզբունքային կարևորություն էր տալիս դեպի ծով Ելքի Խնդրին, նույնիսկ ավելի մեծ կարևորություն, քան տարածքային հարցն էր: Իսկ Պողոս Նուբարի գլխավորությանք Եվրոպայում գործող Ազգային պատվիրակությունը, ավելի ծավալուն տարածքային պահանջներ առաջ քաշելով (Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգները և Կիլիկիան), Խնդրի էր դնում ծովային Ելք ապահովել թե՛ Սև, և թե՛ Միջերկրական ծովերով: Ի վերջո, հայկական գույգ պատվիրակությունները 1919 թ. փետրվարին Փարիզի Վեհաժողովին հաճատեղ ներկայացրած «Հայկական պահանջների հուշագրում» գետեղեցին Ազգային պատվիրակության ձևակերպած պահանջները: Կիլիկիայի պահանջը մեր պատվիրակները գլխավորապես հիմնավորում էին Միջերկրական ծով դուրս գալու անհրաժեշտության՝ իիմք ընդունելով 1916 թ. Պողոս Նուբարի և Սայքսի ու Պիկոյի միջև կնքված համաձայնագիրը: Սակայն, ծովային Ելքով հիմնավորված հայկական տարածքային պահանջները բախվեցին բազմաթիվ խոչընդոտների: Դրանք պայմանավորված էին հիմնականում անգլիական, ֆրանսիական, թուրքական, հունական, ռուսական և Վրացական հավակնություններով, ինչպես նաև Անտանտի տերությունների միջև եղած հակասություններով:

Նախևառաջ Ֆրանսիան կտրուկ դեմ արտահայտվեց Կիլիկիայի նկատմամբ հայկական հավակնություններին, քանի որ դեռևս 1916 թ. գարնանը կնքված Սայքս-Պիկոյի պայմանագրով այն մտնելու էր Ֆրանսիայի տիրույթների մեջ: Ելնելով սրանից՝ հայ պատվիրակներն ստիպված էին բավարարվել միայն դեպի Սև ծով Ելքի պահանջով: Սկզբնապես այդ Ելքը դիտվում էր Տրապիզոնի նավահանգիստը, ինչին կողմ էր Անգլիան: Սակայն Ֆրանսիան, հակառակելով Անգլիային և տուրք տալով քեմալականներին անուղղակիրեն աջակցելու իր որդեգրած քաղաքականությանը, մերժեց Տրապիզոնը Հայաստանին հանձնելու ծրագիրը: Այդ ծրագրի դեմ ըմբռութացան նաև Պոնտոսի հույնները, որոնք Փարիզ գործուղած պատվիրակության և Եվրոպայում ապրող պոնտահույնների ստեղծած «Պոնտոս» կազմակերպության ջանքերով ձգտում էին Պոնտոսի հունական անկախ պետություն ստեղծել կամ համադաշնություն կազմել Հայաստանի հետ: Այս հարցում հույններին աջակցում էին Վրացիները,

որոնք, բնականաբար, չեին ցանկանում գրկվել Հայաստանի տարանցիկ փոխադրումների մեջաշնորհից: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ սկսվեց քննարկվել նաև Լազիստանով (Ռիզեի կամ Աթինեի նավահանգիստ) Հայաստանին ծովային ելք տրամադրելու տարրերակը: Այս հարցում իիմնական արգելք հանդիսացան Անգլիան և Վրաստանը: Անգլիացիները ծրագրել էին Աջարիայում խամաճիկ պետություն ստեղծել և Լազիստանը կցել դրան: Իսկ Վրաստանն իր հերթին կատաղի պայքար սկսեց Լազիստանի համար: Հայ-Վրացական պայքարը Լազիստանի համար գլխավորապես ընթանում էր Եվրոպայում՝ Փարիզի վեհաժողովի և այլ խորհրդաժողովների շրջանակներում, իսկ հականարտ կողմերը Եվրոպայում գործող հայկական և վրացական պատվիրակություններն էին: Լազիստանի շուրջ կրքերն ավելի բորբոքվեցին Հայաստանի սահմանները որոշող միջազգային հանձնաժողովի նիստերում, որոնք իրավիրվել էին Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծ կազմելու նպատակով 1920 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Լոնդոնում ընթացող Անտանտի գերագույն խորհրդի խորհրդաժողովի շրջանակներում: Այստեղ հայ պատվիրակները Լազիստանի նկատմամբ հավակնությունները հիմնավորում էին միայն ծովային ելք ունենալու անհրաժեշտությամբ՝ առաջնորդվելով Անտանտի տերությունների այն մոտեցմամբ, որ յուրաքանչյուր նորաստեղծ պետություն պետք է սեփական ծովային ելք ունենար: Իսկ վրաց պատվիրակները ջանադրաբար մերժում էին հայերի հավակնությունները՝ առաջ քաշելով լազերի վրացական ծագման հանգամանքը և նրանց ինքնորոշման իրավունքը, ինչի մասին, ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Ահարոնյանը, նրանք մոռանում էին Ախալքալաքը և Լոռին պահանջելիս: Այս խորհրդաժողովում որոշում չի կայացվում վրացիների ընդդիմության և անգլո-ֆրանսիական հակասությունների պատճառով: Որոշում չի կայացվում նաև 1920 թ. ապրիլին տեղի ունեցած Անտանտի գերագույն խորհրդի Սան Ռեմոյի խորհրդաժողովում: Անգլիայի արտգործնախարար Լորդ Քերգոնի քարտուղար Ռոբերտ Վանսիստարտի՝ հայերին և վրացիներին ընդիանուր հայտարարի բերելու ջանքերն ապարդյուն են անցնում:

Որպես Հայաստանի ծովային ելքի հիմնական տարբերակ՝ դիտվում էր նաև Բաթումի նավահանգիստը: Այն, ինչպես Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում, այնպես էլ այսօր մնում է Հայաստանի գրեթե միակ ծովային ելքը: Անտանտի տերությունները ձգտում էին Բաթումը հռչակել ազատ նավահանգիստ և Բաթում-Թիֆլիս-Բաքու ու Բաթում-Կարս-Ալեքսանդրապոլ-Զուլֆա-Թավրիզ ուղղություններով սպասարկել իրենց շահերը Սերծավոր Կրկելքում:

Հայ պատվիրակները պահանջում էին հայ-վրացական սահմանն անցկացնել ճորոխի հովտով և գետի ձախակինյակով երկաթգիծ կառուցել մինչև Բաթում այնտեղ սեփական նավահանգիստ ունենալու պայմանով: Վրաց պատվիրակները կտրուկ կերպով մերժեցին այս պահանջները: Խնդրին լայնորեն արձագանքեցին հայկական ու վրացական մամուլը և հասարակական-քաղաքական շրջանակները: Սան Ռենոյի խորհրդաժողովում հայ պատվիրակները Վանսիտտարտի խորհրդով հրաժարվեցին Բաթումի մարզի մի մասի նկատմամբ պահանջից և պնդեցին միայն Կարս-Բաթում սեփական երկարուղի կառուցելու պահանջը: Սակայն վրաց պատվիրակությունը մերժեց նաև խիստ չափավոր այս պահանջը:

Բաթումի հարցում վրացիներին աջակցեցին բոլշևիկները: 1920 թ. մայիսին կնքված ռուս-վրացական համաձայնագրով՝ նրանք Բաթումի մարզը ճանաչեցին Վրաստանի անբաժանելի մաս:

Ստեղծված իրավիճակի, վրաց կառավարության համառ պնդումների և բրիտանական կառավարությունում տիրապետող տրամադրությունների արդյունքում 1920 թ. հուլիսին անգլիացիները Բաթումը հանձնեցին Վրաստանին: Սակայն Վրաստանի մենշևիկյան կառավարությունը բարեխնդորեն չկատարեց Հայաստանին ազատ տարանցիկ փոխադրումների հնարավորություն տալու խոստումները:

1921 թ. սկզբին քեմալականները ոտնձգություններ կատարեցին Բաթումի մարզի նկատմամբ, բայց խորհրդային Ռուսաստանը սաստեց նրանց, և մարտին կնքված Մոսկվայի պայմանագրով Բաթումի մարզը ինքնավար կարգավիճակով արդեն խորհրդայնացված Վրաստանի մաս կազմեց:

Երկու հարևան երկրների համար շատ ցավալի դրսևորումներ ունեցավ Արդահանի համար պայքարը: Քանի որ արդեն Սան Ռենոյի խորհրդաժողովում լրջորեն քննարկվում էր Երգրումը Թուրքիային թողնելու հարցը, Արդահանի դերը Հայաստանի համար էլ ավելի կարևորվեց, քանզի այն հանդիսանում էր Հայաստանի ծովային ելքի միակ դարպասը, դեպի Սև ծով ճանապարհի նախադուռը: Փարիզի վեհաժողովում վրաց պատվիրակությունը պահանջել էր նաև Օլթի գավառը, բայց երբ վեհաժողովում խոսք գնաց Երգրումը Հայաստանին հանձնելու նախն, վրացիները, հենվելով «պատմական իրավունքի» վրա, հավակնություններ ցուցաբերեցին նաև Երգրումի և Տրապիզոնի նահանգների՝ Օլթին հարող մի քանի գավառների նկատմամբ՝ նպատակ ունենալով Հայաստանին ամբողջությանը զրկել ծովային ելքի հնարավորությունից:

Արդահանի շուրջ հայ-վրացական տարակարծություններն ավելի սրվեցին 1919 թ. ապրիլին, երբ Կարսի մարզն անցավ Հայաստանին: Անգլիական իրամանատարության միջանտությանը Արդահանի գավառը Կուր գետով բաժանվեց Հայաստանի և Վրաստանի միջև. հյուսիսային հատվածը՝ Վրաստանին, հարավայինը՝ Հայաստանին: Սակայն հարցը դրանով չլուծվեց: Մինչև աշուն կողմերի միջև շարունակվում էին վեճերը վրացական կողմի ոտնձգությունների պատճառով: Վրացական կառավարությունն Արդահանի հայկական հատվածի նկատմամբ նոր թափով հավակնություններ դրսևորեց 1920 թ. սկզբին: Խախտելով պայմանավորվածությունը՝ վրաց իրամանատարությունը զորք էր մտցնում զավարի հայկական հատվածը և էմիսարների միջոցով տեղի մահմեդականներին տրամադրում Հայաստանի կառավարության դեմ: Ապրիլին, գրավելով Արտանուջը, վրացական զորքերը սկսեցին սպառնալ նաև Օլթին, որի նկատմամբ ավելի ազդեսիվ տրամադրվեցին հունիսին, երբ հայկական զորքերը թուրքերից ազատագրեցին Օլթի գավառի մեծ մասը: Ամռանն ընթացող հայ-վրացական միջկառավարական բանակցություններում վրացական կողմը պաշտոնապես պահանջ ներկայացրեց Արդահանի և Օլթի նկատմամբ:

1920 թ. թուրք-հայկական պատերազմը սկսվելուց փոքր-ինչ հետո վրացիները զորք մտցրին Արդահան և Օլթի՝ փաստի առաջ

կանգնեցնելով Հայաստանին: Ըստ էության, դա արվեց նախապես ձեռք բերված թուրք-վրացական համաձայնության արդյունքում: Բայց քենալականները, հաղթելով Հայաստանին, 1921 թ. փետրվարին գրավեցին նաև Արդահանը: Վրաց մենշևիկները մնացին հուսախար վիճակում:

Ի դեպ, նշենք, որ Աղրբեջանն իր հերթին նպաստում էր հայ-վրացական հարաբերությունների սրմանը. թե՛ կառավարությունը, և թե՛ փարիզյան պատվիրակությունը բացեիրաց աջակցում էին Վրաստանին:

ԱՄՆ-ը ևս շահագրգորված էր Հայաստանի ծովային ելքով: Հայաստանի մղումներով հայտնի ժողովրդավար նախագահ Վուդրո Վիլսոնը դեմ չէր Հայաստանի մանդատը ստանձնելուն, սակայն հանրապետական մեծանասնությանը սենատը, իհմք ընդունելով ԱՄՆ-ի ավանդական մեկուսացման քաղաքականությունը, 1920 թ. հունիսին մերժեց այն, չնայած նրան, որ այդ մերժման իհմքերը բոլորովին այլ էին:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում երկրի դեկավարմերը պայքարել են ծովային ելք ձեռք բերելու համար: Այսօր ևս Հայաստանի համար խիստ արդիական է այս խնդիրը: Այժմ էլ մեր փաստացի միակ ելքը վրացական տարանցմանը Բաթումի նավահանգիստն է, քանի որ Թուրքիայի սահմանը փակ է, իսկ Պարսից ծոցի նավահանգիստները հեռավորության և բարդ ծանապարհային պայմանների պատճառով լուրջ կիրառական նշանակություն երրեք չեն ունեցել: Մենք Երախտապարտ ենք Վրաստանին՝ արտաքին աշխարհի հետ մեր կապն ապահովելու համար, սակայն նրա գերիշխող դիրքն այս ուղրուում միշտ էլ իր բացասական հետևանքներն է ունեցել: Այդ էր պատճառը, որ Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունն ու Եվոպայում գործող հայ պատվիրակները, պայքարելով Բաթումով ազատ ելքի համար, միաժամանակ վնտրում էին այլնտրանքային ուղիներ (Կիլիկիա, Տրապիզոն, Լազիստան), քանի որ գիտակցում էին Աջարիայի նկատմանը Վրաստանի որոշակի պատճական և ժողովրդագրական իրավունքները:

Այսօր էլ այլընտրանքային ծովային ելքը Հայաստանի համար շարունակում է առաջնային մնալ: Այդ ելքը կարող է լինել Տրապիզո-

նի կամ մեկ այլ թուրքական նավահանգիստ, սակայն արցախյան հակամարտությամբ պայմանավորված Թուրքիայի նախապայման-ների քաղաքականության հետևանքով թուրք-հայկական սահմանը դեռևս շարունակվում է փակ մնալ: Ուստի Հայաստանն ավելի արմատական քայլեր պետք է ծեռնարկի: Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցի այս խորհրդանշական ժամանակաշրջանը պետք է դաշնա համայն հայության և առաջադեմ մարդկության ջանքերի միավորնան մի սկիզբ-հանգրվաճ՝ ցեղասպանության ճանաչման և արդար հատուցման հասնելու համար, որի դրսնորումներից մեկը, անշուշտ, պետք է լինի Թուրքիայի տարածքով ազատ ծովային ելքի հնարավորությունը:

Թենայի ուսումնասիրության նպատակը Հայաստանի առաջին հանրապետության պատմության չիետազոտված հիմնահարցերից մեկի լուսաբանմամբ պատմության որոշակի բացը լրացնելն է, այսինքն՝ Հայաստանի առաջին հանրապետության ծովային ելքի հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրումը, որն անմիջականորեն առնչվում է տարածաշրջանում ծավալվող միջազգային հարաբերությունների քարդ ու խճողված խնդիրներին: Հետազոտության հիմնական խնդիրներն են ուսումնասիրել.

1. ծովային ելքի հարցը որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերխնդիրներից մեկը,
2. Անտանտի տերությունների և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը Հայաստանի ծովային ելքի հարցում,
3. Կիլիկիայով դեպի Միջերկրական ծով ելքի հիմնահարցը և դրա ձախողման պատճառները,
4. Տրապիզոնով դեպի Սև ծով ելքի հիմնախնդիրը հայ-հունական հարաբերություններում,
5. Լազիստանով ծովային ելք ծեռք բերելու հիմնահարցը հայ-Վրացական հարաբերություններում,
6. Բարումով ծովային ելք ուղենալու խնդիրը հայ-Վրացական հարաբերություններում,
7. Արդահանը՝ որպես մերձսևածովյան տարածքների նախադուռ, և վերջինիս պատկանելիության շուրջ հայ-Վրացական առճակատումը:

Ուսումնասիրության գիտական նորույթն այն է, որ Հայաստանի ծովային ելքի հիմնահարցն առաջին անգամ է հետազոտվում հայ պատմագիտության մեջ: Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտության պատմության այս կարևոր բացը լրացնելուն է միտված սույն աշխատությունը:

Նշշտ է, խորհրդային գաղափարայնացված պատմագրությանը հնարավորություն չեր տրվում նման թեմայով անաչառ հետազոտություն կատարելու, սակայն Սփյուռքում ևս այս հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրություններ գրեթե չեն կատարվել: Սփյուռքի և հետխորհրդային պատմագրության մեջ հակիրճ և հպանցիկ անդրադարձ կա միայն Բարումի Վերաբերյալ Փարիզի վեհաժողովի շրջանակներում տեղ գտած հայ-Վրացական տարակարծությունների, թուրք-հայկական պատերազմի սկզբում Վրաստանի կողմից Արդահան զորք մտցնելու և թռուցիկ կերպով Հայաստանի ծովային ելքի հարցում Անտանտի տերությունների դիրքորոշումների մասին:

Աշխատությունն իր մեջ ընդգրկում է խնդրին առնչվող հիմնահարցերի գրեթե ողջ համախումբը, ինչի արդյունքում ստեղծվել է մի ամբողջական ու համակողմանի ուսումնասիրություն:

Աշխատությունն ունի նաև գործնական և կիրառական նշանակություն: Նրանում կատարված գիտական եզրահանգումները կարող են օգտակար լինել մեր նորանկախ հանրապետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության իրականացման գործում, քանի որ Հայաստանի առաջին և երրորդ Հանրապետություններն ընդհանուր շատ գծեր ունեն: Ուստի, դժվարին իրավիճակներում որոշումներ կայացնելիս, հանրապետության արտաքին քաղաքականության պատասխանատունները կարող են հաշվի առնել խնդրո առարկայի վերաբերյալ Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական փորձն ու բացբողումները:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է մոտ երկու տարի՝ 1919 թ. հունվարից մինչև 1920 թ. դեկտեմբեր, այսինքն՝ անգլիացիների կողմից Կարսի մարզը Հայաստանին հանձնելու գործընթացի և Փարիզում հայկական գույգ պատվիրակությունների գործունեության սկզբնավորումից մինչև թուրք-հայ-

կական պատերազմի ավարտը, որի ընթացքում Վրաստանը գործ մտցրեց Արդահան՝ ավելի սրբելով հայ-վրացական հարաբերությունները: Սակայն ուսումնասիրվող հիմնախնդիրների սկզբնավորման պատմաքաղաքական ակունքների և հետագա իրադարձությունների զարգացման մասին ավելի հստակ և ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ նաև այլ փաստերի և իրադարձությունների՝ ընդլայնելով թենայի ինչպես ժամանակագրական, այնպես էլ ուսումնասիրվող հիմնահարցերի շրջանակը:

Աշխատությունը շարադրելիս աշխատել ենք գերծ մնալ գաղափարաքաղաքական կապանքներից ու ազդեցություններից: Յիմք ենք ընդունել պատմական ճշմարտությունը, օբյեկտիվությունը և անաշառությունը: Զգտել ենք լինել անկողմնակալ: Մեր կողմից կիրառվել են սկզբնաղբյուրների ու այլ նյութերի պատմաքննական, պատմահամեմատական և վերլուծական մեթոդները:

Թենայի ուսումնասիրության համար օգտագործվել են մեծ թվով նյութեր, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խնդի: Առաջինն արխիվային սկզբնաղբյուրներն են՝ փաստաթղթեր, վավերագրեր և այլն, որոնց զգալի մասը շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Դրանք մեր կողմից հայտնաբերվել են ՀՀ ազգային արխիվի (ՀԱԱ) և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) տարրեր ֆոնդերում<sup>1</sup>: Այդ ֆոնդերից առանձնապես կարևորվում են ֆոնդ 200-ը (ՀՀ արտաքին գործերի նախարարություն) և ֆոնդ 276-ը (այժմ՝ ֆ. 275-Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն): Դայկական արխիվներում պահվող մեծաքանակ նյութերը էապես նպաստել են խնդրո առարկայի բազմաշերտ և համակողմանի ուսումնասիրության գործում: Սակայն, երբեմն հանդիպում են այնպիսի արխիվային նյութեր, որոնք, հանդիսանալով ժամանակի գործիքների սուբյեկտիվության կնիքը կրող փաստաթղթեր, ստվեր են նետում պատմության անաշառության վրա: Ի դեպ, նման միտում երբեմն նկատվում է նաև վերջիններիս կողմից հեղինակած աշխատություններում: Նման դեպքե-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆֆ. 198, 200, 206, 223, 276 (նոր 275), ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, թիվ 4063:

րում մենք առաջնորդվել ենք պատմաքննական մեթոդով՝ աշխատության անաչառությունն ու օբյեկտիվությունը պահպանելու նպատակով:

Ցավոք, տարաբնույթ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով մեզ չհաջողվեց օգտվել Վրացական արխիվներից, սակայն շարադրանքի անաչառությունը պահպանելու նպատակով ուսումնասիրության մեջ լայնորեն օգտագործվել են թեմային առնչվող վրացի հեղինակների բազմաթիվ աշխատություններ, որոնց կանդրադառնար ստորև:

Երկրորդ խմբի մեջ են մտնում հրատարակված տպագիր սկզբնադրյուրները՝ հուշագրեր, որոշումներ, փաստաթղթերի ժողովածուներ<sup>2</sup> և տպագիր մամուլը<sup>3</sup>, որը, համորիսանալով ժամանակի հասարակական-քաղաքական շրջանակների տեսակետների և կարծիքների արտահայտման հիմնական հարթակը, լայնորեն լուսաբանել է խնդրո առարկային վերաբերող առանձին հարցեր: Թեմայի ուսումնասիրության համար հատկապես կարևոր նշանակություն է ունեցել «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» փաստաթղթերի ժողովածուն Զոն Կիրակոսյանի խմբագրությամբ<sup>4</sup>,

<sup>2</sup> Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919, քաղվածքներ 3. Դ. 9-րդ ընդհանուր ժողովի որոշումներից, Երևան, 1919, Հայաստանի Հանրապետության պաղամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920 թթ., Ա. Վիրաբյանի խմբագրությանք, Երևան, 2010, Հայաստանի Հանրապետություն 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Գ. Գալոյանի և Վ. Ղազախեցյանի խմբագրությամբ, Երևան, 2010, յարտադրություն մասնակի, Ը.1, տօնօլուսո, 1955 (Վրացական տարեգրություն, հ. 1, Թթիլիսի, 1955), զույրչուսնական զուլայութուս գուգո գազուարո, Շոցն 2, տօնօլուսո, 1941, (Գյուղիստանի վիլայեթի մեջ դավթարը, գիրք 2, Թթիլիսի, 1941), Օկкупация и фактическая аннексия Грузии. О политической и правовой оценке нарушения договора между Грузией и Советской Россией от 7 мая 1920 года. Документы и материалы, Тбилиси, 1990, Севрский мирный договор и акты подписания в Лозанне, Москва, 1927.

<sup>3</sup> «Նոր աշխատաւոր», «Յառաջ», «Կոմմունիստ», «ճակատանարտ», «Ժողովուրդ», «Ժողովուրդի ձայն», "Երանձն" («Էրթորա»), «Բօրբա», «Զանգ»:

<sup>4</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:

որտեղ ներառված խնդրո առարկային վերաբերող մեծաքանակ փաստաթղթերը լույս են սփռում պատմական ճշգրտության վրա:

Տրապիզոնին առնչվող հայ-հունական հարաբերությունների վերաբերյալ արժեքավոր նյութեր է պարունակում Յ. Բարթիկյանի թարգմանությամբ հունական արխիվային նյութերի ժողովածուն<sup>5</sup>:

Երրորդ խմբի մեջ են մտնում Վտարանողիության մեջ Յայաստանի առաջին հանրապետության շրջանի հայ և վրաց գործիչների, ինչպես նաև Սփյուռքի պատմաբանների կողմից հեղինակած մենագրությունները, հուչագրություններն ու աշխատությունները: Դրանց թվին են պատկանում Ս. Վրացյանի<sup>6</sup>, Ա. Խատիսյանի<sup>7</sup>, Յ. Բաջազնունու<sup>8</sup>, Ա. Զամալյանի<sup>9</sup>, Ռ. Տեր-Մինասյանի<sup>10</sup>, Ն. Ժորդանիայի<sup>11</sup>, Գ. Լազարի<sup>12</sup>, Ա. Նասիայանի<sup>13</sup> և այլ հեղինակների աշխատությունները:

Յայաստանի ծովային ելքի և Լազիստանի ու Բաթումի հարցերում հայ-վրացական տարակարծությունների խնդրին հատկապես հանգամանորեն է անդրադառնում Ա. Սիարոնյանը<sup>14</sup>: Վերջինիս օրագրում բավականին խորն անդրադարձ կա նաև Կիլիկիայի խնդրին՝ որպես նեախ Միջերկրական ծովի ելք, ինչպես նաև Յայաստանի ծովային ելքի հարցում մեջ տերությունների դիրքորոշումներին: Նրա շարադրած քաղաքական օրագիրը՝ որպես կենդանի հուշամատյան, հնարավորություն է տվել մեզ ուսումնասիրելու և մեկ-

<sup>5</sup> Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918-1920), հունարենից թարգմանեց Յ. Բարթիկյանը, Երևան, 1998:

<sup>6</sup> Վրացյան Ս., Յայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

<sup>7</sup> Խատիսյան Ա., Յայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէտք, 1968:

<sup>8</sup> Քաջազնունի Յ., Յ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923:

<sup>9</sup> Զամալյան Ա., Յայ-վրացական կնճիռը, Երևան, 2011:

<sup>10</sup> Ուլրէն, Յայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է, Երևան, 1991:

<sup>11</sup> Ջօրդանիա Ի., Յայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է, Երևան, 1991, 1928, նույնի Մօյ յանուան, Պարիշ, 1968:

<sup>12</sup> Լազեան Գ., Յայաստան եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991:

<sup>13</sup> Նասիայան Ա., Բրիտանիա եւ Յայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994:

<sup>14</sup> Սիարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սկը և Լոզան: Քաղաքական օրագիր, Երևան, 2001:

ნარამელი ქერინჯალ խართულები: Այդ հարցերին առնչվող վրացა-  
կან ხაկոտნյա տեսակետները տեղ են գտել Զ. Ավալովի մենագ-  
րության մեջ<sup>15</sup>: Այն մեծ ծավալի փաստական նյութ է պարունակում և  
հաճախ օբյեկտիվ ու անաշար գնահատականներ հնչեցնում հայ-  
վրացական հարաբերությունների մասին:

Գեներալ Գ. Կվինիտաձեի հուշագրությունում<sup>16</sup> բավականաչափ  
փաստեր կան վրացական գորքերի Արդահան ներխուժման վերա-  
բերյալ: Գեներալ Կվինիտաձեն՝ որպես զինվորական գործիչ, իր ու-  
րույն մոտեցումներն են ներկայացրել հուշագրության մեջ: Մանրա-  
մասն նկարագրելով Արդահանի ուղղությանք վրացական գորքերի  
գործողությունները՝ գեներալն անուղղակիորեն հաստատել է Արդա-  
հանի հարցում Հայաստանի նկատմամբ վրաց մենշևիկյան կառա-  
վարության ոչ բարյացակամ վերաբերմունքը:

Չորրորդ խումբը կազմում է ասպարեզում առկա խորհրդային  
պատմագիտական գրականությունը<sup>17</sup>: Նշենք, որ խորհրդային պատ-  
մագրությունն ուսումնասիրվող թեմային գործեր չի անդրադարձել:

Հինգերորդ խորհրդի մեջ են մտնում հետխորհրդային հեղինակնե-  
րը<sup>18</sup>: Քետխորհրդային հեղինակներն այս կամ այն չափով անդրա-  
դարձել են խնդրո առարկային վերաբերող առանձին հարցերի:  
Մասնավորապես, պրոֆեսոր Գ. Յ. Պետրոսյանի աշխատություննե-

<sup>15</sup> **Авалов З.**, Независимость Грузии в международной политике 1918-1921гг., Париж, 1924.

<sup>16</sup> **Квинитадзе Г.**, Мои вспоминания в годы независимости Грузии, 1917-1921, Париж, 1985.

<sup>17</sup> **Արզումանյան Ս.**, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, **Աղայան Ծ.**, Հայ ժո-  
ղովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, **Զոհրաբյան Է.**,  
Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ.,  
Երևան, 1979, **Եսայան Ա.**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-  
1922 թթ., Երևան, 1967:

<sup>18</sup> **Ղազարյան Յ.**, Սկրի պայմանագիրը և Կուլդր Վիլսոնի իրավարար վճիռը  
Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, Երկու գրքով, գիրք 1-ին,  
գիրք 2-րդ, Երևան, 2012, **Զոհրաբյան Է.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և  
տերությունները, Երևան, 1997, **Սարդարյան Կ.**, Հայ-վրացական հարաբերություն-  
ները 1918-1921 թթ., Երևան, 2002, **Մելքոնյան Ա.**, Զավախսը 19-րդ դարում և 20-րդ  
դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

րը<sup>19</sup> հարուստ նյութ են պարունակում Կարսի մարզի շուրջ հայ-վրացական, հայ-թուրքական, անգլո-ռուսական և հայ-անգլիական հակասությունների վերաբերյալ: Մուդրոսի գինադադարից մինչև 1919 թ. ապրիլը, այսինքն՝ մինչև մարզը Հայաստանին հանձնելը տեղի ունեցած դրամատիկ իրադարձությունների ներկայացումն ու նորովի մեկնարանությունները շատ օգտակար են եղել մեզ համար Արդահանին առնչվող խնդիրների լուսաբանման գործում:

Բարումի հարցի վերաբերյալ բավականաչափ հարուստ տեղեկություններ են պարունակում Ռ. Գ. Հովհաննիսյանի աշխատությունները<sup>20</sup>: Դրանք այն հատուկենտ ուսումնասիրություններից են, որոնք ուշադրություն են դարձրել նաև Հայաստանի ծովային ելքի խնդրին:

Թեմային առնչվող հիմնահարցերին որոշակի անդրադարձ կանաչ Գ. Գալոյանի աշխատություններում<sup>21</sup>, սակայն դրանք, դրվագային և թօռուցիկ լինելով, չեն մատնանշում հիմնահարցի կարևորությունը:

Խնդրո առարկային առնչվող որոշ խնդիրների է անդրադարձ Ղ. ճումբուրիձեն<sup>22</sup>: Ըստ Վերջինիս աշխատությունում տեղ գտած տեսակետի՝ ծովային ելքի համար Հայաստանի կառավարության մղած պայքարը դիտվում է որպես Վրաստանի շահերին հակասող քաղաքականություն:

<sup>19</sup> **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, նույնի՝ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920թթ.), Երևան, 2011:

<sup>20</sup> **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն: Վերսալից Լոնդոն, 1919-1920, հատոր 2-րդ, Երևան, 2014, նույնի՝ Մեջդунարодные отношения Республики Армения 1918-1920гг., Ереван, 2007, նույնի՝ The Republic of Armenia, V. 2, Berkeley, Los Angeles, London, 1982.

<sup>21</sup> **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1921 թթ., Երևան, 1999, նույնի՝ Պատմության քառուղիներում, Երևան, 1982:

<sup>22</sup> Քայլած աշխատության մասին պատմությունը պահպանվել է Հայաստանի ազգային պատմության թանգարանում (Տիգրան Մանուկյանի անունու թանգարան, Երևան, 1999) (ճումբուրիձեն Ղ., Վրաստան-Հայաստան հարաբերությունները 1918-1921 թթ. և Վրաց հասարակական կարծիքը, Թբիլիսի, 1999):

# ԳԼՈՒԽ I

## ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔԻ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԱԶԻՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ

### ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

#### 1.1. Ծովային ելքի հարցը որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական առաջնահերթություն

1918 թ. մայիս 28-ին ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Իր գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս-նոյեմբեր) այս նորաստեղծ պետությունն Անդրկովկասում թուրք-գերմանական ինտերվենցիայի պայմաններում հազիվ գոյատևման խնդիր էր լուծում, իսկ իր հետագա կենսունակությունն ապահովելու և Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի պայմանագրի հետևանքները վերացնելու նպատակով հուսահատ ծեծում էր Քայլակ միության երկրների կառավարությունների դրները: Սակայն Առաջին աշխարհամարտի ավարտը և Թուրքիայի պարտությունն ազգային-պետական գերխնդիրներին հետամուտ լինելու հարցում Հայաստանի համար նոր հնարավորություններ ստեղծեցին: Փոքրիկ Հայաստանի հզոր դաշնակիցների՝ Անտանտի երկրների շռայլ խոստումները, համենայնդեպս, այդպիսի հույսեր ներշնչում էին:

Այդ գերխնդիրներից մեկը Հայաստանի համար սեփական ծովային ելքի ապահովումն էր, ինչի կարևորությունը նորանկախ հանրապետության թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ հետագա զարգացման ու առաջընթացի տեսանկյունից թերևս անհնար էր գերագնահատել: Այն գերծ կպահեր հանրապետությանը կոնդւնիկացիոն կախվածությունից, որը հնարավորություն կրնձեռեր Հայաստանին հարևանների հետ տարածքային և այլ վիճելի հարցերում անուր ու հաստատակամ դիրք բռնելու: Այդ էր պատճառը, որ Հայաստանի կառավարությունը և Փարիզում գործող հայկական գույգ պատվիրակությունները մեկտեղեցին իրենց դիվանագիտական

շամքերը, որպեսզի Հայաստանի ապագա սահմանների հարցը վճռելիս լուծվի նաև սեփական ծովային ելքի հոլով կարևոր ու առաջնահերթ խնդիրը: Ինչպես գրում է Սիմոն Վրացյանը, «Հայ. Խորհուրդը մի քանի դրույթ նիստերում քննեց պատվիրակության տալիք հրահանգները: Մասնավորապես լուրջ ու բազմակողմանի քննության առնվեց Հայաստանի սահմանների հարցը: Կար մի քանի տեսակետ. Վարչապետ Քաջազնունին գոհանում էր համեստ սահմաններով՝ համաձայնվելով ծովային ելք չունենալ: Ժողովրդականները՝ Ս. Հարությունյանն ու Ա. Պապաջանյանը պնդում էին ծովից ծով Հայաստանի կողմնակիցները, բայց մեծ մասը կանգնած էր միայն Սև ծովի ելք ունենալու տեսակետի վրա... Հայ. Խորհրդի դեկտեմբերի 3-ի նիստում կազմվեց պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյան՝ նախագահ, Ս. Պապաջանյան և Յ. Օհանջանյան՝ անդամներ... Հրահանգների վերջնական ծևակերպումը թողնվեց կառավարությանը, որը և հանձնարարեց պատվիրակությանը պաշտպանել Սև ծովի ելքը՝ առանց դնելու Կիլիկիայի պահանջը...»<sup>23</sup>: Զափակոր պահանջների կողմնակից էին նաև Ռուբեն Տեր-Սինասյանը և Լեոն: Վերջինս հեգնանքով գրում է. «Կարելի էր ենթադրել անգամ այն էլ, որ այդ ամբողջ տարածքը՝ Կասպից ծովից մինչև Կիլիկիա, ոչ որի հարկավոր չէր և կարելի էր ձեռք բերել առանց որևէ դժվարության»<sup>24</sup>:

Պատվիրակությունը լիազորված էր Հայաստանի Հանրապետության անունից բանակցություններ վարելու և համաձայնության գալու՝ ի պաշտպանություն Հայաստանի իրավունքների և շահերի<sup>25</sup>: Վերոնշյալ հրահանգներն Ահարոնյանի պատվիրակությունը վարչապետ Քաջազնունուց ստացավ 1918 թ. դեկտեմբերի 7-ին<sup>26</sup>:

<sup>23</sup>Վրացյան Ս., Հայաստանի Համբաւետություն, Երևան, 1993, էջ 209, նաև՝ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 117:

<sup>24</sup>Լեօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. թ. Փարիզ, 1935, էջ 209:

<sup>25</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 14:

<sup>26</sup>Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, 1918-1920, Երևան, 2005, էջ 108:

Այդ հանձնարարագիրը բաղկացած էր 25 կետից, որում մասնավորապես նշված էր, որ միացյալ Հայաստանի բաղկացուցիչ մաս են կազմելու Հարավային Կովկասի բոլոր հայկական տարածքները, Տաճկահայաստանից՝ հայկական բոլոր վեց վիլայեթները (բացի ոչ հայաբնակ ծայրագավառների՝ սեփական ելքով դեպի ծով, կարևորություն տալով դեպի ծով Ելքին<sup>27</sup>): Ինչպես տեսնում ենք, այս փաստաթղթում շրջանցվում էին թե՛ Քաջազնունու խիստ սահմանափակ և թե՛ ծովից ծով Հայաստանի կողմնակիցների պահանջները, և առաջ էր քաշվում միայն Սև ծովում ելք ունենալու չափավոր պահանջը:

ՀՀ պատվիրակությունը Երևանից Փարիզ մեկնեց դեկտեմբերի 8-ին<sup>28</sup>: Սակայն պատվիրակությանը վիճակված չէր այս չափավոր պահանջները ներկայացնել Փարիզի վեհաժողովին: Ա. Ահարոնյանի պատվիրակությունը ստիպված էր հաշվի առնել Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ գործող Ազգային պատվիրակության տեսակետները, համագործակցել և համատեղ աշխատել վերջինիս հետ, քանի որ կառավարության կողմից էր ստացել համագործակցելու հանձնարարությունը: Ուստի վեհաժողովին ներկայացված տարածքային պահանջները հիմնականում համընկան ծովից ծով Հայաստանի գաղափարախոսների տեսակետին, իսկ ծովային ելք պահանջվում էր թե՛ Սև և թե՛ Միջերկրական ծովերում:

Ինչ վերաբերում է Ազգային պատվիրակությանը, ապա այն գործում էր դեռևս 1912 թ. նոյեմբերից, երբ Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսը Եվոպական պետությունների հետ բանակցելու նպատակով Պողոս Նուբարին լիազոր պատվիրակ նշանակեց և կարգադրեց ազգային պատվիրակություն կազմել: 1919 թ. փետրվարին Փարիզում հրավիրված Հայոց ազգային համագումարում պատվիրակության նոր կազմ ընտրվեց, որի նախագահ կրկին ընտրվեց Պողոս Նուբարը, իսկ անդամներ՝ Ա. Տեր-Հակոբյանը, Ա. Չոպանյանը, Գ. Փաստրմաճյանը, Ներուզը և Վ. Թեքեյանը<sup>29</sup>:

<sup>27</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 193, թ. 11-12:

<sup>28</sup>Տե՛ս «Զանգ», Երևան, 15 դեկտեմբերի, 1918: Խատիսյանը հիշատակում է դեկտեմբերի 12 ամսաթիվը: Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 117:

<sup>29</sup>Տե՛ս Փափագեան Վ., իմ յուշերը, հ. Երրորդ, Գահիրէ, 1957, էջ 51:

Փարիզի վեհաժողովի շրջանակներում հայկական գույգ պատվիրակությունների ձեռնարկած առաջին նշանակալից գործը Ֆրանսիայի արտգործնախարար Պիշոնի խորհրդով<sup>30</sup> հայկական պահանջների հուշագրի կազմումն էր, որը վերնագրված էր «Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ»<sup>31</sup>: Այս հուշագիրը ստեղծվել էր պատմաբաններ Նիկողայոս Ալոնցի և Լեոյի, տնտեսագետ Թաղենոս Ավդալբեկյանի և քաղաքական գործիչ Վահան Փափազյանի (Կոմս) միասնական ջանքերով<sup>32</sup>: Այս բավականին ստվարածավալ փաստաթուղթը (32 էջ) պարունակում էր հայերի տարածքային և այլ բնույթի պահանջները և դրանց հիմնավորումները:

Այն ներկայացվեց Փարիզի վեհաժողովի նախագահությանը և մասնակից պետությունների պատվիրակություններին 1919 թ. փետրվարի 12-ին<sup>33</sup>: Հուշագրում կենտրոնական տեղ էր գրադեցնում տարածքային պահանջների շարադրանքը: Այնտեղ նշված էր. «...Հայկական անկախ պետութիւնը պէտք է կազմի հետեւեալ հայկական շրջաններից».

1. Կանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սըւազի, Էրզրումի և Տրապիզոնի եօթ վիլայեթները...

2. Կիլիկեան չորս սանջակները, այսինքն՝ Մարաշ, Խոզան (Սիս), Ջերել-Քերեքը և Աղանա՝ Ալեքսանդրետուտի հետ միասին:

3. Կովկասի հայկական հանրապետութեան ամբողջ տերրիտորիան, որ պարունակում է. Երեւանի ամբողջ գաւառը, նախկին Թիֆլիսի նահանգի հարաւային մասը, Գանձակի նահանգի հարաւարեւմտեան մասը, Ղարսի գաւառը, (բացի Արդահանից հիւսիս գտնած շրջանից)»<sup>34</sup>:

<sup>30</sup> Այդ խորհուրդը Պիշոնը տվել է 1919 թ. փետրվարի 10-ին՝ Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի հետ հանդիպման ժամանակ: Տե՛ս Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սկը և Լոզան: Քաղաքական օրագիր, Երևան, 2001, էջ 10:

<sup>31</sup> Տե՛ս Ղազարյան Յ., Սկըի պայմանագիրը և Կուրդո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժննան վերաբերյալ, գիր առաջին, Երևան, 2012, էջ 245:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում, գիր երկորորդ, Երևան, 2012, էջ 181:

<sup>33</sup> Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 452:

<sup>34</sup> Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, էջ 7:

Փաստորեն, Ահարոնյանը, հակառակ ՀՅԴ բյուրոյի և ՀՅ կառավարության կարծիքի, գաղութահայության մտայնության ճնշման ներքո ստորագրեց այս փաստաթուղթը: Կարծ ժամանակ անց, կանգնելով կատարված փաստի առաջ, ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովն ընդունեց բանաձև, ըստ որի՝ Հայաստանի սահմանները որոշելու խնդրում արտաքին քաղաքականությունը պետք է ղեկավարվեր այն ծրագրով, որ 1919 թ. փետրվարի 12-ին ներկայացվել էր Փարիզի վեհաժողովին<sup>35</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայ քաղաքական շրջանների տարածքային պահանջների մեջ կարևոր տեղ էր հատկացված ծովային ելքի խնդրին, և այն էլ միանգամից երկու ուղղությամբ՝ դեպի Սև ծով՝ Տրապիզոնով, և Միջերկրական ծով՝ Կիլիկիայով:

Փարիզի վեհաժողովի շրջանակներում և դրան հաջորդած բազմաթիվ այլ խորհրդաժողովներում և տարբեր մակարդակների ու ձևաչափի քննարկումներում հայ պատվիրակների համար ծովային ելքի հարցը շարունակում էր մնալ գլխավոր առաջնահերթություններից մեկը 1920 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի կազմնան նպատակով Լոնդոնում, ապրիլին՝ Սան Ռեմոյում տեղի ունեցած Անտանտի գերազույն խորհրդի խորհրդաժողովներում, ապրիլի 13-17-ը՝ Փարիզում ընթացած անդրկովկասյան պատվիրակությունների միջև սահմանային խնդիրների հետ կապված խորհրդակցություններում, հայ և վրաց, ինչպես նաև վեհաժողովին նաևնակից շատ պատվիրակությունների միջև կայացած բազմաթիվ բանակցություններում, քննարկումներում, խորհրդակցություններում և այլն, որոնց մեջ մանրամասն կանդրադառնանք:

Այս ամենի արդյունքում Սևրի պայմանագրով ճանաչվեց Հայաստանի ծովային ելքի իրավունքը. այն պետք է ապահովվեր Տրապիզոնի վիլայեթի տարածքով: Խոկ Վուլոր Վիլսոնի իրավարար Վճիռը վերջնականապես ամրագրեց հայկական պետության՝ դեպի Սև ծով ելքի իրավունքը Տրապիզոնով և Լազիստանով: Սակայն,

<sup>35</sup> Տես Քաղվածքներ Դ. Յ. 9-րդ ընդհանուր ժողովի որոշումներից, էջ 5, նաև՝ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ. Ե, Երևան, 1991, էջ 170:

ցավոք, հետագա իրադարձություններն ու աշխարհաքաղաքական կտրուկ փոփոխություններն անհնարին դարձրեցին Սկրի պայմանագրի իրագործումը:

## **1.2. Կիլիկիան որպես Միջերկրական ծով դուրս գալու հնարավորություն և Ֆրանսիայի դիրքորոշումը**

Փարիզի վեհաժողովի իրավիրումից կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ Ալեքսանդրետի նավահանգստով դեպի Միջերկրական ծով ելքի խնդիրը լուծելն անհնարին է, քանի որ Անտանտի տերությունների տարածքային հավակնություններն օսմանյան ժառանգության բաժանման հարցում, նրանց հակասությունները, ինչպես նաև նախկինում ծեռք բերված պայմանավորվածությունները թույլ չեն տալիս կյանքի կոչել հայերի պատկերացրած միացյալ Հայաստանը:

Օրինակ՝ Ֆրանսիան, համաձայն չեր վերջինիս մեջ ներառել Կիլիկիան, որի նկատմամբ ֆրանսիական հավակնություններն անրագրվել էին դեռևս 1916 թ. գարնանը կնքված Սայքս-Պիկոյի համաձայնագրով: Այս առումով շատ հետաքրքրական է Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի և ֆրանսիական կառավարության կիսապաշտոնական օրգան «Տեմպս» (TEMPS) թերթի խմբագրապետ Յերբետի միջև 1919 թ. փետրվարի 15-ին կայացած գրույցը: Վերջինս նախ հետաքրքրվում է Կիլիկիայի նկատմամբ հայերի վերաբերմունքով: Ա. Ահարոնյանը պատասխանում է, որ Հայաստանը միշտ թույլ է մնացել ծովի պակասությունից, և անցյալի դառը փորձից խրատված՝ ստիպված են ելք պահանջել դեպի Միջերկրական, և որ Կիլիկիան ոչ թե բամբակի կամ այլ հարստության համար է իրենց պետք, այլ որպես ճանապարհ դեպի արևմուտք: Ապա շարունակում է. «Այս պատերազմը ցույց տվեց, որ առանց ծովի, եթե նույնիսկ մեր բարեկամ անտությունները կամենան, չպիտի կարողանան մեզ օգնության հասնել վտանգի ժամին, ինչպես չկա-

րողացան դաշնակիցները՝ հակառակ իրենց կամքի»<sup>36</sup>: Դժվար է ասել, Ա. Ահարոնյանն այստեղ ճկուն դիվանագիտություն էր բանեցնում, թե՞ իսկապես հավատում էր իր ասածներին, թե դաշնակիցները ծովի բացակայության պատճառով չօգնեցին մեզ: Դատելով ըստ ամենայնի՝ Ենթադրում ենք՝ առավել իրականը վերջինն է:

Այդ պահին մեր դիվանագիտներն առաջնորդվուն էին ժամանակի գերիշխող նտայնությամբ, սակայն քաղաքագիտական լուրջ վերլուծություններով չիհմնավորված կույր հավատը դեպի դաշնակից երկրները, իհարկե, մեր դիվանագիտության ամենախոցելի տեղն էր: Հայաստանի արտաքին քաղաքականության ընթացքը բնորոշելով՝ Ռուբենը (Ռուբեն Տեր-Մինասյան) նշում է, որ Երևանում և՛ Բյուրոն, և՛ կառավարությունը նասամբ բնագրով և նասամբ Պոլսից և այլ տեղերից ստացած տեղեկությունների հիման վրա կասկածանքով էին վերաբերվում այն բանին, որ դաշնակիցների վրա անվերապահորեն հենվելը կարող է ցանկալի արդյունք տալ: «...Կը մտածուէր Դաշնակիցներից ամէն ինչ յուսալու փոխարէն, որոնել այլ, աւելի իրական յենարաններ: Իհարկե այդ յենարանների ճիշտ ընտրութիւնը Երեւանը չէր կարող անել, արտաքին աշխարհից իր անտեղեակութեան պատճառով: Բայց զոյգ պատուիրակութիւնները տարուած էին անվերապահորէն Դաշնակիցների օժանդակութեամբ, քանի որ նրանց մէջն էր աշխատանքը կատարուում բացառապէս»<sup>37</sup>: Ըստ Ռուբենի՝ Հայաստանի արտաքին քաղաքականության աղքյուրն ավելի շատ Փարիզն էր, քան Երևանը (այնուամենայնիվ, նրա ասածի մեջ ճշմարտության հատիկ կա), սակայն դա կառավարությանը չէր ազատում պատասխանատվությունից՝ արտաքին քաղաքական ձախողումների ողջ մեղքը պատվիրակությունների վրա բարդելով:

Եվ Փարիզում առաջին սառը ցնցուղն Ա. Ահարոնյանը ստանում է Ներքետի հետ զրույցի ընթացքում՝ բախվելով բոլորովին էլ ոչ պատահական այս ֆրանսիացու հաշվենկատ անհամաձայնությանը: Անակնկալի եկած Ա. Ահարոնյանը խորը ցավ է հայտնում, որ Ֆրան-

<sup>36</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 11:

<sup>37</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 239-240:

սիան Կիլիկիայի հարցում հայերին հակառակորդ է համարում: Իսկ Յերետը, ոչ ավել ոչ պակաս, հայերին մեղադրում է ինպերիալիզմի մեջ՝ ասելով. «Շատ եմ ցավում, որ Հայաստանը, տակավին չկագ- մակերապված, ինպերիալիստական հովեր է առնում»<sup>38</sup>:

Փարիզի վեհաժողովին ներկայացված հայկական պահանջնե- րի հուշագրում անհրաժեշտ էր համարվում, որ դաշնակից տերութ- յուններից մեկը կամ Ազգերի լիգան երաշխավորեն հայկական պե- տության տարածքային ամբողջականությունը և ստանձնեն Հայա- ստանի մանդատը: Միացյալ Հայաստանի մանդատի մեջ, ինչպես հայտնի է, նախատեսվում էր նաև Կիլիկիան՝ որպես Ելք դեպի Մի- ջերկրական ծով: Որպես Միացյալ Հայաստանի մանդատատեր՝ շրջանառվեցին մի քանի երկրների անուներ, սակայն իիննական թեկնածուն համարվում էր ԱՍՍ-ը, որի նախագահ Վուդրո Վիլսոնի նախաձեռնությամբ 1919 թ. հունվարի 30-ին Փարիզի վեհաժողովը որոշում էր կայացրել Հայաստանն ազտագրելու և նրան հովանա- վոր (մանդատատեր) նշանակելու մասին<sup>39</sup>: Ելնելով սրանից՝ 1919 թ. մայիսի 14-ին Չորսի խորհուրդը, ապա նաև Ազգերի լիգան Հա- յաստանի մանդատը ԱՍՍ-ին հանձնելու որոշում կայացրին<sup>40</sup>:

Մեր պատկերացրած մեծ Հայաստանի սահմանների նվազե- ցումն ուղիղ համենատականորեն նվազեցնում էր աներիկյան ման- դատի հավանականությունը: Աներիկացիները ձգտում էին իրենց մանդատը հաստատել նախկին Օսմանյան կայսրության ավելի մեծ տարածքների վրա (ըստ Հարբորդի գեկուցագրի՝ ներառյալ Անդր- կովկասը, Փոքր Ասիան, Կոստանդնուպոլիսը՝ նեղուցներով և այլն)<sup>41</sup>, բայց դա կիսախտեր Սայքս-Պիկոյի պայմանագրի սկզբունք- ները: Դետևաբար, դրան դեմ էին նաև անգլիացիները, որոնք դրա- կանորեն էին ընկալում Կիլիկիայի նկատմամբ Ֆրանսիայի նկրտումները: Այդ կապակցությամբ 1919 թ. վերջերին Անգլիայի ար- տաքին գործերի նախարար լորդ Քերգոնը Ազգային պատվիրակութ-

<sup>38</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 12:

<sup>39</sup> Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, Յ. Ռ. Սիմոնյանի խմբ., Երևան, 2012, էջ 556:

<sup>40</sup> Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 111:

<sup>41</sup> Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 282:

յան ղեկավար Պողոս Նուբար փաշայի հետ հանդիպման ժամանակ ասել է, որ Ամերիկան Հայաստանի մանդատը չի ընդունելու, և քանի որ ամերիկյան մանդատ չկա, անհնարին է մեծ Հայաստան՝ Կիլիկիայով, որը պիտի մնար Ֆրանսիային<sup>42</sup>: Քերզոնի ինքնավստահությունը գալիս էր նրանից, որ Անգլիան և Ֆրանսիան երբեք թույլ չեն տա ԱՄՆ-ին միասնական մանդատի քողի ներքո հաստատվել Փոքր Ասիայում և Անդրկովկասում: Ի դեպ, Հայաստանի ամերիկյան հովանավորության հարցում անհասկանալի և հակասական էր հենց ամերիկացիների դիրքորոշումը: Պարզից էլ պարզ էր, որ Հայաստանի ցանկացած մանդատատեր նախևառաջ պետք է ռազմակալեր Թուրքահայաստանը: Սակայն ամերիկացիները, ամենուրեք հայտարելով, որ իրենք են վերցնելու Հայաստանի մանդատը, այնուամենայնիվ, գտնում էին, որ այդ գրավումը կարող է լինել միայն անգլիացիների ձեռքով, քանի որ միայն նրանք Կովկասում զորքեր ունեն, և քանի որ ամերիկյան բանակը տակավին հրահանգ չունի Ֆրանսիայից ու Գերմանիայից դուրս այլ տեղ գնալու<sup>43</sup>: Ամերիկացիների այս մոտեցումը առնվազն տարակուսանք էր առաջացնում անգլիացիների մոտ: 1919 թ. մարտի 27-ին, երբ Ա. Ահարոնյանը անգլիացիներին ներկայացրեց ամերիկյան կողմի դիրքորոշումը, արևելյան գործերի գլխավոր վարիչ Լուի Մալլետը մերժեց՝ նշելով, որ Անգլիայի զինվորական նախարարությունը դեմ է այդ գրավմանը, ավելին՝ անգլիացիները մտադիր են դուրս հանել զորքերը Կովկասից<sup>44</sup>: Այս ամենը, սակայն, տարակուսելի էր թվում միայն առաջին հայացքից: Իրականում պարզ էր, որ ԱՄՆ-ը չէր բավարարվում միայն Հայաստանի մանդատով, և վերջինիս անվան տակ ծգտում էր հաստատվել Թուրքահայում և Անդրկովկասում, որին, ինչպես արդեն նշել ենք, դեմ էին Անգլիան և Ֆրանսիան: Մյուս կողմից, անգլիացիները, ինչպես նաև Ֆրանսիացիները դեմ էին Թուրքահայաստանի գրավմանը: Կա տարածված տեսակետ, թե Մուլդոսի զինադադարի պայմանագրի միտումը (հրաժարվել Արևմտյան Հայաստա-

<sup>42</sup> Տե՛ս Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 41:

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 18:

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 19:

Նը և, ընդհանրապես Արևելյան Անատոլիան գրավելուց որ այնտեղ նահանջած օսմանյան բանակը զինաթափելուց) պայմանավորված էր հետագայում այդ ուժերը խորհրդային Ռուսաստանի դեմ հանելու ծրագրերով: Չվիճարկելով այս տեսակետը՝ պետք է նշենք, որ ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Արևմտյան Հայաստանը, ըստ Սայքս-Պիկոյի պայմանագրի, պետք է անցներ Ռուսաստանին, և այժմ այն Անգլիայի կամ Ֆրանսիայի կողմից ռազմակալելը կրերեր մեկի կամ մյուսի անհամաձայնությանը, քանի որ կիսախտվեր ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում: Ասվածի վկայությունն է նաև Փարիզում ամերիկյան պատվիրակության անդամ Վեստերնանի պատասխանը Ա. Ահարոնյանի այն հարցին, թե «ինչո՞ւ անգլիացիք վարանում են գրավել Թուրքաց Հայաստանը»: Վեստերնանը պատասխանում է. «Վախենում են ֆրանսիական մրցակցությունից, որոնք իսկույն հարավից (Կիլիկիայից - Շ. Թ.) կշարժվին վեր՝ հյուսիս»<sup>45</sup>: Եվ քանի որ Ռուսաստանն էլ բոլշևիկացել էր, Արևմտյան Հայաստանի հարցը մնաց առկախ՝ իր ծովոր ծանր հետևանքներով:

Պակաս հետաքրքիր չէ նաև այն հանգամանքը, որ ռուս քաղաքական վտարանդիները ևս համաձայն էին, որ Կիլիկիան անցնի հայերին: 1919 թ. մայիսի 19-ին՝ Փարիզում Կ. Պոլսի նախկին ռուսական դեսպան Գիրսի հետ հանդիպման ժամանակ, վերջինս մեր պատվիրակներին ասում է. «Կիլիկիա նշանակում է Միջերկրական ծով, որին մենք ձգտել ենք՝ առանց հասնելու: Մենք չենք ստացել այն և չենք էլ կամ նենա, որ նա որևէ մեծ պետության ձեռք անցնի: Մինչդեռ Հայաստանը՝ որպես փոքր պետություն, մանավանդ մեր ապագա դաշնակիցը, մեզ համար ոչ միայն անվտանգ է, այլև նույնիսկ շահավետ: Տնտեսական տեսակետից մենք կարող ենք այդ կացությունից մեծ շահեր ունենալ...»<sup>46</sup>: Այս տեսակետին կողմ էին նաև Փարիզում և ԱՄՆ-ում ռուսական դեսպաններ Մակլակովը և Բախմեդիկը<sup>47</sup>:

<sup>45</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 18:

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 28:

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 29:

Ամերիկյան մանդատի կապակցությամբ՝ հայկական երկու պատվիրակությունների ղեկավարները՝ Պողոս Նուբար փաշան և Ա. Ահարոնյանը, 1919 թ. դեկտեմբերի 8-ին տեսակցում են Փարիզի վեհաժողովում ամերիկյան պատվիրակության անդամ Ուայթին: Վերջինս գրուցի ընթացքում ասում է հետևյալը. «Անկարելի չէ, որ պետությունները դիտմանք չկանենան սպասել (Յայաստանի մանդատի ստանձնման հետ կապված ԱՄՆ-ի պատասխանին-Ը. Թ.) և վճռեն հայոց ու Թուրքիայի խնդիրները, մասնավորապես Ֆրանսիա, որ այդ միջոցով հույս ունի պահել Կիլիկիան: Դուք գիտեք, անշուշտ, որ Կիլիկիան մենք ենք պահանջել»<sup>48</sup>: Ապա Ուայթը հայտնում է, որ ինքը հույս չունի, թե ԱՄՆ-ը կը նդունի Յայաստանի մանդատը: Ուայթի այս հոռեւտեսությունը պատահական չէր: Դա արտացոլում էր Յայաստանի մանդատի վերաբերյալ ամերիկյան քաղաքական շրջանակներում տարածված տեսակետը: Վիլսոնի այս նախաձեռնությունն արդեն քիչ սատարողներ ուներ ԱՄՆ-ում: Նա Յայաստանի մանդատի ստանձնման կողմնակից էր մնացել գուտ բարոյական մղումներով: 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի Սենատը, քննելով Յայաստանի մանդատի հարցը, ձայների մեծամասնությամբ ներժեց այն<sup>49</sup>: Իսկ Վիլսոնը, այնուամենայնիվ, շարունակեց իր հայանպաստ գործունեությունը: Դեռ 1920 թ. մայիսի 17-ին նա համաձայնել էր Յայաստանի սահմանների որոշման գործում միջնորդ հանդիսանալ<sup>50</sup>: Իսկ նոյեմբերի 22-ին ներկայացրեց թուրք-հայկական սահմանագծման վերաբերյալ իր հայտնի իրավարար Վիլսոնը, որը նախատեսված էր Սկրի պայմանագրով:

Կիլիկիայի կարգավիճակի հարցը լուծվեց արդեն 1920 թ. սկզբին: Յունվարի 6-ին Լոնդոնում Անգլիայի վարչապետ Լոյդ Ջորջի առաջին քարտուղար Ֆիլիպ Քերի և Ա. Ահարոնյանի հանդիպման ժամանակ Քերն ասել է. «Կիլիկիայի խնդիրը մեր և Ֆրանսիայի մեջ կարգադրված է վերջնականապես: Կիլիկիան թողնված է Ֆրան-

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>49</sup> Տե՛ս Յայոց պատմություն, դասագիրք, բուհերի համար, էջ 558:

<sup>50</sup> Տե՛ս Յարությունյան Ա., Սկրի պայմանագրիր և հայ հասարակական-քաղաքական միտքը, Երևան, 2004, էջ 64:

սիային: Մենք չենք կարող ուրիշ կերպ վարվել, որովհետև ամերիկյան մանդատը Հայաստանի վրա այլևս անհույս է»<sup>51</sup>: Ելնելով այս նոր իրողությունից՝ Ա. Ահարոնյանը հույս է հայտնում, որ Կիլիկիան գոնե կլինի ֆրանսիական և ոչ թուրքական, և քանի որ Հայաստանը հեռանում է Միջերկրական ծովից, Ֆրանսիան բարի կատնվի երկաթուղային ելք տալ դեպի Միջերկրական ծով: Զերը պատասխանում է, որ այդ ամենի մասին պետք է համաձայնության գալ Ֆրանսիայի հետ<sup>52</sup>:

Կարելի է եզրակացնել, որ, ըստ Էռլյան, մեծ տերությունների՝ առաջին հերթին Անգլիայի և Ֆրանսիայի խարդավանքների արդյունքում տապալվեց Հայաստանի մանդատի հարցը: Սայրս-Պիկոյի պայմանագրով Արևմտյան Հայաստանն անցնում էր Ռուսաստանին, և քանի որ վերջինս խորհրդայնացել էր, հետևաբար, Անգլիան ու Ֆրանսիան համաձայն էին միայն Հայաստանի մանդատը գիծել որևէ երրորդ երկրի և ոչ մի այլ հարակից տարածք: Պարզից էլ պարզ էր, որ ոչ մի երկիր, այդ թվում՝ նաև ԱՄՆ-ը, չէր ցանկանա ստանձնել միայն Հայաստանի մանդատը, որը գրեթե բոլոր տեսանկյուններից շահավետ չէր:

Հունվարի 25-ին Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը Փարիզում տեսակցում են Ֆրանսիայի արտաքին գործերի ենթաքարտուղար Ֆիլիպ Բերթըլոյի հետ: Մեր պատվիրակները վերջինիս խնդրում են, որ Ֆրանսիական տիրապետությունը սահմանակից լինի Հայաստանին, և Ֆրանսիան Կիլիկիայի միջոցով տնտեսական ելք տա դեպի Միջերկրական ծով, նաև խնդրում են, որ Ֆրանսիան աջակից Հայաստանին սեփական ելք ստանալ դեպի Սև ծով: Հայ պատվիրակները, քաջ գիտակցելով ծովային սահմանի անհրաժեշտությունը, միաժամանակ հասկանում էին, որ ելքը դեպի Միջերկրական ծով դառնում էր միջնորդավորված և կախման մեջ էր ընկնում Ֆրանսիայի բարեհոգությունից, ուստի առաջ քաշեցին Սև ծովում սեփական ելք ստանալու պահանջը: Սակայն Բերթըլոն, խոստանալով տնտեսական ելք ապահովել Կիլիկիայի վրայով դեպի Միջերկրա-

<sup>51</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 46:

<sup>52</sup> Տես նույն տեղում:

կան ծով, խուսափողական և անորոշ պատասխան է տալիս Աև ծովով ելք տրամադրելու հարցում<sup>53</sup>:

Ի դեպ, այս հարցի շուրջ այլ տեղեկություններ է տալիս Ա. Եսայանը: Վերջինս, հղում կատարելով ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 68/200, գ. 1, գ. 317, թ. 78-79 փաստաթղթին, բերում է Բերթըլոյի խոսքը, թե «մենք դեպի Աև ծովը ելք կունենանք Բաթումում, որի շրջանը իր նավահանգստով, ինչպես մեզ հայտարարել են անգլիացիք, պետք է չեզոք հայտարարվի»<sup>54</sup>: Նշենք նաև, որ, ըստ այդ փաստաթղթի (Ահարոնյանի հեռագիրը վարչապետ Խատիսյանին), Բերթըլոյի հետ համդիպումը տեղի է ունեցել հունվարի 22-ին:

Փաստորեն, 1920 թ. հունվարի դրությամբ Յայաստանի ծովային ելքի հարցը դեռևս խիստ կասկածելի վիճակում էր գտնվում: Ավելին, ֆրանսիացիները դեռ 1919 թ. դեկտեմբերին քեմալականներին առաջարկում էին գործարքի գնալ Կիլիկիայի հարցում: Այն թուրքերին հանձնելու դիմաց ֆրանսիացիները ձգտում էին Թուրքիայում ձեռք բերել տնտեսական կոնցեսիաներ: Մուստաֆա Քեմալի հետ հանդիպման ժամանակ Սիրիայում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Գերոգ Պիկոն գաղտնաբար հայտնել է նրան, որ Ֆրանսիան պաշտպանում է օսմանյան պետության անկախությունը և զորքերը դուրս է հանելու Ադանայից, Այնքափից և Ուրֆայից և կոչ է անելու Անտանտի մյուս պետություններին հետևելու իր օրինակիմ<sup>55</sup>: Ֆրանսիայի այս մոտեցումը շարունակվեց նաև հետագայում: 1921 թ. մարտի 9-ին՝ Լոնդոնի խորհրդաժողովի ընթացքում, Ֆրանսիայի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարներ Բրիտանը և Բերիր Սամի բեյը ստորագրեցին մի անջատ համաձայնագիր, համաձայն որի՝ Ֆրանսիան կրճատում էր Սիրիայում իր ազդեցության շրջանը Թուրքիայի օգտին և փոխարենը ստանում էր մի շարք արտոնություններ ու մենաշնորհներ Կիլիկիայում, Դիարբեքիրում և Սեբաստիայում<sup>56</sup>:

<sup>53</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 53:

<sup>54</sup> Եսայան Ա., Յայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922 թթ., Երևան, 1967, էջ 72:

<sup>55</sup> Տե՛ս Գալոյան Գ., Յայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 132:

<sup>56</sup> Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 342:

Ի դեպ, այդ պայմանագիրը կյանքի չկոչվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից չվավերացվելու պատճառով<sup>57</sup>: Սակայն դա չխանգարեց ֆրանսիացիներին դրսերել շարունակական թրասիրություն և իրենց վարչագծով հնարավորություն տալ քեմալական-ներին ավելի սանձարձակ և դաժան գործելու Կիլիկիայում: Մուստաֆա Քենալը նախևառաջ ձգտում էր գրավել Իզմիրը, սակայն Ֆրանսիայի ընձեռած բողոքվությունից օգտվելով՝ ուղղվեց դեպի Կիլիկիա, որի հարուստ ռեսուրսները հետագայում կկարողանար օգտագործել հունական մեծաքանակ և լավ զինված բանակների դեմ: Ֆրանսիացիների թողտվության պայմաններում քեմալականները 1920 թ. փետրվար-մարտ ամիսներին կազմակերպեցին կիլիկիահայության կոտորածներ, և հազարավոր հայեր սրի քաշվեցին<sup>58</sup>: Սա ավելի սրեց հայ-ֆրանսիական հարաբերությունները: Փետրվարի 27-ին Պողոս Նուբար փաշան Կիլիկիայի ջարդերի մասին փաստերը ուղարկում է Լույդ Զորջին: Մարտի 28-ին դրանք դառնում են խորհրդաժողովի քննարկման հատուկ թեմա<sup>59</sup>: ՀՅ խորհրդարանը 1920 թ. մարտի 18-ին, իր զայրույթը հայտնելով Կիլիկիայի հայերի ջարդերի արյունաբերու հեղինակներին, խորին ցավով ընդգծում էր այն փաստը, որ դաշնակիցները չստիպեցին Թուրքիային կատարելու զինադադարի պայմանները և հնարավորություն տվեցին նրան կազմակերպելու հայերի նոր ջարդերը<sup>60</sup>:

Կիլիկիահայությունը իր ճակատագրի հանդեպ մտահոգությամբ լի բողոք-դիմում հղեց Լոնդոնի խորհրդաժողովին, որտեղ մասնավորապես ասվում էր. «Կիլիկիոյ հայերը, որոնք ցարդ կատարեալ հանդարտութեամբ եւ հաստատ յոյսով սպասած են Խաղաղութեան ժողովին կողմէ իրենց հայրենիքի ճակատագրի նկատմամբ տրուելիք որոշումներուն, ինչպէս նաեւ իբրեւ քրիստոնեայ Երկրացիները,

<sup>57</sup> Տե՛ս Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 208, 229:

<sup>58</sup> Տե՛ս Աղայան Ծ., Դայ ժողովորի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 738:

<sup>59</sup> Ըմ. Մահմուրյան Ղ., Հիպլոմատիա Հայության 1920 թ., «Պատմաբանապիրական հանդես», Երևան, 2012, թիվ 2, էջ 88-89:

<sup>60</sup> Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 132-133:

առանց ազգային կամ յարանուանական խտրութեան՝ յոյներ, ասորիներ, սուրիացիք, քաղղէացիք եւ յակորիկաներ ճշմարիտ սարսափով մը վերահասու եղած են լորտերու ժողովին մէջ Լորտ Քրզընի յայտարարութեան, որ հակառակ Մարաշի եւ շրջակայքի 20 հազար քրիստոնեաներու կոտորածին, երբ ամբողջ Կիլիկիա ենթարկուած է իրենց դարաւոր բարբարոս հարստահարիչներու կրակին եւ սուրին՝ վեհաժողովը կը մտածէ վերստին իրենց երկիրը թուրք տիրապետության եւ գերիշխանութեան տակ դնել եւ երկրի մէջ վերահաստատել աւերիչ եւ եղեռնագործ օսմանեան կառավարութիւնը... Զայն կը բարձրացնենք, յանուն Կիլիկիոյ վերապրոդ 250 հազար քրիստոնեաներուն, յանուն մեր մեռեալներուն եւ նահատակներուն, յանուն մեր հերոսներուն, որոնք ցարդ կը դիմադրեն թքական յորդաններու Ձեյրունի, Յաճընի, Ամանոսի լեռնային ամրոցներու մէջ...»<sup>61</sup>:

Ինչպես տեսանք, ֆրանսիական կառավարությանն առժամանակ չհաջողվեց անջատ համաձայնություն ձեռք բերել քենալականների հետ վերջիններիս կողմից Ֆրանսիային լիարժեք չվստահելու պատճառով, ուստի Ֆրանսիան ակտիվացրեց իր քայլերը՝ Թուրքիայի հետ դաշնակիցների հաշտության պայմանագիր կնքելու հարցում: Ֆրանսիացիները վերստին առաջ քաշեցին 1920 թ. հունվարի 11-ին իրենց կողմից լորդ Քերզոնին հղած նոտան, որտեղ նշվում էր, որ հայերն ամբողջովին ազատ են լինելու թուրքական գերիշխանությունից և կազմավորվելու են որպես անկախ պետություն: Սակայն նոտայում մերժվում էր Կիլիկիան Յայաստանի կազմում ներառելու հնարավորությունը, քանի, որ Կիլիկիան բուն Յայաստանից գտնվում է 400 կիլոմետր հեռավորության վրա, և կստեղծվի նաև մի իրավիճակ, որ հայերը իրենց պետությունում փոքրանասնություն կկազմեն<sup>62</sup>:

Ստեղծված իրավիճակում կիլիկիահայության ազգային-քաղաքական շրջանակները ժողովրդի անվտանգությունն ապահովելու նպատակով գնացին ծայրահեղ հուսահատ քայլի՝ Ֆրանսիայի հովանու ներքո Կիլիկիայի ինքնավարության հրչակմանը: Ազգային

<sup>61</sup> Տեփոեյան Պ., Միհրան Տամատեան, Պէյրուք, 1964, էջ 189-191:

<sup>62</sup> Տես Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 133-134:

պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի հրահանգով Կիլիկիահայության ազատագրական պայքարին աջակցելու համար Կիլիկիա ժամանած հնչալյան հայտնի գործիչ Սիհրան Տամատյանի գլխավորությամբ 1920 թ. օգոստոսի 4-ին Աղանայում հռչակվեց Կիլիկիայի անկախությունը<sup>63</sup>: Յայկական ուժերը գրավեցին Աղանայի թուրքական նահանգապետի նստավայրը: Սակայն այս ամենը շատ կարծ տևեց: Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ գնդապետ Բրեմոնը Սիհրան Տամատյանից պահանջում է վերջ դնել «կատակերգությանը» և ցրվել, բայց հանդիպելով վճռական առարկության՝ անձամբ քշում է հայերին կառավարչատնից և ստիպում դադարեցնել Տամատյանի գլխավորած կառավարության գործունեությունը<sup>64</sup>: Դեռ ավելին, ֆրանսիական իշխանությունները սեպտեմբեր ամսին լուծարեցին հայկական լեգեոնը՝ Կիլիկիայի հայերին զրկելով թուրքերից պաշտպանվելու հնարավորությունից<sup>65</sup>: Եվ դա այն դեպքում, երբ 1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում Յայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի և Բրիտանիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչներ Մարկ Սայքսի և ժորժ Պիկոյի միջև կնքված համաձայնագրով ստեղծված հայկական լեգեոնը պետք է մերձավորարևելյան ռազմաճակատներում մարտնչեր թուրքերի դեմ, որի դիմաց Ֆրանսիան խոստանում էր պատերազմից հետո ինքնավարություն տալ Կիլիկյան Յայաստանիմ<sup>66</sup>: Ըստ էության, այս համաձայնագիրն էր հիմքեր տալիս Պողոս Նուբարին պահանջելու, որ Փարիզի վեհաժողովին ներկայացված «Յայկական պահանջների հուշագրում» ներառվի նաև Կիլիկիան:

Նետագայում գնդապետ Բրեմոնը իր հուշերում փորձ է անուն Կիլիկիայում Ֆրանսիայի թրքափրական քաղաքականության մեջ մերադրելու Անգլիային՝ գրելով. «Որոշ է, թէ Կիլիկիոյ մէջ ամէն ինչ Անգլիոյ հանաձայնութեամբ պէտք է ըլլայ՝ նկատի ունենալով երկու

<sup>63</sup> Անկախության հռչակման հայտարարությունը, տես **Գանգրունի Յ.**, Կիլիկիոյ հայութեան վերջին գաղթը (1920-1921), Պէյոութ, 1998, էջ 114-118:

<sup>64</sup> Տես՝ **Սահակյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 225:

<sup>65</sup> Տես՝ **Աղայան Ծ.**, նշվ. աշխ., էջ 739:

<sup>66</sup> Տես՝ **Իզմիրեան Ա.**, Յայ ժողովոդի քաղաքական ծակատագիրը անցեալին եւ ներկայիս, Պէյոութ, 1964, էջ 173:

երկիրներու նախնական շահերը...»: Սակայն անմիջապես էլ բացահայտում է Ֆրանսիայի իսկական դեմքը՝ շարունակելով. «Ֆրանսան բոլոր քրիստոնեաներու պաշտպանն է: Անիկա իսլամ պետութիւն մըն ալ է: Պատերազմի ընթացքին ֆրանսահպատակ իսլամները իհանալի հաւատարմութիւն մը ցուցուցին...»<sup>67</sup>:

Ի վերջո, Ֆրանսիան, հակառակ իր հավաստացիումների, հեռացավ Կիլիկիայից, և 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական համաձայնագրով՝ այն հանձնեց Թուրքիային<sup>68</sup>: Արյունքում Կիլիկիան վերջնականապես հայաթափվեց: Իսկ 1922 թ. դեկտեմբերի 13-ին Լոզանի խորհրդաժողովում թուրքական պատվիրակության դեկավար հսմեթ հնոյնուն լորդ Քերգոնի գլխավորած ռազմատարածքային հանձնաժողովի նիստում հայտարարում է. «Թուրքիան ո՞չ իր արևելյան նահանգներուն, ո՞չ Կիլիկիայում չունի տերիտորիայի ոչ մի պատառ, որի բնակչության մեջ մասը թուրքեր չինեն, և որը կարելի լիներ որևէ կերպ անջատել մայր հայրենիքից»<sup>69</sup>:

Սրանով ամեն ինչ ասված էր: Դաշնակիցների երկդիմի քաղաքականության և թուրքերի անգիծում դիրքորոշման արյունքում մենք Կիլիկիայով դեպի ծով Ելքի հնարավորությունը կորցրինք: Այդ կորստյան մեջ որոշակի «դերակատարում» ունեցան նաև Հայատանի Հանրապետության կառավարությունը և Փարիզում գործող գույգ պատվիրակությունները: Ոգևորվելով ամերիկյան մանդատով՝ հայ դիվանագետները Կիլիկիայի հարցը մղեցին ֆրանս-ամերիկյան հակասությունների հորձանուտը: Սակայն մերձավորարևելյան խնդիրների լուծման գործում ավելի վճռորոշ ազդեցություն ուներ Ֆրանսիան, թեկուզ և այն պատճառով, որ տարածաշրջանում գեթ մեկ ամերիկյան զինվոր չկար, իսկ Ֆրանսիան պատկառելի զինութ ուներ: Հետևաբար խնդրի լուծումը կախված էր ֆրանսիացիներից,

<sup>67</sup> Պրեմօն Է., Կիլիկիա՝ 1919-1920-ին, թարգմ. Տ. Յ. Պօյաճեան, Պոստոն, 1921, էջ 133-134:

<sup>68</sup> Ֆրանս-թուրքական Անկարայի կամ Ֆրանկլեն-Բուլյոնի 13 հոդվածից բաղկացած դաշնագիրն ամբողջությամբ տես Սաաքի Ռ. Ռ., Փրանկո-տուրեցկու ուղարկություն և Կոլուկիա 1918-1923 թ., Երևան, 1986, ստոր. 150-153.

<sup>69</sup> Հակոբյան Յ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000, էջ 249:

իսկ Կիլիկիայի հարցի «ֆրանսիական» լուծումը, ինչպես տեսանք, իր ողջ էությամբ հակահայկական էր: Ենչտ է, դժվար է ասել՝ արդյո՞ք մեր դիվանագետների ճիշտ կողմնորոշումը ստեղծված իրավիճակում կնպաստեր հարցի հայանպաստ լուծմանը, սակայն, մինչ ուրիշներին մեղադրելը մենք պարտավոր էինք անել մեզանից կախված առավելագույն հնարավորը:

### 1.3. Տրապիզոնը որպես Սև ծով Ելքի հնարավորություն և Պոնտոսի հույների դիրքորոշումը

Կիլիկիայից վերջնականապես հույսը կտրելով՝ մեր պատվիրակները շեշտը դրեցին Սև ծովով Ելքի վրա, որի ամենահավանական տարրերակը համարում էին Տրապիզոնը: Փարիզի վեհաժողովին ներկայացված «Հայկական պահանջների հուշագրում» Տրապիզոնի վիլայեթի ներառումը նախևառաջ պայմանավորված էր 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) ռուս-թուրք-գերմանական համաձայնությամբ ստորագրված հայկական բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագրով՝ որպես բնական Ելք դեպի Սև ծով: Տրապիզոնով դեպի Սև ծով Հայաստանին Ելք տրամադրելու հարցին նպաստեց նաև հատկապես այն հանգանաքը, որ Փարիզի վեհաժողովում արդեն սկզբունքորեն նախանշվել էր հայ-թուրքական ապագա սահմանը, որն անցնելու էր Տրապիզոնի, Երզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթներով: Հայերի այս ակնկալիքներին աջակցում էին նաև հույները, ինչի մասին հավաստել էր Փարիզում հունական դեսպան Ռոմանոսը Պողոս Նուբարին: Նույմիսկ Հունաստանի կառավարության դեկապար Վենիգելոսը Փարիզի վեհաժողովի նիստերից մեկում հայտարարել էր, թե հայերն արժանի են Տրապիզոնն ունենալու<sup>70</sup>:

<sup>70</sup> Տե՛ս Torosyan Sh., Trabzon for Armenia as an opportunity of access to the Black sea and pontic greeks position (1919-1920), «Բանբեր հայագիտության», թիվ 3, 2015, էջ 105:

Սակայն հույները, ի դեմս «Պոնտոս» հունական ընկերության, որը ձևավորվել էր Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո, դիմեցին Փարիզի վեհաժողովին՝ պահանջելով Տրապիզոնի վիլայեթում (Զանիկ և Ամասիա սանծակների հետ միասին) ստեղծել հունական (պոնտական) պետություն կամ այն կցել մեծ Հայաստանին<sup>71</sup>: Այդ մասին է վկայում «Ժողովրդի ձայն» օրաթերթի հետևյալ հրապարակումը. «Կազմակերպությունը է յատուկ մի կոմիտ՝ վերականգնելու պատմական Պոնտական պետութիւնը՝ Տրապիզոնի և Սամսունի վիլայեթների միջև: Գլխաւոր կոմիտէն գտնուում է Մարսելում. ագիտացիոն կոմիտեներ լինելու են Կովկասում, Եգիպտոսում, Շլեցարիայում և Ամերիկայում: Կոմիտէն յայտարարում է, որ Սև ծովի ափին, Կովկասի սահմանի և Սամսունի միջև ապրում են մեկ միլիոն յոյներ: Նրանք յոյս ունեն, որ հաշտութեան վեհաժողովը կը բաւարարէ իրենց պահանջը և Պոնտական պետութիւնը կը վերածնուի»<sup>72</sup>:

Պոնտոսի հույների կողմից Եվրոպայում ստեղծված վերոնշյալ «Պոնտոս» կազմակերպության նախագահ Կոստանտինիտեսը բողոք է Ենրկայացնում հայերի ձգտումների դեմ: Հույները ֆրանսերեն լեզվով հոդվածներ են հրատարակում, թե իրենք չեն ուզում թուրքական լուծը փոխարինել հայկականվ, պատրաստ են գենքով պաշտպանել իրենց իրավունքը և այլն<sup>73</sup>: Այդ բողոքը պայմանավորված էր նրանով, որ ըստ հույների՝ Թուրքիայից հայերի հետ միասին անջատվելու պարագայուն հայերի կողմից պոնտացի հույների կլանման վտանգ կառաջանանա<sup>74</sup>: Սա իհարկե թյուր տեսակետ էր, որը նպաստեց Պոնտոսի կործանմանը:

1919 թ. ապրիլին Փարիզում բանակցություններ տեղի ունեցան Հայ ազգային առաջին համագումարի և Եվրոպայի պոնտահույների ներկայացուցիչների միջև: Հույները մերժեցին ներքին ինքնավա-

<sup>71</sup> Տե՛ս Արգումանյան Մ., Արհավիրքի վերածնունդ, Երևան, 1973, էջ 230-231:

<sup>72</sup> «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 19 յունուար, 1919, թիվ 13:

<sup>73</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 182, թ. 10:

<sup>74</sup> Տե՛ս Հունական արխիվային փաստաթրեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918-1920), հունարենից թարգմ. Դ. Բարթիկյանը, էջ 35:

րության իրավունքով Հայաստանին միանալու, իսկ հայերը՝ համադաշնություն կազմելու առաջարկը: Օրակարգում մնում էր երկու առաջարկ:

1. Պոնտոսը դառնում է անկախ հանրապետություն և Հայաստանին ազատ ելք է տալիս ՈՒզԵ և Աթինե նավահանգիստներով (հույների առաջարկը),
2. Հայաստանը և Պոնտոսը կազմում են դաշնություն՝ Շվեյցարիայի օրինակով (հայերի առաջարկը)<sup>75</sup>:

Այստեղ Կոստանտինիտեսը վրդովվել էր Ազգային պատվիրակության ներկայացուցիչներ Պողոս Նուբար փաշայի և Գ. Նորատունկյանի վարքագծից, երբ հայ գործիչներն առաջ էին քաշել Տրավիզոնը Հայաստանին միացնելու հարցը, ինչը հիասթափեցնում է Կոստանտինիտեսին և վտանգում հետագա համագործակցության հնարավորությունը:

Հայ-հունական միասնական ճակատի ստեղծման ջատագով որոշ հայ գործիչներ ևս դեմ էին Տրավիզոնի պահանջով սրել հայ-հունական հարաբերությունները: Այդ կապակցությամբ Ա. Թյուրապյանը գրում է. «Ինչ հարկ կար Տրավիզոնի և այլնի խնդիր հարուցանել, տակավին չսպանված գայլի մորթը իրարու ծեռքէ խելու ելլել»<sup>76</sup>: Այս տեսակետը, այնուամենայնիվ, պարտվողականության որոշակի տարր պարունակում էր:

Սակայն արդեն 1920 թ. սկզբներին հույները մասամբ փոխեցին իրենց դիրքորոշումը: Ծիշտ է, նրանք շարունակում էին բողոքել Տրավիզոնը հայերին տրամադրելու հարցում, բայց ելնելով Պոնտոսի անկախության հարցում մեծ տերությունների բացասական դիրքորոշմանց՝ ստիպված էին խորհել Հայաստանի հետ միանալու մասին, ուստի պատվիրակություն ուղարկեցին Հայաստան՝ Փարիզում սկսած բանակցությունները շարունակելու համար: Հայոց կաթողիկոսին այցելելու պատրվակով 1920 թ. հունվարի 1-ին Պոնտոսի հույն մետրոպոլիտ Ֆիլիպիոնիս Խորիսանթոսը (Խորիսանֆ) ժամանում

<sup>75</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 182, թ. 11:

<sup>76</sup> Թյուրապյան Ա., Հայ ժողովողի դատաստանին առջև. 1914-1924, Մարտել, 1925, էջ 23:

Է Երևան: Խրիստոնքը Վենիգելոսի մոտիկ գործակիցն էր և Փարիզում պոնտական պատվիրակության նախագահը: Ինչպես նշում է Սիմոն Վրացյանը, Պոնտոսի հոլոները պահանջում էին Պոնտոսի անջատումը Թուրքիայից և առանձին հունական պետության ստեղծումը: Այդ պետության մեջ պետք է մտներ Ուզբեկ-Սիմոնական ամբողջ տարածությունը (Լազիստանը) Պոնտոսյան լեռների և Սև ծովի միջև՝ 1 220 000 քնակչությամբ, որից՝ 800 000 մահմեդական, 350 000 հոլոյն և 70 000 հայ: Խրիստոնքը եկել էր որոշելու Հայաստանի և Պոնտոսի հարաբերությունները և առաջարկում էր՝ կամ 1. Պոնտոսի Հանրապետությունը կկազմե մեկ դաշնային մասը Հայաստանի Հանրապետության, կամ 2. Պոնտոսը կլինի ինքնուրույն և Հայաստանի հետ կմիանա համադաշնակցային իիմունքներով, և կամ 3. Անկախ և հավասարազոր Պոնտոսն ու Հայաստանը իրար հետ կկապվեն դաշնակցությամբ կամ զինակցությամբ: Վերջին դեպքում Հայաստանը կունենա սեփական ծովային ելք Աթինեում:

Խրիստոնքին Երևանում լավ ընդունեցին և կնքվեց հայ-պոնտական պայմանագիրը, ըստ որի՝ 1. Պոնտոսը վերոնշյալ սահմաններում մտնելու է Հայաստանի կազմի մեջ՝ իբրև նրա դաշնային մեկ մասը, իր ներքին գործերում Պոնտոսը կառավարվելու էր սեփական սեյմի միջոցով, 2. հայկական և պոնտական պատվիրակությունները Փարիզում գործելու էին համերաշխ, 3. Եթե Հայաստանի և Պոնտոսի անկախությունները մերժվի, հայերն ու հոլոները միասին քայլեր են ձեռնարկելու մինչև ապստամբություն՝ հարկադրելու համար, որ ճանաչվի ընդհանուր անկախությունը<sup>77</sup>:

Ի հավելումն այս կետերի՝ նախատեսվում էր նաև, որ Պոնտոսի բանակը, զինվորական նախարարությունը, դրանական համակարգը, պետական ֆինանսները, արտաքին քաղաքականությունը, փոստ և հեռագրական վարչությունը, ցամաքային և ծովային հաղորդակցությունը պետք է լինեն Հայաստանի Հանրապետության հետ ընդհանուր և միավորված<sup>78</sup>: Այս պայմանագիրը կնքվել է հունվարի 2-ին Խատիսյանի տանը կառավարության անդամների մա-

<sup>77</sup> Տե՛ս Վրացյան Ա., նշվ. աշխ., էջ 383:

<sup>78</sup> Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 188-189:

նակցությամբ, իսկ հունական կողմը ներկայացնում էին Խորիսանֆը և Թիֆլիսում հունական դիվանագիտական ներկայացուցիչ Ստավրիտակիսը<sup>79</sup>: Փաստորեն, անցավ Փարիզում առաջ քաշված հայկական առաջարկը, և Շվեյցարիայի օրինակով Պոնտոսը դաշնային պայմանագրով պետք է միանար Յայաստանին: Հունվարի 7-ին Յայաստանի կառավարությունը հաստատեց հայ-պոնտական համաձայնագիրը<sup>80</sup>:

Երևանի համաձայնագրից հետո Յայաստանի Յանրապետության արտգործնախարար Ա. Խատիսյանը և Փարիզում հունական պատվիրակության ղեկավար, Հունաստանի վարչապետ Է. Վենիգելոսի կարգադրությամբ Պոնտոսի հարցերով գրադպող գնդապետ Դիմիտրիոս Գոթենիոսիսը (Կաթենիոտիս), Թիֆլիսում հայ-հունական դաշնություն ստեղծելու մասին նոր պայմանագիր են ստորագրում: Այդ բանակցություններին Յայաստանի կողմից մասնակցել են արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը և զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը: Ինչպես պատմում է Ռուբենը, որոշվեց համաձայնության գալ Հունաստանի հետ և մի ճակատ կազմել Երկուսին սպառնացող միլլիականների դեմ: Ըստ այդմ՝ Յայաստանին իբրև սեփականություն էր տրվում Սև ծովում մի նավահանգիստ Ոիգեի և ճորոտի միջև, իսկ Պոնտոսը դաշնում էր անկախ պետություն՝ Յայաստանի հետ համադաշնություն կազմելով<sup>81</sup>: Սակայն Փարիզի հայկական պատվիրակությունը առժամանակ չիրաժարվեց Տրապիզոնի նկատմամբ իր պահանջներից և չճանաչեց այդ պայմանագիրը՝ դիտողություն անելով Երևանին զիջողականության համար: Դա է վկայում այն փաստը, որ փետրվարի 24-ին Լոնդոն ժամանած Գոթենիոտիսի հետ հանդիպման ժամանակ, ժամոթանալով նրա և Խատիսյանի ստորագրած պայմանագրին, Ա. Ահարոնյանն ասում է. «Իմ կառավարությունը ինձ տակավին ոչինչ չէ հայտնել, և շատ ցավում եմ, որ անկարող եմ մեր պահանջները փոխել: Ավելացրի, որ մենք Տրապիզոնը հաստատապես չենք պահանջել, այլ որոշ

<sup>79</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 182, թ. 11-12:

<sup>80</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 259, թ. 11:

<sup>81</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 240:

տարածության վրա Սև ծովի ափին ելք ենք խնդրել Conference-ից՝ թողնելով նավահանգստի և ափերի տարածությունը որոշել իրեն՝ Conference-ին....»<sup>82</sup>: Այս կապակցությամբ գնդապետ Գրենիոտիսը փետրվարի 17-ին\* Լոնդոնից հեռագրում է Արենք՝ արտգործնախարարությանը. «...Այցելեցի Նուբար փաշային, նրան ներկայացրի Թիֆլիսում ձեռք բերված համաձայնությունները, որոնք նրան ապշեցրին: Հաջորդ օրը զարմանք հայտնեց և այ. Ահարոնյանը՝ Երևանի Հանրապետության ներկայացուցիչը: Նման անտեղյակության առնչությամբ շեշտեցի իմ տարակուսանքը...»<sup>83</sup>:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի կառավարության և հայկական պատվիրակությունների միջև գործողությունների աններդաշնակություն է նկատվում. մի կողմից կառավարությունը համաձայնագիր է կնքում հույների հետ, մյուս կողմից պատվիրակությունը տեղյակ չէ դրա մասին, իսկ տեղեկացվելուց հետո էլ մերժում է այն: Այս տարակարծությունները, ինչ խոսք, վճառում էին ընդիհանուր գործին և ցույց տալիս, որ կառավարությունը ոչ միշտ էր տիրապետում իրավիճակին:

Ըստ Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի կարծիքի, Տրապիզոնի հարցում հույների դիրքորոշման կտրուկ փոփոխության պատճառը հենց այդ համաձայնագիրն էր, որտեղ կառավարությունն ավելորդ զիջողականություն էր ցուցաբերել՝ հրաժարվելով Տրապիզոնի նկատմամբ հավակնություններից: Ինչպես գրում է Ա. Ահարոնյանը. «...Եվ հետևապես նրանք այլևս լսել չեն ուզում Տրապիզոնը մեզ զիջելու մասին»<sup>84</sup>:

Հայ պատվիրակների մոտ որոշակի կասկածներ էր ծնում նաև հունական և վրացական պատվիրակությունների թերմ ու սիրալիր

<sup>82</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 59:

\* Ահարոնյանի և Գրենիոտիսի ժամանակագրական տեղեկությունները որոշ տարբերություններ ունեն (ըստ Ահարոնյանի՝ իր և Գրենիոտիսի հանդիպումը տեղի է ունեցել փետրվարի 24-ին), տե՛ս նախորդ հղումը):

<sup>83</sup> Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հաճապետության շրջանում (1918-1920), հունարենից թարգմ. Յ. Բարթիկյանը, էջ 104:

<sup>84</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 59:

շփումներն ու բանակցությունները: Մեր պատվիրակները կարծում էին, որ այդքան զոհողությունների գնով գլուխ բերված համագործակցության միակ նպատակը հույների կողմից հայերի համակրանքը շահարկելն է, իսկ Պոնտոսը հայերի աջակցությամբ ազատազդրվելուն պես կարող է հանագործակցել Վրաստանի հետ<sup>85</sup>: Այս կասկածամտությունը, ինչպես կիամովքենք հաջորդ էջերում, անհիմն չէր, քանի որ վրաց պատվիրակությունը դեմ էր արտահայտվել Տրապիզոնը Հայաստանին հանձնելուն:

Պոնտոսի հույների ննան ճգումները հարուցում էին լազերի վրդովմունքը, որոնք աջակցություն էին ստանում Պոնտոսի հույնական ինքնավարության գաղափարի հակառակորդ անգլիացիների կողմից: Վերջիններիս հսկողության տակ գտնվող Բաթումում լույս տեսնող «Իսլամ Գյուրջիատան» (Մուսուլմանական Վրաստան) թերթը գրում է. «Լազերը շատ վրդովւած են այն տեղեկութիւնների վերաբերյալ, թե Կ. Պոլսում կազմուել է յունական ազգային կոմիտէ՝ պատմական Պոնտական թագաւորութիւնը վերականգնելու համար: Լազիստանի երիտասարդութիւնը պատրաստութիւններ է տեսնում պաշտպանելու իր հայրենիքը և իր գոյութիւնը»<sup>86</sup>:

Չնայած այս ամենին՝ 1920 թ. փետրվարի 23-ին Եվրոպայան Պոնտոսի նախագահ Կոնստանտինիդեսը Լոնդոնի խորհրդաժողովին հուշագիր է ներկայացնում Թուրքիայից Պոնտոսի անջատման և Հայաստանի Հանրապետության հետ դաշնություն կազմելու մասին<sup>87</sup>:

Այս գաղափարը սկսում է ինչ-որ տեղ խրախուսվել Անտանտի կողմից, քանի որ 1920 թ. սկզբներին բոլշևիկյան Կարմիր բանակը լուրջ հաջողություններ արձանագրեց Դեմիկինի դեմ պայքարում և գրավեց Ռուստովը՝ ճանապարհ հարթելով դեպի Կովկաս, իսկ հայպնտական հնարավոր դաշինքը գգալիորեն կուժեղացներ տարածաշրջանում բոլշևիկների դեմ բարձրացված պատճեշքը: Բանք հասել էր նրան, որ Վենիգենուսի հորդորով Հայաստանի և Պոնտոսի միջև ռազմական կոնվենցիա էր կնքվել բոլշևիկյան ներխուժման

<sup>85</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 104:

<sup>86</sup> «Ժողովրդի ձայն», 2 փետրուար, 1919, թիվ 24:

<sup>87</sup> Տե՛ս Արգումանյան Ս., նշվ. աշխ., էջ 252:

դեմ պայքարելու համար, որը ստորագրել էին Ռուբեն Տեր-Մինասյանը և գնդապետներ Կատենիոտեսն (Գոթենիոտիս) ու Անանիասոն<sup>88</sup>:

Իհարկե, հայերի և հույների համար առաջնայինն այդ դաշինքը քենալականների դեմ օգտագործելն էր: Կարևոր է նշել, որ հայ-հունական հակաքուրքական համագործակցությունն ավելի վաղ էր սկսվել: Դեռևս 1919 թ. սեպտեմբերի 1-ին քենալականների դեմ բանակցելու նպատակով Երևան էր ժամանել Թիֆլիսում հունական դիվանագիտական առաքելության ղեկավար Ի. Ստավրիդակիսը<sup>89</sup>: Հույների նպատակն էր տարածաշրջանում բնակվող տեղացի հույներից ստեղծել զինված ուժեր, որոնց կազմավորման վայրը պետք է լիներ Հայաստանը<sup>90</sup>:

Դետաքրիտ է նաև Հայաստանի՝ դեպի Սև ծով ելքի վերաբերյալ Անտանտի տերությունների դիրքորոշումը: Ֆրանսիացիների դիրքորոշումը ավելի հստակորեն երևաց մեր պատվիրակների և Բերթըլոյի միջև կայացած հաջորդ հանդիպման ժամանակ՝ 1920 թ. փետրվարի 20-ին, Լոնդոնում: Հայ պատվիրակների այն հարցին, թե ինչ վիճակում է Հայաստանի՝ դեպի Սև ծով ելքի խնդիրը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի համար դա կենսական նշանակություն ունի, Բերթըլոյն չոր տոնով պատասխանում է, թե Ծվեցարիան էլ է ապրում առանց ծովի: Մեր պատվիրակները հակադարձում են, թե «Ծվեցարիան գտնվում է Եվրոպայի սրտում՝ շրջապատված քաղաքակիրք պետություններով. անալոգիան համոզիչ չէ: Վերջապես, մենք պատերազմից առաջ օգտվել ենք և՝ Թյուրքիայի ծովային ծամփաններից, և՝ Ռուսիայի: Այժմ մեզ այս երկու պետությունների լծից ազատելով քաղաքականապես, անարդար և հակասական կլինի դմել տնտեսական լծի տակ՝ մեր բոլոր թշնամի հարևանների»<sup>91</sup>: Բերթըլոյն կրկին խուսափողական պատասխան է

<sup>88</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>89</sup> Տե՛ս Հունական արխվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918-1920), հունարենից թարգմ. Յ. Բարթիկյանը, էջ 11:

<sup>90</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 16:

<sup>91</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 54:

տալիս: Այս հարցի շուրջ Ֆրանսիայի չկամության նասին ակնարկել են նաև իտալական պատվիրակության անդամները հայ պատվիրակների հետ հանդիպման ժամանակ<sup>92</sup>:

Բայց արդեն փետրվարին նկատելի տեղաշարժ նկատվեց այս հարցում: Պողոս Նուբար Փաշայի և Ա. Ահարոնյանի Անգլիայի խորհրդարանի անդամ լորդ Ռոբերտ Սեսիլի հետ Լոնդոնում փետրվարի 22-ի հանդիպումից հետո փետրվարի 23-ին խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովը մի քանաձև է ընդունում, որտեղ մասնավորապես նշված էր. «Հայաստանի մանուկ հանրապետությունը Սև ծովի վրա պետք է ունենա իր ելքը...»<sup>93</sup>:

Ակնհայտ է դառնում, որ Անգլիան և Ֆրանսիան Հայաստանի դեպի Սև ծով էլք ունենալու հարցի շուրջ լուրջ տարակարծություններ ունեն: Ֆրանսիան բացահայտ հանդես եկավ այդ խնդրի լուծման դեմ, երբ խոսքը վերաբերում էր Տրապիզոնին: Տրապիզոնը Հայաստանին տալու առաջարկը դեռևս հունվարի 11-ի նոտայում համարվում էր աննպատակահարմար այն պատճառաբանությամբ, որ Տրապիզոնի վիլայեթի բնակչության ճնշող մեծամասնությունը, ըստ Ֆրանսիական կառավարության տվյալների, մահմեդական էին: Ըստ Երևույթին, Ֆրանսիացիները Միջերկրական ծովի արևելյան ափերին (Կիլիկիա, Սիրիա) և Փոքր Հայքում հաստատվելու դիմաց աջակցում էին թուրքերին կայսրության այլ հատվածները Թուրքիայի կազմում պահելու խնդրում: Եվ քանի որ Հայաստանի համար ծովային ելքի հնարավոր ուղիներից մեկը դիտվում էր Տրապիզոնը, ֆրանսիացիները կտրուկ հանդես եկան դրա դեմ: Նրանց կարծիքով Տրապիզոնի վիլայեթի բնակչության 80%-ը մահմեդականներ են, ուստի և երկիրը պետք է թուրքական մնա, իսկ երգումից Տրապիզոն երկարօժի կառուցումը գործնականում անհնարին է երկրի լեռնոտ մակերևույթի պատճառով, հետևաբար Տրապիզոնը հայերին տալն անիմաստ է<sup>94</sup>:

<sup>92</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 58:

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>94</sup> Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթերում (1828-1923թթ.), Զ. Կիրակոսյանի խմբագրությանը, Երևան, 1972, էջ 604:

Հայաստանի համար Տրապիզոնը կենսական նշանակություն ուներ: Այդ հարցում, Ելեկով միասնական մանդատի ձգտումից, Հայաստանին հատկապես աջակցում էր ԱՄՆ-ը: Վերջինիս կառավարությունը 1920 թ. մարտի 26-ին նոտա է հղում դաշնակից տերություններին, որտեղ ասվում էր. «Նկատի առնելով, որ Տրապիզոնը մշտապես եղել է Հայաստանի վրայով առևտրական ճանապարհի վերջին կայանը, և որ Վենիզելոսը, խոսելով այդ շրջանում բնակվող հույնների անունից, հայտարարել է, որ նրանք գերադասում են ավելի շուտ կապը Հայաստանի, քան թե Թուրքիայի հետ, ԱՄՆ-ի կառավարությունը հուսով է, որ տերությունները կհամաձայնեն Տրապիզոնը տալ Հայաստանին»<sup>95</sup>: Սակայն հույններն ավելի ագրեսիվ էին դարձել: Հունական պատվիրակությունը, մարտին և նաև դրանից առաջ Լոնդոնում այցելելով հայկական պատվիրակությանը, սպառնում է, որ եթե հայերը շարունակեն պահանջել Տրապիզոնը, ապա իրենք կմիանան բոլոքներին, որովհետև Տրապիզոնը Պոնտոսի գլուխն է, և հույնները թույլ չեն տա զլուխն անջատել մարմնից<sup>96</sup>: Իհարկե, այդ այցելություններն ու սուր խոսակցությունները պաշտոնական բնույթ չեն կրում և նպատակ ունեն հայերին ետ պահել Տրապիզոնի նկատմամբ հավակնություններից: Ուստի հայկական կողմը բազմաթիվ դժվարություններին հունական թշնամնաքը չավելացնելու և հունական կառավարության բարյացակամությունը պահպանելու նպատակով արդեն օգոստոս ամսին որոշում է իրաժարվել Տրապիզոնի պահանջից<sup>97</sup>: Այդ որոշման վրա ազդեց նաև Սկրի պայմանագրով նախատեսված Հայաստանին Տրապիզոնի նավահանգստով տնտեսական ելք տրամադրելու հանգամանքը: Իսկ Վենիզելոսը արդեն հուլիս ամսին իրապարակեց իր փոփոխված դիրքորոշումը. «Իմ փափաքս էր տեսնել, որ Պոնտոս ու Հայաստան դաշնակցային պետութիւն մը կազմած են: Բայց ծրագրին իրականացումը անկարելի եղաւ: Պոնտոսի յոյները ինքնավար ըլլալ կուզին... Տրապիզոն,

<sup>95</sup> Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 282:

<sup>96</sup> Տե՛ս Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 122:

<sup>97</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 123:

Պոնտոսի մայրաքաղաքը տնտեսական ելք պիտի ծառայէ Յայաստանի (համար-Ծ.Թ.)»:<sup>98</sup>

ՍԱՐԻ պայմանագրի ստորագրումից հետո, երբ պարզ դարձավ, որ հայ-թուրքական սահմանագծումը պետք է իրականացնի ԱՄՆ նախագահը, Փարիզի հունական պատվիրակությունը որոշեց մի ընդարձակ հեռագիր ուղարկել Վ. Վիլսոնին և Խնդրել, որ Յայաստանի սահմանները գծելիս չնորանա, որ Տրապիզոնն ի սկզբանե հելլենական քաղաքը է եղել և այժմ էլ նրան չի կարելի զատել հելլենությունից<sup>99</sup>:

ՄԵԾ տերությունները դեմ էին Պոնտոսում երկրորդ հունական պետության ստեղծմանը, ուստի հույները պետք է ավելի լուրջ համագործակցության եզրեր փնտրեին Յայաստանի հետ: Սակայն գնդապետ Գորենիուտիսն իրավամբ նկատում է, որ պոնտացի հույն դիվանագետների, այդ թվում նաև Տրապիզոնի մետրոպոլիտ Ֆ. Խրիստանթոսի միամտությունն ու ոչ պրօֆեսիոնալիզմը խանգարեցին գործին: Յայաստանը, ելք չունենալով դեպի արտաքին աշխարհ, պահանջում էր Տրապիզոն՝ այն համարելով իր միակ փրկությունը: Սակայն պոնտացի հույները առաջ քաշեցին «Պոնտոսի անբաժանելիության» մասին վարկածը և վերջնականապես թաղեցին Պոնտոսի ազատագրության հարցը, որում, հարկավ, իրենց լուման ունեին նաև մեծ տերությունները<sup>100</sup>:

Յայ-հունական համաձայնագիրն այդպես էլ կյանքի չկոչվեց: Տրանսիայի, Խտալիայի և հատկապես Խորհրդային Ռուսաստանի համակողմանի աջակցությամբ քենալականները 1921-1922 թթ. ջախջախեցին հունական բանակը, և ամբողջ Պոնտոսը մաքրվեց հույներից: Խոկ Լոզանի խորհրդաժողովում փակվեց Պոնտոսի հունական պետություն ստեղծելու թեման:

<sup>98</sup> «ճակատամարտ», Կ. Պոլիս, 20 յուլիս, 1920, թիւ 506 (2327):

<sup>99</sup> Տե՛ս «Յառաջ», Երեւան, 16 յուլիսներ, 1920, թիւ 226:

<sup>100</sup> Տե՛ս Հունական արխիվային փաստաթերթի հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918-1920), հունարենից թարգմ. Դ. Բարթիկյանը, էջ 33-34:

## **1.4. Լազիստանով ծովային ելք տրամադրելու հարցի վերաբերյալ հայ-Վրացական տարակարձությունները: Դաշնակիցների դիրքորոշումը**

Տրապիզոնը Հայաստանին տալու ԱՄՆ-ի առաջարկը դաշնակիցների սրտով չէր: Խնդիրն ավելի բարդացավ, երբ Սան Ռեմոյում սկսվեց քննարկվել Երգորումը Հայաստանին չտալու հարցը: Այս ամենը, ինչպես նաև հույների բարձրացրած աղմուկը որոշակիորեն կասկածելի դարձրին Տրապիզոնով դեպի Սև ծով ելք ունենալու հարցը, և հայկական կողմը ստիպված էր քննարկել ծովային ելքի այլ տարբերակներ: Սկսեց շրջանառվել Լազիստանով (Ոիզեի նավահանգիստ) ծովային սահման ձեռք բերելու հնարավորությունը: Այս տարբերակն էլ անընդունելի էր անգլիացիների համար, որոնք առաջարկում էին հայերին բավարարվել Տրապիզոնով և հեռու մնալ Լազիստանից, քանի որ նրանք մտադիր էին Աջարիայում ստեղծել չեզոք պետություն և Լազիստանը կցել դրան:

Քանի որ Վրաստանն էլ էր վճռականորեն հավակնում Լազիստանին, ուստի հայ-Վրացական հարաբերություններում ծայր առավ Լազիստանի խնդիրը, որը ծագեց 1920 թ. սկզբներին, երբ Հայաստանի՝ դեպի ծով ելքի հարցը քննարկելիս հնարավոր տարբերակներից մեկը սկսեց դիտվել հենց այդ տարածաշրջանը:

Լազիստանը (Լազիկա) Տրապիզոնի վիլայեթի Տրապիզոնից դեպի արևելք ընկած Սև ծովի առափնյա սանջակներից մեկն էր, որը ձգվում էր մոտավորապես Ոիզե-Աթինե-Խոնա գծով: Լազիստանի նկատմամբ հավակնություններ ունեին անգլիացիները, հույները, հայերը, վրացիները և իհարկե քեմալականները: Անգլիացիների հավակնությունները դադարեցին 1920 թ. գարնանը, երբ նրանք վերջնականապես հրաժարվեցին Աջարիայի և Լազիստանի տարածքում իրենց հովանու ներքո խամաճիկ պետություն ստեղծելու ծրագրից: Յույների հավակնությունները ի հայտ եկան դեռևս 1919 թ. սկզբներին, երբ նրանք առաջ քաշեցին Պոնտոսի ինքնավար հանրապետություն ստեղծելու ծրագրիը: Յույները իրենց պահանջը հիմնավորում էին պատմական իրավունքով և տարածաշրջանի ազ-

գագրական կազմով: Այդ նույն ժամանակ վրաց պատվիրակությունը<sup>101</sup> Փարիզի վեհաժողովում հանդես եկավ հայտարարությամբ՝ հիմնավորելով իրենց իրավունքները Լազիստանի նկատմամբ, իսկ մի փոքր անց այդ ամենը շարադրեցին նաև վեհաժողովին ներկայացրած իրենց հուշագրում<sup>102</sup>:

Քենալականների հավակնություններն ամրագրվեցին 1919 թ. հուլիսի 23-ին Երգրունում իրավիրված «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության կազմակերպության» համաժողովի կողմից ընդունված «Ազգային ուխտի» մեջ, որի առաջին հոդվածում նշված էր, որ Տրապիզոնի նահանգը Զանիկի շրջանի հետ միասին կազմում են Օսմանյան կայսրության անբաժանելի մասը<sup>103</sup>:

Յայաստանի ծովային սահմանի հարցում անգլո-ֆրանսիական հակասությունները հատկապես ակներև դարձան Գերագույն խորհրդի կողմից ստեղծված, Յայաստանի սահմանները որոշող միջազգային հանձնաժողովի նիստում, որը իրավիրվել էր 1920 թ. փետրվարի 21-ին՝ Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը կազմելու նպատակով փետրվարի 12-ից ապրիլի 10-ը Լոնդոնում ընթացող Գերագույն խորհրդի խորհրդաժողովի շրջանակներում: Մինչ այդ, խորհրդաժողովը հայկական խնդիրներին անդրադապ փետրվարի 16-ի նիստում, որտեղ Ֆրանսիայի ներկայացուցիչ Ֆ. Բերթըլոն նեմ արտահայտվեց Տրապիզոնը Յայաստանին տրամադրելուն՝ նշելով, որ Յայաստանը կարող է արտոնություններ ունենալ Կարս-Բարում կառուցվելիք երկարգծում, Կիլիկիայով՝ մինչև Ալեքսանդրետի նավահանգիստը և Անատոլիայով՝ Էրզրումից

<sup>101</sup> Փարիզի վեհաժողովում վրացական պատվիրակության դեկավարներն են Կառլ (Սիկոլայ) Չխեհձեն և Ակակի Ծերեթելին: См. **Жордания Н.**, Моя жизнь, Париж, 1968, стр. 91. Իսկ պատվիրակությունը բաղկացած էր 19 անդամներից, որոնց թվում էին Գ. Ոռմիլաձեն, Ն. Զավելին, Ի. Զավախիշվիլին և ուրիշներ: См. **Мархулия Г.**, Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), Тбилиси, 2007, стр. 64.

<sup>102</sup> См. **Авалов З.**, Независимость Грузии в международной политике 1918-1921 гг., Париж, 1924, стр. 255.

<sup>103</sup> Տե՛ս **Փափազեան Վ.**, նշվ. աշխ., էջ 330:

մինչև Կոստանդնուպոլիս<sup>104</sup>: Իտալիայի վարչապետ Նիտուին համաձայնվում է Բերթըլոյի հետ, իսկ Լոյդ Չորջը խնդրի լուծումը դյուրացնելու համար առաջարկում է ստեղծել Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողով: Այդ հանձնաժողովը ստեղծվեց հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, որը Հայաստանի սահմանների հետ կապված այլ հարցերի շարքում պետք է քննարկեր նաև Բաբումի և Լազիստանի սանջակի ապագա կարգավիճակին վերաբերող հարցերը<sup>105</sup>: Այս հանձնաժողովի մեջ էին մտնում Անգլիան՝ ներկայացուցիչներ Ռոբերտ Վանսիտտարտը և գնդապետ Գրիբենը, Ֆրանսիան՝ ներկայացուցիչներ Կամերերը և գնդապետ Շարդինին, Իտալիան՝ ներկայացուցիչներ Գալլին և գնդապետ Գաստոլդին և ճապոնիան՝ ներկայացուցիչներ Իսաբուրո Գոշիդան և լեյտենանտ Կիյուշի Աննոն<sup>106</sup>:

Հանձնաժողովի փետրվարի 21-ի նիստում հայ պատվիրակներ Պողոս Նուբարը, Ա. Սիարոնյանը և գեներալ Կորգանյանը ներկայացրին Հայաստանի սահմանների վերաբերյալ գրավոր պահանջագիր և քարտեզը, որը կազմել էր գեներալ Կորգանյանը: Այդ քարտեզը, ըստ որի հայ-թուրքական սահմանն անցնում էր Տրապիզոնից, Երզնկայից, Դերսիմից և Խարբերդից արևմուտք, հարուցեց Ֆրանսիայի ներկայացուցիչ ազգությամբ հրեա Կամերերի խիստ դժգոհությունը: Իսկ Անգլիայի ներկայացուցիչ Վանսիտտարտին հետաքրքրում էր այն հարցը, թե, եթե Տրապիզոնը տրվի հայերին, ապա նրանք կպահանջեն նաև Լազիստանը: Ա. Սիարոնյանը վճռականապես «այո» է ասում՝ գիտակցելով, որ այդ պատասխանը կարող է դուր չգալ անգլիացուն<sup>107</sup>: Հայ պատվիրակները, ելնելով Տրապիզոնի շուրջ հույների բարձրացրած աղմուկից և Ֆրանսիայի չկամությունից, վախենում էին, որ Տրապիզոնը իրենց չտալու դեպքում Հայաստանը կզրկվի ծովային ելքից, ուստի պահանջելով երկուսն

<sup>104</sup> См. **Ованнисян Р. Г.**, Международные отношения Республики Армения 1918-1920гг., Ереван, 2007, стр. 428-430.

<sup>105</sup> См. там же, стр. 430.

<sup>106</sup>Տես ՂԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 290, թ. 74, նաև՝ **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ. էջ 60, նաև՝ **Ավալով Յ.**, սկզ. թագ., տպ. 254:

<sup>107</sup>Տես **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ. էջ 61:

Էլ՝ հույս ունեին, որ կատանան մեկն ու մեկը: Սակայն Վանսիտտարտը, առաջնորդվելով ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու փորձված քաղաքականությամբ, ընդինանում է, թե լազերը վրացական ծագում ունեն, և վրացիները պահանջում են այն: Ա. Ահարոնյանը հակադարձում է նրան՝ նշելով. «Նախ լազերի վրացական ծագումը խիստ կասկածելի է, սակայն, եթե նրանք վրացի ծագումն իսկ ունենային, խնդիրը դրանից նազաչափ չէր փոխվի, և վրացիք անգամ այդ դեպքում մեզնից ավելի նվազ իրավունք կունենային այդ հողամասի վրա»<sup>108</sup>: Բացի դրանից՝ Լազիստանը իրենց պետք է ոչ թե որպես տարածք, այլ որպես ելք դեպի ծով՝ Հայաստանի կենսական կարիքներն ապահովելու համար, որի կարիքը վրացիները չունեն, ապա նաև նշում, որ վրացիները տիրապետում են 300 000 հայերի վրա, իսկ իրենք հավակնում են ընդամենը 50-60 հազար լազերի, որոնց վրացական ծագումը նույնիսկ ապացուցված չէ: Յաշվի առնելով նաև այն հաճամանքը, որ ո՞չ Տրապիզոնում և ո՞չ էլ ՈՒգեռում երկարուղի չկա, հայ պատվիրակները խնդրում են հանձնաժողովից Բարումով տնտեսական ելք ապահովել Հայաստանի համար դեպի Սև ծով, առանց որի անհնար կլինի ոտքի հանել ավերակների վերածված երկիրը<sup>109</sup>:

Այստեղ հատկանշականն այն է, որ դեռևս Գերագույն խորհրդի փետրվարի 16-ի նիստում Անգլիայի արտգործնախարար լորդ Քերգոնը հայտարարել էր, որ անգլիական զինվորական իշխանությունները խորհուրդ չեն տալիս երգումը նտցնել Հայաստանի կազմի մեջ, քանի որ դա մշտական սպառնալիք կներկայացնի Հայաստանի համար՝ հաշվի առնելով նրա նկատմանք թուրքերի հավակնությունները: Յետևաբար, ըստ Քերգոնի, դեպի Սև ծով ելք հայերին կարելի է շնորհել Լազիստանով, որը, սակայն, կարելի է հիմնավորել միայն տնտեսական տեսանկյունից, քանի որ այդտեղի բնակիչները վրացական ծագմամբ մուսուլմաններ են<sup>110</sup>: Ահա թե ինչու էր հակադարձում Վանսիտտարտը մեր պատվիրակներին՝ մատնանշելով վրացի-

<sup>108</sup> Նոյն տեղում, էջ 62:

<sup>109</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>110</sup> См. **Օվաննիսյան Р.**, սկզ. բաժ., ստ. 429.

ների հավակնությունները: Մեր հավակնությունները չեզոքացնելով վրացականով՝ անգլիացիների համար ավելի ոյուրին կլիներ Լազիստանը պահել իրենց շահերի տիրույթում: Եվ քանի որ թե՛ Լազիստանի և թե՛ Բաթումի խնդիրները շատ կարևոր էին հայ-Վրացական սահմանազատման հարցը լուծելու առումով, 1920 թ. փետրվարի 25-ին, այսինքն՝ մեր պատվիրակների հետ հանդիպումից չորս օր անց, վրաց պատվիրակությունն է հրավիրվում Յայաստանի սահմանները որոշող հանձնաժողով՝ այդ հարցերը պարզաբանելու համար<sup>111</sup>: Ըստ վրաց պատվիրակության՝ իրենց պահանջները Լազիստանի, ինչպես նաև Էրզրումի նահանգի՝ դրան հարող Բայբուրդի գավառի որոշ մասերի վրա, որոնք հիմնավորվում էին որոշակի պատճական և ազգագրական տվյալներով, ինչպես նաև վրաց հանրության մեջ տարածված հայացքներով, ի սկզբանե հանդիսանում էին պայմանական, այն մտքով, որ դրանք կախված էին Արևելյան Անատոլիայում թուրքական իշխանության վերացումից և նոր Յայաստանի ստեղծումից: Վրացիների դիտարկմանք, եթե նախկին Օսմանյան կայսրության որոշակի տարածքներ ենթակա են վերաբաժանման, և հայ-Վրացական սահմանը պետք է անցնի նորովի ավագանով և Սև ծովի առափնյա մուսուլմանական պրովինցիաների տարածքներով, ապա, բնականաբար, Վրաստանը պետք է պահանջի Լազիստանը, որը Բաթումի ծովափի ուղղակի շարունակությունն է, թեկուզ ուժգին թրացված, բայց արյանք և լեզվով վրացիներին նոտ կանգնած բնակչությամբ<sup>112</sup>: Այստեղ հատկանշականն այն է, որ վրացիները պատրաստ էին չքննարկել Լազիստանի հարցը, եթե այն մնալու էր Թուրքիային, իսկ հույների և հատկապես հայերի պարագյում կենաց ու մահու պայքար էին մղում:

Վրացական կառավարության անհանգստությունը կապված էր այն բանի հետ, որ այդ օրերին լուրեր էին տարածվում Եվրոպայում, ինչպես «Եխո դե-Պարի» թերթի թրթակիցն էր Լոնդոնից հաղորդում, թե հաշտության խորհրդաժողովը նախատեսում է Թուրքիան բաժանել 9 մասի, որոնցից մեկը Լազիստանի Յանրապետությունն է՝ ա-

<sup>111</sup> См. **Авалов З.**, укаz. раб., стр. 255.

<sup>112</sup> См. там же.

ուանց Տրապիզոնի, և որը հատուկ պայմաններով պետք է կապվի Հայաստանի հետ<sup>113</sup>:

Հանձնաժողովում նախագահող Ֆրանսիայի ներկայացուցիչ Կամերերը վրաց պատվիրակության ներկայացուցիչ Զուրաբ Ավալովի վերը բերված փաստարկները բավականաչափ հիմնավոր է համարում, սակայն նշում է, որ լազերը բոլորովին էլ ցանկություն չեն հայտնել միանալ Վրաստանին, և որ օրինակ 1918 թ.\* թուրքերը Բաթումը գրավել են հենց լազերի օգնությամբ: Ավալովը դա բացատրում է նրանով, որ քանի դեռ այդ երկրամասում պայքար էր գնում Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև, ոչ միայն լազերի, այլ նաև նախկին Ռուսական Վրաստանի մուսուլմանների համակրանքը եղել է իրենց հավատակիցների կողմը: Բայց այժմ, եթք մեծ տերությունները որոշել են ստեղծել անկախ Հայաստան, և Թուրքիայի իշխանությունը նրա նախկին տիրույթների այդ մասի վրա չի պահպանվելու, արդարացի հարց է առաջանում, ո՞ւր տանել լազերին, կամ նրանք ո՞ւր են նախընտրում գնալ՝ դեպի անկախ Վրաստան, թե՝ Հայաստան: Եթե խնդիրը այդպես դրվի, նշանակում է՝ այն արդեն լուծված է<sup>114</sup>:

Ինչպես տեսնում ենք, վրացական պատվիրակությունը բավականաչափ վստահ էր Լազիստանի հարցում: Ինչ խոսք, այդ վստահությունը ավելի շատ արհեստական էր՝ տպավորություն գործելու համար և հեռու էր օբյեկտիվ իրականությունից, ինչի մասին ակնարկեց Կամերերը հանձնաժողովի նիստում: Այդ ակնարկը, իհարկե, նախևառաջ ուղղված էր Անգլիայի դեմ, որը, լազերին վրացական ծագում վերագրելով, ծգուում էր հիմքեր ստեղծել բրիտանական հովանու ներքո Աջարիա-Լազիստան խամաճիկ պետություն ստեղծելու ծրագրի համար:

Իսկ վրացիներն իրականում այնքան էլ վստահ չեն լազերի հարցում: Այդ մասին է վկայում «Սախալիս Սաքմե» թերթի 1920 թ.

<sup>113</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 217, թ. 28, նաև՝ «Յառաջ», 1 մայիս, 1920, թիվ 89:

\* Զ. Ավալովի գործի բնագրում նշված է 1928 թ., որը, վստահաբար, տպագրական վրիպակ է:

<sup>114</sup> Ծմ. Ավալով Յ., սկզ. թաճ., ստուգ. 255-256.

ապրիլի վերջերի հետևյալ իրապարակումը. «...Մահմեդական վրացիները և նաև քրիստոնյա վրացիները պետք է ցույց տան աշխարհին, որ իրենք չեն ուզում վիրավորված լինել և հիմարի անուն վաստակել: Մենք դեմ չենք, որ Հայաստանին դեպի ծով ելք տրվի, բայց ոչ Վրաստանի հաշվին: Պետք է Էմիսարներ ուղարկել Լազիստան, որպեսզի բացատրեն ժողովրդին, թե իրենց համար ինչ դժբախտություն կլինի, եթե բավարարվեն հայ և հույն ինպերիալիստների պահանջները...»<sup>115</sup>: Լազիստանը հայերին հանձնելու և ճորոխի ձախ ափով Ոիզեի ուղղությամբ երկարգիծ կառուցելու վերաբերյալ «Սախալիս Սաքնեի» միտքն է շարունակում Վրաստանի ազգային և ազրարային քաղաքականության օրգան «Կլրե» լրագիրը իր 38-րդ համարում. «Կարող է պատահել, որ լազերի մարմնի վրայով երկաթուղի անցկացնելիս Հայաստանն իր գերեզմանը գտնէ մահմեդականների կողմից և (հայ-Ծ. Թ.) ժողովուրդն իր հայկական ձեռքը չղիպցն լազերի ու աճառացիների հողին ու ջրին: Բայց կարող է նաև պատահել, որ հայկական երկաթուղու կառուցումը փաստօրէն իր ձեռքն առնէ Անտանտի պետութիւններից որևէ հզօրագոյնը, որը ստանձնած կունենայ Հայաստանի մանդատը»<sup>116</sup>: Իսկ թե ինչ «դժբախտություն» է լինելու այդ երկաթուղին կառուցելու դեպքում, «Կլրեն» շարունակում է. «Եւ այդ կառուցելիք երկաթուղին, ինչպես յայտնի է, հսկայական հարιւած է հասցնելու Անդրկովկասի երկաթուղուն, և Վրաստանի երկաթուղուն կը մնայ տեղական դեր միայն խաղալու, որի հետեւանքն էլ կը լինի տնտեսական տագնապ մեզ համար»<sup>117</sup>: Ավելի մեծ անկեղծություն դժվար է պատկերացնել, որը ցավոք իր ողջ էռթյամբ հակահայկական էր: Ապա «Կլրեն» շարունակում է՝ ինքն իրեն հակասելով. «Իրանը լազերը ձգտում են ազգային անկախութեան, նրանք իրանց արիւնը կը թափեն հայ տիրապետողների դեմ կրւելով: Լազերն իրանց աչքերն ուղղված ունեն դեպի Վրաստան և Թիֆլիսի կառավարութիւնը պետք է օգտագործ այդ մոմենտը լայն չափերով... Կառավարութիւնն այժմ իր քննութիւ-

<sup>115</sup> ՀԱԱ, ֆ. 275, գ. 5, զ. 217, թ. 28:

<sup>116</sup> «Նոր աշխատաւոր», Թիֆլիս, 27 յուլիս, 1920, թիվ 89 (161):

<sup>117</sup> Նույն տեղում:

նը Լազիստանում պետք է բռնե»<sup>118</sup>: Յարց է առաջանում. եթե լազերը ձգտում են ազգային անկախության, ապա ինչո՞ւ է Վրաստանը ջանում «իր քննությունը բռնել» Լազիստանում: Դառն իրականությունն այն է, որ թե՝ «Սախալիս Սաքմեն», թե՝ «Կլդեն» և թե՝ Վրացական մյուս թերթերը հստակորեն արտահայտում էին վրաց կառավարության և քաղաքական շրջանակների տեսակետը: Ի դեպ, ըստ վրաց հանրության մեջ տարածված տեսակետի, ճիշտ չէր նաև Տրապիզոնը Յայաստանին հատկացնելը, քանի որ այնտեղ հայերը կարող էին հասնել՝ միայն գրավելով ուրիշի տարածքները<sup>119</sup>: Պարզ էր, որ սրանով վրացիները կասկածի տակ էին առնում երգրումի հայկական պատկանելիությունը և ուղղակիորեն սպասարկում թուրքիայի շահերը: Դա պայմանավորված էր նրանով, որ Յայաստանից Տրապիզոն գնացող ծանապարհն անցնում է երգրումով: Դեռ ավելին, հետագայում նրանք փորձում էին հիմնավորել երգրումի և Տրապիզոնի վրացական պատկանելիությունը, որին մենք կանդրադառնանք հաջորդ գլուխներում: Ստացվում էր, որ վրացական կողմն ընդհանրապես դեմ էր Յայաստանի՝ դեպի Սև ծով սեփական ելք ունենալուն:

Վրաց մենշևիկների այս հակահայ քաղաքականությունն աստիճանաբար թշնամացնում էր նաև հայ և վրաց ժողովուրդներին: Ինչպես գրում է Ա. Զամայլյանը. «Զարմանալի կը լիներ, եթէ Վրաստանի հին ու նոր վարիչների կողմից մօտ տասը տարի հրահրուող հակահայկական տրամադրութիւնները համապատասխան անդրադարձում չունենային վրաց ժողովրդական զանգուածների վրայ: Այս զանգուածները, որ երկար ու ծիգ դարերի ընթացքին միշտ եղբայրական վերաբերունք են ունեցել դեպի հայ ժողովուրդը եւ մանաւանդ Վրաստան ապաստանած հայկական հատուածները, այժմն ըստ երեւոյթին շատ էլ չեն կառչում վաղեմի բարեկամութեան աւանդներին»<sup>120</sup>:

<sup>118</sup> Նույն տեղում:

<sup>119</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 217, թ. 27:

<sup>120</sup> Զամայլյան Ա., Յայ-վրացական կնճիռը, Երևան, 2011, էջ 203:

Իսկ ինչ վերաբերում էր լազերի վրացական ծագմանը, ըստԱ. Ահարոնյանի՝ որևէ հիմնարար ապացույց դրա մասին գոյություն չունի: Ըստ գիտության մեջ տարածված տեսակետի՝ լազերներ համարվում է քարթվելական լեզվաընտանիքի լեզու, ինչպես վրացերենը, մեգրելերենը և սվամերենը: Սակայն այս ժողովուրդների գենետիկ կապը հստակ ապացուցված չէ<sup>121</sup>: Ինչպես գրում է ռուս պատմաբան Ա. Շիրոկորադը. ««Լազեր» եզրույթը հիշատակվում է մ.թ. 1-ին դարից, «Քարթլին»՝ 8-րդ դարի սկզբից, «Մեգրելներ»՝ 9-րդ դարից...»»<sup>122</sup>: Այսինքն՝ վրացիների հավակնությունների ազգագրական ապացույցները հիմնավոր չեն:

Այժմ քնարկենք վրաց պատվիրակության առաջ քաշած մյուս՝ պատմական իրավունքի փաստարկը: Հնագույն ժամանակներից պատմական Լազիկան (Տրապիզոնից մինչև Բարում՝ Սև ծովի առափնյա տարածքը) մտել է մի շարք պետությունների կազմի մեջ կամ հանդիսացել է ինքնուրույն իշխանություն: Ք.ա. 6-5-րդ դարերում Լազիստանը Կոլխիսի թագավորության կազմում ընկել է Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ, ք. ա. 2-րդ դարում մաս է կազմել Փոքր Հայքի թագավորությանը<sup>123</sup>: Ք.ա. 2-րդ դարի վերջին ենթարկվել է Պոնտոսի թագավորությանը, իսկ Ք.ա. 1-ին դարում՝ Հռոմեական կայսրությանը<sup>124</sup>: Տարբեր ժամանակներում Լազիկան ընկել է Հայաստանի (Երվանդականների, Արտաշեսյանների) քաղաքական ազդեցության տակ: 3-րդ դարի վերջին առաջացել է Լազիկայի թագավորություն՝ Էգրիսին (Կողքիս (Եգր)): 6-րդ դարի կեսերին Լազիկան կորցնում է անկախությունը՝ 562 թ. նվաճվելով Բյուզանդիայի կողմից: 7-րդ դարի վերջին՝ 697 թ. Լազիկան ընկնում է Արաբական խալիֆայության լծի տակ, իսկ 8-րդ դարի սկզբին մտնում է Աբխազական թագավորության կազմի մեջ, որը կախման

<sup>121</sup>Տե՛ս [https://ru.wikipedia.org/wiki/Картвелъские\\_языки](https://ru.wikipedia.org/wiki/Картвелъские_языки)

<sup>122</sup>Широкорад А., Война и мир Закавказья за последние три тысячи лет, Москва, 2009, стр. 23-24.

<sup>123</sup>Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, մաս Ա, հերլ. Բ. Դարությունյան, Երևան, 2005, էջ 22:

<sup>124</sup>Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/Колхида>

մեջ էր գտնվում Բյուզանդական կայսրությունից<sup>125</sup>: Տրապիզոնի կայսրության գոյության ընթացքում (1204-1461 թթ.) Լազիկան մտնում է այդ պետության կազմի մեջ<sup>126</sup>: 1578 թ. այն գրավվում է թուրքերի կողմից և մտնում Օսմանյան կայսրության մեջ: 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով Լազիստանի արևելյան հատվածը Բարում քաղաքով անցնում է Յարական Ոտևաստանին, որտեղից էլ սկսվում է Բարումի մարզի (Աչարիայի) պատմությունը:

Ք. ա. 6-րդ դարում Լազիկայում իրենց գաղութներն (Դիռսկուրիադան և Ֆասիսը) են հիմնում հույները<sup>127</sup>: Այդ ժամանակներից մինչև այսօր հույները դառնում են Լազիստանի հիմնական ազգերից մեկը:

Հայերը Լազիկայում մեծ քանակությամբ սկսել են հաստատվել 8-րդ դարում, երբ արաբական հալածանքներից խուսափելով՝ 1200 հայ գյուղացիներ Համամ Ամատունի իշխանի և նրա հոր Շապուհի առաջնորդությամբ հիմնավորվում են այս ապահով լեռներում՝ Բյուզանդական կայսրության հովանու ներքո: Նրանց կենտրոնը կոչվում էր Տամբուր, որն ավելի ուշ Համամ իշխանի անունով կոչվում է Համամաշեն կամ Համշեն: Այսպես հիմք է դրվում Համշեն գավառին և համշենահայության գոյությամբ նաև՝ Հայկական Պոնտոսի պատմությանը: Խաչքար լեռնաշղթայի հովիտների մեջ համշենցիները քաղմանում և պահում են իրենց լեզուն ու հավատքը՝ լեռները զարդարելով բազմաթիվ վաճքերով և եկեղեցիներով մինչև օսմանցիների ասպատակությունները<sup>128</sup>:

Խաչքար լեռնաշղթան, որը զարմանալիորեն նույնիսկ թուրքական քարտեզներում է պահպանել իր հայեցի անունը, Պոնտական լեռնաշղթայի ամենաբարձր հատվածն է, ամենաբարձր գագաթը՝ Խաչքարը, 3937 մետր է<sup>129</sup>: Օսմանյան իշխանությունների բռնաճշումների ներքո 17-18-րդ դարերում համշենահայության գերակ-

<sup>125</sup>Տե՛ս <https://wikipedia.org/wiki/Էցրիս>

<sup>126</sup>Տե՛ս [https://wikipedia.org/wiki/Трапезундская\\_империя](https://wikipedia.org/wiki/Трапезундская_империя)

<sup>127</sup>Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/Կոլհիդա>

<sup>128</sup>Տե՛ս Վրու. Պատմիկեան Յ., Տայք, Բարձր Հայք: Վրացակա՞ն, թէ՞ հայկական, ճամբրոդական նօթեր, Երևան, 2005, էջ 61-62:

<sup>129</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 64:

շիո մեծամասնությունն ընդունում է իսլամ, իսկ նրանց որոշ մասն էլ գաղթում Սոչի, Սուխում և Աղեր, սակայն պահպանում են իրենց լեզուն և ազգային ու քրիստոնեական սովորույթները:

Այսօր էլ հազարավոր համշենահայեր են ապրում Լազիկայում, որոնց կյանքը Մեծ Եղեռնի տարիներին փրկվել է միմիայն իսլամադավանության շնորհիվ: Միայն Բազարի (Աթինե) գավառում, ըստ պաշտոնական տվյալների, ապրում են 15 000 հայախոս համշեցիներ<sup>130</sup>: Այսինքն՝ հայերը ևս հնուց ի վեր Լազիկայի հիմնական բնակչիքներից են եղել: Այստեղ որոշ քանակությամբ բնակվում են նաև մահմեդականացված Վրացիներ:

Օսմանյան նվաճումից հետո այս տարածաշրջանի որոշ հատվածներում բնակվող հույներն էլ հայերի և վրացիների նման ընդունում են մահմեդականություն, սակայն նրանց մոտ ձևավորվում է հետաքրքիր կրոնական երկվություն. «...Տրաբիզոնից Գիւմիշ-խսան տանող ճանապարհի վրայ, գտնուում են միջին բնակիչներ (կըսկըներ) - «մէցցօ-մէցցօներ», որ մարդ չգիտէ մուսուլման թուրքերի՝ հետ դասել, թէ՝ քրիստոնեայ յոյների հետ: Առաւոտեան խօսում են նրանք թուրքերէն և գնում են մզկիթ, երեկոյեան խօսում են յունարէն և կատարում են քրիստոնեական խորհուրդները: Ծագած յոյներից, բայց լազերի հետ խառնուած յոյներից, և տասնեօրներորդ դարում ընդունած իսլամը, այս երկլեզու և երկկրօն գիւղացիները ծածկում են օսմանցիներից իրենց քրիստոնեական ծեսերը, թէև այդ գաղտնիքը յայտնի է ամենքին և արհամարանքով թոյլատրուած ... »<sup>131</sup>:

Իհարկե, հիմնական բնակիչները լազերն են, որոնց ծագումը, ինչպես արդեն նշել ենք, շատ անորոշ է: Ըստ երևույթին, տարբեր ժամանակներում Պոնտական լեռներում հաստատված բնակիչներից ժամանակի ընթացքում ձևավորվել է լազ ժողովուրդը: Ինչպես գրում է Միսիթարյան միաբանության անդամ Յարություն Վարդապետ Պատիկյանը. «...Երբ ամէնքն ալ ծնշուած անտանելի տուրքերու բերին տակ, կամ վերջնապես հեռացած են, կամ ալ բռնի իսլա-

<sup>130</sup> Տես նույն տեղում, էջ 60:

<sup>131</sup> Ռեկլիս Է., Լազիստան, Յայստան եւ Թուրքիստան, թարգմ. Միաբանի, Վաղարշապատ, 1893, էջ 28:

նացած: Այս է պարագան Հայերուն, միլիոնը անցնող, որոնցմէ միայն Համշէնն է, որ մինչեւ վերջերս պահած էր իր լեզուն: Նոյնն է պարագան յոյներուն, կիսավայրենի լազերու վերածուած, վրացիները՝ կիւրծի (գյուրջի – Շ. Թ.) կոչուած և հիմա ամէնքն ալ փողկապաւոր «թուրք» հաւատարիմ քաղաքացիներ դարձած»<sup>132</sup>:

Այս ամենը կասկածելի են դարձնում Վրաստանի հավակնությունները Լազիկայի վրա նաև պատմական իրավունքի տեսանկյունից:

Զ. Ավալովի երրորդ փաստարկը, որ Լազիստանի վրա հավակնությունները հիմնավորվում են «Վրաց հանրության մեջ տարածված հայացքներով», ոչ մի քննադատության չի դիմանում: Այստեղ, կարծում ենք, պետք է փիլիսոփայորեն մոտենանք հարցին և ընդունենք, որ հանրության հայացքները, սովորաբար սեփական ազգային շահերից ելնելով, ավելի մաքսիմալիստական են լինում, քան պատմական իրականությունն է:

Դարկ է նկատել, որ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումները լակմուսի թղթի նման պարզորոշ ցույց տվեցին Հայաստանի՝ դեպի ծով Ելքի հարցում թե՝ անգլ-ֆրանսիական, թե՝ վրաց-հայկական հակասությունները: Ֆրանսիան խոստացել էր քենալականներին աջակցել Տրապիզոնի հարցում և հայերին մղում էր Լազիկայով ծովային Ելք պահանջելուն, իսկ անգլիացիները ծրագրել էին Լազիկայում ներառյալ Բաթումը, ստեղծել առանձին պետական կազմավորում և աշխատում էին Հայաստանի ծովային Ելքի հարցը լուծել Տրապիզոնով: Բաթումի հարցում թե՝ Ֆրանսիան և թե՝ Անգլիան հաճակարծիք էին. Հայաստանը պետք է Բաթումով Ելք ունենա դեպի Սև ծով, իսկ նավահանգիստը պետք է ունենա porto-franko կարգավիճակ: Վրաստանն էլ դեմ էր Հայաստանին սեփական ծովային Ելքի տրամադրմանը թե՝ Լազիկայում և թե՝ Բաթումում: Մրանք էին պատճառները, որ հայկական պատվիրակության մասնակցությամբ խորհրդակցությունում փետրվարի 21-ին Կամերերի և Վանսիտարտի նախաձեռնությամբ հիմնականում քննարկվեցին Տրապիզոնի և Լազիկայի խնդիրները,

<sup>132</sup> Վրդ. Պօտիկեան Յ., նշվ. աշխ., էջ 56:

իսկ փետրվարի 25-ին վրաց պատվիրակության նասնակցությամբ խորհրդակցությունում ակտիվորեն քննարկվեց նաև Բաթումի հարցը:

Ի վերջո, Գերագույն խորհուրդը, ունկնդրելով հանձնաժողովի կարծիքը, փետրվարի 27-ին առաջ քաշեց մի ծրագիր, որտեղ հայկական սահմանային խնդիրների առաջարկվող լուծումներում, քաղաքական և ազգագրական խոչընդոտներից ելնելով, նախատեսվում էր Տրապիզոնը հանձնել թուրքերին, իսկ ծովային ելք ապահովելու նպատակով Լազիստանը՝ որպես ինքնավար միավոր, մտցնել Յայաստանի կազմի մեջ, որը իհմնավորվում էր նրանով, որ լազերը, ունենալով հնարավոր վրացական ծագում, առանձնակի համակրանք չէին տածում վրացիների նկատմամբ և ցանկանում էին ապրել անկախ, որքանով որ հնարավոր էր<sup>133</sup>:

Ծրագրի քննարկման ընթացքում Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժյուլ Կամբրոնը և Խտալիայի ներկայացուցիչ Ինաբերիալին Լազիստանի հարցով մտահոգություն հայտնեցին՝ նշելով, թե ավելի լավ կլիներ Լազիստանը թողնել թուրքական տիրապետության ներքո այն պայմանով, որ դեպի ծով տանող ճանապարհների վրա Յայաստանին տրվեն անկապտելի իրավունքներ: Սակայն Թերզոնը նախազգուշացնում է, որ այդ դեպքում թուրքիան կօգտագործի Լազիստանը որպես հենակետ՝ Բաթումը գրավելու համար: Նա նաև նշում է, որ Յայաստանը չի խառնվի այդ ինքնավար պետության ներքին գործերին (ինչպես նշված էր հանձնաժողովի գեկույցում, Յայաստանի գերիշխանությունը Լազիստանի վրա լինելու էր զուտ անվանական), քանի դեռ երաշխավորվում է ճանապարհների օգտագործումը<sup>134</sup>: «Պարզաբանվեց նաև «անվանական գերիշխանություն» հասկացողությունը, որը հասկացվում էր որպես Լազիստանուն հայկական դրոշի բարձրացման իրավունք, որից հետո ծրագիրն ընդունվեց խորհրդաժողովի կողմից: Այստեղից պարզորոշ երևում է, որ ֆրանսիացիների, ինչպես նաև իտալացիների թրասիրությունը նոր դրսևորումներ էին ձեռք բերել: Նրանք այժմ կողմ էին արտահայտվում Լազիստանի վրայով Յայաստանին միայն տնտեսական

<sup>133</sup> См. **Ованнисян Р.**, указ. раб., стр. 440.

<sup>134</sup> См. там же, стр. 441.

Ելք տրամադրելու հարցում, իսկ տարածքը պետք է մնար Թուրքիայի կազմում: Ստեղծված իրավիճակում անգլիացիները գնացին փոխաշխման՝ համաձայնելով վերոնշյալ որոշմանը: Անգլիայի համար ավելի ձեռնտու էր Հայաստանի անվանական գերիշխանությունը Լազիստանի վրա, քան այն հանձնել թուրքերին, որով նրանք սպառնալիք կստեղծեին Բաթումի համար, կամ վրացիներին, որոնք հավակնում էին Աջարիային և Լազիստանին՝ խոչընդոտելով անգլիական ծրագրի իրագործմանը:

Մրան ի պատասխան՝ վրաց պատվիրակությունը մարտի 1-ին Գերագույն խորհրդին ներկայացրեց մի նոտա, որտեղ ներկայացված էին ընդունված ծրագրի վերաբերյալ վրաց մերժողական մոտեցումները<sup>135</sup>: Այդ նոտայում վրացական կողմը պնդում էր սահմանները Վրաստանի օգտին շտկել Լազիստանի սանջակը և ճորոխի հովտի որոշ հատվածներ Վրաստանին միացնելու միջոցով: Վրաց պատվիրակները նշեցին նաև, որ սահմանների վերոնշյալ ուղղումների հարցը իրենց կողմից հարուցվել է կապված Տրապիզոնի վիլայեթի սահմաններում Հայաստանին Սև ծով ելք տրամադրելու որոշման հետ<sup>136</sup>:

Ամեն ինչ պարզ ու հստակ էր. ըստ վրաց պատվիրակության տեսակետի՝ Հայաստանը սեփական ելք դեպի Սև ծով չպետք է ունենա և իր հույսը պետք է դնի Վրաստանի ողորմածության վրա: Ի-հարկե, հասկանալի էր վրաց պատվիրակության դիրքորոշումը. Հայաստանը գցելով հաղորդակցային կախվածության մեջ՝ Վրաստանը, ինչպես արդեն նշել ենք, կկարողանար դյուրացնել վիճելի տարածքային խնդիրները իր օգտին լուծելու հարցը, տարանցիկ փոխադրումներից հսկայական եկամուտներ կստանար և հագուրդ կտար թուրք-ադրբեջանական տանդեմի հայակործան քաղաքականության՝ փորձելով դրանից որոշակի օգուտներ քաղել (Լազիստանի և Բաթումի հարցում Թուրքիայի հնարավոր բարյացական վերա-

<sup>135</sup> Տե՛ս **Թորոսյան Շ.**, Լազիստանի խնդրում հայ-վրացական տարակարժությունները Լոնդոնի խորհրդաժողովում (1920 թ. փետրվար-մարտ), «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2013, հ. 14, էջ 170:

<sup>136</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 576, թ. 78, նաև՝ Ավալով Յ., յազ. թագ., ստ. 257:

բերմունքը, եթե այդ տարածքները մեծ տերությունների որոշմանը Թուրքիային չեն անցնելու, Բաքվից նավթամթերքների ապահով մատակարարումը, Վրաստանի մուսուլմանների խաղաղեցումը և այլն): Սակայն սա անհեռատես մոտեցում էր, քանզի Հայաստանը կործանելուց հետո Թուրքիան և Ադրբեջանը անպայման կրգկտեին նաև Վրաստանը: Ասվածն ապացուցեց իրադարձությունների հետագա ընթացքը 1921 թվականին:

Փաստորեն, վրացիները, օգտվելով անգլո-ֆրանսիական հակասություններից, ձգուու էին վիմեցնել Գերագույն խորհրդի ընդունած ծրագրի կենսագործումը, ինչը նրանց հաջողվեց:

Լազիստանի և լազերի թեման շոշափվում է նաև Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի հետ մարտ ամսին՝ մեր պատվիրակների (Պողոս Նուբար Փաշա, Ա. Ահարոնյան, Զավեն պատրիարք) երկրորդ հանդիպման ժամանակ: Հանձնաժողովի նախագահ Վանսիտարտը հարցնում է, թե ինչ վերաբերմունք ունեն լազերը հայերի և վրացիների նկատմամբ՝ մատնանշելով լազերի վրացական ծագման տարածված կարծիքը: Ա. Ահարոնյանը պատասխանում է. «Լազերի ծագման մասին քննություն անելու չեմ, որչափ գիտեմ, դա տակապին լավ չուսումնասիրված գիտական պրոբլեմ է... 50-60 հազարի չափ, ոչ առանձին հակումն ունին դեպի հայերը, ոչ դեպի վրացիները... Կուգեին իրենց լեռներում մնալ իրենք իրենց, ինչպես դարերից ի վեր: Այս է ճշմարտությունը, և մենք Լազիստանը պահանջելով՝ բնավ լազերի համակրության վրա չեմ, որ հույս ենք դնում, այլ մեր աչալրջության ու զգուշավոր քաղաքականության վրա՝ հանդեպ նրանց ցեղական, կրոնական և աշխարհագրական ուրույն պայմանների: Նրանց հողին չեմ, որ աչք ենք տնկել, այլ այն հրամայական անհրաժեշտությանն ենք հետամուտ, որ մեր երկիրը ծով ունենա, քանի որ առանց ծովի կորած ենք: Եվ հույս ունենք պիտի կարողանանք լազերի հետ խաղաղ կեցության ընդհանուր հիմունքներ գտնել»<sup>137</sup>: Ինչպես տեսնում ենք, սա չափազանց անկեղծ պատասխան էր և շահեկանորեն տարբերվում էր վրացիների չիհմնավորված պնդումներից, թե լազերը վրացական ծագում ունեն և

<sup>137</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 65:

ձգտում են վերադառնալ ազգակիցների գիրկը: Ի դեպ, նշենք, որ լազերենը ավելի մոտ է մեզրելերենին, և բառապաշարի 57%-ի համընկում կա, ինչը չի կարելի ասել վրացերենի հետ համեմատելիս: Քարթվելական լեզվաընտանիքի լազ-մեզրելական ճյուղը վրացականից առանձնացել է ք. ա. 1-ին հազարամյակում<sup>138</sup>:

1920 թ. ապրիլի 18-26-ը իտալական Սան Ուենո քաղաքում տեղի ունեցավ խորհրդաժողով, որտեղ ուրվագծվեց Անտանտի երկրների և Թուրքիայի միջև կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը: Այստեղ էլ Վանսիտտարտի միջնորդությանը շարունակվեցին հայ և վրաց պատվիրակությունների շփումները: Ելնելով Բարումի նկատմամբ հողային պահանջներ չդնելու Վանսիտտարտի հորդորից՝ մեր պատվիրակները ստիպված էին համակերպվել և առաջին իսկ ժողովում ապրիլի 22-ին, ինչպես գրում է Ա. Ահարոնյանը, «Երկար վեճերից հետո, աշխատելով բանկ ծախել, մենք հայտնեցինք, որ հրաժարվում ենք հողային պահանջից և կրավականանք լուրջ գարանտիաներով մեր երկարուղային գծի համար, որն անցնելով ճորդի հովտով՝ վրացական հողով կերթա դեպի աջ՝ Բարում և դեպի ձախ՝ դեպի Արինե և Ռիզա, որոնք մեզ խոստացված են որպես սեփական նավահանգիստներ»<sup>139</sup>: Անկախ ամեն ինչից՝ տարածքային պահանջից հրաժարվելը և միայն երաշխիքներով բավարարվելը ևս մեկ անգամ վերահաստատում են այն պնդումը, որ հայկական կողմը հեռու էր հողային նկրտումներից, և միակ նպատակը դեպի ծով երաշխավորված ելքն էր:

Իսկ վրացիները, օգտվելով արթիքից, նույնիսկ դեմ արտահայտվեցին երկարուղու դեպի Արինե և Ռիզա ճյուղավորվելուն: Սա արդեն չափազանց էր: Չիտեհեն և նրա ընկերները այդ առարկությունը հիմնավորում էին նրանով, թե հայերի կողմից Լազիստանի պահանջը հակասում է ազգերի ինքնորոշման սկզբունքին. «Ինչպե՞ս կարելի է Լազերի երկիրը պահանջել, առանց նրանց կամքն (հաշվի – Ը.Թ.) առնելու, այո՛, մենք, վրացիներս, արդեն իսկ Բաթումի շրջանին

<sup>138</sup>Տե՛ս [https://ru.wikipedia.org/wiki/Лазский\\_язык](https://ru.wikipedia.org/wiki/Лазский_язык)

<sup>139</sup>Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 93:

ինքնավարություն ենք տալիս»<sup>140</sup>, – «հպարտությամբ» հայտարարում էին նրանք: Բարումի շրջանին էլ դեռ չտիրացած՝ տնօրինում էին նրա ճակատագիրը՝ ժողովրդավար ձևանալով:

Այս ամենի մեջ ապշեցուցիչն այն էր, որ Լազիստանի կապակցությամբ վրաց պատվիրակությունն առաջ էր քաշում ազգերի ինքնորոշման իրավունքը: Այստեղ տեղին է մեջբերել Ա. Ահարոնյանի տիպիկ հարցադրումը վրացիներին՝ ազգերի ինքնորոշման հարցի հետ կապված. «...ինչո՞ւ այդ (ազգերի ինքնորոշման իրավունքը – Շ. Թ.) հիշեցիք այժմ Լազերի առթիվ և այնպես մոռացել եք Ախալքալակը պահանջելիս, ուր 80 հազար հայի դեմ հազիվ 4-5 հազար վրացի կա, և Լոռին ու Բորչալուն պահանջելիս, ուր 60 հազար հայության մոտ հազիվ 4-5 հարյուր վրացի կա: Պարոն Զիսեհձեն, կամ - շարունակ լինինք իսկապես դեմոկրատ, պաշտպան ժողովուրդների իրավունքի, կամ չինինք: Յարցրե՞լ եք արդյոք լոռեցիներին, թե նրանք կամնո՞ւմ են վրացի դաշնալ: Յարցրե՞լ եք ախալքալակցիներին...»<sup>141</sup>:

Այս կապակցությամբ արժի հիշատակել վրաց սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդ, նախկին վարչապետ, տեսականորեն սոցիալիստ-ինտերնացիոնալիստ, գործնականում ազգայնական Նոյ Ժորժանիայի մտքերից մեկը. «Ժողովուրդները հավասար են՝ անկախ նրանց տարածիք մեծությունից և բնակչության խտությունից: Ոչ մի անձնավորություն, ոչ մի կառավարություն, ոչ մի ժողովուրդ չի կարող ոչ լեզաւ կերպով, ոչ որևէ պատրվակով տիրապետել այլ ժողովուրդի բնազավթման, նվաճման կամ մեկ այլ որևէ ձևով»<sup>142</sup>: Այստեղ ակնհայտ է վրաց սոցիալ-դեմոկրատիայի խոսքի և գործի հակասականությունը: Չնայած, հետագայում ժորդանիան, բնարկելով Վրաստանի խորհրդայնացման շարժառիթները, սխալ է համարել Լոռու Զեզոք գոտու միացումը Վրաստանին: Նա գրել է. «Իհարկե հայերով բնակեցված այդ տարածքների միացումը Վրաստանին մեծ սխալ էր, բայց մեր ռազմավարներն այդպես որոշեցին, որպես

<sup>140</sup> Նույն տեղում:

<sup>141</sup> Նույն տեղում, էջ 93-94:

<sup>142</sup> **Жордания Н.**, Наши разногласия, Париж, 1928, стр 11.

պաշտպանական ամրոց, նախկինի պես տեսել են սարն ու բլուրը և ոչ թե բնակչության ոգին»<sup>143</sup>: Ցավոք, ժողովանիան նույնը չի ասում Ախալքալաքի մասին, որտեղ ևս գերակշիռ մեծամասնությանք հայեր էին ապրում: Դեռ ավելին, վրաց մենշևիկները, հավակնելով Ախալքալաքի գավառին, Զավախը ներխուժած թուրքական ջարդարարներից խուսափած ջավախքահայ գաղթականների նկատմամբ Ծալկայի և Բակուրիանի լեռներում այնպիսի տնարդի քաղաքականություն վարեցին, որ 1918 թ. աշնանը և ձմռան սկզբին բաց երկնքի տակ ցրտին ու հիվանդություններին զոհ գնացին տասնյակ հազարավոր հայեր<sup>144</sup>:

Վանսիտտարտը, տեղեկանալով բանակցությունների ձախողման մասին, ասում է, որ լորդ Թերզոնը խորապես վշտացել է դրանից, ապա հայտնում, որ հայերը հասել են հնարավոր զիջման եզրին և այլևս գնալու տեղ չունեն: Նա նաև հայտնում է, որ վեհաժողովը որոշել է ամեն գնով Հայաստանին ծովային ելք տրամադրել, որ Բաթումը պետք է լինի ազատ նավահանգիստ և, որ հայերը պետք է երկարգիծ ունենան թե՝ դեպի Բաթում և թե՝ դեպի Արինե: Այստեղ Զիսեհծեն ընդդիմանում է, թե, եթե կա Բաթումը, ապա ինչի՞ հիմար է այդ երկրորդ գիծը: Վանսիտտարտը զայրացած զգուշացնում է վրացիներին՝ չհակառակվել հայերի համեստ պահանջներին, այլապես ավելին կկորցնեն Բաթումի շրջանում, և առաջարկում է նորից հավաքվել և համաձայնության գալ հետևյալ կետերի շուրջ:

«1) հայերը չեն հակառակի վրացիների իրավունքին Բաթումի և շրջանի մեջ,

<sup>143</sup> Հյոմթյուրօք დ., Տայարտցելու-Եռմեյտօն պարտությունների պատմությունից Սաֆորգագուցքրուզո ՁՅՌՈ, տօնություն, 1999, թ. 76 (ճումբութիծ Դ., Վրաստան-Հայաստան հարաբերությունները 1918-1921 թթ. և վրաց հասարական կարծիքը, Թբիլիսի, 1999, էջ 76):

<sup>144</sup> Սանրամասն տես Թորոսյան Շ., Հայ-Վրացական հարաբերությունների պատմությունից (Ախալքալաքիների գաղթը 1918 թվականին), «Բանքեր Երևանի համալսարանի», Երևան, 2002, թիվ 1, էջ 146-147, նաև՝ Մելքոնյան Ա., Զավախը: Պատմության ուրվագծեր, Երևան, 1999, էջ 25-26, նաև՝ Սանոսյան Ա., Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992, էջ 199:

2) Բաթում՝ Port libre et Franc (ազատ և առանց մաքսի նավահանգիստ – Շ. Թ.),

3) Հայաստանը պիտի իր երկարուղին ունենա ճորոխի հովտով ու tout propriete (սեփականության իրավունքով – Շ. Թ.), որի մի ճյուղը կերպա Բաթում servitude-ի (որոշակի սահմաններում ուրիշի սեփականությունից օգտվելու իրավունք – Շ. Թ.) իրավունքով և նյուսը Արինե և Ռիզե՝ հայկական նավահանգիստները: Հայերը և թարարները կունենան Բաթումում իրենց քարափը (զաւ – կառամատուց – Շ. Թ.) և Zone Franche –ը (մաքսազերծ գոտի – Շ. Թ.) շենքեր կառուցանելու<sup>145»:</sup>

Հաջորդ օրը՝ ապրիլի 23-ին, պատվիրակությունները նորից հավաքում են ժողովի՝ քննարկելու այս կետերը: Բայց նորից համաձայնություն չի կայանում, քանի որ Զիսէիձեն և Ավալովը պնդում են, որ Վրաստանի վեհապետական իրավունքը պետք է տարածվի ոչ միայն հողի, այլ նաև երկարգի վրա, իսկ Ռիզե գնացող գիծը դարձյալ մերժեցին<sup>146»:</sup> Սրանից հետո պատվիրակությունները վերջին անգամ հավաքվեցին Վանսիտտարտի մոտ՝ հայտնելու, որ համաձայնություն կրկին չի կայացել: Վանսիտտարտը շատ հուզված և դաշնացած դիմում է վրացիներին. «–Պարոնայք վրացիներ, դուք չկամեցաք ընդունել հայերի համեստ պահանջները: ...Դուք ձեր հայրենիքի շահերի դեմ ընթացաք: Դուք չուզեցիք Հայաստանին իրավունք տալ հարևանորեն ձեր հողով երկարուղի տանել: Վստահ եղեք, որ հայերը կունենան նույն երկարուղին, բայց իրենց սեփական հողով, և դուք կկորցմեք Բաթումի շրջանի 2/3-ը: ...Թուրքական հարցը կարգավորելով, այստեղ կլուծվի Հայաստանի հարցը, և նրա սահմանները կորոշվին: Բայց դուք և Ադրբեյջանը դեռ կսպասեք...»<sup>147:</sup>

Վրաց պատվիրակները, մասնավորապես Զիսէիձեն, մնացին համառ և անզիջում: Իր կործանարար համառության մեջ Զիսէիձեն

<sup>145</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 94:

<sup>146</sup> Տես Թորոսյան Շ., Ռեալի ծով Ելքի հարցը և հայ-վրացական տարակարծությունները Սան Ռեմոյի խորհրդաժողովում, «21-րդ դար», Երևան, 2013, թիվ 4, էջ 148:

<sup>147</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 95:

աջակցություն էր գտնում պատվիրակության մյուս անդամներ Գվարդալաձեի, Գոբեչիայի և գեներալ Օղիշելիձեի կողմից<sup>148</sup>:

Փաստորեն, ծովային Ելքի հարցում բրիտանական աջակցությունը Հայաստանին անարդյունք էր, որն էլ իր հերթին փաստում է, որ այդ աջակցությունը նպատակավագ և հետևողական չէր:

Ելելով վրացիների անգիծում կեցվածքից՝ քննարկումների հաջորդ օրը՝ ապրիլի 24-ին, հայ պատվիրակները վերստին հանդես եկան Փարիզում առաջ քաշած նախկին պահանջներով, այսինքն՝ պահանջեցին ճորոխի ձախափնյակը միացնել Հայաստանին՝ երկարուղային գիծ ապահովելու նպատակով, քանի որ, ինչպես նախորդող բանակցություններն էին ցույց տվել, «եթե մեր երկարուղին մեր սեփական հողով չանցնի, ոչ մի ապահովություն չունենք, թե Վրացիք իրենց հազար ու մի միջամտություններով չեն խանգարելու մեր Ելքը դեպի Սև ծով»<sup>149</sup>:

Այսպես ավարտվեցին Հայաստանի Լազիստանով ծովային Ելքի շուրջ ծավալված բանակցությունները հայ և վրաց պատվիրակությունների միջև, թեև հարցը դեռևս շարունակում էր մնալ դաշնակից տերությունների բանակցությունների օրակարգում:

Ինչպես տեսանք, Լոնդոնի խորհրդաժողովում հայ-թուրքական սահմանի հարցը չհստակեցվեց: Թերևս դրական առաջընթացն այն էր, որ Էգրումը Հայաստանին հանձնելու և Լազիստանով ծովային Ելք տրամադրելու որոշում կայացվեց, որն էլ, սակայն, արժանացավ վրաց պատվիրակության հումկու դիմադրությանը: Այդ դիմադրությունն ավելի ակներև դարձավ Փարիզում՝ ապրիլ ամսին անգլիացիների միջնորդությամբ Սան Ռեմոյի խորհրդաժողովի նախօրեին կայացած հայ-վրացական բանակցություններում, որին դեռ կանորադառնանք:

Սան Ռեմոյի խորհրդաժողովը ևս տևական քննարկումներից հետո չկարողացավ լուծել հայ-թուրքական սահմանի հարցը: Բայց այստեղ առաջխաղացումն ավելի առարկայական էր: Ապրիլի 24-ին

<sup>148</sup> Տե՛ս Աբեղեան Ա., Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք», Պոստոն, թիվ 12 (48), յուլիսմբեր, 1926, էջ 95:

<sup>149</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

խորհրդաժողովի 6-րդ նիստում որոշվեց դիմել ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին՝ Հայաստանի մանդատն ընդունելու խնդրով, իսկ եթե ԱՄՆ-ը չկամենա ընդունել մանդատը, ապա Վերջինիս խնդրվում է Հայաստանի սահմանների հարցում հանդես գալ իբրև միջնորդ<sup>150</sup>: Մեծ Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջի կազմած այս նախագծում առաջարկվում էր հաշտության պայմանագրում Հայաստանի սահմանների վերաբերյալ հետևյալ բովանդակությամբ հոդված մտցնել: «Թուրքիան, Հայաստանը և մյուս բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել Ամերիկայի Սիացյալ Նահանգների պրեզիդենտի միջնորդությանը Թուրքիայի և Հայաստանի սահմանների հարցում երգրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում և ընդունել այդ առթիվ նրա որոշումը, ինչպես նաև որևէ պայման, որ նա կառաջարկի դեպի ծով Հայաստանի անկախ պետության ելքի մասին»<sup>151</sup>:

Հայաստանի ծովային ելքի հարցը կրկին կարևորվում էր: Ուրախալի և հուսաղրող էր նաև այն փաստը, որ Վերոնշյալ վիլայեթներով սահմանը գծելու դեպքում Լազիստանն անկասկած կմտներ Հայաստանի կազմի մեջ, եթե ծովային ելքը նախատեսվեր այդտեղից, ընդ որում՝ չէր բացառվում, որ Հայաստանին միացվեր նաև Տրապիզոնը, ինչին, սակայն, թերահավատորեն էին Վերաբերվում հայերը: Այս կապակցությամբ Խոսհիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Վարանդյանը ապրիլի 30-ին հեռագրում է Հայաստանի կառավարությանը. «...Մեր խնդիրը երկարօրեն քննեց կօնֆերանսում: Տրապիզոնը թողնած է թիւրքերին: Ելք ունենք դեպի ծով՝ Լազիստանի վրայով...»<sup>152</sup>:

Այնուամենայնիվ, Վ. Վիլսոնը թերահավատությամբ էր ընդունում Հայաստանի վերաբերյալ Անտանտի Գերագույն խորհրդի որոշումները: Ուստի Դ. Լոյդ Ջորջը հատուկ նամակով հայտնում է ԱՄՆ նախագահին, որ դաշնակիցները միասնաբար պաշտպանում են անկախացող Հայաստանի շահերը՝ Վերջինիս տալով իր ցանկացած

<sup>150</sup> Տես «Բանքեր Հայաստանի արխիվների», Երևան, 1972, թիվ 3 (34), էջ 63:

<sup>151</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>152</sup> «Յառաջ», 9 մայիս, 1920, թիվ 95:

նահանգները, առավել ևս՝ Տրապիզոնը որպես Ելք դեպի Սև ծով<sup>153</sup>:

Սան Ռեմոյի խորհրդաժողովի որոշումները հստակեցվեցին և կոնկրետացվեցին Անտանտի տերությունների՝ Գերագույն խորհրդի 1920 թ. հունիսի 21-ին հրավիրված Բուլոնի և հուլիսի 7-21-ը տեղի ունեցած Սպայի խորհրդաժողովներում: Անեն ինչ պատրաստ էր դաշնակից երկրների և Թուրքիայի միջև հաշտության պայմանագիրը ստորագրելու համար: Այն ստորագրվեց 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սև արվարձանում: Սակայն նույնիսկ Սևրում հայ-թուրքական սահմանագծնան հարցը վերջնականապես չլուծվեց: Այդ խնդրին վերաբերող 89-րդ հոդվածը ձևակերպվեց Սան Ռեմոյի խորհրդաժողովի որոշման ոգով. «Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են երգրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով Ելք տալու վերաբերյալ»<sup>154</sup>:

Սևրի պայմանագրի ստորագրումով ավելի խորացան անգլո-ֆրանսիական հակասությունները: Ֆրանսիայի կառավարիչները գտնում էին, որ պայմանագրով ուժնահարվել են իրենց պետության առանցքային շահերը: Ելելով դրանից՝ անգլիացիները շահարկում էին թեմաներ՝ երբեմն նաև հայանպատ, որոնց հիմքում, սակայն, ընկած էին հակաֆրանսիական միտումներ: Լոնդոնի «Թայմս» թերթը օգոստոսի 16-ի համարում գետեղված «Հայաստանը Միջերկրական ծովում Ելք պիտի ունենայ» վերտառությամբ հոդվածում գրում է. «Պաշտօնական և անպաշտօն զրոյցների մեջ Հայաստանին միայն Սև ծովի վրա Ելք տալու մասին ակնարկներ են լինում: Այդպիսի մի սահմանափակում անխուսափելիօրէն Հայաստանը թէ այժմ և թէ ապագային պիտի Ռուսաստանի ազդեցութեան ենթար-

<sup>153</sup> См. **Ллойд Джордж Д.**, Правда о мирных договорах, том второй, Москва, 1957, стр. 418.

<sup>154</sup> Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, նշվ. աշխ., էջ 676:

կեն, մինչ Ռուսաստանի տիրապետութեան տակ «քաղաքական անկախութիւն» պահպանել հնարավոր չէ... Խիստ կարևոր է, որ սահմանները գծին այն ձևով, որ Հայաստանն արևմտեան տէրութիւնների հետ հաղորդակցութեան մէջ գտնի Միջերկրականի վրա տնտեսական մի նրբանցքի միջոցով: Մալաթեա քաղաքը Հայաստանի սահմանների մէջ պիտի մըտնի...»<sup>155</sup>:

Ինչպես տեսնում ենք, անգլիական հասարակական-քաղաքական լայն շրջանակների տեսակետն արտահայտող «Թայմսը», շահարկելով միայն Սև ծովով Ելք տալու պարագայում Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի հնարավոր ազդեցության հաստատման համգամանքը, առաջ է քաշում նաև Միջերկրական ծովով Ելք պահովելու անհրաժեշտությունը՝ անուղղակիորեն հարվածելով Ֆրանսիայի մերձավորարևելյան շահերին, և դա այն դեպքում, երբ վաղուց Կիլիկիայի և Փոքր Հայքի հարցը լուծված էր հօգուտ Ֆրանսիայի:

ՍԱՐԻ պայմանագրում ևս Հայաստանի ծովային Ելքի հարցը շարունակում է մնալ գլխավոր առաջնահերթություններից մեկը: Չնայած վրացական կողմի կոշտ ընդդիմությանը, արդեն պարզորոշ էր, որ Լազիստանը կամ նրա մի մասը միանալու էր Հայաստանին, քանի որ հայ-թուրքական սահմանը անցնելու էր Տրապիզոնի վիլայեթով, ուրեմն առնվազն Վերջինիս արևելյան հատվածը մտնելու էր Հայաստանի կազմի մէջ: Պայմանագիրը նախատեսում էր նաև Հայաստանի ծովային տնտեսական Ելքի այլընտրանքային տարրերակ՝ Տրապիզոնվ: Քանի դեռ Վիլսոնի իրավարար վճիռը չէր ընդունվել, որով կիստակեցվեր նաև Տրապիզոնի պատկանելիության հարցը, 352-րդ հոդվածը նախատեսում էր Տրապիզոնի նավահանգստի վրայով Հայաստանին ազատ մուտք տալ դեպի Սև ծովը<sup>156</sup>:

Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռն ընդունվեց 1920 թ. նոյեմբերի 22-ին: Այն նախատեսում էր Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթներից շուրջ 90 հզ. կմ<sup>2</sup> տարածք միացնել Հայաստա-

<sup>155</sup> «Յառաջ», 18 սեպտեմբեր, 1920, թիվ 202:

<sup>156</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյանի խմբագրությանը, նշվ. աշխ., էջ 682:

նին, ընդ որում՝ Տրապիզոնի վիլայեթի 32,7 հզ. կմ<sup>2</sup> տարածքից Հայաստանին էր անցնում 15 հզ. կմ<sup>2</sup>, այդ թվում՝ նաև Տրապիզոն քաղաքը և նավահանգիստը, չնայած նրան, որ Փարիզի վեհաժողովի հայ պատվիրակները դեռևս օգոստոսին պոնտացի հույների ճնշման տակ հրաժարվել էին Տրապիզոնի նկատմամբ հավակնություններից: Այդ հատվածում հայ-թուրքական սահմանն սկսվում էր Տրապիզոնից մեկ ժամ դեպի արևմուտք գտնվող ծովափնյա Բլաթանտ փոքրիկ քաղաքից՝ Հայաստանին թողնելով Տրապիզոնի և Գյումուշխաննեի սանջակների արևելյան մասերը<sup>157</sup>: Թվում էր, թե Տրապիզոնի վիլայեթով և մասնավորապես Լազիստանի սանջակով Հայաստանի ծովային ելքի հարցը վերջնականապես վճռված էր: Բայց երկու կարևոր հանգամանք հաշվի չեր առնվել: Առավել զորեղ հանգամանքը ահագնացող քենալական շարժումն էր, որը 1919 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին էրզրումի և Սպազի խորհրդաժողով-ներում ընդունել էր «Ազգային ուխտը», չեր ճանաչել Սկրի պայմանագիրը և օգտվելով դաշնակից տերությունների հակասություններից՝ թուրք-հայկական (1920 թ. սեպտեմբեր-նոյեմբեր) և հույն-թուրքական (1919-1922 թթ.) պատերազմներում հաղթանակ էր տոնել: Իսկ Լազիստանի նկատմամբ անվերապահ հավակնությունները ցուցադրելու նպատակով Հայաստանի վրա հարձակվող թուրքական բանակը քենալականներն անվանել էին «Լազիստանի ազգային զորքեր»<sup>158</sup>: Մինչ այդ էլ, դեռևս հուլիսի սկզբին՝ նախքան Հայաստանի վրա արշավելը, թուրքերը զորք էին մտցրել Լազիստան և գրավել էին Ողջե քաղաքը<sup>159</sup>:

Այս ամենի արդյունքում Սկրի պայմանագիրը նաև ֆրանսիայի և Խուալիայի ակտիվ միջամտությամբ վերանայվեց նախ Լոնդոնի (1921 թ. փետրվար-մարտ), ապա Լոզանի (1922 թ. նոյեմբեր - 1923 թ. հուլիս) խորհրդաժողովներում: Լոնդոնի խորհրդաժողովում անկախ Հայաստան ստեղծելու հարցը վերածվեց Թուրքիայի տարածքում «Հայկական ազգային օջախ» ունենալու իրավունքի անորոշ

<sup>157</sup> Տես **Լազեան 4.**, նշվ. աշխ., էջ 214:

<sup>158</sup> Տես «Յառաջ», 14 նոյեմբեր, 1920, թիվ 250:

<sup>159</sup> Տես «Ժողովուրդ», Երեւան, 10 օգոստոս, 1920, թիվ 131:

ձևակերպման: Իսկ Լոգանի խորհրդաժողովում թուրք պատվիրակ-ները մերժեցին անգամ «ազգային օջախի» գաղափարը:

Այդուհանդերձ, Ազգային պատվիրակությունը Գ. Նորատունկյանի գլխավորությամբ խորհրդաժողովին ներկայացրեց մի հուշագիր, որը պարունակում էր հայկական հարցի լուծման երեք հնարավոր տարրերակ.

1. Հայկական ազգային օջախի ստեղծում Վիլսոնի գծած Հայաստանի տարածքում,

2. Խորհրդային Հայաստանի ընդարձակում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով,

3. Հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում<sup>160</sup>:

Սակայն հաղթանակած Թուրքիան իր կամքը պարտադրեց Աստանտի պետություններին, իսկ վերջիններիս հակասությունները պարարտ հող էին ստեղծել թուրքական մերժողականության համար:

Լազիստանի հարցում երկրորդ կարևոր խոչընդոտ-հանգամանքը Վրաստանի դիրքորոշումն էր: Հատկապես Բարումի մարզին տիրելուց հետո (1920 թ. հուլիս) Վրաստանը Լազիստանի ուղղությամբ բազմապատկել էր ջանքերը: Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ Սկրի պայմանագիրը չէր հստակեցնում անդրկովկասյան հարևանների հետ Հայաստանի սահմանները: Պայմանագրի 92-րդ հոդվածում նշված էր, որ այդ սահմանները կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ, իսկ եթե չստացվի, ապա սահմանագծումը կիրականացնեն Գլխավոր դաշնակից տերությունները (հոդված 93)<sup>161</sup>: Սա Վրաստանին Լազիստանի համար պայքարը ուժեղացնելու հնարավորություն էր տալիս: Այս պայքարի շրջանակներում վրացինները երեմն ապատեղեկատվություն էին տարածում՝ փորձելով շոշափել շահագրգիր կողմերի գգոնությունը: Օրինակ՝ «Էջո Ետումա» թերթը գրում է, որ Լազիստանում մեծ վախ է տիրում, սպասվում է, որ հունական զորքեր ափ կիանվեն, շատերը փախչում են լեռները: Տրապիզոնի շրջանի բնակչության մեջ ևս

<sup>160</sup> Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 162:

<sup>161</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյանի խմբագրությանը, նշվ. աշխ., էջ 677:

նույնպիսի վախ է տիրում: Լուրեր են տարածվում, թե իբր Լազիստանի պաշտպանությունն իր վրա է վեցրել Վրաստանը<sup>162</sup>: 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ընթացքում, Վրաստանի քաղաքական էլիտայի որոշ ներկայացուցիչներ ավելի ոգևորվեցին: Վրաց ֆուտուրիստների օրգան «Բարիկադա» թերթը նոյեմբերի 2-ի համարում գրում է. «Մենք՝ վրացի առաջին ինպերիալիստներս, առաջին անգամ պահանջեցինք Լազիստանը: Վրացական պոեզիան Երոպային կզարմացնե, եթե Տրավիզոնը խոնարիի վրաց կոմիսարին»<sup>163</sup>:

Մինչ հայերն ու վրացիները վիճում էին Լազիստանի և այլ տարածքների շուրջ, քենալականներն ու բոլշևիկները արեցին իրենց սև գործը: Երկու երկրներն ել բռնի խորհրդայնացվեցին, իսկ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Լազիստանը և վրացիների կողմից վիճարկվող այլ տարածքներ (Արդահան, Օլրի) ամրագրվեցին Թուրքիայի կազմում:

Թվում էր, թե Լազիստանի հարցը վերջնականապես փակվեց: Սակայն 2-րդ աշխարհամարտի ավարտին Խորհրդային Միությունը փորձեց օգտվել ստեղծված իրավիճակից և Թուրքիայից վերադարձնել Արևմտյան Հայաստանը: Ստալինյան իշխանությունը, բնականաբար, հաշվի էր առնելու նաև Վրաստանի շահերը: Ուստի, ԽՍՀՄ դեկավարությունը, բացի հայերից, հորդորեց նաև վրացիներին տարածքային պահանջներ ներկայացնել Թուրքիային: Արդյունքում վրաց ակադեմիկոսներ Ս. Զանաշիան և Ն. Բերձենիշվիլին 1945 թ. դեկտեմբերի 14-ին Վրաստանի կոմկուսի պաշտոնաթերթ «Կոմմունիստ» թերթում հրապարակեցին «Թուրքիայի նկատմամբ մեր օրինական պահանջների մասին» հայտնի նամակը: Խորանալով պատմության ծալքերի մեջ՝ այս «անխոնց» գիտնականները բացառիկ ջանասիրությամբ ապացուցում էին Տրավիզոնի և Լազիստանի վրացական պատկանելիությունը<sup>164</sup>: Այդ պահանջներն էլ ա-

<sup>162</sup>Տե՛ս «Յառաջ», 4 օգոստոս, 1920, թիվ 164:

<sup>163</sup>«Կոմմունիստ», Բաքու, 5 նոյեմբերի, 1920, թիվ 141:

<sup>164</sup>Սանրամասն տե՛ս "Համարներ", տօնություն, 14 գցըթյուրո, 1945 («Կոմմունիստ», Թիֆլիս, 14 դեկտեմբերի, 1945):

վելի հիմնավոր և ազդեցիկ դարձնելու նպատակով՝ վերոնշյալ նամակը մի քանի օր անց թարգմանվեց և հրապարակվեց համամիութենական կոմիտսի օրգան «Պրավդա» թերթում<sup>165</sup>:

Մի քանի տարի անց ԽՍՀՄ-ը հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Լազիստանով դեպի Սև ծով ելքի հայկական երազանքը մնաց անկատար:

Քավ լիցի, Դայաստանը չէր հավակնում ինքնանպատակ տիրանալ Տրապիզոնին կամ Լազիստանին: Մենք ձգտում էինք ընդամենը ունենալ երաշխավորված ելք դեպի ծով: Սա շատ բնական և հասկանալի ցանկություն էր՝ Դայաստանի հետագա զարգացումն ապահովելու համար:

Եվ վրացիները, և հայերը պարտավոր են մեկընդմիշտ գիտակցել, որ ելնելով տարածաշրջանի առանձնահատկություններից՝ իրենց պետությունների հզորացումը բացառապես բխում է փոխադարձ շահերից:

---

<sup>165</sup> См. «Правда», Москва, 20 декабря, 1945.

## ԳԼՈՒԽ II

### ԲԱԹՈՒՄԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՅԻՆ ԵԼՔԻ ՀԱՐՑՈՒՄ

#### 2.1 Տերությունների քաղաքականությունը Բաթումի խնդրում (1919 թ. հունվար-1920 թ. փետրվար)

Բաթումը՝ որպես դեպի Սև ծով ելք, Հայաստանի համար առաջնային նշանակություն է ունեցել Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում: Ներկայում էլ այն շարունակում է պահպանել իր կարևորությունը: Ծովային ելքի տեսանկյունից Բաթումն անգնահատելի նշանակություն ունի նաև Արդրեջանի համար: Չնում ևս Բաթումը տարածաշրջանում նշանակալի ազդեցություն է ունեցել ծովային առևտորի վրա: Ուստի ռազմավարական դիրքի և բնակլիմայական պայմանների բերումով Բաթումը և նրա շրջակայքը բնակեցված են եղել հնագույն ժամանակներից: Առաջին տեղեկությունները Բաթումի մասին ստանում ենք ք. ա. 4-րդ դարի հույն փիլիսոփա Արիստոտելից, որը բնակավայրը հիշատակում է որպես կոլխական քաղաք՝ Բաթուս անվանք: Այս անվանումով է հիշատակվում քաղաքը նաև հռոմեացի պատմիչ Պլինիոս Ավագի և հույն աշխարհագրագետ Փլավդիոս Ապահանիոսի կողմից: «Բաթուս» բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է «խորություն»<sup>166</sup>: Ըստ էության, նկատի է առնվել սևծովյան տարածաշրջանում Բաթումի նավահանգստի ամենախորերից մեկը լինելու հանգանաքը:

2-3-րդ դարերում Բաթումն ընկել է հռոմեացիների տիրապետության տակ, 4-5-րդ դարերում՝ Բյուզանդիայի: 6-8-րդ դարերում Լազիստանի հետ մեկտեղ ընկել է տարբեր տիրապետողների լոյն տակ, 9-11-րդ դարերում եղել հայ Բագրատունիների ստեղծած պետական-քաղաքական համակարգի շրջանակներում: 13-15-րդ դա-

<sup>166</sup> Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/Батуми>

բերում Բաթումին տիրապետել են Գուրիայի իշխանները: 1547 թ. քաղաքը գրավում են օսմանյան զորքերը, և ավելի քան 300 տարի այն մնում է թուրքական լծի տակ<sup>167</sup>: 1878 թ. Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերով Աջարիան՝ Բաթումով հանդերձ, անցնում է Ռուսաստանին: Առաջին աշխարհամարտի ընթացքում 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի անջատ պայմանագրով Բաթումը կրկին անցնում է Թուրքիային, սակայն դա տևում է մինչև աշխարհամարտի ավարտը, որից հետո քաղաքը և մարզը ռազմակալվում են բրիտանական զինուժի կողմից: Անգլիական ռազմակալմամբ Բաթումի մարզի շուրջ սկսում են ծավալվել դրամատիկ իրադարձություններ, որոնց հիմքում ընկած էին վրացական, թուրքական, ռուսական (նախ դենիկինյան, ապա՝ բոլշևիկյան), հայկական, աղրբեջանական, իտալական, ֆրանսիական, ամերիկյան և վերջապես բրիտանական տարաբնույթ հավակնությունները:

Վրաստանը ձգտում էր վերամիավորել պատմականորեն վրացական հավակնությունների տիրույթում գտնվող երկրամասը, քենալականները ցանկանում էին վերականգնել իրենց վաղեմի տիրապետությունը և որպես հիմնավորում՝ առաջ էին քաշում «Ազգային ուխտը»<sup>168</sup>, ռուսներն աշխատում էին վերականգնել կայսրության նախկին սահմանները, Հայաստանն ու Աղրբեջանը ձգտում էին Բաթումով ազատ ելք ունենալ դեպի Սև ծով և ներկայացնում էին իրենց պահանջները, իտալիան ոգևորվեց Բաթում զորք մտցնելու գաղափարով 1919 թ. գարնանը, երբ Լոնդոնում քննարկվում էր

<sup>167</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>168</sup> 1920 թ. հունվարի 12-ին Կ. Պոլսում իր աշխատանքներն սկսած թուրքական նոր խորհրդարանը, որի անդամները գերակշիռ մեծամասնությամբ քենալականներ էին (120-ից 95-ը), հունվարի 28-ին ընդունեց Թուրքիայի անկախության հռչակագիրը՝ «Ազգային ուխտը», ըստ որի՝ Թուրքիան բացահայտ ձգտում էր տեր դառնալ բոլոր այն տարածքներին, որոնք ծենք էր բերել 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով և 1918 թ. մայիս-հունիս ամիսներին Անդրկովկասի նորանկախ հանրապետություններին պարտադրած պայմանագրերով: «Ազգային ուխտի» երկորդ հոդվածում մասնավորապես հարց էր դրվում անհրաժեշտության դեպքում հանրաքե անցկացնել Կարսի, Արդահամի, ինչպես նաև Բաթումի սանջակներում՝ այդ մարզերը «մայր հայրենիքի գիրկը» վերադարձնելու ակնկալիքով: Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 134-135:

Անդրկովկասից բրիտանական զինուժի դուլսքերման հարցը, ֆրանսիային չէր բավարարում բրիտանական միանձնյա ռազմակալումը Բաթումում, ամերիկյան հավակնությունները արտահայտվում էին միասնական մանդատի շրջանակներում, և վերջապես, Անգլիայի նպատակն էր, ինչպես արդեն նշել ենք նախորդ գլխում, Բաթումի մարզում ստեղծել մի խանաճիկ պետություն և Լազիստանը կցել դրան: Այդ մասին անգլիացիները խորհում էին դեռևս 1918 թ.-ին: 1918 թ. մարտին Լոնդոնում լորդ Քերգոնի գլխավորությամբ ստեղծվել էր «Արևելքի կոմիտե», որին հանձնարարվել էր մշակել Անդրկովկասում վարելիք անգլիական քաղաքականությունը: Դեկտեմբերի 2-ին Անգլիայի կառավարական խորհրդակցությունում քննարկվեց այդ «կոմիտեի» մշակած պլանը, համաձայն որի, Ելելով Բրիտանական կայսրության շահերից, Անգլիան պետք է ձեռնարկի քաղաքական միջոցներ՝ Անդրկովկասի վրա վերահսկողություն սահմանելու համար. առաջին հերթին առաջարկվում էր Բաթումն անջատել Վրաստանից և հայտարարել «ազատ նավահանգիստ»<sup>169</sup>: Այդ է վկայում Անդրկովկասում բրիտանական նորանշանակ զինվորական ներկայացուցիչ գեներալ Զ. Ֆորեստիր-Ուոկերի հայտարարությունը 1919 թ. հունվարի 6-ին Ալեքսանդրապոլում ՀՀ արտգործնախարար Ս. Տիգրանյանի հետ տեսակցության ընթացքում, որով հայտնում է, որ ինքը եկել է Անդրկովկաս որպես դաշնակից պետությունների զինվորական ներկայացուցիչ, և իր հետ անմիջական առնչություն ունեն Յայաստանի և Վրաստանի հանրապետությունները, Բաթումի և Կարսի նահանգները<sup>170</sup>: Ինչպես տեսնում ենք, Ֆորեստիր-Ուոկերն առանձնացնում է նաև Կարսի նահանգը, ինչից կարելի է ենթադրել, որ սկզբնապես անգլիացիները ցանկացել են այն ևս մտցնել ծրագրված խամաճիկ պետության կազմի մեջ, սակայն հետագայում իրադարձություններն այլ ընթացք ստացան, որոնց կանորադառնանք հաջորդ գլխում:

Յաշվի առնելով Յայաստանի համար ծովային ելքի հույժ կարևորությունը, և այն, որ Տրապիզոնն ու Լազիստանը փաստացի

<sup>169</sup> Տե՛ս Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 252:

<sup>170</sup> Տե՛ս ՐԱՍ ֆ. 198, գ. 1, գ. 15, թ. 60:

գտնվում էին թուրքերի ձեռքում (Էլ չասած այդ տարածքների նկատմամբ տարաբնույթ այլ հավակնությունները), հայ գործիչները, Ելճելով դաշնակից երկրների՝ Բաթումը ազատ նավահանգիստ հռչակելու մտադրությունից, ձգուում էին դեպի Սև ծով սեփական ելք ձեռք բերել Բաթումով։ Ինչպես նշել ենք նախորդ գլխում, դրան դեմ չէին նաև Անգլիան ու Ֆրանսիան։

Ըստ երևոյթին, Փարիզի վեհաժողովի շրջանակներում Բաթումը որպես դեպի Սև ծով ելքի գաղափարը առաջին անգամ առաջ է քաշվել ֆրանսիացիների կողմից 1920 թ. հունվարի 11-ին մեր կողմից արդեն հիշատակված Լորդ Քերգոնին ուղղված նոտայում, որտեղ նոտայի հեղինակ Բերթըլոն, մերժելով Տրավիզոնը և Կիլիկիան Հայաստանին հատկացնելու մոտեցումը, ներկայացնում էր առաջարկ, ըստ որի՝ Բաթում քաղաքը հայտարարվելու էր ազատ քաղաք և գտնվելու էր Ազգերի լիգայի վերահսկողության տակ։ Բաթումի նավահանգստով դեպի ծով ելք էին ունենալու Անդրկովկասի բոլոր հանրապետությունները<sup>171</sup>։

Ըստ Բերթըլոյի՝ Հայաստանն ուղղակի կկապվի Բաթումի նավահանգստի հետ, որը նրա բնական ելքն է, կապված լինելով Թավրիզ-Ջուղա-Շահրախտի-Բուղդաշեն երկարգծին՝ դեպի Թավրիզ ճյուղավորումով և Սև ծովի հետ<sup>172</sup>։ Ի դեպ, ինչպես արդեն նշել ենք, Բերթըլոն Հայաստանին Բաթումով դեպի Սև ծով ելք տրամադրելու մասին մեր պատվիրակներին հավաստիացրել էր նաև հունվարի 22-ին։

Ինչպես նշեցինք, սկզբնական շրջանում անգլիացիները դեմ էին Հայաստանին դեպի Սև ծով ելք տրամադրել Լազիստանով կամ Բաթումով, քանի որ նրանք մտադրի էին այդ տարածքների վրա իրենց հովանու ներքո աջարական չեզոք պետություն ստեղծել, և այդ ծրագիրը իրականացնելու համար Բաթումը դարձրել էին իրենց հիմնական հենակետը։ Սակայն անգլիական ռազմակալման ողջ ընթացքում (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. հուլիս) նրանց չհաջողվեց կյանքի կոչել այդ ծրագիրը։ Դեռ ավելին, արդեն 1919 թ. ամռանից

<sup>171</sup> Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները..., էջ 133։

<sup>172</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյանի խմբագրությանը, նշվ. աշխ., էջ 604։

անգլիացիները մտածում էին զորքերը դուրս բերել Անդրկովկասից, այդ թվում՝ նաև Բաթումից<sup>173</sup>: Դրա պատճառները մի քանիսն էին: Նախ գերիշխող էր դարձել այն կարծիքը, որ ԱՄՆ-ը կվերցնի Հայաստանի մանդատը և կփոխարինի Անգլիային ոչ միայն Հայաստանում, այլ նաև ամբողջ Հարավային Կովկասում: Եվ քանի որ ամերիկյան մանդատի հավանականությունը բավական մեծ էր, անգլիացիները, Անդրկովկասում այլևս հեռանկար չտեսնելով, ձգտում էին օր առաջ լքել տարածաշրջանը և ձերբագատվել անտեղի մեծաքանակ ծախսերից: Այդ ժամանակ անգլիական կառավարության ջանքերն ուղղված էին իրենց զորքերը Եվրոպայից և Ռուսական նախակին կայսրությունից դուրս բերելուն և դրանք Անգլիայում, Իոլանդիայում, Եգիպտոսում, Իրաքում ու Հնդկաստանում, այսինքն՝ անգլիացիների համար կենսական տարածքներում կենտրոնացնելուն, որպեսզի երաշխավորեին իրենց անմիջական շահերը: Բայց այստեղ լուրջ խնդիր էր առաջանում: Հարավային Կովկասից անգլիական զորքերի դուրսբերումից հետո կարող էին սկսվել հայկական նոր կոտորածներ: Այս կապակցությամբ Անգլիայի արտաքին գործերի նախարար Ա. Զ. Բալֆուրը 1919 թ. օգոստոսի 9-ին գաղտնի նամակ է գրում վարչապես Լոյդ Ջորջին. «...Ես անհանգուացած եմ Կովկասում տիրող դրությունից: Ամեն կողմից մեզ վկայություններ են հասնում, որ բրիտանական զորքերի հեռացմանը կհետևի հայերի ամենազարհուրելի կոտորած և ընդհանուր արյունահեղություն ողջ Կովկասով մեկ: Ես ամբողջովին կողմ եմ զորքերի հեռացմանը: Փաստորեն, իմ կարծիքով, դա ամեն տեսակետով կարևոր է: Բայց խստովանում եմ, ես չէի ուզենա նայել առաջ, դեպի այն օրը, երբ կասեն, որ մինչդեռ նախօրոք լիակատար նախազգուշացում ունեին, բրիտանացիները կոտորածի ենթարկել տվեցին հայերին՝ դիտավորյալ հեռացնելով իրենց զորքերն այն դեպքում, երբ բոլոր տեղական իշխանությունները տեղյակ էին պահել հնարավոր

<sup>173</sup> Անդրկովկասում անգլիացիներն ունեին 60 հազ. զորք: Կրաստանում անգլիական զորքերը գրադերել էին Թիֆլիսը, Թուբայիսը, Բաթումը, Փոթին և լև այլ 10 քաղաքներ ու շրջաններ: См. Гамбашидзе Г. Л., Агрессивная политика Англии и США в отношении Грузии и Закавказья (1919), Тбилиси, 1964, стр. 45.

հետևանքների մասին: ...Միայն մեկ ելք կա և դա այն է, որպեսզի Ա-մերիկան հոգսն իր վրա վերցնի: ճիշտ է, որ նա կարող է անել այդ, որովհետև միշտ հետաքրքրություն է հանդես բերել դեպի Յայաստանը, և միշտ խորհրդի մոտ (Փարիզի վեհաժողովում Անտանտի երկրների Գերագույն խորհուրդ - Շ. Թ.) այն տպավորությունն ստեղծել, որ մտադիր է վերցնել այդ երկրի մանդատը: Բայց ես լիովին համոզված եմ, որ նա որևէ բան չի անի այնքան ժամանակ, քանի դեռ մենք պատրաստ ենք բեռն ինքներս տանել...»<sup>174</sup>: Այս նամակն ընթերցելիս բանից անտեղյակ մարդու համար տպավորություն է ստեղծվում, թե անզիացիները խիստ անհանգստացած էին հայերի հետագա ճակատագրով, կարծես թե Յայոց ցեղասպանությունը այդ նույն Անզիայի և Եվրոպայի հաշվենկատ անգործության և դաժան ու արյունոտ նախճիրը հանդուրժող սառը հայացքի ներքո չէր իրականացվել: Մինչդեռ անզիացիները վախենում էին, որ Բարումը և ողջ տարածաշրջանը կարող են ընկնել ռուսների ձեռքը, թեկուզ Դենիկինի, որ կրվում էր իրենց իսկ թշնամի բոլշևիկների դեմ:

Բալֆուրի անհանգստությունը, այնուամենայնիվ, տեղին էր: Ավելին, դեռ շատ կասկածելի էր, թե ընդհանրապես ԱՍՍ-ը կվերցնի Յայաստանի մանդատը: Այստեղ արժի մեջբերել Քերզոնի՝ 1919 թ. օգոստոսի 11-ի նամակը ուղղված ԱՍՍ-ում Անզիայի դեսպան Լինդսեյին, որտեղ նա պատմում է իր և Անզիայում ԱՍՍ դեսպան Դեյվիսի գրուցի մասին: Քերզոնի այն հարցերին, թե անզիական զորքերի դուրսբերումից հետո ամերիկյան կառավարությունը պատրա՞ստ է զորքեր մտցնել Կովկաս, և արդյո՞ք հավանական է, որ Կոնգրեսը կամենա ընդունել Յայաստանի կամ թուրքական կայսրության որևէ այլ մեծ կամ փոքր հատվածի մանդատը, Դեյվիսը պատասխանում է, որ ինքը չի կարող պաշտոնապես իր կառավարության անունից խոսել այդ հարցերի վերաբերյալ, սակայն նշում է. «Անկասկած, ամերիկյան զորքերի ամեն մի ուղարկում այդ շրջան (ի նկատի ունի Անդրկովկասը – Շ. Թ.) չի կարող իրագործվել առանց կոնգրեսի գիտության կամ համաձայնության: Ինչ վերաբերում է մանդատի ավելի կարևոր հարցին, ապա, թեև ինքը տեղյակ է, որ հումանիստական

<sup>174</sup> Պազարյան Յ., նշվ. աշխ., հատոր 1-ին, էջ 332:

և մարդասիրական հողի վրա ամերիկյան ժողովուրդը խորապես հետաքրքրված է Հայաստանով, բայց ինքն անձանք չի հավատում, որ այդ նկատառումները կարող են ստիպել իր երկրին հեռանալ իր արտաքին քաղաքականության կրկնակի ավանդական իինունքներից, այն է՝ ա) օտար դաշինքների կամ հանձնառությունների մեջ խառնվելուն իրավարումից, բ) Մոնրոյի դոկտրինային խորապես հավատարիմ մնալուց: Ավելին, հենց որ ամերիկյան հասարակությունը սկսի պատկերացնել, ինչ որ հավանաբար չի անում այժմ, Հայկական հարցի հատուկ քաղաքական, ազգագրական, ֆիզիկական կամ այլ տեսակի դժվարությունները, նա խիստ կասկածի տակ կառնի, թե արդյոք ֆիլանտրոպիան կհաղթանակի<sup>175</sup> նպատակահարմարության հետ մրցապայքարում...»<sup>175</sup>: Իրոք դեսպան Դեյվիսի խոսքերը կարծես մարգարեական հնչեին: Նա արտահայտում էր ամերիկյան հասարակության և քաղաքական շրջանակների մեջ տիրապետող տեսակետը: Ի վերջո, ինչպես և կանխատեսել էր Դեյվիսը, ԱՄՆ-ը չստանձնեց Հայաստանի մանդատը: 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ Սենատը մերժեց այն: Մարդասիրությունը հիշելու Վիլսոնի կողին սենատորները պատասխանեցին, որ չեն ցանկանում խառնվել Եվրոպական գործերին, թեպես հենց դա էին պահանջում մարդասիրության պատկերացումները<sup>176</sup>: Մինչդեռ հայ պատվիրակները, ելենով նախագահ Վիլսոնի և նրա շրջապատի հավաստիացումներից, հավատացել էին Ամերիկային: Նրանք, վստահելով ամերիկացիներին, պարբերաբար դիմում էին նաև այնտեղ գործող հայանպաստ կառույցներին, այդ թվում՝ նաև Գերարդի գլխավորած Հայաստանի անկախության կոմիտեին<sup>177</sup>:

Զգտելով զորքերը հանել Անդրկովկասից՝ չեր նշանակում, թե անգլիացիները իրավուրացնեն էին այդ տարածաշրջանում իրենց շահերը պաշտպանելուց: Անգլիային այնքան էլ ծեռնտու չեր ի հաշիվ

<sup>175</sup> Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, նշվ. աշխ., էջ 546-547:

<sup>176</sup> См. Гурко-Кряжин В. А., История революции в Турции, Москва, 1923, стр. 137.

<sup>177</sup> Տես Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919), Dokumente aus politischen Archiv des deutschen auswärtigen Amts, zusam: und eingel: von prof. W. Mikaeljan, Jerewan, 2004, s. 606.

Հայաստանի մանդատի ԱՄՍ-ի դիրքերի ուժեղացումը Մերձավոր Արևելքում: Նա դեմ էր նաև Հայաստանի մանդատը Ֆրանսիային հանձնելուն, քանի որ անգլիական գաղութներում առաջացած անհանգիստ և սրված իրավիճակում Ֆրանսիայի ուժեղանալը Մերձավոր Արևելքում նույնպես չէր բխում Անգլիայի շահերից: Այդ էր պատճառը, որ անգլիացիները իտալիային առաջարկեցին վերցնել Հայաստանի մանդատը և զորք մտցնել Անդրկովկաս: Եվ մինչ վեհաժողովի կողմից Հայաստանի մանդատը ԱՄՍ-ին հանձնելը, Կովկասում անգլիացիներին փոխարինելու մասին հայտարարությամբ դեռևս 1919 թ. ապրիլին հանդես եկավ նաև իտալիան: Իսկ հաստատվել Կովկասում նշանակում էր նախևառաջ ռազմակալել Բաթումը: Սա էլ ոգևորեց անգլիացիներին, որոնք հույս ունեին ապահով հեռանալ Կովկասից, սակայն իտալացիներն արդեն օգոստոսին վերջնականապես հայտնեցին, որ չեն կարող ստանձնել Հայաստանի մանդատը<sup>178</sup>:

Անդրկովկասում Անգլիական զորքերը իտալականով փոխարինելու մասին համաձայնագիրը Անգլիայի և իտալիայի գլխավոր շտաբների միջև կնքվեց Փարիզում 1919 թ. մարտի 24-ին: Սակայն քերզոնը կասկած էր հայտնում, որ իտալացիները չեն կարող դժմադրել բոլշևիկներին: Դեռևս մարտի 15-ին Բալֆուրին գրած նամակում նա ընդգծում էր, որ Անդրկովկասը կապված չէ իտալիայի ազգային շահերի և քաղաքական ամբիցիայի հետ, և որ իտալացիները փոքր իսկ կշիռ կամ հարգանք չեն ունենա կովկասյան մարդկանց մոտ, և երբ մենք հեռանանք, նրանք երես առ երես կկանգնեն մի իրադրության առաջ, որից բոլորովին անօգնական կլինեն գլուխ հանել<sup>179</sup>: Չնայած այս կասկածներին՝ Անգլիայի ռազմական խորհրդությունը 1919 թ. ապրիլի 9-ին հավանություն տվեց սույն համաձայնագրին<sup>180</sup>: Իտալական զորքերը Անդրկովկաս պետք է մտնեին Բա-

<sup>178</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, նշվ. աշխ., էջ 545:

<sup>179</sup> Տե՛ս Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, էջ 261:

<sup>180</sup> Տե՛ս նույն տեղում:

թումով: Այս կապակցությամբ ապրիլի 12-ին Լլոյդ Զորջի և Օռլանդոյի միջև համաձայնություն կայացվեց<sup>181</sup>:

Մայիսի 10-ին անգլիական իրամանատարությունը այդ որոշման մասին պաշտոնապես տեղյակ պահեց Վրաստանի կառավարությանը և Թիֆլիսի բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին, իսկ երկու օր անց Անդրկովկաս ժամանեց իտալական առաքելությունը՝ 18 սպաներով՝ գնդապետ Գաբրայի գլխավորությամբ<sup>182</sup>: Հունիսի 5-ին Գաբրայի առաքելությունը հաղորդում է իր կառավարությանը, որ Անդրկովկասն օկուպացնելու համար անհրաժեշտ է այնտեղ ուղարկել առնվազն 30 000 զորք<sup>183</sup>:

Արդեն իտալիայում Օռլանդոյի կառավարությանը փոխարինելու Նիտուի կառավարությունը (1919 թ. հունիսի 23-ից մինչև 1920 թ. հունիսի 15-ը), որը, ավելի լրջորեն կշռադատելով իրավիճակը, գիտակցում էր, որ անհնար է այդ քանակի զորք ուղարկել Անդրկովկաս: Հուլիսի 17-ին Ա. Ահարոնյանը տեսակցում է իտալական պատվիրակության ընդհանուր խորհրդական Դի Մարտինոյի հետ՝ ճշտելու, թե որքանով է ծիչտ իտալական զորքերն անգլիականի փոխարեն Կովկաս փոխադրելու լուրը: Զրույցի ընթացքում Դի Մարտինոն հայտնում է հետևյալը. «Իտալական զորքերը Կովկաս փոխադրելու մասին լուրը դիտավորություն կար, և այս մասին առանձնապես պնդում էին անգլիացիք, բայց այժմ այդ որոշումը ետ է վերցված. իտալացիք Կովկաս գնալու չեն»<sup>184</sup>: Դեռ ավելին, ապրիլին Սան Ռեմոյի խորհրդաժողովի ընթացքում, երբ խոսք եղավ Հայաստանի մանդատը Իտալիային հանձնելու մասին, Նիտուին հայտարարեց, որ «Իրենց համար անհնար է զորքեր ուղարկել աշխարհի այդ մասը»<sup>185</sup>:

<sup>181</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 262:

<sup>182</sup> Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան 2006, էջ 194:

<sup>183</sup> Տե՛ս **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 262:

<sup>184</sup> **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 37:

<sup>185</sup> **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 277:

Ինչպես գրում է Ա. Խատիսյանը, նախատեսված էր 40 հազար իտալական զորք ուղարկել Անդրկովկաս, որոնցից 8 հազարը տեղակայվելու էին Հայաստանում: Սակայն այդ զորքերը չեկան: Պատճառն այն էր, որ Խոտալիայում բանվորները հրաժարվում էին Բաթում գնացող շոգենավերը բեռնել, սկսվել էին բողոքի գործադուլներ, Խոտալիայի հյուսիսում ուժեղանում էր բոլշևիզմը<sup>186</sup>: Այդ պայմաններում զորքեր ուղարկել և գրավել Անդրկովկասը, որն իրենն էր համարում Ռուսաստանը և արդեն եկել ու բախում էր դրները, Նիտուին համարում էր Վտանգավոր, անգամ արկածախնդրական ձեռնարկ: Ու նա հրաժարվում է այդ մտքից: Եվ ինչպես նշեցինք Վերևուն, Խոտալիան օգոստոսին վերջնականապես մերժեց Հայաստանի մանդատատը: Այդ մասին Լոնդոնում Խոտալիայի դեսպան Իմադերիալին Անգլիայի արտգործնախարարությանը հայտնեց օգոստոսի 1-ին<sup>187</sup>:

Անգլիայում Բաթումից շուտափույք հեռանալու կողմնակիցների թիվն արագորեն ավելանում էր նաև Վրաստանի մենշևիկյան կառավարության դիրքորոշման պատճառով: Վերջինս նրբանկատորեն հասկացնում էր անգլիացի «իմադերիալիստներին» հեռանալ Բաթումից<sup>188</sup>: Իրենց նպատակին հասնելու համար վրաց գործիչները դիմում էին նաև Բաթումի մարզի ազգաբնակչության հասարակական կարծիքի օգնությանը: Իսկ այդ կարծիքը մասսամբ Վրաստանի օգտին էր: Ֆիշտ է, Աջարիայի բնակչության մեծ մասը մահմեդական էին, բայց նաև վրացախոս էին, և ծշմարտությունից հեռու չէ տարածված այն տեսակետը, թե աջարները մահմեդականացած վրացիներ են: Եվ ահա 1919 թ. օգոստոսի 31-ին, «Բաթումի վրացի մուսուլմանների մեջլիսը» որոշում է կայացնում Աջարիան Վրաստանին միավորելու մասին, իսկ 1920 թ. ապրիլի 23-ին վերահաստում է այդ որոշումը և խոդրում վրաց կառավարությանը՝ միջոցներ ձեռք առնել կյանքի կոչելու այն<sup>189</sup>: Մեկ այլ կազմակերպություն՝ «Բաթումի մուսուլմանական ազգային խորհուրդը», մարտի 19-ին հեռագ-

<sup>186</sup> Տես Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 187:

<sup>187</sup> Տես Անհրույրան Ա., նշվ. աշխ., էջ 44:

<sup>188</sup> Ըմ. Ավալով Յ., սկզ. բաժ., ստր. 253.

<sup>189</sup> Տես ԴԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 38:

րում է Թիֆլիս՝ մեծ տերությունների ներկայացուցիչներին և վրաց կառավարությանը հայտնելով հետևյալը. «...Մենք պահանջում ենք մեր շրջանի և քաղաքի անյապաղ միացումը հայրենի Վրաստանին ինչպէս նրա անբաժան մասը ինքնավարական իիմունքներով...»<sup>190</sup>. Բայց պնդել, թե աջարական բոլոր կազմակերպությունները վրացամետ էին, ճիշտ չի լինի: Օրինակ՝ «Բաթումի մահմեդական միությունը» մայիս ամսին հայտագրով դիմում է անգլիական նահանգապետ Կուկ-Կոլլիսին՝ բողոք հայտնելով, որ «Բաթումի վրացի նուստվամանների մեջլիսը» ազգի ներկայացուցիչները չեն, որ բոլորի տեղը որոշում ընդունեն, իսկ Աջարիայի մահմեդականները իրականում ցանկանում են ապրել անկախ և վճռական են իրենց այդ որոշման մեջ<sup>191</sup>: Աջարիայում գործող մեկ այլ կազմակերպություն՝ «Մուսուլմանական Վրաստանի ազատության կոմիտեն», համագործակցում էր Կամավորական բանակի հետ և հայտարարում Աջարիան որպես Ռուսաստանի մաս: Սակայն, եթե Դենիկինը պարտվեց, և առաջ եկավ բոլշևիկյան սպառնալիքը, և եթե պարզվեց, որ Թուրքիան չի կարողանալու գրավել Աջարիան, այնտեղ թուրքական էմիսարների միջոցով սկսվեց մի շարժում, որը տանում էր վերջինիս անկախությանը<sup>192</sup>: Ի դեպ, այդ էմիսարների մեջ մեծ թիվ էին կազմում աղբեջանցիները: Այստեղ դրսկորպում էր Ադրբեջանի ուխտադրուժ և երկումինի քաղաքականությունը Վրաստանի հետ հարաբերություններում. որտեղ հնարավոր էր հայերին վճասել, աշխատում էին գործի մեջ ներքաշել վրացիներին, իսկ որտեղ հնարավոր էր վրացիներին վճասել, համագործակցում էին թուրքերի հետ: Նոյ Ժորժանիան 1920 թ. մարտի 25-ին՝ Վրաստանի սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան կուսակցության խորհրդակցությունում հաշվետվության ներկայացման ժամանակ, անդրադարձել է նաև այս հարցին՝ նշելով, որ բոլշևիկյան վտանգի դեմ պետք է կռվեն միասին, և աղբե-

<sup>190</sup> «Յառաջ», 27 մարտ, 1920, թիվ 65:

<sup>191</sup>Տե՛ս «Յառաջ», 28 մայիս, 1920, թիվ 110:

<sup>192</sup>Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 181, թ. 26:

շանցիները պետք է գիտակցեն իրենց դեմ Աջարիայում գործելու վտանգավորությունը<sup>193</sup>:

Աջարիայի անկախության կողմնակիցները նույնիսկ դիմել էին Հայաստանի կառավարությանը անկախությունը ճանաչելու խնդրանքով: 1920 թ. հունիսի 30-ին Աջարիայի զինված ուժերի հրամանատարությունը Բաթումի հայկական հյուպատոսի միջոցով գրություն է ուղարկում Հայաստանի կառավարությանը, որտեղ խնդրում է. «1. ճանաչել Աջարստանը իբրև անկախ պետությին Բաթումի նախկին նահանգում, 2. թոյլ չտալ դիւնագիտական միջոցներով վրացական զօրքերի Աջարստան մտնելը եւ այդպիսով պատերազմի առաջն առնել, եւ համոզւելու համար, որ Աջարստանը ուղղում է ազատ եւ անկախ ապրել, 3. հանրաքրեի ենթարկել ազգաբնակչութեանը...»<sup>194</sup>:

Պարզ էր, որ թուրք և աղորեջանցի էմիսարներն արել էին իրենց սև գործը, և Աջարիայում ծայր էր առել անջատողական շարժում: Բնականաբար, Հայաստանի կառավարությունը ցուցաբերեց խոհեմուրյուն և չներքաշվեց աջարական անջատողականներին սատարելու անհեռատես և վտանգավոր գործընթացի մեջ: Թեմալականների համար անկախ Աջարիան թուրքիային միացնելը դառնում էր զուտ տեխնիկական խնդիր, իսկ Աղորեջանի համար մահմեղական անկախ Աջարիան դառնում էր ապահով ելք դեպի Սև ծով և Հայաստանի ծովային ելքը փակելու «հիանալի» հնարավորություն: Այդ էր պատճառը, որ թուրք-աղորեջանական տանդենը խրախուսում էր աջարների անջատողականությունը:

Այնուամենայնիվ, մի բան պարզ էր, որ եթե չլիներ անգիտացիների միջամտությունը, հավանաբար, կբռնկվեր վրաց-աջարական պատերազմ: Չնայած Վրաստանում տիրող որոշակի հականգլիական տրամադրություններին՝ անգլիական ռազմաբազայի առժամանակ գոյությունը Բաթումում մի շարք առօսմներով ծեռնտու էր վրացիներին: Այս տեսակետից շատ բնորոշ է դեռևս 1919 թ. սեպտեմբերի 4-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորու և

<sup>193</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 15:

<sup>194</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 607, թ. 3:

Անդրկովկասում բրիտանական կոմիսար Ուորդրոպի միջև տեղի ունեցած գաղտնի գրույցը, որտեղ Գեգեչկորին նշում է, որ անգլիական զորքերի հնարավոր դուրսբերումը Անդրկովկասից խիստ մտահոգել է Վրաստանի կառավարությանը, քանի որ զայող տարր հանդիսացող անգլիացիների հեռացմամբ՝ Վրաստանը խնդիրներ կունենա հարավից քենալականների, հյուսիսից՝ ռուսների հետ, ուստի խնդրում է, որ անգլիական զորքերը պահպեն գոնե Հայաստանում և Բաթումում: Պարզ է, որ այս խնդրանքի կատարման դեպքում կերպաշխավորվեր Վրաստանի հյուսիսային և հարավային սահմանների անվտանգությունը: Իսկ վրացիների՝ Բաթումի հետ կապված առաջարկը հետևյալն էր. «Վրաստանին յանձնում են (անգլիացիները – Շ. Թ.) Բաթումի շրջանը, որի մէջ նա կազմակերպում է իշխանութիւնը՝ յենուելով ժողովրդական լայն զանգուածների վրայ: Քաղաքային վարչութիւնը կազմակերպում է ընտրական սկզբունքով: Նաւահանգիստը յանձնում է անգլիացիներին, որպէս զինուորական բազա եւ ածուխի կայան Սեւ ծովի վրայ»<sup>195</sup>: Բայց այդպես հնարավոր չէր: Վրաց կառավարությունն ուզում էր մարզի կառավարումը վերցնել իր ձեռքը, իսկ անգլիացիները պետք է բավարարվեին միայն այնտեղ գինվորական բազա ունենալով, մինչդեռ տարածաշրջանի և հատկապես Բաթումի հետ կապված Անգլիան իր ուրույն պլաններն ուներ:

Անդրկովկասից անգլիական զորքերը դուրս հանելու և Բաթումը Վրաստանին հանձնելու գաղափարին դեմ էր նաև Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հրամանատար Ա. Դենիկինը: Վերջինս մտավախություն ուներ, որ բրիտանական զորքերն Անդրկովկասից դուրս բերելը կիանգեցներ տարածաշրջանում բոլշևիզմի արագ տարածմանը: Այդ պատճառով նա խնդրեց Մեծ Բրիտանիայի կառավարությանը՝ զորքերը չհանել այնտեղից<sup>196</sup>: Դենիկինը ծգտում էր վերականգնել Ռուսական կայսրության նախկին տարածքները և դեմ էր անդրկովկասյան հանրապետությունների անկախությանը:

<sup>195</sup> Մանսուրեան Ա., Վրաց մենշևիկները եւ անգլիական զօրավարները, «Հայրենիք», Պոստոն, 1928, յունուար, թիվ 3 (63), էջ 149-150:

<sup>196</sup> Տե՛ս Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 194:

Մյուս կողմից, անցանկալի զարգացումներից խուսափելու և իր նպատակին հասնելու համար նա ձգտում էր Բաթումում ձևավորել անդրկովկասյան կորպուս և մարզում տեղակայել Կամավորական բանակի ստորաբաժանումները: Եա, միաժամանակ գիտակցելով, որ իր այդ նախաձեռնությունը կիանգեցնի Անդրկովկասի հանրապետությունների խիստ բացասական վերաբերնունքին, փորձում էր նրանց համոզել, թե Կամավորական բանակը պատերազմ է մղում բացառապես բոլշևիկների դեմ և Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ զավթողական նկրտումներ չի ունեցել և չունի, ապա շարունակում. «Հույս ունեմ, որ Անդրկովկասի ժողովուրդների պետական բանականությունը ցույց կտա նրանց միակ ճիշտ ուղին, որը նրանց դուրս կբերի լուսավոր ապագա, և նրանք մեզ հետ միասին, ձեռք ձեռքի տված կգնան ընդհանուր պետական շինարարության ճանապարհով՝ ուշադրություն չդարձնելով թշնամիների նենգ չարախոսությունների վրա»<sup>197</sup>:

Անգլիացիները խորհրդային իշխանության դեմ կռվելու նպատակով թույլատրեցին Դենիկինին Կամավորական բանակը համալրելու համար Բաթումում հավաքագրման գործակալություն ստեղծել, որն սկսեց գործել 1919 թ. հունիսի 12-ից: Գործակալության դեկավարն էր գեներալ Նատիկը<sup>198</sup>: Սակայն, իրականում այդ գործակալությունը Կամավորական բանակի բաժանմունք էր, որով փորձում էին գաղտնի անդրկովկասյան կորպուս ձևավորել: Բայց դրա դեմ լրջորեն հանդես եկան անգլիական զինվորական հրամանատարությունը և Վրաստանի կառավարող շրջանները, որոնք հայտարարում էին, որ Կամավորական բանակը անդրկովկասյան կորպուսի ստեղծումով ձգտում է նվաճել Վրաստանը: Այս կապակցությամբ Դենիկինը և Բաթումի Ռուսական ազգային խորհուրդը հայտարարեցին, որ ռուսների հույսերը և սպասելիքները չիրականացան, քանի որ անգլիացիները եկել են ոչ թե դաշնակցային պարտավորություն-

<sup>197</sup> **Պետրոսյան Գ.**, Յայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920թթ.), էջ 238:

<sup>198</sup> Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Յայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ, (1918-1920 թթ.), էջ 195-196:

ներ կատարելու, Ռուսաստանի հարավին օգնելու, այլ Անդրկովկասում իրենց քաղաքական ու տնտեսական շահերը հետապնդելու նպատակով<sup>199</sup>:

Այնուամենայնիվ, ռուսներին հաջողվեց կարծ ժամանակամիջոցում բազմաթիվ կամավորներ ցուցակագրել: Հունիսի 16-ին Բաթումում Քայաստանի Քանրապետության գլխավոր հյուպատոս Գ. Եղիգարյանը Վրաստանում Քայաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղղված նամակում նշում է, որ մի քանի օրվա ընթացքում Բաթումի Կամավորական բանակի բաժանունքում ցուցակագրվել են մի քանի հարյուր ախալքալաքցիներ և մասամբ ախալցխացիներ, ապա տեղեկացնում, թե Վրաց շրջաններում դժգոհություն կա այդ առթիվ. նախ՝ որ Բաթումում է կազմակերպվում, երկրորդ՝ որ պետք վրացի է և երրորդ՝ որ հայեր են ցուցակագրվում<sup>200</sup>:

Ծուտով անգլիական զինվորական առաջելությունն արգելեց Կամավորական բանակի Բաթումի բաժանունքի գործունեությունը, իսկ հունիսի 15-ին գեներալ Նատիկն ու նրա համհարզը սպանվեցին վրացիների կողմից<sup>201</sup>: Այսպիսով՝ գեներալ Դենիկինի կողմից Բաթումն աստիճանաբար իր հսկողության տակ վերցնելու քաղաքանությունը ձախողվեց:

Անգլիան և նրա Անտանտի դաշնակիցները ինչքան էլ համագործակցեին Կամավորական բանակի և խորհրդային իշխանության այլ թշնամիների հետ, ինչքան էլ տարբեր միջոցներով պայքարեին խորհրդային իշխանության դեմ, այնուամենայնիվ, քաջ գիտակցուն էին, որ խորհրդային իշխանության հաստատումը Ռուսաստանում արդեն կայացած իրողություն է, և կամա թե ականա իրենք երբեւ ստիպված պետք է լինեն հաշվի նստել այդ իշխանության հետ: Ուստի անգլիացիները 1920 թ. սկզբներին, ելելով նոր ստեղծված իրավիճակից՝ կապված Դենիկինի մոտալուտ պարտության հեռանկարի հետ, վերանայեցին իրենց քաղաքականությունը խորհրդային

<sup>199</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 195:

<sup>200</sup> Տե՛ս Պետրոսյան Գ., Քայաստանի Քանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920թթ.), էջ 240:

<sup>201</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 197:

Ռուսաստանի հարցում: Մի կողմից ձգտելով վերջինիս հեռու պահել Անդրկովկասից՝ մյուս կողմից Անգլիան հանդես եկավ Անդրկովկասի հանրապետությունների և Խորհրդային Ռուսաստանի միջև առևտրական կապերի հաստատման նախաձեռնությամբ, որը, ըստ Անգլիայի, հետագայում ոյուրացնելու էր իր միջնորդական գործունեությունը Անդրկովկասի հանրապետությունների և Խորհրդային Ռուսաստանի միջև խաղաղ հարևանություն հաստատելու գործում<sup>202</sup>: Այդ միջնորդական գործունեությունը, իհարկե, շատ կղժվարանար առանց Անդրկովկասում որոշակի ռազմաբազա ունենալու: Իսկ այդ ռազմաբազան նրանք ունեին. դա Բաթումի բազան էր: Ֆիշտ է, Անգլիայում շարունակվում էին բուռն քննարկումներն Անդրկովկասից հեռանալու մասին, բայց Բաթումում մնալու հարցն անգլիացիները վճռել էին դեռևս 1919 թ. հուլիսի կեսերին: Անգլիայի գինվորական նախարար Չերչիլը Համայնքների պալատում հայտարել էր, որ անգլիական գորքերը Կովկասից քաշվելու են միայն աշնանը, և որ այնուհետև սկսնված ափերում կմնա անգլիական 10 000-անոց կանավորական բանակ<sup>203</sup>:

Անգլիական գորքերի Անդրկովկասում մնալ-չմնալու հարցը վիճաբանության թեմա էր դարձել գլխավորապես ռազմական և արտաքին գործերի նախարարությունների միջև: Առաջինը ձգտում էր օր առաջ գորքերը հանել տարածաշրջանից, իսկ երկրորդն աշխատում էր դրանք պահել գոնե մինչև վերջնական հաշտության կնքումը: Չերչիլի տեսակետը հաղորդ հանդիսացավ: 1919 թ. օգոստոսի 26-ին բրիտանական վերջին գինվորները հեռացան Բաքվից, ապա Բաթումում կենտրոնացան Անդրկովկասի մյուս վայրերում տեղակայված կայազորերը, իսկ վերջին շարասյունը Թիֆլիսից դուրս եկավ սեպտեմբերի 11-ին<sup>204</sup>: Արտաքին գործերի նախարարությունը ջանքերը կենտրոնացրեց բրիտանական գորքերը գոնե Բաթումում պահելու վրա: Դրան կողմնակից էր նաև Կովկասում բրիտանական

<sup>202</sup> Ըմ. **Ավալով Յ.**, յկազ. թաճ., ստր. 252.

<sup>203</sup> Տե՛ս **Անդրկովկաս Ա.**, նշվ. աշխա., էջ 38:

<sup>204</sup> Տե՛ս **Հովհաննեսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն: Վերսալից Լոնդոն, 1919-1920, հատոր II, Երևան, 2014, էջ 152:

հրամանատար գեներալ Միլնը, որի միջամտությամբ էլ կառավարությունը սեպտեմբերի 18-ին որոշեց Բարումը պահել բրիտանական զորքերի վերահսկողության տակ՝ այնտեղ պահելով 2000-անոց կայազոր<sup>205</sup>:

Չնայած դրան՝ 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին նոր թափով ծավալվեցին Բարումից անգլիական զորքերը դուրս հանելու մասին խոսակցությունները: Այդ մասին Համայնքների պալատում հայտարարություն արեց Լոյդ Ջորջը 1919 թ. դեկտեմբերի 18-ին: 1920 թ. փետրվարի 10-ին նա հանդես եկավ զորքերը արագ տարիանելու նոր հայտարարությամբ: Փետրվարի 18-ին Համայնքների պալատում հայտարարվեց, որ տարիանումը սկսվել է, բայց դեռ չի ավարտվել: Փետրվարի 22-ին «Թայմսը» տպեց Կոնստանդնուպոլիսից եկած տագնապալի հեռագիրն այն մասին, որ ժամանակը չէ հեռանալ Բարումից հենց այն պահին, երբ Վրաստանի, Հայաստանի և Արդբեջանի միջև սկսել են կարգավորվել հարաբերությունները<sup>206</sup>: Ի վերջո, ելնելով Ռուսաստանի նախկին ծայրամասերը բոլշևիկների և քեմալականների ոտնձգություններից պաշտպանելու և առաջիկայում Արևելյան հարցը լուծելու անհրաժեշտությունից՝ փետրվարի 23-ին որոշվեց կասեցնել բրիտանական զորամասի տարիանումը<sup>207</sup>: Ավելին, փետրվարի 24-ին Անգլիայի Համայնքների պալատի ղեկավար Պոներ Լոն հրապարակավ հայտարարեց, որ եթե Խորհրդային Ռուսաստանը հարձակվի իր սահմանակից պետությունների վրա, որոնց անկախությունը կամ դե ֆակտո ինքնավարությունը ճանաչել էին համաձայնական պետությունները, «Դաշնակիցները կարելի ամէն աջակցութիւն պիտի տային անոնց»<sup>208</sup>: Իսկ այդ աջակցությունը, առանց Բարումում տեղակայված բրիտանական ռազմաբազայի, հնարավոր չէր ցուցաբերել: Ուստի անգլիացիներն առժամանակ մնացին Բարումում:

<sup>205</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 156-157:

<sup>206</sup> Այդ հեռագիրն ամբողջությամբ տե՛ս «Յառաջ», 4 ապրիլ, 1920, թիվ 71:

<sup>207</sup> Ըմ. **Ավալով Յ.**, յկազ. բաժ., ստր. 252-253.

<sup>208</sup> Նախապեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 206:

## **2.2. Բարումի խնդիրը Հայաստանի սահմանները որոշող միջազգային հանձնաժողովում (1920 թ. փետրվար-մարտ)**

Մինչ Բարումի շուրջ ծավալվում էին այս իրադարձությունները, նրա կարգավիճակի և պատկանելիության հարցերը լայնորեն քննարկվում էին Փարիզի Վեհաժողովի շրջանակներում: Ինչպես արդեն նշել ենք նախորդ գլխում, Լոնդոնի խորհրդաժողովի շրջանակներում 1920 թ. փետրվարի 17-ին ստեղծվել էր Հայաստանի սահմանները որոշող միջազգային հանձնաժողով: Փետրվարի 21-ին այդ հանձնաժողովը հայ պատվիրակների հետ քննարկեց հայ-բուրժական սահմանի հարցը, իսկ փետրվարի 25-ին վրաց պատվիրակությունն է հրավիրվում Վերոնշյալ հանձնաժողով՝ հայ-վրացական սահմանազատման հարցերը պարզաբանելու համար<sup>209</sup>, որտեղ քննարկման հիմնական թեման Բարումի խնդիրն էր: Վերջինիս հետ կապված՝ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովում Անգլիայի և Ֆրանսիայի դրսևորած վարքագիծը փոքր-ինչ անհասկանալի էր թվում: Երկուսն էլ ուզում էին, որ Բարումը հռչակվի ազատ նավահանգիստ, և Հայաստանն ու Ադրբեյջանը ազատ ելք ունենան Սև ծով, սակայն կոնկրետ քայլեր չեն ձեռնարկում: Իսկ Լազիստանի խնդրում հայերի փաստարկներն օգտագործում էին վրացիների դեմ, վրացիներինը՝ հայերի: Մինչդեռ անհրաժեշտ էր կամք ու վճռականություն ցուցաբերել և համոզել կամ պարտադրել վրացիներին՝ չափավորել իրենց պահանջները: Կարծում ենք՝ այդ հնարավորությունն Անտանտի երկուներն ունեն: Անգլիայի և Ֆրանսիայի այս քաղաքանություննը շարունակվեց նաև հետագայում՝ ապրիլի 13-17-ը՝ Փարիզում, 18-26-ը՝ Սան Ռեմոյում, երբ քննարկվում էին հայ-վրացական սահմանային խնդիրները:

Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովը մեծապես կարևորեց Բարումի հարցը: Կամերերը հայտարարեց, որ Վեհաժողովը հաստատակամ է, որ ոչ մի նոր պետություն չպետք է գրկված

<sup>209</sup> См. Авалов Յ., укаz. раб., стр. 255.

լինի դեպի ծով ազատ ելքից: Ստեղծելով անկախ Շայաստան՝ անհրաժեշտ է անպայման ապահովել նրա ելքը դեպի Սև ծով: Ի պատասխան այս հայտարարության՝ Ավալովը ներկայացնում է Վրաստանի տեսակետը, որ Բաթումը և մարզը վրացական տարածքների անբաժանելի մաս են կազմում, միաժամանակ Վրաստանը պատրաստական է տրամադրել բոլոր անհրաժեշտ երաշչիքները՝ հարևան հանրապետությունների և միջազգային տարանցիկ առևտորի շահերը Բաթումում ապահովելու համար: Սակայն Կանսիտտարտը և Կամերերը դարձյալ ընդդիմանում են՝ այս անգամ առաջ քաշելով Բաթումի բնակչության խառը լինելու և այնտեղ վրացական մեծամասնության բացակայության հանգանաքը<sup>210</sup>: Ըստ վրաց պատվիրակության տեսակետի՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները կասկածանքով էին վերաբերվում Բաթումի վրացական գերիշխանության ճանաչմանը՝ դա պատճառաբանելով Շայաստանին ծովային ելք տրամադրելու անհրաժեշտությամբ:

Ինչպես տեսնում ենք, վրացական կողմը մշտապես, ուղղակի թե անուղղակի մեղադրում էր Գերագույն խորհրդին հայանպատ դիրքորոշման մեջ: Սակայն պատմական փաստերի և իրողությունների համադրումն ու անաչառ վերլուծությունն այլ բան են ասում: Նախ Անտանտի երկրների կողմից երենն դրսւորած թվայցալ հայանպատ դիրքորոշումը պայմանավորված էր իրենց իսկ շահերի սպարկման ծգտմամբ (Կամերերը վերոնշյալ հանձնաժողովի նիստում հայտարարեց արևմտյան տերությունների՝ Բաթումով դեպի Պարսկաստան տարանցիկ առևտորի և նավահանգստով Բաքվից դեպի Եվրոպա նավթամթերքների փոխադրման կարևորության մասին), և երկրորդ՝ շուտով՝ ապրիլին, Սան Ռեմոյի խորհրդաժողովում մեծ տերություններն ակնհայտ նահանջ արձանագրեցին իրենց դիրքորոշման մեջ՝ Բաթումը և մարզը ճանաչելով որպես Վրաստանի սեփականություն, և միայն պնդում էին նավահանգստի porto-franko կարգավիճակը, իսկ հուլիսին ընդհանրապես փակվեց թեման, եթե անգլիացիները Բաթումը հանձնեցին Վրաստանին: Վրաստանի հա-

<sup>210</sup> Հմ. **Ավալօն 3.**, սկզ. թագ., էջ 256.

մառությունն ու Բարումը միանձնյա տնօրինելու բուռն ձգտումը վերջապես իր արդյունքն ունեցավ:

Ի վերջո, Գերագույն խորհուրդը Բարումի հարցում փետրվարի 27-ին առաջ քաշեց հետևյալ ծրագիրը. նախատեսվում էր Բարումը ոչ մեծ տարածքով հայտարարել porto-franko և ազատ քաղաք, իսկ Բարումի մարզի մնացած տարածքը բաժանել Վրաստանի և Հայաստանի միջև՝ առաջինին տրամադրելով մարզի հյուսիսային և արևելյան մասերը, իսկ երկրորդին՝ հարավային մասը՝ Արդվինի շրջանով հանդերձ<sup>211</sup>: Ըստ Երևույթին, այս ծրագրում հաշվի էին առնվել նաև հայկական կողմի մոտեցումները, որոնք շարադրված էին Բարումի խնդրի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման մեջ. «Հայաստանի կառավարությունը, հաշվի առնելով փոփոխված պայմանները, անհրաժեշտ է համարում Բարումի մարզի տարածքում հաստատել հետևյալ սահմանը Վրաստանի և Հայաստանի միջև: Սահմանը սկսվում է Սև ծովի ափից, Բարումի նավահանգստից, որտեղ Հայաստանը պետք է որպես սեփականություն ստանա նավահանգստի մի մասը: Ապա սահմանն անցնում է ճորոխ գետի կիրճով, մինչև նրա մեջ Արդանուց գետի թափվելը, ապա շարունակվում է Արդանուցի կիրճով մինչև Ալլագուզի լեռնանցքը՝ այդ կերպ իր մեջ ներառելով Բարում-Արդահան ճանապարհը: Այս տարածքային պահանջը հիմնավորվում է նրանով, որ մեր պետությանը մոտ ապագայում անհրաժեշտ է ունենալ ելք դեպի ծով, և այդ ելքը տալիս է ճորոխը: Բարումի մարզի՝ այդ հատվածի ազգագրական կազմը հետևյալն է. 15 հզ. հայ, 25 հզ. թուրք և վրացի մահմեդական, 5 հզ. քրիստոնյա վրացի»<sup>212</sup>: Այս որոշումը 1920 թ. մարտի 16-ին ուղարկվում է Թիֆլիսի մեր դիվանագիտական ներկայացուցիչ L. Եվանգուլյանին՝ վրաց կառավարությանը և Թիֆլիսի բոլոր արտասահմանյան ներկայացուցչություններին տեղյակ պահելու համար: Ինչպես տեսնում ենք՝ պահանջվող տարածքում հայերը կազմում են բնակչության 1/3-ը և թվաքանակով չեն զիջուն ո՛չ թուրքերին, ո՛չ վրացիներին:

<sup>211</sup> Սմ. տայ же.

<sup>212</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 508, թ. 42, նաև՝ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 251:

Ի պատասխան Գերագույն խորհրդի առաջ քաշած ծրագրի՝ մարտի 1-ին վրաց պատվիրակության կողմից ներկայացված նոտայում Բաթումի հարցի վերաբերյալ առաջ քաշվեցին հետևյալ խնդիրները.

1. Արանք պահանջեցին Վրաստանին միացնել Բաթումի ամբողջ մարզը,

2. ցուցաբերեցին պատրաստակամություն հարևան հանրապետությունների հետ կնքել համաձայնագրեր, որոնցով կապահովվեն Բաթումով ազատ առևտորի բավարար երաշխիքներ ոչ միայն Հայաստանի և Ադրբեյջանի, այլ նաև միջազգային ազատ տրանզիտի համար<sup>213</sup>:

Գերագույն խորհրդի ընդունած ծրագիրը, ըստ վրաց պատվիրակության տեսակետի, վտանգավոր էր նրանով, որ մուսուլման բնակչության նոր խմբեր դնելով Հայաստանի իշխանության տակ՝ խաթարվում էին անուր բարեկանական հարաբերությունները Հայաստանի և իր հարևանների միջև: Իսկ առանց երեք հանրապետությունների միջև փոխհամաձայնության, կապված սահմանագատման խնդիրների և Բաթումի հարցի հետ, փոքր հույս անգամ չի կարող լինել անդրկովկասյան ճգնաժամը լուծելու համար<sup>214</sup>: Այստեղ հարց է առաջանում, իսկ ի՞նչ կլիներ, եթե մուսուլման բնակչության այդ տարածքները դրվեին վրաց իշխանության տակ, արդյո՞ք «կամրապնդվեին» միջհարևանական հարաբերությունները: Ահա այսպիսի թույլ փաստարկներով վրաց պատվիրակությունը վիժեցրեց Գերագույն խորհրդի ծրագիրը:

Վրացիները շատ լավ գիտակցում էին, որ Անտանտի Գերագույն խորհուրդը ձգտում էր արագ լուծել անդրկովկասյան հանրապետությունների միջև առկա բոլոր խնդիրները, ամրապնդել նրանց քաղաքական ու ռազմական տեսանկյունից և նրանցով անուր պատկանգնեցնել խորհրդային Ռուսաստանի հավակնությունների առջև: Հետևյալ նրանք պնդում էին իրենց տեսակետը՝ ստիպելով մեծ տերություններին ընտրություն կատարել սեփական գլոբալ շահերի

<sup>213</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 576, թ. 78, նաև՝ Ավալօվ Յ., սկզ. թագ., стр. 257:

<sup>214</sup> Ըմ. Ավալօվ Յ., սկզ. թագ., стр. 258.

և հայոց կենսական պահանջների միջև: Վրացիները Հայաստանի հետ կապված սահմանային և գրեթե բոլոր մնացած հարցերում օգտվում էին ազերիների բացահայտ աջակցությունից: «Պակաս կարևոր չէր նաև քենալականների՝ արդեն շոշափելի գոյության հանգամանքը, որոնք իրենց ընդգծված հակահայկականությամբ առատ ջուր էին լցնում վրացիների ջրաղացին: Այստեղ մեկտեղվում էին վրաց-թուրք-ադրբեջանական շահերը: Դեպի ծով ելքով մեծ Հայաստանի ստեղծումը չէր բխում վերջիններիս շահերից: Դեռ ավելին, երբ այդ օրերին (փետրվար-ապրիլ) Լոնդոնում վրաց պատվիրակությունն առաջարկել էր ադրբեջանցիներին ճանաչել Բաթումի նկատմամբ Վրաստանի իրավունքները, որպեսզի Վրաստանը Գերագույն խորհրդին փաստի առաջ կանգնեցներ, թե Բաթումի մարզի մասնատումը սխալ է, և երկու դաշնակից հանրապետությունները համակարծիք են այդ հարցում, Ադրբեջանի պատվիրակությունը պնդեց, որ վրացիները պահանջնեն նաև ամբողջ Կարսի մարզը այն մտքով, որ ավելի լավ է այնտեղի մահմեդական ազգարնակչությունը դառնա վրացահպատակ, քան թե մաս կազմի Հայաստանի Հանրապետությանը: Այս առաջարկն այնքան անտրամաբանական էր, որ անգամ վրացիներն այն համարեցին անթույլատրելի: Ինչպես գրում է Զ. Ավալովը. «Մենք ակնհայտորեն դժվարացանք այդպիսի պահանջ ներկայացնել, քանի որ մեր հիմնական հուշագրում (1919 թ.) հավակնել էինք Կարսի մարզի չորս շրջաններից միայն երկուսի վրա (Արդահանի և Օլրիի – Շ. Թ.), էլ չասած դրա անթույլատրելիությունը մեզ համար»<sup>215</sup>: Ակնհայտ էր, որ թուրքերը և ադրբեջանցիները ամեն ինչ անում էին հայ և վրաց ժողովուրդների միջև սեա խրելու համար, և, ցավոք, դա հաճախ էր նրանց հաջողվում:

Այնուամենայնիվ, Վրացիները Հայաստանի սահմանների դեպի արևմուտք ընդարձակման մեջ իրենց համար օգտակար բան տեսնում էին: Առանց այն էլ բազմահազար վրացահայերի առկայությանը, ցեղասպանությունից մազապուրծ տասնյակ հազարավոր հայ գաղթականներ էին կուտակվել Վրաստանում: Ուստի, Արևմտյան Հայաստանի ազատագրման դեպքում, գոնե այդ գաղթականները

<sup>215</sup> Տամ же, стр. 262.

կզմային իրենց բնակավայրերը և չէին համալրի վրացահայության շարքերը, ինչը, քաղաքական խնդիրներից զատ, խորացնում էր պարենային ճգնաժամը Վրաստանում: Սակայն ամենակարևորն այն էր, որ Արևմտյան Հայաստանում տարածքներ ձեռք բերելով՝ Հայաստանը, ըստ վրացիների, ավելի մեղմ կլիմեր հայ-վրացական տարածքային վեճերում (Զավախը, Լոռի): Այս կապակցությանը դեռևս 1918 թ. նոյեմբերի 21-ին, վրաց կառավարության նիստում քննարկվել էին Փարիզի վրաց պատվիրակությանը տրվելիք հանձնարարականները, որտեղ արձանագրվել է հետևյալը. «...Մենք պետք է նպատակ դնենք միավորել Թուրքահայաստանը և Ռուսահայաստանը և ձգտել, որպեսզի Հայաստանի քաղաքական կենտրոնը փոխադրվի Թուրքահայաստան: Դրանով մենք կօգնենք հայերին ելք գտնել դեպի Սև ծով: Եթե այդպես լինի, ապա Հայաստանը մեզ չի նեղի և դրանով կիեշտանա հայ-վրացական սրված հարաբերությունները լուծելու հարցը...»<sup>216</sup>: Ցավոք, հետագայում վրաց մենշևիկները այս մոտեցումները հիմնավորապես վերանայեցին:

Ի վերջո, Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովում մեր պատվիրակությանը հայտնում են, որ կովկասյան երեք հանրապետությունները պետք է իրենք համաձայնության գան իրենց սահմանների հարցում: Ելնելով սրանից՝ մեր պատվիրակները դիմում են վրաց և աղրեջանական պատվիրակություններին՝ առաջարկելով սահմանային խնդիրները լուծել Վեհաժողովի շրջանակներում և դրա համար իրենց կառավարություններից համապատասխան լիազորություններ ստանալ: Սակայն նրանք խուսափողական պատասխաններ տվեցին<sup>217</sup>: Ո՞րն էր դրա պատճառը: Այս հարցի պատասխանը տալիս է Զ. Ավալովը. «Աղրեջանցինները գտնում էին, որ հայերի ձգտումները սահմանագծման բոլոր գործերը փոխադրել Եվրոպա, բացատրվում է հայերի նկատմանը Վեհաժողովի բարյացակամ տրամադրվածությամբ, որ այստեղ հայերն ուժեղ են մեզանից և մի-

<sup>216</sup> **Ментешавили А.**, Из истории армяно-грузинских отношений в 1918-1920гг., "Зоралой ბიզა", თბილისი, 1998, ნომერი 4-6, გვ. 3, («Պոլիտիկա», Թբիլիսի, 1998, թիվ 4-6, էջ 3):

<sup>217</sup> Սանրամասները տես Ահարոնյան Ա., նշվ.աշխ., էջ 74-77:

ջոցներով, և՝ կապերով, և՝ քանակով...: Դրա համար աղբբեջանցիներն ու Վրացիները պետք է ձգտեն վեճերը լուծել սեփական ուժերով Անդրկովկասում և ոչ թե Լոնդոնում կամ Փարիզում»<sup>218</sup>:

Ավալովն աղբբեջանցիների բերանով ասում էր այն, ինչ նաև իրենք էին մտածում: Խակ աղբբեջանցիները, «վեճերը սեփական ուժերով Անդրկովկասում լուծելու» հորդորը Վրացիներին ուղղելով, առիթը բաց չէին թողնում Լոնդոնում կամ Փարիզում Բարումի վերաբերյալ պահանջներ առաջ քաշել, որոնք հակասում էին Վրաստանի պատվիրակության դիրքորոշմանը: Ասվածի հետ կապված շատ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում 1920 թ. մարտի 9-ին Բարվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Հարությունյանի ուղարկած հեռագիրը վարչապետ Խատիսյանին. «...Աղբբեջանի կառավարությունը դիմել է դաշնակիցներին՝ խնդրելով իրեն տրամադրել հետևյալ արտոնությունները. 1. Բարումի նավահանգիստը ոչ մի դեպքում չպետք է փակ լինի Աղբբեջանի համար, 2. աղբբեջանական նավթը և կառավարության պահուստները Բարումում պետք է ազատվեն ամեն տեսակ մաքսային վճարներից, 3. Աղբբեջանը Բարումում պետք է ունենա առևտրական նավատորմ...»<sup>219</sup>:

Նույնպիսի ոգևորությամբ հարցը քննարկվում էր նաև աղբբեջանական նամուլում: «Ազերբայջան» թերթը փետրվարի 24-ի համարի խմբագրականում գրում է. «...Ոչ միայն աշխարհագրական դիրքով, այլև ամբողջ պատմական նշանակութեամբ Բարումը նաւահանգիստ է հանդիսանում ոչ թե մի որոշ պետութեան, այլ համայն Անդրկովկասի... Մեզ թում է Բարումի հարցի վերջնական լուծման միակ ծիշտ վճիռը կլինի ազատ նաւահանգստի վերածելու տեսակետը...»<sup>220</sup>: Սրանով բացահայտվում է Աղբբեջանի երկիմի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ: Աղբբեջանցիները, Բարումի հարցում առերևույթ պաշտպանելով Վրացիների տեսակետը, վերջիններիս տրամադրում էին հայերի դեմ, որը, ի դեպ, հաճախ հա-

<sup>218</sup> **Ավալօն 3.**, յկազ. թաճ., ստր. 263.

<sup>219</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 542, թ. 34:

<sup>220</sup> «Յառաջ», 7 մարտ, 1920, թիվ 49:

ջողվում էր, իսկ իրականում նրանք էլ պակաս շահագրգռված չեն Բաթումի porto-franco կարգավիճակի հարցով: Ի դեպ, նշենք, որ վրացիները շատ ցավագին էին վերաբերվում «Ազերբայջան» թերթում հաճախ կրկնվող «Անդրկովկասի հանրապետությունների շահերի հանգույց» հանդիսացող Բաթումի նավահանգիստը ազատ հռչակելու տեսակետին և հակադարձում, թե այդ թերթն ինչու Բաքվի համար ևս չի պահանջում այդպիսի կարգավիճակ, քանի որ առանց Բաքվի նավթի չեն կարող գոյություն ունենալ ոչ Վրաստանը և ոչ Էջայաստանը, և Բաքուն նույնպես անդրկովկասայան հանրապետությունների շահերի հանգույց է<sup>221</sup>:

1920 թ. վաղ գարնանը արդեն պարզ դարձավ, որ որևէ երկիր Հայաստանի մանդատը չի վերցնելու: Նախընթաց պատերազմը մեծ վնասներ էր հասցրել Անտանտի երկրների ու նրանց դաշնակիցների տնտեսություններին, ինչը սոցիալական լուրջ լարվածություն էր առաջացրել: Աշխատավորական օանգվածների գույցերը, միտինգները և բողոքի այլ ակցիաները ստիպում էին կառավարություններին եապես կրծատել ռազմական ծախսերը, զորացրել մեծարիվ բանակները և նվազագույնի հասցնել արտերկրում գտնվող զինվորականների թվակազմը: Իսկ ստանձնել որևէ երկրի մանդատ, առաջին հերթին ենթադրում էր պատկառելի զորակազմ տեղակայել տվյալ տարածքում: Ենտևաբար աշխարհի ուժեղները, որոնք հետպատերազմյան նոր աշխարհակարգի ճարտարապետներն էին և պետությունների միջև սահմաններ որոշողները, մոռացության մատնեցին հայ ժողովրդի կրած ծանր տառապանքներն ու անհաշիվ կրորւստները, որոնք, թերևս, կարող էին փոքր-ինչ ամոքվել միացյալ Հայաստանի վերականգնումով: Մոռացության տրվեց նաև հայ զինվորների ու կամավորականների համեստ, բայց կարևոր ներդրումը հաղթանակի գործում, և վերջապես մոռացվեցին ամպագորգոր ելույթներն ու խոստումները՝ հայերին արժանի հատուցում տալու մասին: Ուստի Անտանտի երկրների Գերագույն խորհուրդը որոշում է ձեռքբերը լվանալ Հայկական հարցից և Հայաստանի մանդատը հանձնել նորաստեղծ Ազգերի լիգային: Այդ մասին հայ պատվիրակները (Ա.

<sup>221</sup> Տե՛ս նույն տեղում, 9 մարտ, 1920, թիվ 50:

Ահարոնյան, Պողոս Նուբար փաշա, գեներալ Կորգանյան և Զավեն պատրիարք) տեղեկացան 1920 թ. մարտի 16-ին Լոնդոնում Յայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի հետ երրորդ հանդիպման ժամանակ<sup>222</sup>: Յայաստանի մանդատը Ազգերի լիգային հանձնելու ծրագիրը, բնականաբար, խիստ մտահոգեց հայ պատվիրակներին, քանի որ դրանով ավելի էր մշուշոտվում Յայաստանի, նրա սահմանների, այդ թվում՝ նաև դեպի ծով Ելք ունենալու հեռանկարը: Յետևաբար Վերոնչյալ հանդիպման հաջորդ օրը՝ 1920 թ. մարտի 17-ին, Ա. Ահարոնյանը և Յովհաննես Խան Մասեհյանը (Լոնդոնում Պարսկաստանի դիվանագիտական ներկայացուցիչը) շտապում են տեսակցել Լոնդոնում ամերիկյան դեսպանի հետ՝ ճշտելու, թե որքանով կարող են հույս դնել Ամերիկայի վրա: Ի զարմանս մեր պատվիրակների՝ դեսպանը հայտարարեց. «Այսօր այլևս անօգուտ է հուսալ ամերիկյան մանդատի վրա, մեր երկրի ներքին շփորն առայժմ այդ անհնարին է դարձնում...»<sup>223</sup>: Ամերիկացու կողմից մերժվելուց հետո՝ մարտի 22-ին, Ա. Ահարոնյանը տեսակցում է Ազգերի լիգայի երկրորդ քարտուղար Նիկոլսոնի հետ: Վերջինս հայտնում է, որ Ազգերի լիգան, ստանալով Գերագույն խորհրդի առաջարկը Յայաստանի մանդատի մասին, խիստ մտահոգվել է: Նախ մտածել է մերժել: Ապա որոշել են որոշակի պայմանների դեպքում ընդունել այն է՝ Անտանտի երկրների Գերագույն խորհրդորդ Յայաստանին տրամադրում է անհրաժեշտ ռազմական, ֆինանսական ու կադրային աջակցություն և ապահովում է դեպի ծով Ելքը Բաթումից<sup>224</sup>: Ինչպես տեսնում ենք, Յայաստանին Բաթումից ծովային Ելք տրամադրելը շարունակում էր մնալ գլխավոր առաջնահերթություններից մեկը նաև Ազգերի լիգայի համար:

Ինչ խոսք, Ազգերի լիգան ևս չարդարացրեց հայերի հույսերը: Նա ոչ միայն չընդունեց Յայաստանի մանդատը, այլ մերժեց նաև 1920 թ. մայիսին Յայաստանի Յանրապետությունն Ազգերի լիգայի մեջ ընդունելու մասին Յայաստանի կառավարության դիմումը: Մի

<sup>222</sup> Տես Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 69:

<sup>223</sup> Նույն տեղում, էջ 71:

<sup>224</sup> Տես նույն տեղում, էջ 72:

քանի ամիս այդ դիմումը քննարկելուց հետո Ազգերի լիգան եկավ այն եզրակացության, որ ցանկալի չէ Հայաստանն ընդունել, քանի որ 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի հաշտության պայմանագիրը, որով Հայաստանը հռչակվում էր անկախ պետություն, դեռ վավերացված չէր: Բացի այդ՝ Վ. Վիլսոնի գծած Հայաստանի սահմանները այնքան ձգված էին, որ Ազգերի լիգայի անդամ պետությունները ներկա պայմաններում դժվարությամբ կարող էին ստանձնել դրանք երաշխավորելու կամ պաշտպանելու պատասխանատվությունը<sup>225</sup>: Այդ որոշումն ընդունվեց Լոնդոնի երկրող խորհրդաժողովի ընթացքուն (1920 թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 4-ը): Դեկտեմբերի 3-ին<sup>226</sup>:

Ազգերի լիգայի այս «հետևողական» քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ՝ ՀՅ կառավարության օգնություն խնդրելու դիմումը, իսկ ավելի ուշ՝ Հայկական ազգային օջախի ստեղծման հարցը քննարկելիս: Քեմալական Թուրքիայից հայ ժողովրդին փրկելու և Հայաստանում կայունություն ապահովելու մի բանաձև ընդունեց Ազգերի լիգան միայն 1920 թ. դեկտեմբերի 16-ին<sup>227</sup>, սակայն սա արվեց այն ժամանակ, երբ արդեն Հայաստանի Հանրապետությունն այլևս գոյություն չուներ: Իսկ Հայկական ազգային օջախի ստեղծման հարցը քեմալականների ճնշման և Ազգերի լիգայի կրավորական կեցվածքի ներքո վերածվեց ընդամենը գաղթականական խնդրի և քաղվեց Լոզանի խորհրդաժողովում: Այս ամենի հետ Լոզանի խորհրդաժողովում գերեզմանվեց նաև Հայաստանի համար առաջնային կարևորություն ունեցող ծովային ելքի հարցը:

<sup>225</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, նշվ. աշխ., էջ 691:

<sup>226</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 687:

<sup>227</sup> Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 18:

## **2.3. Բարումի խնդիրը Սան Ռեմոյի խորհրդաժողովում (1920 թ. ապրիլ)**

Բարումի խնդիրի շուրջ լուրջ քնարկումներ և բանավեճեր տեղի ունեցան 1920 թ. ապրիլի 18-26-ը կայացած Սան Ռեմոյի խորհրդաժողովի ընթացքում: Մինչ այս խորհրդաժողովը, Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Ջերզոնի քարտուղար Ռ. Վանսիտարտի հրավերով, կովկասյան երեք հանրապետությունների պատվիրակությունների միջև սահմանային խնդիրների կարգավորման հարցով ապրիլի 13-17-ը Փարիզում տեղի ունեցան մի քանի խորհրդակցություններ: Ապրիլի 12-ին Վանսիտարտը լորդ Ջերզոնի հրահանգով խորհուրդ տվեց երեք հանրապետություններին շտապ համաձայնության գալ<sup>228</sup>: Անգլիացիները, մտահոգվելով օրեցօր ահազնացող բոլշևիկյան վտանգից, ծգտում էին ժամ առաջ լուծել անդրկովկասյան հանրապետությունների վեճերը, միավորել նրանց մեկ դաշնության մեջ և ուղղել Խորհրդային Ռուսաստանի դեմ: Քանի որ այդ դաշնությանը իիմնականում դեմ էր արտահայտվում Հայաստանը, Անգլիան փորձում էր համոզել հայերին՝ շահարկելով նաև Բարումի խնդիրը: Որպես ասվածի ապացույց՝ բերենք վերոնշյալ խորհրդակցություններից մի քանի օր առաջ՝ ապրիլի 8-ին, Լոնդոնում Ա. Ահարոնյանի և Վանսիտարտի միջև տեղի ունեցած գրույցից մի հատված, որտեղ վերջինս մասնավորապես ասում է. «Սա միակ միջոցն է (նկատի ունի Անդրկովկասյան դաշնությունը – Շ. Թ.) պահպանելու այդ երեք պետությունները: Հակառակ դեպքում, վստահեցնում եմ Ձեզ, որ մեր բոլոր աշխատանքները ջուրը կը նկածեն՝ Հայաստան կազմելու համար: Բոլշևիկները շատ մոտ են Բարումին ցամաքով, երբ Բարում առին, դուք՝ երեք ժողովուրդներդ էլ նրանց ոտքի տակ եք»<sup>229</sup>:

Ասվածի մեջ, իհարկե, որոշ ծշմարտություն կար: Բոլշևիկների կողմից Բարումի գրավումը կարող էր վտանգել անդրկովկասյան հանրապետությունների անկախությունները: Բայց Հայաստանի հա-

<sup>228</sup>Տե՛ս ՀԱԱ, §. 200, գ. 1, գ. 576, թ. 78-79, նաև՝ Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 89:

<sup>229</sup>Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 85:

մար այդ պահին կարևորը թուրքահայկական հողերի և ծովային Ելքի հարցերն էին:

Հայաստանի հետ կապված անգլո-ֆրանսիական հակասությունները նկատելի էին ոչ միայն դեպի ծով Ելքի հարցում, այլ նաև Անդրկովկասում Հայաստանի սահմանների և անդրկովկասյան երեք հանրապետությունների հակառական դաշինքի հարցում: Եթե Անգլիան ձգտում էր ձևավորել հանրապետությունների հակառական (հակաբոլշևիկյան) դաշինք, ապա, ըստ Բաքվում Անգլիայի իրազեկիչ գնդապետ Ք. Ստոքսի 1920 թ. մարտի 21-ին Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը ներկայացրած հուշագրի, «Ադրբեյջանը և Վրաստանը պաշտոնապես դաշինք են կնքել և համաձայնել կազմավորել կոնֆեդերացիա: Հայաստանը, շնորհիվ մասնավորապես Ֆրանսիայի խարդավանքների, դեռևս երկմտում է միանալ կոնֆեդերացիային և շարունակում է իր թշնամանքը Ադրբեյջանի հետ»,<sup>230</sup>:

Ինչպես գրում է Ա. Խատիսյանը, ֆրանսիական գինվորական գործիչները՝ գնդապետ Շարդինին և կապիտան Պուլատեպարը, և քաղաքական գործակալները հանոգում էին հայերին սերտ կապեր պահպանել Ռուսաստանի հետ: Այստեղ արտահայտվում էր Ֆրանսիայի ձգտումը՝ Գերմանիայի դեմ իրու դաշնակից տեսնել հզոր Ռուսաստան: Անկախ կովկասի գաղափարը նրանց չէր ոգևորում: Կովկասի անջատման մեջ նրանք տեսնում էին Ռուսաստանի թուլացումը<sup>231</sup>: Իսկ Հայաստանի և Ադրբեյջանի տարածքային վեճերի հարցում, ինչպես հայտնի է, Անգլիան սատարում էր Ադրբեյջանին. նույն Ստոքսը նշում էր, որ Ֆրանսիան պաշտպանում է Հայաստանի պահանջատիրությունը Զանգեզուրի նկատմամբ, քանի որ ձգտում էր տեր դառնալ պենծի հանքերին ու Զուլֆայի երկարգծին<sup>232</sup>:

Իսկ ինչ վերաբերում էր Բաթումին, ապա խիստ հակասական էր, թե որ դեպքում հայերի համար ավելի շահեկան կլիներ՝ ռուսների գրավմանը, թե՝ անգլիական տիրապետության:

<sup>230</sup> Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները..., էջ 136:

<sup>231</sup> Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 187:

<sup>232</sup> Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 136:

Վերադառնալով Վանսիտտարտի կողմից նախաձեռնած հայ-վրաց-թաթարական խորհրդակցություններին, նշենք, որ ապրիլի 13-ին տեղի ունեցավ առաջին ճիստը: Օրակարգային հիմնական թեման սահմանավեճերի լուծում էր<sup>233</sup>: Վրացիներն ու թաթարները դեմ էին սահմանային խնդիրներն ամբողջապես Փարիզի վեհաժողովի շրջանակներում լուծելուն, քանի որ նրանք հույս ունեին, որ եթե արևմտահայկական հողերի հաշվին մեծ Հայաստան ստեղծվի, ապա իրենք կարող են Անդրկովկասում առկա սահմանավեճերը լուծել իրենց օգտին: Բայց Բաթումի հարցը հրատապ էր, և վրացիները ձգտում էին օր առաջ լուծել այդ խնդիրը՝ հօգուտ իրենց: Այդ իսկ պատճառով վրաց պատվիրակության ղեկավար Չխեհձեն առաջ քաշեց այս հարցը, որի լուծման համար շահագրգուված էին նաև անգլիացիները: Նրանք իրաժարվել էին Բաթումը և շրջանը առանձին չեզոք պետություն հայտարարելու նախկին ծրագրից և արդեն հարցի լուծումը տեսնում էին տարածաշրջանը վրացական գերիշխանությանը հանձնելու մեջ:

Վանսիտտարտը, սակայն, առաջ էր քաշում երկու պայման. 1) պետք է ապահովվի Հայաստանի և Աղրբեջանի ելքը Բաթումից Սև ծով, 2) Բաթումը պետք է դառնա Porto-franko՝ ազատ նավահանգիստ<sup>234</sup>: Վրացիներն առաջարկում են, որ Հայաստանն ու Աղրբեջանը համաձայնվեն ընդունել Վրաստանի գերիշխանությունը Բաթումի և շրջանի վրա, իսկ իրենք երաշխավորում են երկու հանրապետություններին տնտեսական ելք Սև ծով՝ Բաթումի վրայով: Թաթարներն անմիջապես համաձայնվում են, քանի որ զուտ աշխարհագրական դիրքի տեսանկյունից նրանք որևէ իրական երաշխիք պահանջելու հնարավորություն չունեին: Միաժամանակ աղրբեջանցիների համար շատ պելի ցանկալի էր Բաթումի միացումը Վրաստանին. Վիրա-թաթարական բլոկի ներդաշնակ համագործակցությունն ակնհայտ էր նաև այս պարագայում: Սակայն աղրբեջանցիների համար ևս Բաթումի նշանակությունը անգնահատելի էր: Յետևաբար վերջինիս կարգավիճակի հարցում Աղրբեջանի աջակցությունը Վրաստա-

<sup>233</sup> Տե՛ս Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 89:

<sup>234</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 91:

նին, ըստ էության, պայմանավորված էր իր համար դեպի ծով ապահով ելք ակնկալելով, քանի որ, ինչպես նշում էր Աղրբեջանի արտգործնախարար Ֆաթալի Խան-Խոյսկին «Աղրբեջան» թերթին տված հարցազրույցում. «...Բարումը այն ճանապարհի վերջին կետն է, որը բացում է մեզ համար մուտք դեպի Եվրոպա, և ավելին, այն նավթամուղի վերջին կետն է: Առանց ազատ ապրանքափոխության, անհնար է բնականոն տնտեսական կյանքը: Փակել այդ ելքը մեզ համար նշանակում է դատապարտվել դանդաղ մահվան...»<sup>235</sup>. Դայկական պատվիրակությունը, չընդիմանալով տարածաշրջանի վրա վրացական գերիշխանությանը, կարծում է, որ դեպի ծով ելքի անհրաժեշտ երաշխիքներն անորոշ են և կարող են պատճառ դառնալ շատ թյուրիմացությունների, ուստի նախ պետք է որոշել երաշխիքների բնույթը: Չխեհձեն պատասխանում է, թե իրենք ազնիվ խոսք են տալիս: Այս պատասխանից ակնհայտ երևում է, որ վրացական կողմը մտադրություն չունի իրական երաշխիքներ տալու: Ազնիվ խոսքը, ինչպես տիպիկ նկատում է Ա. Ահարոնյանը, «պետական քաղաքական խնդիրների կարգադրության ժամանակ առանձին արժեք չունի: Գարանտիան պիտի լինի որոշ, հստակ և հաստատում»<sup>236</sup>: Չխեհձեն ստիպված հայկական պատվիրակությանն առաջարկում է գրավոր ներկայացնել երաշխիքների վերաբերյալ իրենց պատկերացումները: Մեկ օր հետո՝ ապրիլի 14-ին, տեղի ունեցավ հայկական զույգ պատվիրակությունների համատեղ խորհրդակցությունը, որին մասնակցում էին Ա. Ահարոնյանը, Պողոս Նուբար փաշան, Նորատունկյանը, գեներալ Կորգանյանը, Փիլարյանը, Վարանյանը և Սիմոն Շակորյանը: Դայ պատվիրակները, քննարկելով խնդիրը, գալիս են այն եզրակացության, որ պահանջելու են նորոխ գետի ձախ ափը որպես սեփականություն, մանավանդ, որ Վանսիտարտը առանձին հայտնել էր, որ հայերն այն պահանջելու իրավունք ունեն, և Գերազույն խորհուրդը կտա այս<sup>237</sup>: նորոխի ձախափնյա տարածքը

<sup>235</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 542, թ. 14:

<sup>236</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 91:

<sup>237</sup> Տե՛ս նույն տեղում:

անհրաժեշտ էր Հայաստանին՝ Կարս-Բաթում երկաթգիծ կառուցելու համար:

Այստեղ փորձենք վերլուծել անգլիացիների քաղաքականությունը: Մի կողմից նրանք համաձայն են, որ Բաթումի ու շրջանի վրա տարածվի վրացական գերիշխանությունը, մյուս կողմից դեմ չեն տարածքի մի մասի անցումը Հայաստանին, որով հետևաբար միմյանց դեմ էին հանում հայերին և վրացիներին: Ի՞նչ էր սա. անգլիական ավանդական «բաժանիր, որ տիրե՞ս». հազիվ թե: Սա առանց այն էլ խարխուլ տարածաշրջանում կխորացներ անկայունությունը, ինչը անցանկալի էր Անգլիայի համար, քանի որ վերջինս, ինչպես արդեն նշել ենք, ձգտում էր շուտափույթ հաշտեցնել Անդրկովկասի հանրապետություններին և նրանց միավորել Խորհրդային Ռուսաստանի դեմ: Մնում է ենթադրել, որ անգլիացիներն անկեղծորեն ուզում էին մի կողմից Հայաստանի համար ապահովել երաշխավորված ելք դեպի ծով, մյուս կողմից գոհացնել վրացիներին՝ նրանց հանձնելով ռազմավարական բացառիկ նշանակություն ունեցող Բաթումը: Այլ բան, որ վրացիները, ինչպես հետագայում կտեսնենք, խիստ անհանդուրժող գտնվեցին ու մերժեցին հայերի ոչ միայն այս, այլ նաև՝ շատ չափավոր այլ առաջարկներ ևս:

Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե Անգլիան միայն անկենք ցանկություններով էր առաջնորդվում՝ օժանդակելով Բաթումով Հայաստանի, ինչպես նաև Աղրբեջանի դեպի ծով ելքի հարցին: Անգլիան շահագրգուված էր այդ հարցում, քանի որ դա կնպաստեր Բրիտանական թագավորության տնտեսական կապերի զարգացմանը ամբողջ Անդրկովկասում: Երբ կառուցվեր Կարս-Բաթում հայեկան երկաթգիծը, անգլիացիները ծեռք կը բերեին կարճ երկաթուղային ճանապարհ դեպի իրանական շուկա՝ Բաթում-Կարս-Ալեքսանդրապոլ-Զուլֆա գծով, իսկ այնտեղից էլ՝ դեպի իրենց հնդկական գաղութները: Անգլիան միաժամանակ կապահովեր Բաթվի նավթի անվտանգ տեղափոխումը Բաթումի վրայով դեպի Եվրոպա: Այս նույն շահախնդրություններն ուներ նաև Ֆրանսիան: Այդ էր պատճառը, որ երբ հայ խոշոր կապիտալիստների մի խումբ ներկայացրել էր Բաթում-Կարս-Սարդարապատ երկաթգիծի կառուցման նախագիծ,

այդ ձեռնարկմանը մասնակցելու ցանկություն էին հայտնել անգլիական, ֆրանսիական և իտալական կապիտալիստները: Նախագծված ուղին ընդգրկելու էր Օլբու քարածխային շրջանը, Կողբի ու Կաղզվանի հանքերը և 250 վերստով կրծատելու էր Սև ծովից մինչև Թավրիզ ճանապարհը<sup>238</sup>:

Անգլիացիներն ավելի վաղ էին ձգտում իրենց վերահսկողությունը հաստատել Վրաստանի և ողջ Անդրկովկասի երկաթուղային ցանցի վրա: Դեռևս 1919 թ. փետրվարի 6-ին անգլիական երկաթուղային առաքելության պետ գրավար Բրոռուդը պահանջում է Վրաստանի վարչապետ Նոյ Ժորժանիայից վրացական երկաթուղիները դնել անգլիական վերահսկողության ներքո և Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեյջանի ներկայացուցիչներից ընդհանուր երկաթուղային հանձնախումբ ստեղծել՝ նշելով, որ Հայաստանի և Ադրբեյջանի կառավարությունների համաձայնությունն արդեն ունի<sup>239</sup>:

Հայկական պատվիրակությունը, պահանջելով նորոխի ծախ ափը, աչք չէր տնկել ուրիշի հողերի վրա, թեև այդ տարածքը, ըստ հայկական պատմագրության պաշտոնական տեսակետի, պատմական Տայք և Գուգարք նահանգների արևմտյան հատվածն է<sup>240</sup>, և հետո, դա, ինչպես ասում են, վերջին հույսի պահանջն էր, եթե հաշվի առնենք այդ ժամանակաշրջանում մենշևիկյան Վրաստանի, մեղմ ասած, ոչ հայանպաստ տրանզիտային քաղաքականությունը: Իրականում հայկական շրջանակներում հստակ գիտակցում էին Բաթումի դերն ու նշանակությունը Վրաստանի համար և երբեք էլ չէին վիճարկում վերջինիս հավակնությունները Բաթումի նկատմամբ: Իսկ վերջինիս նկատմամբ թուրքական սպառնալիքը հավասարապես սպառնալիք էր նաև Հայաստանի համար: Այս կապակցությամբ «Յառաջը» գրում է. «...իսկապէս Բաթումի նշանակութիւնը Վրաստանի, իբրև անկախ պետութեան համար հսկայական է: Չորս կողմից շրջապատաժ մահմեդական տարրով՝ Վրաստանի կառա-

<sup>238</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 214, թ. 210, նաև՝ «Յառաջ», 1 յուլիս, 1920, թիվ 137:

<sup>239</sup> Տե՛ս Մանսուրեամ Ս., նշվ. աշխ., էջ 146:

<sup>240</sup> Տե՛ս ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված «Աշխարհը և Հայաստանը: Աշխարհագրական ատլաս», Լ. Վալեսյանի խմբագրությամբ, Երևան, 2003, էջ 89:

Վարութիւնը և կուսակցութիւնները օր օրի վրա գգում են, թէ ինչպէս մահմեղական վտանգը՝ կազմակերպւած Անատոլիայում ու Ադրբեջանում, օղակում է նրանց և սպառնում երկրի եթէ ոչ ֆիզիքական, գոնէ պետական ուրույն գոյութեանը... Մահմեղական տարրը, գրաւելով Բաթում քաղաքն ու շրջանը...ազատ Վրաստանը կվերածի վասալ երկրի կախւած տաճիկ փաշաների և Ադրբեջանի բէկերի քնահաճույքից...»<sup>241</sup>: Այս խնդիրն այսօր էլ արդիական ու հրատապ է Վրաստանի համար: Ի դեպ մահմեղական վտանգը շատ առարկայական էր: Թիֆլիսում հրատարակվող «Բորբա» թերթը գրում է. «Բաթումի շրջանի հարաւային սահմանում արդէն պատրաստի կանգնած է բաւականաչափ թիւքքական զորք հեծելագնդով, գնդացիրով և հրետանիով, որոնք միայն կարգադրութեան են սպասում շարժման (թեմալական – Շ. Թ.) դեկավարներից, որպէսզի յարմար րոպէին անցնեն սահմանն ու մտնեն շրջանը...»<sup>242</sup>: Բանը հասել էր նրան, որ թուրք-աջարական հրոսակախմբերը նույնիսկ հարձակվում էին Բաթումի շրջանի անզլիական սահմանապահների վրա՝ նրանց պատճառելով զգալի կորուստներ<sup>243</sup>: Իսկ արդեն նոյենքերի սկզբներին Անգորայի Ազգային ժողովի մի խունք պատգամավորներ պահանջում էին իրական միջոցներ ձեռնարկել՝ Բաթումի շրջանը նվաճելու համար: Այդ նպատակով Տրապիզոնի շրջանում ստեղծվել էր մի զորամիավորում՝ «Բաթումի բատալիոն» անունով<sup>244</sup>:

Դայ պատվիրակները որոշեցին պահանջել նաև հատուկ կառանատույց Բաթումում՝ շրջակա բավականաչափ հողատարածքով, որտեղ հնարավոր կլիմեր կառուցել անհրաժեշտ պահեստներն ու այլ շինությունները: Իսկ «նորոխի գետաբերանից մինչև Բաթում 7-8 վերստ տարածություն հողաբաժնի վրա, որ վրացական է լինելու, մենք պետք է իրավունք ունենանք մեր երկարուղիին գիծը անցկացնելու, որ գալու է Արդահանի և Կարսի շրջանից»<sup>245</sup>, – հիշում է Ա. Ահարոնյանը: Դաջորդ օրը՝ ապրիլի 15-ին, այս որոշումը ներկայաց-

<sup>241</sup> «Յառաջ», 12 մարտ, 1920, թիվ 53:

<sup>242</sup> Նույն տեղում, 16 մարտ, 1920, թիվ 55:

<sup>243</sup> Տես նույն տեղում, 4 ապրիլ, 1920, թիվ 71:

<sup>244</sup> Տես նույն տեղում, 6 նոյեմբեր, 1920, թիվ 243:

<sup>245</sup> Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 92:

Վում է ժողովում: Վրացիները բացեիրաց մերժում են: Ինչպես գրում է Զ. Ավալովը. «...Հայերը հայտարարեցին, որ ճանաչելով Վրաստանի վեհապետական իրավունքը Բաթումի և նրա մարզի վրա՝ վերապահություն են անում այն ինաստով, որ Հայաստանի և Վրաստանի միջև սահմանը պետք է լինի ճորոխ գետը: Մեր կողմից հայտարարվեց ճորոխի ձախ ափը Հայաստանին զիջելու խոսակցությունների անթույլատրելիության մասին»<sup>246</sup>: Բաթումի մասին համաձայնություն չի կայանում: Փարիզյան այս բանակցություններում թերևս միակ ծեռքբերումն այն եղավ, որ Անդրկովկասի հանրապետությունների պատվիրակությունները համաձայնվեցին վիճելի հարցերը միմյանց միջև լուծել միջնորդ դատարանի միջոցով, ինչպես նաև ճշտեցին արբիտրաժի կիրառման մեխանիզմները: Ապրիլի 17-ին Երեք պատվիրակությունները ներկայանում են Վանսիտտարտին և հայտնում կատարվածի մասին: «Նա շատ վշտացավ, նորից պնդեց, թե պետք է համերաշխել և առաջարկեց այս ձախողանքը չնկատել վիժումն և վերսկսել Սան Ռեմոյում... ուր ապրիլի 19-ին սկսվելու են Խաղաղության Համաժողովի նիստերը», - գրում է Ահարոնյանը<sup>247</sup>:

Ըստ Ավալովի՝ ինքը ձգտել է համոզել վրացական պատվիրակությանը ճորոխի ձախ ափի նկատմամբ հայերի վերապահումն ընդունել, որպեսզի համաձայնագիրը ստորագրվի և հնարավոր լինի այն ներկայացնել Գերագույն խորհրդին, քանի որ այդ վերապահումը չի նշանակում վրացիների կողմից Հայաստանի իրավունքների ճանաչումը Բաթումի տարածքի մի մասի վրա: Հարցը գործնական նշանակություն ձեռք կբերի միայն Սև ծովի ափերին հայ-վրացական սահմանը ճշտելու ժամանակ, որն էլ կլուծվի արբիտրաժի միջոցով: Սակայն վրաց պատվիրակության մյուս անդամները գտնում էին, որ հայկական վերապահման ընդունումը կարող է տպավորություն ստեղծել, թե իրենք չեն ընդդիմանում ճորոխի ձախ ափը Հայաստանին զիջելում<sup>248</sup>.

<sup>246</sup> **Ավալօվ Յ.**, սկզ. թագ., ստ. 270.

<sup>247</sup> **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 92:

<sup>248</sup> Ծմ. **Ավալօվ Յ.**, սկզ. թագ., ստ. 270.

1920 թ. ապրիլի 18-26-ը խտալական Սան Ունոն քաղաքում տեղի ունեցած խորհրդաժողովում ուղղագծվեց Անտանտի Երկրների և Թուրքիայի միջև կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը: Բնականաբար, այստեղ քննարկվող հիմնական թեմաներից մեկը հայ-թուրքական սահմանի հարցն էր: Խորհրդաժողովի հենց սկզբից տարակարծություններ էին առաջացել Երգրումի խնդրում: Անգլիայի և Իտալիայի վարչապետեր Լույդ Ջորջը և Նիտտին դեն էին Երգրումը Հայաստանին տալուն՝ պատճառաբանելով, թե հայերը ինքնուրույն չեն կարող Մուսաֆա Քեմալին դուրս մղել այնտեղից, որտեղ վերջինս կուտակել էր 14 000 զինվոր, իսկ իրենք պատրաստ չեն օգնական զորք տրամադրել Հայաստանին<sup>249</sup>:

Ապրիլի 21-ին Վանսիտարտը հայ պատվիրակներին առանձին տեղեկացնում է, որ Թուրքիայի կողմից Հայաստանի սահմանները սեղմելու տրամադրություն կա (խոսքը Երգրումի նասին է) և լավ կլինի զիջումներով համաձայնության գալ վրացիների ու թաթարների հետ<sup>250</sup>: Մասնավորապես խորհուրդ տվեց ճորոխի ծախ ափի սեփականության պայման չդնել, այլ պահանջել վրացական հողով մինչև Բարում Երկաթուղային գիծ անցկացնելու իրավունք, որը պետք է լինի Հայաստանի անձեռնմխելի սեփականությունը, իսկ Բարումը լինելու է ազատ և առանց մաքսի նավահանգիստ: Արա հետևանքը եղավ հայերի վարքագիծ փոփոխությունը պահանջատիրության հարցում, որից ելնելով էլ՝ վրաց պատվիրակության դեկավար Զիստիձեն ավելի հեռուն գնաց՝ առաջարկելով ընդհանրապես չկառուցել նոր Երկաթուղի և բավարարվել առկա Կարս-Թիֆլիս-Բարում Երկաթուղով<sup>251</sup>: Սա, իհարկե չէր կարող ընդունվել ոչ միայն հայերի, այլ նաև Գերազույն խորհրդի կողմից, որովհետև նախ Հայաստանի դեպի ծով ելքը Գերազույն խորհրդի պահանջն էր, և հետո վրաց պատվիրակությունը դեռևս Լոնդոնում սկզբունքո-

<sup>249</sup> Տե՛ս Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 97-98:

<sup>250</sup> Տե՛ս Թորոսյան Շ., Ղեպի ծով Ելքի հարցը և հայ-վրացական տարակարծությունները Սան Ունոյի խորհրդաժողովում, «21-րդ դար», Երևան, 2013, թիվ 4, էջ 143:

<sup>251</sup> Ծմ. Ավալով Յ., սկզ. բաժ., ստուգ. 271.

րեն համաձայնվել էր Կարս-Բաբում Երկաթգծի կառուցման նախագծին:

Այսքանից հետո էլ, սակայն, վրացական պատվիրակությունը կրկին անհանդուրժողականություն ցուցաբերեց: Ստիպված չընդդիմանալով հայկական Երկաթգծի կառուցմանը՝ վրացիները հայտարարեցին, որ իրենք պետք է որոշ վերահսկողության իրավունք ունենան Երկաթուղու կառուցման և շահագործման գործում: Սա նշանակում էր Հայաստանի միջոցներով կառուցված Երկաթուղին դարձնել վրացական գիծ՝ առանց իրական Երաշխիքների: Ինչ խոսք, վրաց պատվիրակության այս մոտեցումը թելաղովում էր Թիֆլիսից: Այս դեպքերից մեկ ամիս էլ չանցած՝ մայիսի 20-ին Հայաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ Ա. Խատիսյանի և Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիայի, զինվորական նախարար Լորդկիպանիձեի ու հաղորդակցության նախարարի տեղակալ Մաճավարիանիի միջև Թիֆլիսում տեղի ունեցած գրույցի ընթացքում վրաց կառավարության ներկայացուցիչները կտրուկ մերժում են Երկաթուղու վերահսկողությունը հայերի կողմից: Լորդկիպանիձեն հայտարարում է, որ դա անհնարին է, քանի որ աջարները ոչ մի դեպքում թույլ չեն տա հայկական զորքի ներկայությունը իրենց տարածքում, հետևաբար, Երկաթուղու վարչությունը պետք է լինի վրացական, և այն պետք է պահպանվի վրացիների կողմից<sup>252</sup>:

Չունենալով մերժման ավելի լուրջ և տրամաբանական պատճառներ՝ վրացական կողմը առաջ քաշեց աջարների փաստարկը, որը, իհարկե, շատ խոցելի էր: Վրաց կառավարությունը, այնուամենայնիվ, փորձեց գնալ փոխզիջման՝ Խատիսյանին առաջարկելով Բաբումի և մարզի վրա վրացական գերիշխանությունը ճանաչելու դիմաց դեպի Բաբում Երկաթուղի կառուցելու համար Հայաստանին հատկացնել հողամաս, բայց ոչ թե սեփականության իրավունքով, այլ 99 տարվա կապալով<sup>253</sup>: Երկաթուղու կառուցման համար վարձակալական հիմունքներով հողամաս տրամադրելու համաձայնությունն արդեն իսկ հնարավորություն էր տալիս մոտենալու հարցի

<sup>252</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 200, գ. 1, զ. 516, թ. 71-72:

<sup>253</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 569, թ. 148:

լուժմանը: Սակայն, ցավոք, Հայաստանի կառավարությունը, քննարկելով այս առաջարկը, մերժեց այն, իսկ վրացիներն էլ հետագայում հրաժարվեցին իրենց այս առաջարկից:

Ըստ Էռլյան, վրացական պատվիրակությունը համաձայնել էր միայն դեպի Բաթում հայկական երկաթուղու կառուցման առաջարկին, մինչև որ այդ հարցն էլ վերածվեց արսուրդի, երբ Չխեհձեն հայտարարեց, թե այդ խնդրում պետք է համաձայնության գան իրենց կառավարությունները, որովհետև պատվիրակությունը իրավասու չէ այդպիսի զիջում անել<sup>254</sup>: Փաստորեն, նույնիսկ երկաթուղու անցկացումը նրանք համարում էին մեծ զիջում. դա նրանց դիվանագիտական մոտեցումն էր դեմ լինել ամեն ինչին, որ հայերը հնարավորինս նվազագույն ձեռքբերում ունենան: Իսկ ինչ վերաբերում է պատվիրակության իրավասություն չունենալուն, ապա այստեղ էլ ամեն ինչ հասկանալի է. ինչը որ պատվիրակությունը կարող էր մերժել, մերժում էր, իսկ այն հարցերը որոնց դեմ ընդհանրապես փաստարկներ չէր կարողանում բերել, օցում էր կառավարության վրա: Իսկ Վրաստանի կառավարությունն էլ խուսափում էր Հայաստանի կառավարության հետ բացեիրաց քննարկել Բաթումի հարցը, թեպետ Փարիզի վեհաժողովի շրջանակներում փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում բուռն քննարկվել էր այս խնդիրը, Հայաստանի կառավարությունն էլ, ինչպես արդեն նշել ենք, դեռևս մարտի 16-ին Բաթումի վերաբերյալ իր որոշման մասին տեղեկացրել էր Վրաստանի կառավարությանը: Վերջինիս ներկայացուցիչները միայն մայիսին են անդրադառնում այս խնդիրին, երբ ՀՀ-ի լիազոր ներկայացուցիչ Ա. Խատիսյանը Հայաստանի կառավարության հանձնարարությամբ մայիսի 19-25-ը այցելեց Թիֆլիս՝ դաշնակից տերությունների գերագույն կոմիսարներին և Վրաստանի կառավարությանը բացատրելու, որ բոլշևիկյան ապստամբությունը Հայաստանում վերջնականապես ճնշված է, և որ կառավարության փոփոխությունը չի ազդելու արտաքին քաղաքական կողմնորոշման վրա<sup>255</sup>:

<sup>254</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>255</sup> Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 219:

Ըստ արխիվային փաստաթղթերի՝ առաջին հանդիպումը Խատիսյանն ունենում է մայիսի 19-ին Վրաց արտգործնախարար Ե. Գեգեչկորու հետ, իսկ երկրորդ հանդիպումը՝ մայիսի 20-ին վարչապետ Նոյ Ժորդանիայի հետ, թեպետ ինքը նշում է, որ Թիֆլիս է հասել մայիսի 20-ին<sup>256</sup>: Գեգեչկորու հետ գրույցի ժամանակ վերջինս խոսք է բացում Բաթումի մասին՝ ասելով, թե հայկական կառավարությունը, պարզվում է, ինչ որ հավակնություններ ունի նավահանգստի և մարզի մի մասի նկատման՝ դրանով ոտնահարելով Վրաստանի ինքնիշխան իրավունքն այդ մարզի վրա: Խատիսյանը հակադարձում է, թե Հայաստանի կառավարության Բաթումով Սև ծով ելքի ցանկությունը պետք է որ նորություն չլինի Վրաստանի համար, հատկապես, որ այդ մասին վաղուց հայտարարվել է Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեին (ի դեպ վերջինս ներկա էր այդ գրույցին), նա ամբողջապես համաձայն է եղել հայկական տեսակետին: Այսուհետև Խատիսյանը բացատրում է, որ Հայաստանը ոչ մի հավակնություն չունի Բաթումի մարզի վրա, որ խոսքը վերաբերում է ընդամենը Կարս-Բաթում երկարգին տիրապետելուն: Գեգեչկորին հայտարարում է, որ ոչ մի հարց այնքան ցավոտ չէ վրաց ժողովրդի համար, որքան Բաթումի հարցը, և իրենք ոչ մի պարագայում որևէ զիջման չեն կարող գնալ<sup>257</sup>: Եվս մեկ անգամ վերահստատվում է այն տեսակետը, որ Եվրոպայում վրաց պատվիրակության անգիծում կեցվածքը պայմանավորված էր կառավարության նույնափակ դիրքորոշմամբ:

Այստեղ զարմանալին այն է, որ Խատիսյանն այս բավականին կարևոր գրույցներին իր գրքում չի անդրադարձել: Այս հանդիպումներից մոտ մեկ ամսի անց, եթե Խատիսյանը դարձյալ Թիֆլիսում էր, այս անգամ արդեն Անկախության փոխառության գլխավոր լիազորի պաշտոնում, կրկին հանդիպում է Ժորդանիայի և Գեգեչկորու հետ, որոնք խնդրում են նրան Փարիզ այցելելու միջոցին կարգավորել Բաթումի խնդիրը, որը առանձին անհամաձայնության առարկա էր դարձել հայ և վրաց պատվիրակությունների միջև: Այս կապակցութ-

<sup>256</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>257</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 516, թ. 69-70:

յանք Խատիսյանը գրում է. «Սան-Ռեմոյի մեջ հայ պատուիրակները՝ Ա. Ահարոնեան եւ Պօղոս Նուպար փաշա, պահանջած էին Յայաստամի համար առանձին ելք դեպի ծով, Բաթումի վրայով, յատուկ հողանասով մը, որ պիտի պատկանէր Յայաստամին, իբրեւ սեփականութիւն, իսկ վրացիք՝ Չխէիձէի եւ անոր ընկերներու միջոցով համաձայնած էին զիջիլ Յայաստամին նաւահանգիստէն օգտուելու իրաւունքը միայն: Վրաց կառավարութիւնը կանգնած էր այն տեսակէտի վրայ, որ անկարելի է իրաժարիլ նոյնիսկ աննշան հողամասէ մը, եւ անզիջող կը հանարէր Յայկական պատուիրակության նախագահ Ահարոնեանը: Ուստի ժորտանիան եւ Գեգեչկորին խնդրեցին համոզել զայն աւելի զիջող դիրք բռնելու այս խնդրին մէջ»<sup>258</sup>: Տպավրություն է ստեղծվում, թե Խատիսյանը ոչ թե Յայաստամի կառավարության ներկայացուցիչն էր, նախկին վարչապետը, որի օրոք ձևակերպվել էին Յայաստամի կառավարության պահանջները Բաթումի նկատմամբ, այլ՝ մի երրորդ երկրի ներկայացուցիչ, որին խնդրում են հաշտարար միջնորդական առաքելություն իրականացնել:

Բաթումի հարցով Եվրոպայում կայացած քննարկումների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկություններ է հաղորդում Յօռնում Վրաստամի դիվանագիտական ներկայացուցիչ Կ. Սաբախտարաշվիլին՝ հանգամանալից հարցազրույց տալով կառավարամետ «Բորբա» ռուսալեզու թերթին: Սակայն, ցավոք, վերջինս ամբողջապես լույս չի սփռում իրենց պատվիրակության ապակառուցողական վարքագիր վրա՝ նոլորության մեջ գտելով վրաց հանրությանը: Մանրամասն ներկայացնելով հայերի պահանջները՝ նա ասում է, որ վրաց պատվիրակությունը մերժել է այդ պահանջները՝ համարելով, որ դրանք վնասում են ոչ միայն Մոլսուլմանական Վրաստամի, այլ նաև ողջ Վրաստամի Յանրապետության կենսական շահերը՝ չմոռանալով նշել, որ ադրբեջանական պատվիրակությունը Բաթումի հարցում պաշտպանել է Վրաստամի դիրքորոշումը<sup>259</sup>: «Ողբերգությունն այն է, – գրում է Ա. Զամայանը, որ ինչպէս Անդրկովկասում, նոյնպէս եւ Ելրոպայում, հայ-վրացական յարաբերութիւնները թու-

<sup>258</sup> Խատիսեան Ա., ճշվ. աշխ., էջ 224:

<sup>259</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 576, թ. 79:

նաւորուած էին անվստահութեան եւ կասկածամտութեան բոյնով: Եթէ այս անվստահութիւնը չլինէր, եթէ մասնաւորապէս հայ պատուիրակները անցեալի դառը փորձերի հիման վրայ կասկածներ չունենային, թէ Վրաստանը հետամտում է Հայաստանի արտաքին հաղորդակցութեան ճանապարհները իր հակակշռի տակ պահել, որպէսզի յետագային կարողանայ գերիշխանութիւն բանեցնել նրա գլխին, մի կասկած, որ իր արդարացումը գտնում է այս գործում վրաց պատուիրակութեան նախագահ Զիւհծեի բռնած ընթացքի մէջ, կրկնում ենք, եթէ այս ամէնը չլիներ, Բարումի հետ կապուած հարցերի երեք քառորդը բնաւ իրապարակ չէին գայ, իսկ մնացած մեկ քառորդն էլ երկու ժամում կը լուծուէր»<sup>260</sup>: Յիրավի, ծշմարիտ մտորումներ են:

Սան Ունոյում ապրիլի 22-23-ը Վանսիտարտի միջնորդությամբ տեղի ունեցած հայ-վրացական բանակցությունները ձախողվեցին: Այդ մասին մանրամասն խոսել ենք նախորդ գլխում: Վրացիները մերժեցին Վանսիտարտի առաջարկը, ըստ որի՝ հայերը պետք է ճանաչեին Բարումի մարզի նկատմամբ Վրաստանի իրավունքները, իսկ վրացիները՝ Բարումի ազատ նավահանգստի կարգավիճակը և նորոխի հովտով սեփականության իրավունքով հայերի կողմից երկարգիծ կառուցելու իրավունքը: Վանսիտարտը զայրացած կշտամբեց վրաց պատվիրակությանը:

Ինիշխայլոց, Բարումի համար ազատ նավահանգստի կարգավիճակը նորություն չէր: Երբ 1878 թ. Բեռլինի կոնգրեսի պայմանագրով Բարումն անցավ Ռուսաստանին, ռուսներն այն հայտարարեցին porto-franko, որը մեծ դեր խաղաց քաղաքի վերականգնման և զարգացման գործում: Այդ կարգավիճակում Բարումը մնաց մինչև 1886 թ.<sup>261</sup>:

Իհարկե, բրիտանական դիվանագիտության հայանպատ դիրքորոշումն այս հարցում կարող էր բավականին հուսադրող լինել: Բայց դժվար է ասել, անգլիացիներն իսկապե՞ս ցանկանում էին Վրաստանին որոշակի գիշումներ պարտադրելով ծովային ելք տրամադրել հայերին, թէ՝ Վանսիտարտի զայրութը պարզապես դառ-

<sup>260</sup> Զամայլան Ա., նշվ. աշխ., էջ 135:

<sup>261</sup>Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/Բաթում>

նացած մարդու պոռթկում էր, կամ, թերևս, վրաց մենշևիկներին սրափեցնելու անհաջող փորձ: Մեր կասկածամտությունը բխում է անգլիացիների հետագա վարքագծից: Փաստը մնում է փաստ, որ նրանք այդպես էլ, մինչև Բաթումից հեռանալը և դրանից հետո էլ, չուզեցին կամ չկարողացան համոզել Վրաստանին՝ Բաթումից ծովային ելք տրամադրել Հայաստանին: Անտանտի մյուս տերությունները ևս, այդ թվում՝ նաև Ֆրանսիան, համաձայն էին Բաթումով Հայաստանի ծովային ելքին: Ինչպես վերևում նշել ենք, Ֆրանսիան դեմ էր Տրապիզոնը Հայաստանին հանձնելուն և Բաթումով ելքը նպատակահարմար էր համարում:

Սան Ռեմոյի խորհրդաժողովում Բաթումի հարցը պաշտոնապես քննարկվել է հենց առաջին օրը: Քննարկման ընթացքում Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերթըլոն հարցնում է Վանսիտտարտին, թե Վրաստանը պատրաստ է լիակատար երաշխիքներ տալ նավահանգստի ազատ ու հավասար օգտագործման և նավթամուղի անվտանգության համար: Վանսիտտարտը պատասխանում է, որ հույս կա այդ արդյունքին հասնել: Ելենլով դրանից՝ խորհրդաժողովը որոշում է, որ ա) մեծապես ցանկալի է համաձայնություն կայացնել Հայաստանի, Վրաստանի և Աղրբեջանի միջև Բաթումի նավահանգստի կապակցությանը, բ) այդ համաձայնագիրը պետք է ստորագրվի Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի հետ միաժամանակ կամ, եթե հնարավոր է, ավելի վաղ<sup>262</sup>:

Վանսիտտարտի հույսը, ըստ երևույթին, անդրկովկասյան պատվիրակությունների հետ իր ակտիվ աշխատանքն էր, հորդորելու և, հավանաբար, վերջիններից ակնկալվող խոհեմությունը: Սակայն, ավաղ, այդ խոհեմությունը չդրսկորվեց և Վանսիտտարտի հույսերը, ինչպես տեսանք, ի դերև ելան:

Վրաց կառավարությունը, ձգտելով մեղմել հայերի պահանջները Բաթումի նկատմամբ, դիմում էր նաև խորամանկության՝ պնդելով, թե իր նպատակը Բաթումի մարզում թուրքական իմպերիալիզմի դեմ պայքարն է: Իհարկե, Հայաստանի համար հակաթուրքական պայքարը առանցքային նշանակություն ուներ, բայց դրանով ծովա-

<sup>262</sup>Տե՛ս Զ. Կիրակոսյանի խմբագրությանը, նշվ. աշխ., էջ 621-622:

յին ելքի խնդիրը չէր կարող մղվել երկրորդ պլան: 1920 թ. մայիսի 15-ին «Բորբա» թերթը գրում է. «Բաթումի մարզում Վրաստանի վերջնական նպատակը հակաթուրքական ամուր դիրքերի ստեղծումն է ընդեմ Անդրկովկասում թուրքական ինպերիալիզմի: Յայ դիվանագետները չեն կարող դա չհասկանալ: Իսկ եթե, բոլոր դեպքերում, նրանք խոչընդոտեն Բաթումի և նրա մարզի հանձնմանը Վրաստանին՝ վերջինիս համար բացարձակ անընդունելի պահանջներ առաջադրելով, ապա նրանք հավասարապես կվճասեն թե՝ Վրաստանի և թե՝ Յայաստանի շահերը: ...Սենք ուզում ենք հավատալ, որ Յ. Օհանջանյանի կառավարությունը Բաթումի հարցում կրօնի Վրաստանի համար ավելի բարեկամական դիրք, քան Խատիսյանի կառավարությունը և Փարիզի հայկական պատվիրակությունը...»<sup>263</sup>:

Դժվար է արդարացնել թե՝ Յայաստանի, թե՝ Վրաստանի կառավարությունների և թե՝ նրանց պատվիրակությունների փոխադարձ անվստահությունն ու անհանդուրժողականությունը: Նրանք պարտավոր էին փոխզիջումներով հասնել վիճելի հարցերի լուծմանը և ուստի տված պայքարել իրենց պետությունների ամրապնդման համար: Մինչդեռ այդ անվստահությունը և թշնամանքի հասնող հակասությունները դարձան անկախության կորստի գլխավոր պատճառներից մեկը:

Անտանտի երկրները, ձգտելով Բաթումին ազատ նավահանգստի կարգավիճակ շնորհել, ըստ երևոյթին, հեռուն գնացող նպատակներ էին հետապնդում: ԶԷ<sup>o</sup> որ հյուսիսից սպառնացող բոլշևիկյան վտանգի պայմաններում միջազգայնորեն ճանաչված ազատ նավահանգստի կարգավիճակը կարող էր զգաստացնել ռուսներին: Ասվածն ապացուցվում է 1920 թ. ապրիլի 28-ին Անգլիայի արտաքին գործերի նախարարությունից Թիֆլիս՝ Անդրկովկասում բրիտանական կոմիսար գեներալ Ուորդուպին հյած հեռագրում, որով վերջինս տեղեկացվում էր, որ Անգլիան Սան Ռեմոյում ձգտել է պարտավորեցնել Անդրկովկասի երեք հանրապետություններին համաձայնության գալու իրենց սահմանների և Բաթումի ա-

<sup>263</sup> ՀԱԱ, §. 275, գ. 5, գ. 217, թ. 95: Նաև՝ նույն տեղում, §. 200, գ. 1, գ. 576, թ. 79:

պագա կարգավիճակի վերաբերյալ: Այդ քաղաքականությունը միտ-  
ված էր նրան, որ Բաթումից դաշնակիցների գործերի հեռանալուց  
հետո քաղաքն ու նավահանգիստը չանցնեին խորհրդային Ռուսա-  
տանին: Այնուհետև ասվում է, որ Բաթումը վեր էր ածվելու ազատ  
նավահանգստի, որից հավասար իրավունքներով օգտվելու էին  
Անդրկովկասի բոլոր հանրապետությունները, իսկ Հայաստանը նա-  
վահանգստի հետ պետք է կապվեր երկաթուղով: Սակայն Վրացինե-  
րը «իրենց կարճատեսության հետևանքով» իրաժարվել են այդ  
պայմաններից: «Ամենայն հավանականությամբ Վրացիները նպա-  
տակ ունեն խեղդել իրենց հարևաններին...»,<sup>264</sup> - ասվում է հեռագ-  
րում:

Մեզ մնում է ընդամենը Եգրակացնել, որ բրիտանական դիվա-  
նագիտությունը այս հարցում ձախողվեց: Փաստը մնում է փաստ, որ  
այդ ձախողման գլխավոր դերակատարը մենշսիկյան Վրաստանն  
էր: Այդ հարցում նրան օժանդակություն ցուցաբերեց Աղրբեջանը:  
Ինչպես Անդրկովկասում, այնպես էլ պատվիրակությունների մակար-  
դակով ակնհայտ տեսանելի էր Վրաց-քաթարական գործակցությու-  
նը: Այդ գործակցության և հակահայ գործունեության բացահայտ ա-  
պացույց է նաև հետևյալ դրվագը: Վրացիները և թաթարները, Սան  
Ռեմոյում վիժեցնելով Անդրկովկասյան հանրապետությունների հաշ-  
տեցման գործընթացը, Գերագույն խորհրդին մի համատեղ գեկույց  
են ներկայացրել որտեղ սուս հիմնավորումներով այդ ձախողման  
մեջ մեղադրել են հայերին<sup>265</sup>, և սա այն դեպքում, երբ խորհրդում  
բոլորը տեղյակ էին ծշնարտությանը: Ապրիլի 24-ին մեր պատվիրա-  
կությունը պատասխանում է այդ ստահոդ գրությանը՝ միաժամանակ  
վեհաժողովին վերստին ներկայացնելով Փարիզում առաջ քաշած  
մեր հիմնական պահանջմերը:

Այսպես ավարտվեցին հայ-վրացական բանակցությունները  
Փարիզի վեհաժողովի շրջանակներում:

Փարիզի վեհաժողովում Հայաստանի և Վրաստանի պատվիրա-  
կությունների խնդիրները տարբեր էին: Եթե հայերը ձգտում էին

<sup>264</sup> Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 162-163:

<sup>265</sup> Տե՛ս Սիարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 95:

հասնել ծովային ելքով մեծ Հայաստանի ստեղծմանը, ինչպես նաև հարևանների (Վրաստանի և Ադրբեյջանի) հետ սահմանային խնդիրների լուծմանը, ապա վրացիների համար կարևոր Լազիստանի և հատկապես Բաքումի ու Նրա շրջանի կարգավիճակի հարցն էր, իսկ հարևանների հետ սահմանավեճերը ադրբեյջանցիների նման գերադասում էին լուծել տեղում՝ կառավարությունների մակարդակով։ Ընդհանուր առմամբ Վրաստանի խնդիրները անհամենատ ավելի քիչ էին։ Ինչպես գրում է Յ. Քաջազնունին. «...Վրացիները ամփոփած էին ամբողջովին Վրաստանի մեջ, չունեին դրսում վտանգաւած հատւածներ, ինչպես ունեին հայերը Ազրբեյջանում ու ազրբեյջանցիները՝ Հայաստանում։ Վրացիները ապահով նստած էին իրանց երկրում եւ եթէ ունեին սահմանային վէճեր հարեւանների հետ, սրանց աղբիւրը պարզապես տիրակալական հակումներն էին, որ կարող էին զսպել, չափարարել, նոյն իսկ իսպառ վերացել՝ առանց լրջօրեն վտանգելու Վրաստանի ներկան կամ ապագան»<sup>266</sup>։ Քաջազնունին, իրոք, շատ դիպուկ է բնութագրում Վրաստանի վիճակը և սահմանավեճերի հարցում՝ Նրա վարքագիծը։ Մինչդեռ Հայաստանի հավակնությունները, հատկապես ծովային ելքի հարցում, միմիայն պայմանավորված էին կենսական խնդիրներով։

Սան Ռեմոյի խորհրդաժողովից հետո, որտեղ, ինչպես տեսանք, Վրացիների «ջանքերով» և ազերիների աջակցությամբ ձախողվեց Անդրկովկասի հանրապետությունների միջև համաձայնության կայացումը, Վրացական պատվիրակությունն այլևս բարդ և կարևոր առաջարկանք չուներ։ Այդ ձախողման մեջ իր թաժին մեղքն ուներ նաև հայկական կողմնը։ Հավատալով Անտանտի երկրների սին խոստումներին և ակնկալելով նրանց աջակցությունը՝ դաշնակցական դեկավարները պահանջներ ներկայացրին, թեպետ արդարացի, սակայն կանգնեցին փաստի առաջ, երբ խարբեցին Անտանտի կողմից՝ ընդամենը «վաստակելով» Վրաց մենշևիկների թշնամանքը։

Սան Ռեմոյի խորհրդաժողովից հետո Բաքումի խնդիրի հետ կապված կրքերը նոր թափով բորբոքվեցին հայ և Վրաց հանրութ-

<sup>266</sup> Քաջազնունի Յ., Յ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 12։

յան մեջ: Կառավարությունների մակարդակով, բայց հատկապես հասարակական-քաղաքական շրջանակներում բանավեճերի պակաս չէր գգացվում: Պայքարը գլխավորապես ընթանում էր մամուլի էջերում, որոնք հեղեղված էին փոխադարձ մեղադրանքներով ու կշտամբանքներով:

Թերթերի մայիս-հունիս ամիսների քննարկվող գլխավոր թեմաներից մեկը Բաթումի հարցն էր: Յայերի հիմնական փաստարկն այն էր, որ Սան Ուեմոյում իրենք գնացել էին պատկառելի զիջումների, և ի տարբերություն լրնդոնյան պահանջների՝ այստեղ պահանջում էին ընդամենը մի փոքրիկ հողակտոր նորոխի հովտում սեփական երկարգիծ կառուցելու համար: Խոշոր հաշվով սա իսկապես մեծ պահանջ չէր, և Վրաց պատվիրակությունում էլ կային մարդիկ, ինչ-պես օրինակ Զուրաբ Ավալովը, որոնք գտնում էին, որ հայերի այդ պահանջը կարելի է կատարել, հատկապես, որ հարցի այդպիսի լուծմանը աջակցում էին Անտանտի երկրները: Բայց Վրաստանի պաշտոնական դիրքորոշումը մերժողական էր, որը հիմնավորվում էր մի շարք փաստարկներով: Օրինակ՝ իշխող սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան կուսակցության օրգան «Էրթորա» թերթը, մերժելով հայերի պահանջները և մեղադրելով հայկական պատվիրակությանը Բաթումի խնդրի լուծմանը խոչընդոտելու հարցում, գրում է. «Յայաստանի Յանրապետության ղեկավարները չպետք է կասկածեն, որ Բաթումը Վրաստանին անցնելով, Յայաստանն ավելի թեթև և ազատ կշնչի, քան այժմ»<sup>267</sup>: Ապա շարունակում է, որ Յայաստանը շահագրգրված է նրանով, որ Վրաստանը հաղթականորեն ավարտի իր պատմական պայքարը թուրք-ադրբեջանական պանիսլամիստների հետ, որի համար Վրաստանին անհրաժեշտ է թիկունքը՝ Բաթումը, հետևաբար Յայաստանը չպետք է արգելը հանդիսանա այն Վրաստանին միացնելու հարցում: Իսկ ինչ վերաբերում է Յայաստանի շահերի ապահովմանը, ապա դա պետք է լուծվի երկողմանի պայմանագրի միջոցով՝ առանց օտարերկրյա ուժերի միջամտության: Նմանատիպ բովանդակությանը հոդվածներն ու վերլուծութ-

<sup>267</sup> ՀԱԱ, §. 275, գ. 5, թ. 217, թ. 122, II երես:

յունները շատ էին վրացական և իշխանամետ, և ընդդիմադիր մամուլում:

Ինչպես նկատեցինք, վրացական կողմն առաջ էր քաշում երկու մոտեցում. առաջին, որ խոչընդոտելով Բաթումի միացմանը Վրաստանին՝ հայերը թուլացնում են պանխալամիստների դեմ պայքարի հնարավորությունը, և Երկրորդ, որ Յայաստանը և Վրաստանը պետք է հարցը լուծեն միասին՝ առանց օտար ուժերի միջամտության: Երկու դեպքում էլ, իհարկե, ռացիոնալ հատիկ կա, սակայն իհմնավորումների արգումենտացիան բավականին թույլ է: Առաջին դեպքում մեղադրանքը գորեք անհիմն էր, քանի որ հայերը ոչ թե դեմ էին Բաթումը Վրաստանին միացնելուն, այլ ընդամենը պահանջում էին որոշ տարածք երկարգի համար, հետևաբար պանխալամիզմի դեմ պայքարն էլ դառնում էր պարզ շահարկում: Երկրորդ դեպքում ճշմարտության չափաբաժնն ավելի մեծ է: Ինչ խոսք, շատ ավելի ճիշտ կլիներ, որ Յայաստանն ու Վրաստանը վիճելի հարցերը կարողանային լուծել փոխադարձ համաձայնությամբ, հատկապես, ինչպես իրավացիորեն նշում էր վրաց ազգային-ժողովրդավարական կուսակցության օրգան «Գրուզիա» թերթը իր մայիս 18-ի համարում. «Մինչև այժմ Անտանտի Երկրները չեն կարողացել պարզել իրենց հարաբերությունները Թուրքիայի հետ և չեն օգնել արյունաքամ եղած հայ ժողովրդին»<sup>268</sup>: Թերթը կասկած է հայտնում, թե մեծ տերությունները կկարողանան լուծել նաև Բաթումի խնդիրը՝ նշելով, որ վստահաբար հայկական դիվանագիտությունն այս անգամ էլ իր ակնկալիքներում կմնա խարված, և արդյունքում կփչանան հայ-վրացական հարաբերությունները: Անկասկած սա ճշմարտություն է, սակայն չպետք է մոռանանք, որ մեզ նման շատ հաճախ նաև վրացիներն են տուրք տվել մեծ տերությունների խարդավանքներին՝ հարվածի տակ դնելով երկու կողմի համար էլ խիստ անհրաժեշտ բարեկամական հարաբերությունները:

Այնուամենայնիվ, վրացական իշխանությունները և հանրությունը չափազանցված գնահատականներ էին ինչեցնում հայկական պահանջի նկատմամբ: «Էրթորբա» թերթը մայիսի 20-ի համարում

<sup>268</sup> Նույն տեղում, թ. 122:

գրում է. «...Փոքրիկ հողակտորի պահանջն «անմեղ» է միայն բառերով, իսկ իրականում այն ինպերիալիստական պահանջ է... Մի փոքր հողակտոր զբաղեցրեց ռուսական կառավարությունը Պորտ-Արտուրի մոտ, բայց այդ հողակտորի վրա նա տիրապետեց Երկարգի, որի շնորհիվ ստրկացրեց տեղի բնակչությանը: Այդպիսի «հողակտորի» էր ձգտում տիրել Գերմանիան Բաղդադի Երկարգի անցկացման համար, որը և դարձավ առաջին աշխարհամարտի գլխավոր առիթը... Յարցը հետևյալն է. Աջարիան պետք է դառնա Յայաստանի գաղո՞ւթը»<sup>269</sup>: Ապա թերթը նեղսրտում է «Աշխատավոր» թերթում բերված այն իհմնավորումից, թե հայերը ծովային ելք են պահանջում Բաթումի վրայով, քանի որ մեծ տերությունները այլ տեղից չապահովեցին այդ ելքը: Թերթը նշում է, որ իրենք շատ կուգենային, որ Յայաստանը ծովային ելք ունենար, բայց իրենք մեղավոր չեն դրանում: Վրացիները մոռանում էին, որ դեմ էին արտահայտվել նաև Լազիկայով ծով դուրս գալու մեր պահանջին: Շարունակելով մզացնել գույները՝ սոցիալ-դեմոկրատների «Բորբա» թերթը պարետիկ տոնով հարց է հնչեցնում. «...Կարո՞ղ է վրաց ժողովուրդը համակերպվել այն բանի հետ, որ հայկական իշխանությունը ոչ միայն հնարավորություն կունենա, այլև ստիպված կլինի խառնըվել Բաթումի նավահանգստի և Բաթումի մարզի տնտեսական կյանքին, դրանով հանդերձ՝ ողջ Վրաստանի տնտեսական կյանքին...»<sup>270</sup>: Ինչ խոսք, այս սին «մտահոգությունները» ևս հայերի արդար պահանջները մերժելու նպատակ էին հետապնդում:

#### **2.4. 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական դաշնագիրը և Բաթումի հանձնումը Վրաստանին**

Սան Ռեմոյից հետո Բաթումի շուրջ ծավալվող իրադարձությունների հերթական հանգրվանը 1920 թ. մայիսի 7-ին կնքված ռուս-վրացական 16 հոդվածից բաղկացած դաշնագիրն էր, որը ստորագ-

<sup>269</sup> նույն տեղում, թ. 107:

<sup>270</sup> Նույն տեղում, թ. 119, II երես:

րեցին Խորհրդային Ռուսաստանի արտգործքողկոմի տեղակալ Լ. Կարախանը և Վրաստանի սահմանադիր ժողովի անդամ Գ. Ուրուտաձեն<sup>271</sup>: Այս դաշնագրի կնքմանը նախորդել էր Ադրբեջանի խորհրդայնացումը (ապրիլի 28-ին): Ադրբեջանի խորհրդայնացմանը և ռուս-վրացական դաշնագրի կնքմամբ բոլորովին նոր իրողություններ առաջացան Անդրկովկասում: Նախ ի չիք էր դաշնում 1919 թ. հյուսիսից սպառնացող վտանգի դեմ համագործակցելու նպատակով կնքված վրաց-ադրբեջանական դաշնագիրը, և երկրորդ՝ Վրաստանը լուրջ փոփոխություններ է կատարում արտաքին քաղաքական կողմնորոշման մեջ՝ որոշակիորեն հակվելով դեպի Խորհրդային Ռուսաստանը: Որո՞նք էին դրա պատճառները: Նախ, որ Շենիկինը պարտվել էր, և բոլշևիկները արդեն մտել էին Անդրկովկաս, գրավել Ադրբեջանը և դարձել էին Վրաստանի անմիջական հարևանը: Եվ երկրորդ, որն ի դեպ ամենակարևորն է, տարածքային հարցերում Խորհրդային Ռուսաստան ավելի «առատածեռն» էր, քան Աստանտի երկրները: Ինչպես տեսանք, Սան Ռեմոյում Անտանտի երկրներն առաջարկում էին Լազիկան միացնել Յայաստանին, Բաթումը հռչակել porto-franko և ազատ քաղաք ու Յայաստանին իրավունք տալ սեփական երկաթգիծ ունենալ դեպի Բաթում: Մրա փոխարեն ռուս-վրացական դաշնագրի չորրորդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր որպես Վրաստանի մաս ճանաչել Բաթումի մարզը իր բոլոր գավառներով ու շրջաններով: Այստեղ, թերևս, որոշակիորեն պարզ է դառնում Սան Ռեմոյում Զիւեհձեի և նրա ընկերների անզիջում կեցվածքի պատճառը: Յասկանալի է դառնում, որ Սան Ռեմոյի ձախողման շարժառիթները գալիս էին Մոսկվայից:

Զ. Ավալովը, ով հաճախ աչքի էր ընկնում իր օբյեկտիվ և անաշառ գնահատականներով ու մոտեցումներով (այդ թվում՝ նաև Բաթումի հարցում հանդես էր գալիս վրաց պատվիրակության կոչութիրքորոշման դեմ) գրում է, որ թվում էր, թե Զիւեհձեի համառությու-

<sup>271</sup> См. Гасанлы Дж., История дипломатии Азербайджанской Республики, в трех томах, т. II, Внешняя политика Азербайджана в годы советской власти (1920-1939), Москва, 2013, стр. 53.

նը Սան Ռեմոյում պայմանավորված էր նրանով, որ նա Թիֆլիսից մի գաղտնի հրահանգ է ունեցել իր ձեռքին<sup>272</sup>:

Պարզ էր, որ Վրաստանը վերանայել էր անվերապահ Եվրոպական կողմնորոշումը՝ մասամբ թեքվելով դեպի Խորհրդային Ռուսաստանը, անուղղակիորեն նաև՝ Քենալական Թուրքիան: Ասվածը փաստելու համար դարձյալ դիմենք Ավալովին: Վերջինս, ծանոթանալով վերոնշյալ, ինչպես նաև 1920 թ. հունիսի 12-ին<sup>273</sup> Վրաստանի և Խորհրդային Ադրբեյջանի միջև կնքված դաշնագրերին, նշում է, «Մարդ չէր կարող չապշել, թե վրաց կառավարութիւնը որպիսի թեթևութեամբ եւ արագութեամբ ճանաչել էր Բագրում տեղի ունեցած պետական յեղաշրջումը եւ իետեւաբար, հրաժարուել էր 1919-ի վրաց-ատրբեյջանեան դաշնագրից (զինակցութիւն՝ սահմանները պաշտպանելու մասին) եւ թէ նա ինչպես հապշտապ հրաւիրել էր Խորհրդային իշխանութիւնը՝ իբրեւ դատաւոր իր եւ Խորհ. Ատրբեյջանի սահմանային տարածայնութեանց հարցում»<sup>274</sup>: Դեռ ավելին, ռուս-վրացական դաշնագրի ամենահատկանշական կողմերից մեկն էլ այն էր, որ Վրաստանը պարտավորվում էր «ձեռք առնել միջոցներ իր երկրից, այդ թվում նաև այս դաշնագրի չօրորոր հոդվածով նախատեսված տարածքներից (այսինքն՝ Բաթումի մարզից –Շ. Թ.) հեռացնել այն բոլոր զորքերը, որոնք չեն պատկանում Վրաստանի ազգային բանակին» (հոդված V, կետ 5-րդ)<sup>275</sup>: Դա նշանակում էր, որ Վրաստանը ուղղակի պարտավորություն էր ստանձնում վերջ տալ անզլիական տիրապետությանը Բաթումում ու մարզում և բացորոշ կերպով ճանաչում էր Ռուսաստանի քաղաքական գերակշռությունն ու ազդեցությունը տարածաշրջանում՝ գործնականում հրաժարվելով արևմտյան կողմնորոշումից:

<sup>272</sup> См. **Авалов З.**, указ. раб., стр. 286.

<sup>273</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, գ. 5, գ. 217, թ. 168:

<sup>274</sup> **Աբեղեան Ա.**, Վրաստանի անկախութիւնը, «Յայրենիք», Պոստոն, յոկտեմբեր, 1926, թիվ 12 (48), էջ 97-98:

<sup>275</sup> Դաշնագրի ամբողջական տեքստը տե՛ս Օկкупация и фактическая аннексия Грузии. О политической и правовой оценке нарушения договора между Грузией и Советской Россией от 7 мая 1920 года. Документы и материалы. Тбилиси, 1990, стр. 75-83:

Խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, կարողացավ ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանել, այսինքն՝ Բաթումի մարզը ճանաչելով Վրաստանի անբաժանելի մաս՝ պարտավորություն դրեց վերջինիս վրա՝ արագացնել անգլիական զորքերի դուրսբերումը Բաթումից: Դրանով ռուսները կարողացան խուսափել անգլիացիների հետ ուղղակի շփնան տհաճությունից: Ի դեպ, նշենք, որ պայմանագիրն ստորագրելուց անմիջապես հետո բոլշևիկները պահանջուն էին վրացական իշխանություններից շտապ հեռացնել օտար զորքերը դաշնագրով Վրաստանին անցնող տարածքներից: Արտգործնախարար Գեգեզկորին ստիպված էր պատասխանել, որ Վրաստանի իշխանությունը Բաթումի և շրջանի վրա տարածելուց հետո միայն կարող են կատարել պայմանագրի բոլոր կետերը<sup>276</sup>: Բաթումը Վրաստանին հանձնելու մասին ռուս-վրացական համաձայնագիրը վրաց կոմունիստներին առիթ տվեց հայտարարելու, թե «Բաթում քաղաքն ու նրա շրջանն անցնում են Վրաստանի ձեռքը ոչ թէ Անգլիայի բարի ցանկութեամբ, այլ յաղթանակող սոցիալիստական Ռուսաստանի կամքով՝ սրա և Վրաստանի միջև կնքւած դաշնադրութեան համաձայն»<sup>277</sup>: Ասվածի մեջ, իհարկե, ծշմարտության չափաբաժին կար:

Աղբեջանի խորհրդայնացումից հետո Վրաստանում և Հայաստանում բացահայտ խոսում էին հայ-վրացական ռազմական դաշինքի անհրաժեշտության մասին: Իրադարձությունների հետագա ընթացքը, սակայն, ցույց տվեց, որ վրացիները, հավանաբար, դա անում էին, որպեսզի ստիպեն բոլշևիկներին՝ արագացնելու ռուս-վրացական պայմանագրի կնքումը: Աղբեջանի խորհրդայնացումից հետո Անդրկովկասում թույլ օղակը Հայաստանն էր, որի հետ կապված՝ դեռ չպարզաբանված հարցեր կային ռուսների և նրանց դաշնակից քեմալականների միջև, հետևաբար Ռուսաստանին անհրաժեշտ էր առժամանակ կարգավորել հարաբերությունները Վրաստանի հետ՝ Անդրկովկասում հակառական որևէ միավորում թույլ չտալու համար, ինչը և արվեց մայիսի 7-ի դաշնագրով: Անդրկով-

<sup>276</sup> Տե՛ս «Նոր աշխատաւոր», Թիֆլիս, 27 յուլիս, 1920, թիվ 89 (161):

<sup>277</sup> Նույն տեղում, 7 յուլիս, 1920, թիվ 74 (146):

կասյան համադաշնություն ստեղծելու մեջ «ջատագով» մենշևիկյան Վրաստանը, Խորհրդային Ռուսաստանի հետ դաշինք կնքելով, բացառեց անդրկովկասյան հանրապետությունների միջև սերտ համագործակցության հետագա որևէ հնարավորություն, այնպես, ինչպես 1918 թ. մայիսին, մերձենալով Գերմանիայի հետ, փլուզեց Անդրկովկասյան Դաշնությունը:

Ռուս-Վրացական պայմանագիրը չկարողացավ և չէր էլ կարող լինել Վրաստանի անվտանգության երաշխիք: Ակնհայտ էր, որ այն ժամանակավոր բնույթ էր կրում: Վրացիներն էլ են ընդունում, որ թեև Խորհրդային Ռուսաստանն այդ պայմանագրով «դե յուրե» ճանաչեց Վրաստանը, բայց այդ ճանաչումը ձևական էր<sup>278</sup>: Բոլշևիկները դրանով սոսկ ամրապնդում էին իրենց դիրքերն Անդրկովկասում: Վրաստանի վարիչները, անշուշտ, գիտակցում էին հյուսիսից եկող սպառնալիքը: Այդ սպառնալիքն ավելի ակներև դարձավ 1920 թ. ամռանը՝ քենալ-բոլշևիկյան մերձեցմամբ: Օգոստոսին Սովոկայում ընթացող բանակցություններում Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը «Ազգային ուխտի» գծած սահմաններում, որի մեջ մտնում էր նաև Բաթումի մարզը: Ինչպես տեսնում ենք, սա հակասում էր ռուս-Վրացական պայմանագրի տրամաբանությանը և բացահայտում էր բոլշևիկների երկակի խաղը: Ուստի վրաց կառավարությունը մի կողմից բարիդրացիություն խաղալով ռուսների հետ՝ մյուս կողմից շարունակում էր Անտանտի աջակցությամբ անվտանգության երաշխիքներ ձեռք բերելու քաղաքականությունը, թեպետ Սան Ռեմոյի խորհրդաժողովում Բաթումի հարցով վրաց պատվիրակության վարքագիծը, ինչպես նաև մայիսի 7-ի պայմանագիրը, հիասթափեցրել էին անգլիացիներին: Մյուս կողմից, վրացիները վերստին առաջ քաշեցին հայ-Վրացական դաշինքի հարցը, այս անգամ արդեն ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի, քենալական Թուրքիայի և Խորհրդային Ադրբեյջանի:

---

<sup>278</sup> Տես Հյումելյորօք დ., სայարտցելո-և մեխետու պարտությունների համար 1918-1921 թվականներում կատարված առաջնական պարագաների մասին պատմությունը՝ Վրացական պատվիրակության վարքագիծը, ինչպես նաև մայիսի 7-ի պայմանագիրը, հիասթափեցրել էին անգլիացիներին: Մյուս կողմից, վրացիները վերստին առաջ քաշեցին հայ-Վրացական դաշինքի հարցը, այս անգամ արդեն ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի, քենալական Թուրքիայի և Խորհրդային Ադրբեյջանի:

1920 թ. օգոստոսի 3-ին ոչ պաշտոնական առաքելությամբ Հայաստան է ժամանում Լոնդոնում Վրաստանի ներկայացուցիչ Պ. Գամբաշիձեն: Նա կարծիք է հայտնում, որ նկատվում է սլավոն և տաճիկ ազգերի մերձեցում: Այդ մերձեցման դեպքում տուժելու են Հայաստան ու Վրաստանը: Եվ այդ վտանգի առաջն առնելու համար ներ երկու երկրները պետք է ռազմական դաշինք կնքեն, որը գլխավորապես պետք է ուղղված լինի Ադրբեյջանի դեմ<sup>279</sup>: Մինչև դաշինք կնքելու առաջարկությունը վրաց ներկայացուցիչը, բնականաբար, պետք է մեղմեր Բաթումի հարցում վրացական կողմի կոշտ դիրքորոշումը: Յետևաբար վերջինս Հայաստանի արտգործնախարար Յ. Օհանջանյանի հետ տեսակցության ժամանակ հայտնում է, որ «Վրաստանի ներկայացուցիչները Սան Ռեմոյում շատ մեծ սխալ են գործել՝ բռնելով Բաթումի հարցում չը զիջանող քաղաքականութիւն, որպէսին վատ տպավորութիւն է թողել թե Լորդ Կըրոզընի եւ թե կօնֆերանսի վրայ եւ այն կարծիքն է կազմել, թե վրացիք չեն ցանկանում հայերին ելք տալ դեպի ծով»<sup>280</sup>: Այժմ, սակայն, Գամբաշիձեն կարծում է, որ Բաթումը պետք է լինի ազատ նավահանգիստ և աշխատում է այդ ուղղությամբ համոզել իր ընկերներին: Ինչ վերաբերում է ապագա Կարս-Բաթում երկաթուղուն, նա կրկնում է վրաց կառավարության ներկայացուցիչների՝ Խատիսյանին արված առաջարկը, որ վրացիները համաձայն են թույլ տալ անցկացնել այդ գիծը վրացական հողով՝ մշտական կապալի իրավունքով<sup>281</sup>:

Երկարաժամկետ վարձակալական իինունքներով հողանասի տրամադրման համաձայնությունը երկաթգիծ կառուցելու համար արդեն իսկ բավականաչափ առաջընթաց էր վրացական կողմի դիրքորոշման մեջ: Սակայն, ցավոք, հետագայում վրաց կառավարությունը սրանից էլ ետ կանգնեց՝ շարունակելով մնալ իր նախկին կոշտ տեսակետին:

Ոուս-վրացական դաշնագրի վերլուծությունն անգամ անզեն աչքով մեզ ի ցույց է դնում, որ այն իր ողջ էռթյամբ հակահայկական

<sup>279</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 607, թ. 10, II երես:

<sup>280</sup> Նույն տեղում, թ. 10:

<sup>281</sup> Տե՛ս նույն տեղում:

էր, քանի որ բացի Բարումի մարզից, որի Վրացական ճանաչելն արդեն իսկ բացառում էր այնտեղով Հայաստանի՝ սեփական ծովային ելքի հնարավորությունը, այդ նույն չորրորդ հոդվածով Վրաստանի անբաժանելի մաս էր ճանաչվում նաև Թիֆլիսի նահանգը<sup>282</sup>, որի մեջ ցարիզմի կամայական որոշման արդյունքում մտնում էին նաև Ախալքալաքի և Լոռու գավառները: Ստացվում էր այնպես, որ Խորհրդային Ռուսաստանը հովանավորում էր Վրաստանին և Աղջոբեջանին Հայաստանի հետ վերջիններիս ունեցած տարածքային վեճերի հարցում՝ անարդարացիորեն կանխորոշելով Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի, Զավախիքի, Լոռու և Հայաստանի ծովային ելքի ճակատագրերը: Յետևարար մայիսի 7-ի պայմանագիրն էլ ավելի սրեց հայ-Վրացական տարածքային վեճերը և խիստ դժգոհություն առաջացրեց Հայաստանում: Մեկնաբանելով այդ դաշնագիրը՝ «Յառաջ» խմբագրականը ներկայացնում է. «Այսպիսով, մայիսի 7-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված դաշինքից անառարկելիօրէն պարզվում է, որ Վրաստանը այսուհետև մասնաւրապէս իր արտաքին քաղաքականութեան մէջ մինչև այն ժամանակ է ազատ ու ինքնիշխան, քանի այդ քաղաքականութիւնը և ոչ մի կտում չի հակասում ռուսական արտաքին քաղաքականութեանը...»<sup>283</sup>:

1920 թ. հունիսի 11-ին ՀՀ վարչապետ և արտգործնախարար Յ. Օհանջանյանը բողոքի նոտա է հղում Վրաստանի կառավարությանը ռուս-Վրացական պայմանագրի այն հոդվածների դեմ, որոնցով հայ-Վրացական վիճելի համարվող տարածքները Ռուսաստանի կողմից ճանաչվում էին Վրաստանի անբաժանելի մասեր<sup>284</sup>: Այս բողոքը որևէ նշանակություն չունեցավ և չէր էլ կարող ունենալ՝ բացի հարաբերությունների վատթարացումից: Միաժամանակ նույն հունիսի 11-ին Հայաստանի կառավարությունը գրեթե նույնարուվանդակ նոտա է հղում նաև Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը....»<sup>285</sup>

<sup>282</sup> См. Гасанлы Дж., указ.раб., стр. 53.

<sup>283</sup> «Յառաջ», 16 յունիս, 1920, թիվ 124:

<sup>284</sup>Տես Մարդարյան Կ., Հայ-Վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2002, էջ 129, նաև՝ «Յառաջ», 16 յունիս, 1920, թիվ 124:

յանը, որտեղ, Զավախսի և Լոռու խնդիրներից զատ, նշվում է, որ Բաթումի մարզում Հայաստանը հավակնում է ճորոխի շրջանին, իետևաբար Հայաստանի կառավարությունը տեղեկացնում է Ռուսաստանի կառավարությանը, որ Վերոնշյալ պայմանագրի միջլիսի նահանգին և Բաթումի մարզին վերաբերող մասերը Հայաստանը չի ճանաչում<sup>285</sup>: Այդ նոտայում, որը հասցեագրված էր Մոսկվայում ՀՀ պատվիրակության ղեկավար Լևոն Շանթին և Խորհրդային Ռուսաստանի արտգործժողովում Գ. Չիչերինին, բողոքը իհմնավորվում էր նրանով, որ 1919 թ. նոյեմբերի 14-ին, Հայաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի համաձայն, Երկու հանրապետությունները պարտավորվել են բոլոր առկա, ինչպես նաև հնարավոր ծագելիք վեճերը լուծել համաձայնության միջոցով, իսկ եթե դա հնարավոր չի լինում, ապա՝ արբիտրաժի միջոցով<sup>286</sup>: Ըստ ՀՀ կառավարության տեսակետի՝ այստեղից հետևում է, որ Խորհրդային Ռուսաստանը չի կարող վիճելի համարվող տարածքները ճանաչել Վրաստանի անբաժանելի մաս:

Այն, որ Հայաստանի առաջին հանրապետության կործանման գլխավոր պատճառներից մեկը նրա ղեկավարների ոչ ճկուն արտաքին քաղաքականությունն էր, դա փաստ է: Բայց վրաց մենշևիկ վարիչները ևս գրեթե ոչնչով ետ չեն մնում իրենց հայ գործընկերներից: Չնայած նրանց մեջ կային մի շարք գործիչներ, որոնք թրծվել և քաղաքական լուրջ փորձառություն էին ձեռք բերել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան կուսակցության հասարակական-քաղաքական գործունեության շրջանակներում (Ժորդանիա, Գեգեչկորի, Չխենեկելի, Չխեհծե, Ռամիշվիլի, Ծերեթելի և ուրիշներ), սակայն դա բավարար չէր արտաքին քաղաքականության կոպիտ վրիպումներից խուսափելու համար: Վրաց ղեկավարները ևս աչքի ընկան իրենց կարճատեսությամբ և արտաքին քաղաքականության իրացման իրավիճակային լուծումներով, որի արդյունքում էլ նրանց «հաջողվեց» Հայաստանից ընդամենը 85 օրով ավել երկարաձգել Վրաստանի անկախությունը:

<sup>285</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 217, թ. 177:

<sup>286</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 165:

Ռուս-Վրացական պայմանագիրը Վրացիների անհեռատես արտաքին քաղաքականության դրվագներից մեկն էր, որը նպաստեց ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի անկմանը:

Սան Ռենոյի խորհրդաժողովում լորդ Քերզոնի անդրկովկասյան քաղաքականության ձախողումը վերջնականապես տեսանելի դարձրեց Բաթումի անգլիական ռազմակալումը դադարեցնելու հեռանկարը: Բրիտանական զորամասի հեռացումը դարձավ մոտ ապագայի խնդիր: Սակայն խորհրդաժողովից հետո դեպքերն ընթացան օահավեծ արագությամբ: Աղրբեջանի խորհրդայնացումը և ռուս-Վրացական պայմանգիրը ստիպեցին անգլիացիներին մտածել Բաթումն օր առաջ լրելու մասին: Բայց նրանց առջև ծառացավ շատ կարևոր մի խնդիր՝ պատվով հեռանալու խնդիրը: Անգլիացիների համար շատ ցավալի և անպատիվ կլիներ թողնել տպավորություն, թե իրենք հեռանում են որևէ ուժի ճնշման տակ (տվյալ դեպքում՝ բոլշևիկների): Այս հարցում նրանց անուղղակիորեն օգնեցին վրացիները, որոնք անհամբերությամբ սպասում էին այն օրվան, թե երբ կտիրապետեն Բաթումը, և անընդհատ շտապեցնում էին անգլիացիներին՝ արագացնել Բաթումը իրենց հանձնելու գործը: Բրիտանացիներն էլ օգտագործեցին այդ հիանալի հնարավորությունը և «պատերազմի իրավունքով գրաված Բաթումի նարզը հանձնեցին օրինական տիրոջը»: Չնայած դրան՝ վրաց մենշևիկ գործիչներն այս հարցում երկրինի քաղաքականություն էին վարում՝ միջազգային սոցիալիստական ֆորումներում գոհունակություն հայտնելով Բաթումի բրիտանական գրավված կապակցությամբ: Օրինակ՝ 1919 թ. օգոստոսին, Լյուցերնում իրավիրված երկրորդ ինտերնացիոնալի երկրորդ խորհրդաժողովում ելույթ ունենալով, Ա. Չխենկելին ասել է, որ 1919 թ. հունվարին անգլիական գորքերի մուտքը Վրաստան մեծ գոհունակությամբ է ընդունվել բնակչության բոլոր խավերի կողմից<sup>287</sup>:

Բրիտանական զորքերի Բաթումից դուրսբերումը Անգլիայում դիտվեց որպես Անդրկովկասում ակտիվ քաղաքականության կողմ-

<sup>287</sup> Տես Դարբինյան Յ., Երկրորդ ինտերնացիոնալը և Անդրկովկասը, (1917-1920 թթ.) «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1991, թիվ 4, էջ 64:

նակիցների (Քերզոնի և նրա համախոհների) պարտություն և Լոյդ Զորջի կողմնակիցների հաղթանակ: Անգլիական զինուժի Բարումից շուտափությունը դուրսբերման խոսակցությունները ֆրանսիայի համար Բարում զորք մտցնելու առիթ դարձան: Ֆրանսիական ստորաբաժանումները Բարում հասան մայիսի վերջին և մասամբ փոխարինեցին անգլիացիներին<sup>288</sup>: Սակայն, Բարումը Վրաստանին հանձնելուց հետո ֆրանսիական զորամասերը ևս հեռացան անգլիացիների հետ:

1920 թ. հունիսի 8-ին Բարումի անգլիական իրամանատարությունը Կ. Պոլսի՝ Մերձավոր Արևելքում անգլիական գլխավոր հրամանատարությունից հրաման ստացավ՝ անհապաղ անցնել Բարումից տարիանվելու նախապատրաստությանը<sup>289</sup>:

Հունիսի 11-ին Լոնդոնում վրացական տնտեսական առաքելության անդամներին գաղտնի տեղեկացրին անգլիական կառավարության՝ Բարումը թողնելու և անբողջ մարզը Վրաստանի կառավարությանը միացնելու որոշման մասին: Այդ նպատակով Վրաստան էր գործուղվել բրիտանական նոր կոմիսարը՝ գնդապետ Ստորսը<sup>290</sup>: Հունիսի 27-ին Թիֆլիսում հայոց դիվանագիտական ներկայացուցիչ Բեկադյանը տեսակցում է գնդապետ Ստորսի և կոմիսար Լյուկի հետ: Ստորսը խիստ գաղտնի հայտնում է, որ Բարումը և իր նահանգը Վրաստանին է տրվելու, սակայն Բարումը լինելու է ազատ նավահանգիստ, և Հայաստանն իրավունք է ունենալու առանց հարկի ազատորեն ապրանքներ անցկացնել Բարումով: Սեր ներկայացուցչի արձագանքին, թե Հայաստանի ցանկությունն է սեփական երկարգծով ելք ունենալ դեպի ծով, Ստորսը պատասխանում է, թե այդ ցանկությունը կվատարվի, բայց դա պետք է գաղտնի պահել՝ ելնելով տաճկական ու աջարական վտանգից<sup>291</sup>: Փաստորեն, ստացվում է, որ թուրքական և աջարական վտանգը չեն սպառնում Աջարիան

<sup>288</sup> Տե՛ս «Ժողովուրդ», 15 յունիս, 1920, թիվ 65:

<sup>289</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 217, թ. 165-166, նաև՝ «Յառաջ», 20 յունիս, 1920, թիվ 128:

<sup>290</sup> Տե՛ս Թորոսյան Շ., 1920թ. մայիսի 7-ի ռուս-վրացական դաշնագիրը և Բարումի հանձնումը Վրաստանին, «Բանքեր Երևանի համալսարանի», թիվ 1, 2016, էջ 9:

<sup>291</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 607, թ. 3:

Վրաստանին հանձնելիս, բայց սպառնում են հայկական կառուցվելիք երկաթուղուն: Սա անգլիական խարդավաճքների հերթական դրսևորումն էր:

Դումիսի 28-ին կոմիսար Լյուկը պայմանագիր ստորագրեց Վրաստանի կառավարության հետ, համաձայն որի՝ Բաթում քաղաքը և նավահանգիստը անգլիացիների կողմից Վրաստանին հանձնելուն պես Վրաստանի կառավարությունը երաշխիք էր տալու, որ Դայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների բեռները դեպի Բաթում և Բաթումի նավահանգստից ազատ կտեղափոխվեն Վրաստանի երկաթուղիների միջոցով և պարտավորվում վերոհիշյալ հանրապետություններին իրավունք տալ ազատ կերպով օգտագործելու Բաթումի նավահանգիստը<sup>292</sup>: Այս պայմանագրի կնքման հաջորդ օրը Վրաստանի արտգործնախարար Գեգեչկորին, Ելույթ ունենալով Սահմանադիր ժողովում, տեղեկացրեց Բաթումը Վրաստանին հանձնելու մասին:

Վրացական գորքերը Բաթումի մարզ մտան 1920 թ. հուլիսի 1-ին<sup>293</sup>: Հուլիսի 4-ին մոտեցան Բաթում քաղաքին, իսկ անգլիական գորքերը այնտեղից հեռացան հուլիսի 10-ին<sup>294</sup>: Հուլիսի 7-ին վրացական գորքերը մտան Բաթում<sup>295</sup>: Նույն օրը տեղի ունեցավ Բաթումը և նրա շրջանը Վրաստանին հանձնելու հանդիսավոր արարողությունը<sup>296</sup>: Բայց ամեն ինչ այնքան էլ հարթ չէր ընթանում: Բաթումը Վրաստանին հանձնելու նախօրյակին բրիտանական հրամանատարությունը կասկածում էր, որ տեղի բնակչությունը խաղաղ և անցնցում կընդունի վրացական իշխանությունը: Ուստի նահանգապետ Կուկ-Կոլլիսը հուլիսի 6-ին հայտարարություն է տարածում, ըստ որի՝ քաղաքը և շրջանը Վրաստանին հանձնելով՝ իրամայում է «Բաթումի բնակչութեանը կատարեալ կարգ պաշտպանել և շարու-

<sup>292</sup> Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 235-236:

<sup>293</sup> См. Квинитадзе Г. И., Моя вспоминания в годы независимости Грузии, 1917-1921, Париж, 1985, стр. 214.

<sup>294</sup> См. Авалов З., указ. раб., стр. 288-289, նաև՝ «Յառաջ», 10 յուլիս, 1920, թիվ 144:

<sup>295</sup> См. Квинитадзе Г. И., указ. раб., стр. 216.

<sup>296</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 213:

նակել սովորական գբաղմունքները: Այն բոլոր չարամիտները, որոնք կը փորձեն խանգարել դաշնակից զօրքերի խաղաղ էւակուացիային, կամ վրացական իշխանութիւնների խաղաղ գալստեանը, դատի կենթարկւեն զինուրական ժամանակների օրենքների ամենայն խստութեամբ»<sup>297</sup>: Բացի այդ՝ նրա կարգադրությամբ փակվում է «Սեդայի Միլեբ» լրագիրը, որը համաթուրքական ուղղվածություն ուներ<sup>298</sup>: Այդպիսի կասկածներ ուներ նաև Բաթումի մարզի ռազմակալման գործողության դեկավար գեներալ Կվինիտաձեն: Վերջինս գրում է, թե Ազարիայի սահմանին իրենց դեմ ամենուրեք խրամատներուն աջարներ էին նստած<sup>299</sup>: Այդ կասկածներն ավելի են ամրապնդվում վրացական իշխանությունների ձեռնարկած քայլերով: Կառավարության որոշմանք հուլիսի 9-ին Բաթումում և շրջանում զինվորական դրություն է հայտարարվում և արտակարգ կոմիսար նշանակվում Վ. Չիմիկվիշվիլին<sup>300</sup>:

Վերջապես կատարվեց վրացիների երազանքը: Բաթումի մարզի միացումը բարոյական և քաղաքական մեծ բավականություն պատճառեց Վրաստանին: Բոլորը ոգևորված էին: Բայց այն ինչ-որ տեղ նման էր տրոյական ձիու: Այդ համատարած ոգևորության մեջ քչերն էին գիտակցում, որ թուրք ազգայնականները, առաջնորդվելով Ազգային ուխտով, հավակնում էին նաև Բաթումին, և եթե մինչ այդ գործնական քայլեր չէին ձեռնարկել այդ ուղղությամբ, ապա պատճառը մինիայն անգլիական ռազմական ներկայությունն էր: Բաթումի բերդի վրա բրիտանական և ֆրանսիական դրոշակները վրացականով փոխարինելը խիստ խոցելի դարձրեց Վրաստանի հարավարևմտյան սահմանը: Վրաստանը ևս, ինչպես և Հայաստանը, հայտնվեց բոլշևիկյան մուրծի և թուրքական սալի միջև և այլևս անօգնական՝ դատապարտված էր կործանման: Եվ այս վտանգը գիտակցելու ու համապատասխան դաշնակցային քայլեր ձեռնարկելու փոխարեն երկուստեք խորացնում էին գրեթե թշնամության հաս-

<sup>297</sup> «Նոր աշխատաւոր», Թիֆլիս, 8 յուլիս, 1920, թիվ 75 (147):

<sup>298</sup> Տե՛ս «Յառաջ», 10 յուլիս, 1920, թիվ 144:

<sup>299</sup> Ըմ. Կvinitadze Գ. Ի., սկազ. թագ., ստ. 212.

<sup>300</sup> Տե՛ս «Նոր աշխատաւոր», 11 յուլիս, 1920, թիվ 77 (149):

նոր փոխադարձ անվստահությունը: Եթե ապրիլին հայկական կողմն էր Անտանտի երկրների սին խոստումներից ոգևորված ինքնանոռաց կերպով պահանջներ դնում Բաթումի հարցում, ապա այժմ Վրացական կողմն էր ոգևորությունից կուրացած նիզակ ճոճում հայերի գլխին: 1920 թ. հունիսի 29-ին Վրաստանի արտգործնախարար ե. Գեգեչկորին, Սահմանադիր ժողովի նիստում ելույթ ունենալով, հայտարարում է Բաթումը և շրջանը Վրաստանին հանձնելու դաշնակիցների որոշման մասին, ապա ավելացնում. «...Վրաստանը ընդունում է հարևան հանրապետությունների շահերը: Կառավարությունը այդ մասին հայտարարում է հենց այժմ: Բայց եթե հանկարծ որևէ մեկը փորձի կանգնել վրաց ժողովորի կամքի առաջ, ապա հանդես կգա մեր փառապանծ բանակը և գվարդիան, և թշնամական ուժերը չեն դիմանա...»<sup>301</sup>:

Վրացական բանակը կոնկրետ խնդրի առջև կանգնեց Բաթումը վերցնելուց հետո: Ազարական զինված կազմակորումները թշնամաբար էին տրամադրված Վրաստանի հանդեպ: Նրանց առաջնորդ Քեսքին Զադեն մեծ ծավալի ֆինանսական աջակցություն էր ստանում բոլշևիկներից: Յուլիսի 26-ին լրացել էր վրաց կառավարության կողմից տրված զինաբափման վերջնագրի ժամկետը, սակայն աջարները չեն պատրաստվում ենթարկվել<sup>302</sup>: Յուլիսի 28-ին վրացական զորքերի և աջար ապստամբների միջև ընդհարումներ են տեղի ունենում<sup>303</sup>:

Բաթումում վրացական իշխանության հաստատումից հետո տեղական ազգաբնակչության մեծ մասի, նույնիսկ վրացական իշխանության նկատմամբ լոյալ տրամադրված աջարների մոտ դժգոհություններ առաջացան տնտեսական վիճակի վատքարացման պատճառով: Առևտուրը կանգ էր առել, թամկությունն աճում էր, հիմնարկությունները գրեթե չեն գործում: Պատճառները շատ էին: Անգլիացիների մեկնելուց հետո Բաթումից սկսեցին հեռանալ եվրոպացի գործարարները, ոուսները կասկածանքի տակ էին և անընդհատ

<sup>301</sup> ՀԱԱ, ֆ. 275, գ. 5, զ. 217, թ. 199:

<sup>302</sup> Տե՛ս «Յառաջ», 1 օգոստոս, 1920, թիվ 162:

<sup>303</sup> Տե՛ս նույն տեղում, 4 օգոստոս, 1920, թիվ 164:

հալածվում էին, հայերը զանգվածաբար հեռացվում էին աշխատանքից, իսկ վրացական իշխանությունները մի կողմից ծանրացնում էին հարկերն ու տուրքերը, մյուս կողմից՝ ազգայնացնում ամեն ինչ<sup>304</sup>:

Բարումի շրջանի մուսուլմանների դժգոհ տրամադրությունները հետագայում ևս շարունակվում են: Ելնելով դրանից՝ վրաց մենշևիկները մեղադրում են նրանց պահպանողականության և սեփական շահերը զգիտակցելու մեջ: Մենշևիկները գտնում էին, որ աջարների առջև դրված է մի չափազանց կարևոր հարց՝ կամ Վրաստանի հետ գնալ դեպի առաջադիմություն, կամ Տաճկաստանի հետ՝ նորից դեպի վայրենություն<sup>305</sup>:

Բարումը հանձնելով Վրաստանին՝ անգլիացիները, այնուամենայնիվ, ամբողջովին չիրաժարվեցին վերջինիս հետ կապված իրենց ծրագրերից: Յանձննան վերաբերյալ ստորագրված անգլո-վրացական արձանագրության մեջ վրաց կառավարությունը տալիս է իր համաձայնությունը Կարս-Բարում երկարգծի կառուցման համար<sup>306</sup>: Սակայն այդ համաձայնագիրը չի հրապարակվել վրացիների խնդրանքով, այն պատճառաբանությանք, թե կարող է առաջ բերել վրացիների դեմ աջարների շարժումներ<sup>307</sup>: Իհարկե, սա չէր կարող գործնական նշանակություն ունենալ և գոհացնել հայերին, քանի որ այդ արձանագրությունը չուներ այն ուժը, իսկ Անգլիան՝ այն ազդեցությունը, որը կստիպեր վրացիներին կյանքի կոչել երկարգծի ծրագիրը: Անգլիացիների այս թվայցալ հայանպաստ քայլը հերթական կեղծ հայասիրության դրսւորում էր: Մեր կարծիքով՝ այդ կետն արձանագրության մեջ մտցվել էր՝ Ելնելով Անդրկովկասի հետ կապված բրիտանացիների հետագա կոմունիկացիոն ծրագրերից, որոնց մենք արդեն անդրադարձել ենք:

<sup>304</sup> Տե՛ս նույն տեղում, 10 օգոստոս, 1920, թիվ 169:

<sup>305</sup> Տե՛ս "Երթոռնա", օճուղութեան, 12 նոյեմբեր, 1920, («Էրթոռա», Թիֆլիս, 12 նոյեմբերի, 1920):

<sup>306</sup> Տե՛ս Աբեղեան Ա., նշվ. աշխ., էջ 99:

<sup>307</sup> Տե՛ս Դայաստանի Դանրապետությունը 1918-1920 թթ. (Բաղաբական պատմություն), Փաստաթրդերի և նյութերի ժողովածու, կազմողներ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000, էջ 263:

Բաթումը Վրաստանին հանձնելուց հետո էլ Հայաստանի կառավարությունը հույսը չէր կորցնում Փարիզի վեհաժողովի և Ազգերի լիգայի աջակցությանք սեփական երկաթգծով ելք ունենալ դեպի Սև ծով: Ահա թե ինչ ենք կարդում Հայաստանի արտգործնախարարության 1920 թ. հուլիսի 25-ի տեղեկագրում. «Բաթումի վերաբերեալ Կառավարութեանս տեսակետները նոյնն են. ունենալ իրեւ սեփականութիւն ճորդիսի հովհտը եւ այդ հովտով սեփական երկաթուղագծով ազատ ելք ունենալ Բաթումի նաւահանգիստը: Կառավարութիւնս մի գրութեանք պատիրել է Հաշտարար կօնֆերանսին կից Հանրապետութեան Պատլիրակութեան բողոք ներկայացնել Ազգերի լիգային եւ Հաշտարար կօնֆերանսին Բաթումը իր նահանգով Վրաստանին տրելու արթիւ եւ բոլոր միջոցներով աշխատել ձեռք բերել Բաթումի հարցի վերաբերեալ մեր պահանջները իրենց ամբողջութեամբ»<sup>308</sup>: Այս սին ցանկությունները կյանքի կոչելու ձգտումն առնվազն միամտություն էր մեր կառավարության կողմից: Մենք չկարողացանք խելամտորեն հետամուտ լինել մեր շահերին, չկարողացանք խոհեմ արտաքին քաղաքականություն վարել: Արդյունքուն Անտանտի երկրները մեզ զնկալում էին որպես անուղղելի ռուսասերներ, իսկ բոլշևիկները՝ տարածաշրջանում Անտանտի իմպերիալիստական շահերը սպասարկողներ: Այս վիճակը ձեռնտու էր երկու կողմին էլ: Դրանով նրանք փաստացի հրաժարվում էին Հայաստանի խնդիրներին լուծում տալուց՝ խուսափելով անցանկալի պարտավորություններից և ավելորդ պատասխանատվությունից:

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևի պայմանագիրը: Այս պայմանագրով Բաթումը հռչակվեց միջազգային նշանակության նավահանգիստ՝ բաց ազատ առևտորի և Ազգերի լիգայի անդամ բոլոր երկրների դրոշների համար: Ազգերի լիգայի բարձր հովանու ներքո ազատ նավահանգստի ռեժիմը, որը նկարագրված էր Սևի պայմանագրի 335-346-րդ հոդվածներում, առնչվում էր նաև Բաթումին, այնպես, ինչպես Կ. Պոլսին, Իզմիրին, Ալեքսանդրետին, Բասրային, Տրավերտինին և այլն: Ընդ որում՝ Բաթումի վերաբերյալ արվել էր վերապահում հետազոտում որոշվելիք պայմանների մասին

<sup>308</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 607, թ. 53:

(հոդված 335)<sup>309</sup>. Այսինքն՝ Բաթումին տիրապետելու հարցը անորոշ էր մնում: Սակայն այդ անորոշության վրա որոշակի լույս էր սփռում պայմանագրի 351-րդ հոդվածը, որտեղ ասվում էր, որ Բաթումի նավահանգստով ազատ մուտք դեպի Սև ծովը տրվում էր Վրաստանին, Ադրբեյջանին և Պարսկաստանին, ճիշտ այնպես, ինչպես և Հայաստանին<sup>310</sup>: Սա և ազատ նավահանգստի կարգավիճակը մեզ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այս ամենի հիմքում ընկած են դեռևս փետրվար-մարտին Լոնդոնում կայացած քննարկումների գաղափարները, այն է՝ Բաթումի անջատումը Վրաստանից և Աստանտի երկրների կոնունիկացիոն շահերի սպասարկումը տարածաշրջանում: Սակայն, ամեն ինչ արդեն անդառնալիորեն ուշացած էր: Բաթումը, անգլիացիների կամոք, տիրապետում էին վրացիները, իսկ տարածաշրջանում տեր ու տնօրինություն էին անում բոլշևիկներն ու քենալականները, և անկախ նրանից, թե ինչ էր որոշվել Սևրում, հարցերն այստեղ վերջիններս էին լուծում, դեռ ավելին, Սկրի պայմանագիրը ձախողելու համար, նրանք էլ ավելի արմատական քայլերի դիմեցին՝ առաջին հերթին կործանարար հարված հասցնելով մեծ Հայաստանի տեսլականին՝ Անտանտի երկրների առջև փակելով տարածաշրջանի ռազմավարական հենակետերը, այդ թվում՝ նաև Բաթումը:

352-րդ հոդվածով էլ Հայաստանին ազատ մուտք էր տրվում դեպի Սև ծով նաև Տրապիզոնով, ընդ որում՝ Տրապիզոնի նավահանգստում Հայաստանին առհավետ վարձակալության էր տրվելու մի տեղամաս, որը դրվելու էր Սկրի պայմանագրով սահմանված ազատ գոտիների ընդհանուր ռեժիմի տակ<sup>311</sup>:

Սկրի պայմանագրի իրագործվելու դեպքում էլ ավելի կարվեին հայ-ռուսական, հայ-թուրքական, հայ-վրացական, հայ-ադրբեյջանական և հայ-քրդական հարաբերությունները (պայմանագրով նախատեսված ինքնավար քուրդիստանի և Հայաստանի սահմանները ևս

<sup>309</sup> См. **Авалов З.**, указ. раб., стр. 290.

<sup>310</sup> См. Севрский мирный договор и акты, подписаные в Лозанне, М. 1927, стр. 111.

<sup>311</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, նշվ. աշխ., էջ 682:

մնում էին անորոշ), քանի որ պայմանագիրը չէր տալիս նոր սահմանագծումների մեխանիզմները և հետագա բախումներից խուսափելու երաշխիքները, իսկ դրանց հետևանքները շատ ծանր կլինեին Հայաստանի համար, գուցեև ավելի ծանր, քան այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանի հետ: Այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանի հետ, Սևրի պայմանագրի, նրա հեղինակների և Հայաստանի կառավարիչների կարճատեսության պատճառով էր, հատկապես վերջինների, ովքեր իրենց փրկությունն ու ապագան միմիայն կապում էին այս պայմանագրի հետ:

Ակնհայտ էր, որ Բաթումին հավակնում էին թե՝ խորհրդային Ռուսաստանը և թե՝ քեմալական Թուրքիան, և եթե բոլշևիկները դա անում էին անթաքույց, ապա քեմալականները՝ իրենց հատուկ ծածկամտությամբ: Սակայն դա չէր վրիպում բոլշևիկների աչքից: Եթե արդեն սկսվել էր թուրք-հայկական պատերազմը, 1920 թ. հոկտեմբերի 9-ին ՌԿ(թ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում, հանդես գալով ՌԽՖՍՀ ներքին և արտաքին դրության մասին գեկուցումով, Լենինն ասում էր. «Վերջերս թուրքերը սկսել են հարձակում Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով գրավել Բաթումը...»<sup>312</sup>: Թուրքերի այդ անզուսապ առաջխաղացումը Հայաստանում արդեն անհանգստացնում էր բոլշևիկներին: Յոկտեմբերի 26-ին Ստալինը Բարվից հեռագրում է Լենինին, թե հնարավոր է, որ Վրաստանը Բաթումը հանձնի Անտանտին: Յոկտեմբերի 29-ին Լենինը պատասխան հեռագրում հայտնում է Ստալինին, թե. «Անտարակուսելի եմ համարում, որ Վրաստանը հավանաբար գաղտնի, Բաթումը կհանձնի Անտանտին, և որ Անտանտան կհարձակվի Բաքվի վրա...»<sup>313</sup>:

Բոլշևիկների մոտ արդեն կասկած չկար, որ թուրքերը գործում էին Անտանտի գիտությամբ և իրական վտանգ էին ներկայացնում Բաթումի համար: Եվ իրոք, Հայաստանին հաղթելուց հետո 1920 թ.

<sup>312</sup> Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 397:

<sup>313</sup> Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 300:

Վերջերինև 1921 թ. սկզբներին թուրքերը իրենց թնդանոթներն ուղղեցին Բաթումի վրա: Բաթումի նկատմամբ թուրքերի հավակնությունների մեկ այլ պատճառ էլ Բաքու-Բաթում նավամուղն էր, որը, իրավամբ, հանարվում էր Անդրկովկասի գլխավոր տնտեսական կոմունիկացիաներից մեկը:

Քենալականները ձգտում էին Բաթումը ուժով զավթել ռուսական երկրորդ խորհրդաժողովի ընթացքում՝ բոլշևիկներին փաստի առաջ կանգնեցնելու նպատակով: Ռազմական աջակցության խոստումով գայթակղելով մենչև կիյան կառավարությանը՝ թուրքերը նպատակադրվել էին վրացական բանակի ուժերով դիմագրավել կարմիրների հարձակմանը, ժամանակ շահել և բոլշևիկներից առաջ գրավել Բաթումը<sup>314</sup>: Դա նկատում են ռուսները, որոնք խիստ անհանգստացած էին Բաթումի հարցում համաձայնության ձեռքբերման թուրքերի ձգձգումներից: Իսկ Վերջիններս կոնկրետ քայլեր էին ձեռնարկում Բաթումը գրավելու ուղղությամբ՝ դրանք հիմնավորելով իբր վրացիների ցանկությամբ: Քենալականների արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեդ Մուհամետ Թուրքիայի Ազգային մեծ ժողովում հայտարարում է հետևյալը. «Այժմ ես պետք է հաղորդեմ ձեզ, որ վրաց կառավարության համաձայնությամբ արևելյան ճակատի մեր գործերին հրաման է արձակված գրավելու Բաթումը...»<sup>315</sup>:

1921 թ. մարտի 11-ին թուրքական մի ջոկատ մտնում է Բաթում, իսկ Վրաստանում քենալական ներկայացուցիչ Ջազիմ բեյն այն հոչակում է Թուրքիայի անբաժանելի մասը<sup>316</sup>: Պրոֆեսոր Ե. Զոհրաբյանը ճշմարտացի է համարում վրացիների ցանկությամբ Բաթումը գրավելու թուրքերի փաստարկները: Սակայն իրականում դա թուրքերի հերթական բլեֆն էր, որը շարունակեց Ջազիմ Կարաբեքիրը Բաթումը գրավելուց անմիջապես հետո: Նա իր արձակված հրամանում նշում է. «Վերջին ժամանակներս, վրացական կառավա-

<sup>314</sup> Տես Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1995, էջ 178:

<sup>315</sup> Զոհրաբյան Ե., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 1979, էջ 226:

<sup>316</sup> Տես նույն տեղում:

րության համաձայնությամբ, Բաթումի մարզը...գրավվեց մեր զորքերի կողմից... այդ մարզն այսօրվանից... ենթարկվում է Թուրքիայի ազգային կառավարությանը»<sup>317</sup>: Իրականում, ինչպես նշել ենք, վրաց մենշևիկները ցանկանում էին Բաթումը հանձնել անգլիացիներին, իսկ Վրաստանի խորհրդայնացումից հետո ամեն գնով փորձում էին այն պահել Խորհրդային Վրաստանի կազմում: Թիֆլիսում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո վրաց կառավարությունը տեղափոխվում է Բաթում: Այստեղ ժորդանիան բանակցում է տեղի բոլշևիկյան լիդերների հետ՝ ասելով հետևյալը. «Մեր ընդհանուր շահերից է բխում, որ Բաթումը և նրա մարզը մնան Վրաստանի կազմում, ինչ վարչակարգ էլ այնտեղ գործի»<sup>318</sup>: Մյուս կողմից վրացական զորքերը թուրքերի դեմ արյունահեղ մարտեր էին մղում Բաթումի փողոցներում<sup>319</sup>: Բաթումի 4000-անոց մենշևիկյան կայազորը շուտով անցավ քաղաքի հեղկոմի կողմը և շարունակեց մարտնչել թուրքերի դեմ<sup>320</sup>: Վրաստանի կառավարությունը Բաթումից հեռացավ մարտի 17-ին, երբ տեղեկացավ որ կարմիր զորքերը մոտենում են քաղաքին<sup>321</sup>:

Միայն Վրաստանի խորհրդայնացումը և դրան հաջորդած 1921 թ. Սոսկվայի և Կարսի պայմանագրերը փրկեցին Բաթումը Թուրքիայի հավակնություններից: Ըստ այդ պայմանագրերի՝ Բաթումի մարզը ինքնավար հանրապետության կարգավիճակով մտավ Խորհրդային Վրաստանի կազմի մեջ: Սրանով Բաթումի և մարզի ճակատագիրը վերջնականացես որոշվեց: Իսկ Սևրի պայմանագիրը, որի շատ հոդվածներ, այդ թվում՝ Բաթումին առնչվող հոդվածները, անիրականանալի էին դարձել, վերանայվեց 1922-1923 թթ. Լոգանի խորհրդաժողովում, որտեղ Բաթումի մասին ոչ մի խոսք չկար:

Վերադառնալով Վրաստանի կողմից Բաթումը Անտանտին հանձնելու Ստալինի կասկածներին՝ պետք է նշենք, որ դրանք շատ իմնավոր էին: Վրաստանի կառավարությունը բոլշևիկների և բե-

<sup>317</sup> Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 179:

<sup>318</sup> Ջօրդանիա Հ., սկզբ. թագ., ստուգ. 117.

<sup>319</sup> Ըստ այս տեղային պատմության՝ պետք է նշենք, որ դրանք շատ

<sup>320</sup> Տե՛ս Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 179:

<sup>321</sup> Ըստ Ջօրդանիա Հ., սկզբ. թագ., ստուգ. 118.

մալականների այդ բուռն առաջխաղացման պայմաններում գեգեչ-կորու պահանջով համաձայնել էր Բաթումի շրջանը ժամանակավորապես հանձնել անգլիացիներին<sup>322</sup>: Ինչպես նշել ենք, մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագիրը երկու երկրների միջև վստահության երաշխիք չկարողացավ դառնալ: Բաթումը Անգլիայի շահագործմանը հանձնելու մասին անգլո-վրացական համաձայնությունը կայացել էր նոյեմբերի 23-ին, որի դիմաց անգլիացիները խոստացել էին տրամադրել վրացիների խնդրած փոխառությունը<sup>323</sup>: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ դեռևս հուլիսին, հեռանալով Բաթումից, անգլիացիները հեռահար նպատակներով իրենց ձեռքն էին պահել նավահանգստի կառավարումը<sup>324</sup>: Բոլշևիկների առաջխաղացումը և Բաթումի հետագա ճակատագիրը խիստ անհանգստացրել էին Անտանտի տերություններին: Այդ էր պատճառը, որ արդեն հոկտեմբերի 30-ի դրությամբ Բաթումի նավահանգստում կանգնած էին Անտանտի ութ ռազմանավեր, որոնցից երեքը ֆրանսիական ականակիրներ էին<sup>325</sup>: Իսկ Հայաստանում ամերիկյան առաքելության ներկայացուցիչ Զորիիս Մովիլին գտնում էր, որ Բաթումի նավահանգիստը պետք է դարնա ամերիկյան քազա<sup>326</sup>: Սակայն Անդրկովկասում գերիշխանություն ապահովող ռազմավարական այս քաղաքի համար պայքարում, ինչպես հայտնի է, հաղթող հանդիսացավ Խորհրդային Ռուսաստանը:

Բաթումն այդպես էլ մնաց Հայաստանի՝ դեպի ծով ելքի միակ հնարավորությունը: Խորհրդային տարիներին ծովային ելքի հարցը, հասկանալի պատճառներով, Հայաստանի համար առաջնահերթություն չէր հանդիսանում: Սակայն ներկայումս անկախ պետականության պայմաններում այս հարցը վերստին լուրջ կարևորություն է ձեռք բերել: Բաթումը, ինչպես նաև Վրաստանի Փոքրի նավահանգիստն այսօր էլ մնում են Հայաստանի ծովային ելքի միակ ուղին:

<sup>322</sup> Տե՛ս «Կոմմունիստ», Բաթու, 10 դեկտեմբերի, 1920, թիվ 170:

<sup>323</sup> Տե՛ս «Ժողովուրդ», 1 դեկտեմբեր, 1920, թիվ 97:

<sup>324</sup> Տե՛ս «Յառաջ», 10 յուլիս, 1920, թիվ 144:

<sup>325</sup> Տե՛ս «Ժողովուրդ», 9 նոյեմբեր, 1920, թիվ 82:

<sup>326</sup> См. Кунинг А. Е., Провал американских планов завоевания мирового господства в 1917-1920 гг., Москва, 1951, стр. 89.

Կատարվեց վրաց մենշևիկների երազանքը: Մենք չունեցանք սեփական ելք դեպի ծով և մնացինք Վրաստանի ողորմածությանը ապավիճելու հույսով: Իհարկե, մենք երախտապարտ ենք Վրաստանին, որի նավահանգիստները օգտագործում ենք արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու համար, սակայն պետք է նշենք, որ, այնուամենայնիվ, այդ «ողորմածությունը» իր հետ բերում է բազում հիմնախնդիրներ, որն այլ ուսումնասիրության թեմա է:

## ԳԼՈՒԽ III

### ԱՐԴԱՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

#### 3.1. Կարսի մարզի միացումը Հայաստանին և Վրաստանի դիրքորոշումը (1919 թ. հունվար-ապրիլ)

Առաջին հանրապետության շրջանում հայ-վրացական հարաբերությունները խաթարող խնդիրներից մեկն էլ Արդահանի պատկանելի հության շուրջ ծավալված վեճն էր: Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հավակնում էր ոչ միայն Արդահանի, այլ նաև Կարսի մարզի մեկ այլ՝ Օլթիի գավառին, ինչպես նաև Էրզրումի վիլայեթի՝ Օլթիին հարակից Սպերի, Թորթումի, Բաբերդի գավառներին<sup>327</sup>:

Եթե ուշադիր հետևենք քարտեզին, ապա կտեսնենք, որ Արդահանի գավառը Հայաստանի համար մերձականովյան տարածքներով դեպի Սև ծով դուրս գալու միակ դարպասն է: Քանի դեռ Կարսի մարզի Օլթիի գավառը և Էրզրումի վիլայեթը գտնվում էին թուրքերի

---

<sup>327</sup> 1266 թ. Թմկաբերդի տեր Սարգիս Զաղեցին հիմնադրում է Սամցխեի ընդարձակ իշխանությունը, որն ընդգրկում է Տաշիրից մինչև Էրզրում ընկած տարածքը: 1578 թ.՝ Սամցխե-Զավախսը գրավելուց հետո, թուրքերը ստեղծեցին Չլդըրի (Ախալցխայի) կյալերը, որը հիմնականում ընդգրկել է Սամցխեի իշխանության տարածքները: Չնայած դրան՝ Չլդըր-Ախալցխայի էյալերը ժամանակ առ ժամանակ ավելի ընդարձակվել է և միավորել նաև պատմական Տայք աշխարհն ու Գուգարքի մեծ մասը, առանձին գավառներ՝ Բարձր Հայքից, Այրարատից, Խաղոտիք-Լազիստանից: Քանի որ այս էյալերը հյուսիսից սահմանակից էր Վրացական թագավորությանը, թուրքերը այն անվանել են նաև Գյուղջիստանի (Վրաստան) վիլայեթ: Նաև այս հանգամանքն է, ըստ Երևույթին, իհմք տվել Վրացիներին հավակնելու Արդահանին, Օլթիին, Էրզրումի վիլայեթի հյուսիսարևելյան գավառներին, ինչպես նաև Լազիստանին: Տե՛ս **Թորոսյան Շ.**, Արդահանի խնդիրը հայ-վրացական հարաբերություններում (1920 թ. հունվար-օգոստոս), «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2014, թիվ 2, էջ 3: Թուրքերի կողմից Չլդըրի էյալերը նաև Գյուղջիստանի վիլայեթ անվանելու նույն բացատրությունը տե՛ս նաև՝ **Զուլայյան Մ.**, Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Երևան, 1980, էջ 182:

ձեռքին, վրացիներն ապահով էին, քանի որ Հայաստանի ծովային ելքը «հուսալիորեն» ձախողված էր: Սակայն, երբ Կարսի մարզը միացվեց Հայաստանին, և Փարիզի վեհաժողովում սկսեց քննարկել նաև Երգրումը հանձնելու հարցը, անհանգստացած վրաց մենշևիկ կառավարիչները, «պատմական իրավունքի» վրա հիմնվելով, պահանջեցին Արդահանից հարավ-արևմուտք գտնվող Օլրի գավառը, այստեղից ուղիղ գծով դեպի արևմուտք՝ Երգրումի նահանգի՝ Թորթումի, Սպերի և Բաբերդի գավառները, ապա դեպի հյուսիս-արևմուտք՝ Տրապիզոնի վիլայեթի Գյումուշխանեի գավառը և ուղիղ գծով հյուսիս՝ մինչև Տրապիզոնի նավահանգիստը<sup>328</sup>: Նույնիսկ անզեն աչքով է տեսանելի, որ եթե անգամ Կարսի մարզի մնացած գավառները (Կարս, Կաղզվան) և Երգրումի վիլայեթի մյուս տարածքները (Երգրում, Ղերջան, Երզնկա և այլն) մաս կազմեին Հայաստանին, ապա միևնույն է, վերջինս զրկված էր լինելու ծովային ելքից: Սակայն, չնայած այս բոլորին, քանի որ հիմնական իրադարձությունները տեղի են ունեցել Արդահանի շուրջը, մենք գլխավորապես կենտրոնանանք այս խնդրի վրա:

Ցանկացած վիճելի տարածքի նկատմամբ դրսևորվող հավակնությունների հիմքում հիմնականում ընկած է տվյալ պետության ռազմավարական շահը, սակայն կողմերը, որպես կանոն, աշխատում են այդ հավակնությունները հիմնավորել պատմական իրավունքի կամ ազգագրական իրավիճակի փաստարկներով: Ուստի, պետք է համադրել հայ և վրաց պատմագրությունների տեսակետներն այս խնդրի շուրջ, վերլուծել դրանք և հասկանալ, թե ում օգտին են խոսում փաստերը:

Արդահանը Մեծ Հայքի Գուգարք նահանգի հիմնական ինը գավառներից (Զորովոր, Կողբովոր, Ծորովոր, Տաշիր, Թուեղը, Կանգարք, Կղարջը, Վերին Զավախը, Արտահան) մեկն է<sup>328</sup>: Արդահանի

\* Վրացիների այս պահանջներին ավելի խորությամբ կանդրադառնանք ընթացիկ շարադրանքում:

<sup>328</sup> Տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110: Տ. Սահակյանը թվարկում է Գուգարք նահանգի 16 գավառ: Տե՛ս **Սահակյան Տ.**, Գուգարք-Գողերձական տարածաշրջանի քաղաքական և հոգևոր-մշակութային ճակատագիրն ի սկզբանե մինչև 1980-ական թվականները, Երևան, 2004, էջ 6-7:

մասին հնագույն ժամանակաշրջանում առանձին տեղեկություններ գրեթե չկան, իետևաբար նրա պատմությունը հիմնականում դիտարկվում է Գուգարք նահանգի պատմության համատեքստում: Ք. ա. 2-րդ հազարամյակում Արդահանը ինչպես նաև Գուգարքի այլ գավառներ, հավանաբար մաս են կազմել այդ ժամանակաշրջանում գոյություն ունեցած հայկական հնագույն պետական կազմավորումներից Դայա-Դիառլիսին (Տայք) կամ Եթիունիին: Դետագայում Վանի թագավորության արքա Արգիշտի 1-ինը Ք. ա. 785-784 թթ. գրավում է Դիառլիսին և մի շարք այլ երկրներ: Երկանդունիների ժամանակաշրջանում՝ մոտավորապես Ք. ա. 3-րդ դարում, ծևավորվում է Գուգարքի բդեշխությունը, որի մեջ, բնականաբար, մտնում էր նաև Արդահանի տարածքը<sup>329</sup>:

Ք. ա. 3-2-րդ դարերում հայ և վրաց թագավորությունները պայքար են մղել Գուգարքի համար<sup>330</sup>: Ինչպես հայտնի է «Վրացական տարեգրության» (Հարտօնօս Ցեղազրյօն) մի տեղեկությամբ, Վրացիները Արտաշեսի դեմ պայքարում դուրս են բերել օսերին (ալաններին): Սկզբում վրաց-օսական ուժերը հաջողություն են արձանագրում՝ ներխուժելով Սոմիսիթ (Շայաստան) և Ցելի (Չլդըր) լճի շրջակայքուն գերի են վերցնում հայոց արքայազն Զարեհին: Սակայն շուտով Արտաշեսի որդիներ Արտավազդն ու Տիգրանը հայոց գորքով թուղթում հասնում են թշնամուն և ստիպում հաշտություն կնքել, որով գերությունից ազատվում է Զարեհը, և Գուգարքը անբողջությամբ վերադարձվում է Մեծ Շայքին<sup>331</sup>: Ինչպես հայտնի է, Ցելի կամ Չլդըր լիճը գտնվում է Արդահանի շրջանում:

Արտաշեսյանների և Արշակունիների կառավարման ժամանակաշրջանում Գուգարքը եղել է Շայաստանի կազմում՝ որպես հյուսիսային սահմանապահ բդեշխություն: Արշակունյաց հարստության

<sup>329</sup> Մանրամասն տես Մովսես Խորենացի, Շայոց պատմություն, Երևան, 1981, էջ 154:

<sup>330</sup> Մանրամասն տես Ստրաբոն, Օտար աղբյուրները հայերի մասին, հ. 1, Երևան, 1940, էջ 54-55:

<sup>331</sup> Տես յարտցւող մաժօանց, Ը. 1, տօնօնօս, 1955, զշ. 48-49 (Վրացական տարեգրություն, հ. 1, Թբիլիսի, 1955, էջ 48-49):

կործանումից հետո Գուգարքի բդեշխությունը միացվում է Սասանյան Պարսկաստանից կախյալ վրաց թագավորությանը (մարզպանությանը):

Արաբներն իրենց տիրապետության ժամանակաշրջանում հիմնականում պահպանեցին Սասանյանների վարչական բաժանումը, որի հետևանքով Գուգարքը Վիրքի մարզպանության կազմում մտավ Երկրորդ Արմինիայի մեջ:

Բագրատունիների կառավարման շրջանը վճռորոշ ժամանակահատված է Արդահանի պատկանելիության շուրջ հայ-վրացական վեճի առումով, և քանի որ, այս ընթացքում թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում իշխում էին Բագրատունիները, հետևաբար հայ և վրաց պատմագրության մեջ տարածքային վեճն անուղղակիորեն վերածվում է Բագրատունինների ծագումնաբանության վեճի, այն է՝ նրանք հայկակա՞ն, թե՞ վրացական ծագում ունեն, որով և հեշտ կլինի հիմնավորել Արդահանի և այլ վիճելի տարածքների պատկանելիության հարցը:

Պատմական աղբյուրներում հիշատակվում է Բագրատունիների հրեական ծագման մասին: Սակայն հայկական պատմական ավանդությունը Բագրատունիներին համարում է Հայկ նահապետի, իսկ վրացական ավանդությունը՝ վրաց Փառնավազյան արքայատոհմի սերունդներից<sup>332</sup>:

Ըստ Էռլյան, Բագրատունիները հայ քաղաքական կյանքուն նշանակալի դերակատարում են ունեցել առնվազն Ք. ա 3-րդ դարից սկսած<sup>333</sup>, իսկ համաձայն վրաց պատմագրության՝ Վրաստանի քաղաքական արենայում նրանք հանդես են եկել միայն 6-րդ դարում<sup>334</sup>, այստեղից կարելի է եզրակացնել, որ Բագրատունիների հայկական ծագումն ավելի հավաստի է:

<sup>332</sup> См. Грузия и европейские страны: Очерки истории взаимоотношений XIII-XIX века, Москва, 2005, том 2, стр. 827.

<sup>333</sup> Սամրանասին տես Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 148-151:

<sup>334</sup> См. Сумбат Давитис-Дзе, История и повествование о Баградионах, пер., введ. и примеч. М. Д. Лордкипанидзе, Тбилиси, 1979, стр. 14.

Խորհրդային պատմաբան Վ. Ստեպանենկոն, տուրք տալով վրաց պատմագրության վարկածներին, նշում է, որ Տառ-Կլարջեթի (Տայք-Կղարջը) իշխանապետության մեջ մտնում էին Կլարջեթին (Կղարջը), Շավշեթին (Շավշը), Խսպիրը (Սպեր), (այլ աղբյուրներում նաև Թորթումը և Բաբերդը), Տառն (Տայք) և Քուրի Վերին հոսանքներում՝ Կոլան (Կող), Արդահանը, Սամցիսեն և Զավախնեթին (Զավախը)<sup>335</sup>: Պարզից էլ պարզ է, որ այս փաստը չի հանապատասխանում պատմական իրականությանը, քանի որ Տայքը և Կղարջը եղել են առանձին իշխանապետություններ, իսկ Արդահանը հայ Բագրատունիների թագավորության մաս է կազմել<sup>336</sup>:

Սպեր գավառը եղել է Բագրատունիների ժառանգական տիրութը<sup>337</sup>: Այն Բարձր Հայքի գավառներից մեկն էր<sup>338</sup>, որը հետագայում մտավ Երզրումի վիլայեթի մեջ: Առաջին հայացքից թվում է, թե վրաց պատմագրությունը Սպերը տեղադրում է Տառ-Կլարջեթի թագավորության կազմում՝ Ելճելով նրա՝ որպես Բագրատունիների ժառանգական տիրության լինելու հանգամանքից: Սակայն Երզրումի նահանգի՝ Օլքին հարակից Սպերի, Թորթումի և Բաբերդի գավառների նկատմամբ վրաց հավակնությունները հեռուն տանող նպատակներ են հետապնդում, որին արդեն անդրադարձել ենք:

Անիի Բագրատունիների անկումից հետո Արդահանը գտնվել է տարբեր տիրապետությունների ներքո: 1578 թ. այն գրավում են թուրքերը և մտցնում Չլդրի վիլայեթի մեջ: Ըստ «Գյուրջիստանի վիլայեթի մեջ դավաթարի»՝ վերջինս ունեցել է 9 գավառ՝ լիվա, որոնցից էին Մեծ Արտահանի և Օլքի գավառները<sup>339</sup>: Մեծ Արտահանի

<sup>335</sup> Այս մասին և Տառ-Կլարջեթին առնչվող այլ մանրանասները տես՝ Степаненко В. П., Политическая обстановка в Закавказье в первой половине XI в., Свердловск, 1975, стр. 124-131:

<sup>336</sup> Սանրաման տես՝ Եղիազարյան Ա., Դայք Բագրատունիների տերությունը, (885-908 թթ.), Երևան, 2011:

<sup>337</sup> См. Джанашия С. Н., Об одном примере искажения исторической правды, Тбилиси, 1946, стр. 19-20.

<sup>338</sup> Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 57:

<sup>339</sup> Տես ցուցրչօւժանու զօլացոյթօն գուգո գազուարո, ֆիցնո 2, տօնուածո, 1941, 83-7 (Գյուրջիստանի վիլայեթի մեջ դավաթարը, գիրք 2, Թբիլիսի, 1941, էջ 7):

գավառում հայերը բացարձակ մեծամասնություն են կազմել: Այն-տեղ գտնվող Փարականի բերդի հարկ վճարողների ցուցակներում հիշատակվում են Սկրտիչ Անտոնի, Խաչատուր Ասվատուրի, Մելիք, նրա եղբայր Կիրակոս, Գրիգորի թոռ, Հայրապետի թոռ, Վարդան Տղապարոնի անունները, Դուդունա գյուղում՝ Տեր Հակոբ, Խաչիկ, Մարգար և հայկական այլ անուններ<sup>340</sup>:

Թուրքական տիրապետությունը Արդահանում տևեց մինչև 1878 թ., երբ Սան-Ստեֆանոյի պայմանագրով այն անցավ Ռուսաստանին և մաս կազմեց Կարսի մարզին: Արդահանի գավառը բաղկացած էր չորս ոստիկանական տեղամասերից՝ հյուսիսում՝ Փոցխովի տեղամասը՝ Դիգուր կենտրոնով, կենտրոնում՝ Արդահանի տեղամասը՝ Արդահան կենտրոնով, արևելքում՝ Չլդըրի տեղամասը՝ Զուրգունա կենտրոնով, և հարավ-արևմուտքում՝ Գյուլի (Կող, Կոլա) տեղամասը՝ Օկամ կենտրոնով<sup>341</sup>: Կարսի մարզը, այդ թվում՝ նաև Արդահանը, վերստին Թուրքիային անցան 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, իսկ հունիսի 4-ին կնքված Բաբունի պայմանագրով Արդահանը կրկին ամրագրվեց Թուրքիայի կազմում:

Ահա այսպիսին էր Արդահանի գավառի և նրա նկատմամբ հայերի ու վրացիների ունեցած հավակնությունների պատճական հիմնավորումների համառոտ նկարագրը, երբ ծևավորվեցին Հայատանի և Վրաստանի առաջին հանրապետությունները, և Արդահանը դարձավ այս նորաստեղծ հանրապետությունների տարածքային վեճի առարկաններից մեկը:

Հայաստանի առաջին հանրապետության գոյության ընթացքում վրացական հավակնություններն Արդահանի նկատմամբ դրսեւրպեցին 1918 թ. դեկտեմբերին: Այդ ժամանակ Վրաստանի ոչ պաշտոնական ներկայացուցիչներ Զուրաբ Ավալովը (Ավալաշվիլի) և Դավիթ Գամբաշիձեն Լոնդոնում շրջանառության մեջ դրեցին փաստաթղթեր, որոնցում սահմանում էին Վրաստանի Հանրապետության տարածքները, ներառյալ այն շրջանները, որոնք դեռևս իրենց կա-

<sup>340</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 403:

<sup>341</sup> Տե՛ս Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 4:

ռավարության իրավասության տակ չէին մտնում, այդ թվում՝ նաև Օլքին և Արդահանը: Նրանք մերժում էին Հայաստանի իրավունքը Կարսի մարզի հյուսիսային կեսի նկատմամբ<sup>342</sup>: 1919 թ. մարտին Վրաց պաշտոնական ներկայացուցիչներ Նիկոլայ Զիսեհծեն և Իրակ-լի Շերեթելին Կ.Պոլսից հասան Փարիզ և մարտի 14-ին Հաշտության վեհաժողովին ներկայացրին Վրաստանի նախնական հուշագիրը, որով թվարկում էին Վրաստանի տարածքները՝ Թիֆլիսի, Քութայիսի և Բաթումի նահանգներն ամբողջությամբ, Սուխումի, Զաքարալայի, Օլքին և Արդահանի շրջանները և Տրապիզոնի վիլայեթի մի ընդարձակ մասը (ներառյալ Լազիստանը)<sup>343</sup>: Մինչ այդ՝ փետրվարի 12-ին, հայկական զույգ պատվիրակությունների ղեկավարներ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան Փարիզի խաղաղության վեհաժողովին էին ներկայացրել հայկական պահանջները, որոնցում մասնավորապես նշվում էր, որ մեծ Հայաստանի կազմի մեջ պետք է մտնի, բացի արևմտահայկական նահանգներից, նաև Կովկասի հայկական հանրապետության ամբողջ տարածքը, որը պարունակում է Երևանի ամբողջ գավառը, նախկին Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավարևմտյան մասը, Կարսի մարզը՝ բացի Արդահանից հյուսիս ընկած շրջանից<sup>344</sup>: Ինչպես տեսնում ենք, Կարսի մարզի հյուսիսային երկու գավառներին՝ Օլքին և Արդահանին, հավակնում էին Վրացիները, իսկ հայերը՝ ամբողջ մարզին՝ բացի Արդահանի գավառում Կուրից հյուսիս ընկած հատվածից (Արդահանի տեղանասի հյուսիսային մասը և Փոցխովի տեղամասը): Անտեղի չէ այստեղ նշել, որ մինչև Առաջին աշխարհամարտը Կարսի մարզը՝ իր չորս գավառներով՝ Կարս, Կաղզվան, Օլքի և Արդահան, ունեցել է 404 հազ. բնակիչ, որից 123170-ը՝ հայ, 4226-ը՝ Վրացի, 102860-ը՝ թուրք-բաթար, 54931-ը՝ քուրդ, 118000-ը՝

<sup>342</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն: Առաջին տարին, 1918-1919, հ. I, Երևան, 2005, էջ 312:

<sup>343</sup> Ըմ. Օվաննիսյան Ր., յկազ. բաժ., ստուգ. 73.

<sup>344</sup> Տե՛ս Դագարյան Յ., նշվ. աշխ., գիրք առաջին, էջ 231, 253:

ռուսներ, հույներ, բոշաներ, դարափակախներ և այլն<sup>345</sup>: Առավել հայաշատ էին Կարսի և Կաղզվանի գավառները՝ համապատասխանաբար 81 հզ. և 35 հզ. հայ<sup>346</sup>: Բերված թվերը ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայերը մարզում կազմել են հարաբերական մեծամասնություն:

Սակայն թե՛ Յայաստանի, թե՛ Վրաստանի համար դեռ վաղ էր Երազել տիրանալ Կարսի մարզում իրենց հավակնած տարածքներին: Ի դեպ նշենք, որ դեռևս Տրապիզոնի խորհրդաժողովում 1918 թ. մարտին, ինչպես գրում է Յ. Քաջազնունին, վրացիները շահագրգուված էին հատկապես Բաթումի հարցով և այն փրկելու համար պատրաստ էին թուրքերին զիջել Կարսն ու Արդահանը<sup>347</sup>: Իսկ երբ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ուժը կորցրեց, վրաց մենշևիկները նոր միայն հավակնություն ցուցաբերեցին Արդահանի նկատմամբ:

Ըստ Մուլդրոսի զինադադարի պայմանագրի 11-րդ հոդվածի՝ թուրքական զորքերն ստացել էին Անդրկովկասի մի մասից տարհանվելու իրաման, իսկ մնացած զորքերը կհեռացվեին, եթե տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեին այդպիսի պահանջ<sup>348</sup>: Իսկ այդ մնացած մասը, որտեղից թուրքերը չեն հեռացել, Կարսի մարզն էր և Բաթումի մարզի մի մասը<sup>349</sup>: Սակայն արդեն նոյեմբերի 11-ին Սիցերկրական ծովում բրիտանական ուժերի գլխավոր իրամանատար փոխծովակալ Գոֆֆալբրուոյը թուրքիայի մեջ վեցիր Ամերի Իզզեր փաշային ուղարկեց մի հաղորդագրություն, որով բրիտանական կառավարության անունից պահանջում էր զորքերը ետ քաշել ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանից այն կողմ, իսկ նոյեմբերի 24-ին Օսմանյան գլխավոր սպայակույտը տեղեկացավ, որ Կարսից, Արդահանից և

<sup>345</sup> Տես «Թորոսյան Շ.», Կարսի մարզի միացումը Յայաստանին և Արդահանի շուրջ հայ-վրացական տարակարժությունների սկզբնավորումը (1919թ. հունվար-ապրիլ), «21-րդ դար», թիվ 3, 2016, էջ 100:

<sup>346</sup> Տես «Հովհաննիսյան Ռ.», նշվ. աշխ., էջ 217:

<sup>347</sup> Տես «Քաջազնումի Յ.», նշվ. աշխ., էջ 19:

<sup>348</sup> Տես Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, նշվ. աշխ., էջ 538:

<sup>349</sup> Տես «Հովհաննիսյան Ռ.», նշվ. աշխ., էջ 217:

Բարումից թուրքական զորքերի դուրսբերումը պահանջող որոշումը ընդունվել է դաշնակիցների գերագույն ռազմական խորհրդի կողմից<sup>350</sup>:

Անգլիացի գեներալ-մայոր Զ. Թ. Ֆորեստիր-Ուոկերի վրա էր դրված արևմտյան Անդրկովկասից օսմանյան զորքերի դուրսբերման պատասխանատվությունը: Նա 1919 թ. հունվարի 7-ին նտավ Կարսի մարզ և իր գնացքում թուրքական հրամանատար Յակուբ Շաքի փաշային տվեց ցուցումներ, որոնցով նախավորապես նախատեսվում էր մինչև հունվարի 25-ը թուրքական զորքերը դուրս բերել Կարսից: Հաջորդ օրը՝ հունվարի 8-ին, Զ. Ֆորեստիր-Ուոկերը Ալեքսանդրապոլում համաձայնագրի կողմեց Յայաստանի արտօդրնախարար Սիրական Տիգրանյանի հետ, համաձայն որի, թեպետ Կարսում հաստատվելու էր անգլիական զինվորական նահանգապետություն, սակայն քաղաքացիական բոլոր պաշտոնյաները նշանակվելու էին Յայաստանի կառավարության կողմից<sup>351</sup>: Յայ պաշտոնյաները պետք է պատրաստ լինեին Կարս մեկնել հունվարի 12-ին<sup>352</sup>: Այս համաձայնագրի ստորագրումից հետո գեներալ Զ. Ֆորեստիր-Ուոկերը կապիտան Քլայվ Թեմփրլիին նշանակեց Կարսի զինվորական նահանգապետ, իսկ Յայաստանի կառավարությունը՝ Ստեփան Ղորջանյանին՝ որպես քաղաքացիական նահանգապետ<sup>353</sup>: Այս ամենից ելնելով՝ Յայաստանի Յանրապետության կառավարությունը հունվարի 14-ին ընդունեց Կարսի մարզը Յայաստանին միացնելու մասին որոշումը, ըստ որի՝ կազմակերպվում էին նահանգի և շրջանների քաղաքացիական վարչությունը, միլիցիան և ժանդարմերիան՝ 400 հոգուց բաղկացած և համապատասխան սպայական կազմով, երկարուղու Կարս-Ալեքսանդրապոլ գծի վար-

<sup>350</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 218:

<sup>351</sup> Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Կարսի խնդիրը և նրա շուրջ ծավալված պայքարը (1918 թ. դեկտեմբեր-1919 թ. ապրիլ), «Բանքեր Երևանի համալսարանի», Երևան, 2004, թիվ 3 (114), էջ 23:

<sup>352</sup> Տե՛ս Յայաստանի Յանրապետության պատշաճենութի միատերի արձանագրություններ: 1918-1920 թթ., Ա. Վիրաբյանի խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 147:

<sup>353</sup> Տե՛ս **Յովհաննիսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 220-223:

չությունն ու ծառայողների հաստիքացուցակը<sup>354</sup>: Սակայն Կարսի և Արդահանի մահմեդականները որոշել էին չին չինազանդվել: Թուրքական 9-րդ բանակի հրամանատար Յ. Շևքի փաշան հայտարարեց, որ ոչ վրացիները և ոչ էլ հայերը այդ տարածքին տիրանալու իրավունք չունեն, քանի որ, ըստ նրա, նրանցից որևէ մեկի Կարսի նահանգ մտնելուն կիետևեր բազմաթիվ անմեղ մարդկանց լիակատար ոչնչացումը<sup>355</sup>:

Դեռևս 1918 թ. նոյեմբերի 5-ին Կարսում՝ Յ. Շևքի փաշայի աջակցությամբ իրավիրված մարզի մահմեդական առաջնորդների համաժողովում, կազմվեց Կարսի մահմեդական խորհուրդը, իսկ դեկտեմբերին այն փոխարինվեց ազգային մահմեդական խորհուրդով (շուրա): Իսկ 1919 թ. հունվարի 17-18-ին Կարսում համաժողովի հավաքվեցին մահմեդականների 100-ից ավելի պատվիրակներ և հոչակեցին «Հարավարևմտյան կովկասյան հանրապետություն»՝ Կարս և «Արաքսյան հանրապետություն»՝ Նախիջևան կենտրոններով<sup>356</sup>, և կազմեցին այդ ինքնահօչակ «հանրապետության» ժամանակավոր կառավարություն՝ շուրա<sup>357</sup>: Կարսի շուրան տրամադրված էր անրապնդելու իր իշխանությունը և պաշտպանելու Թուրքիայի շահերը նահանգում: Եվ երբ Կարսի գինվորական նահանգապետ Թեմփրլին և քաղաքացիական նահանգապետ Ղորլանյանը նորանշանակ հայ պաշտոնյաների հետ բրիտանական մեկ հրաձգային վաշտի ուղեկցությամբ մեկնեցին Կարս, հարյուրավոր գինված մահմեդականներ փակեցին նրանց ճանապարհը՝ հայերից պահանջելով հեռանալ տարածքից: Տեսնելով մահմեդականների այս ընդվզումը՝ Թեմփրլին հրահանգեց հայ պաշտոնյաներին հեռանալ Կարսից և ոչ պաշտոնապես ճանաչեց մահմեդական շուրան<sup>358</sup>: Փաստորեն, բրի-

<sup>354</sup> Տես ՂԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 27, թ. 21:

<sup>355</sup> Տես Յովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 219:

<sup>356</sup> Մանրամասն տես Զոհրաբյան Է., Նախիջևանյան իմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Երևան, 2002:

<sup>357</sup> Տես Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ուլսաստանի հետ (1918-1920 թթ.), էջ 175:

<sup>358</sup> См. Завриев Д., К новейшей истории северо-восточных вилаетов Турции, Тбилиси, 1947, стр. 75.

տանական իրամանատարությունը կտրուկ փոխեց վերաբերնունքը շուրայի նկատմամբ և սկսեց համագործակցել վերջինիս հետ: Ավելին, Զ. Ֆորեստիր-Ուոլքերը հունվարի 21-ին ՀՀ արտգործնախարար Ս. Տիգրանյանին գրած նամակով ետ կանգնեց հունվարի 8-ին կնքված համաձայնագրից<sup>359</sup>: Այս կապակցությամբ Վրաստանում Հայաստանի պատվիրակության ղեկավար Մ. Զարությունյանը բողոքի նամակ է հղում Թիֆլիսում դաշնակիցների իրամանատարությանը, որում նշում է, որ գեներալ Զ. Ֆորեստիր-Ուոլքերը իրաժարվում է Կարսի նահանգում հայկական վարչություն հաստատել, որն անհրաժեշտ է: Հակառակ դեպքում մուսուլմանական ժողովորդի կողմից կարող են կատարվել ցավալի հետևանքներ ունեցող գործողություններ՝<sup>360</sup>:

Կարսի հարցում բրիտանական իրամանատարության հակահայքաղաքականությունն իր պատճառներն ուներ, որը սերտորեն առնչվում էր Ռուսաստանի հետ: Ծիշտ է, դաշնակիցներն ու Ռուսաստանի հարավի կամավորական բանակն ընդհանուր շահեր ունեին բոլշևիկների դեմ պայքարում, սակայն գեներալ Դենիկինի դեպի հարավ ծավալումն ու Ռուսական կայսրության վերականգննան ձգտումները չեն ներդաշնակվում Համաձայնության երկրների աշխարհաքաղաքական ընկալումներին: Եվ քանի որ հայերը համարվում են անուղղելի ռուսասերներ, ուստի, դաշնակիցների պատկերացմանք, տալ Հայաստանին որևէ տարածք, նույն է, թե տալ Ռուսաստանին: Սակայն Հայաստանի կառավարությունն ու խորհրդարանը շարունակում էին Կարսի մարզը Հայաստանին միացնելու քաղաքականությունը և այդ կապակցությամբ տարբեր որոշումներ ու օրենքներ էին ընդունում: Օրինակ՝ 1919 թ. փետրվարի 4-ին խորհրդարանը քննարկում և ընդունում է «Կարսի մարզում երեք հաշտարար և երեք քննիչ բաժանմունք բանալու մասին» օրենքը, ըստ որի՝ բացվում են Կարսի, Կաղզվանի և Արդահան-Օլթու հաշտարար և քննիչ բաժանմունքները՝ համապատասխանաբար Կարս,

<sup>359</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 200, գ. 1, զ. 92, մաս I, թ. 77ա:

<sup>360</sup> Տե՛ս նույն տեղում, զ. 150, թ. 183ա:

Կաղզվան և Արդահան քաղաքներում<sup>361</sup>: Այս ամենը դրությունը չփրկեց:

Ստեղծված իրավիճակից հնտորեն օգտվեցին թուրքերը: Վերջիններս փորձեցին Բաթումի և Կարսի նահանգների նկատմամբ գեներալ Ղենիկինի ձգտումները հակադրել Անգլիայի հակառուսական քաղաքականությանը: Թուրքերը խորանակորեն հայտարարեցին, որ եթե Կարսի նահանգում թուրքական իշխանություն չի լինելու, ապա իրենք կը նդունեն միայն ռուսական իշխանությունը<sup>362</sup>:

Փաստորեն, ստեղծվել էր մի բացարիկ իրավիճակ, երբ թուրքուսական շահերը համընկնում էին, իսկ անգլիացիները, տուրք տալով իրենց բնորոշ ռուսատյացությանը, ականա ջուր էին լցնում թուրքերի ջրաղացին, որի արդյունքում տուժում էր նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը: Սակայն թուրքերի՝ անգլիական զինվորական իշխանություններին չենթարկվելու կամայական վարքագիծը, ինչպես նաև բացահայտ շեշտադրված ռուսահրությունն ի վերջո սթափեցրին անգլիացիներին, և վերջիններս արդեն մարտի վերջին վերստին որդեգրեցին Կարսի մարզը Հայաստանին հանձնելու քաղաքականությունը:

Բայց մինչ դրան անդրադառնալը քննարկենք Կարսի մարզի նկատմամբ Վրաստանի հավակնությունների հարցը: 1919 թ. հունվարի կեսերին, երբ անգլիացիների աջակցությամբ նախապատրաստվում էին Կարսի մարզում հայկական վարչություն հաստատելու գործողությունները, գեներալ Ֆորեստիր-Ուոկերը, տուրք տալով Վրաստանի հավակնություններին, հայտարարեց, թե որևէ արգելք չի տեսնում վրացիների կողմից Փոցխովը գրավելու դեմ, բայց երբ գեներալ Կվինիտաձեի վրացական զորքերը ձեռնամուխ եղան այդ տեղամասի գրավմանը, դա առաջացրեց մահմեդականների զինված դիմադրությունը, և Կարսի նահանգապետը հայտարարեց, որ վրա-

<sup>361</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 198, գ. 1, գ. 15, թ. 105:

<sup>362</sup> Ըմ. **Деникин А. И.**, Очерки русской смуты, в 3 книгах, книга 3, т. 4, т. 5, вооруженные силы Юга России, Москва 2003, стр. 211.

ցիների հարձակումը կդիտվի հարձակում ուղղված Մեծ Բրիտանիայի դեմ<sup>363</sup>:

Պետք է նշել, որ վրացիների կողմից Փոցխովի տեղամասը գրավելու Ուոլկերի համաձայնությունը տեղափորվում էր հայկական զույգ պատվիրակությունների կողմից Փարիզի վեհաժողովին Աերկայացված տարածքային պահանջների տրամաբանության մեջ, սակայն անգլիացիների դիրքորոշման կտրուկ փոփոխությունը և վրացիներին Արդահանի գավառի Փոցխովի տեղամասի գրավումն արգելելը, ըստ Էռլիքյան, բխում էին նույն թուրքասիրության գործոնից: Բացի դրանից՝ կար նաև այլ հանգամանք. անգլիացիները, Ելնելով նրանից, որ հայերը չեն հավակնում Արդահանի գավառի հյուսիսարևմտյան հատվածին (Արդահանի տեղամասի՝ Արդահան քաղաքից հյուսիս ընկած տարածքը և Փոցխովի տեղամասը), մտադիր էին առավելապես մուսուլմանաբնակ այդ տարածքը միացնել Բաթումի մարզին: Այդ է վկայում նաև ՀՅ արտգործնախարար Սիրական Տիգրանյանի՝ 1919 թ. հունվարի 13-ի նամակը Փարիզում ՀՅ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին, որտեղ մասնավորապես կարդում ենք. «...Կարսի ողջ նահանգը (անգլիացիներ- Շ. Թ.) Հայաստանի բաժին են համարում, և միայն արևմտյան զուտ մուսուլմանաբնակ մասը հնարավոր են գտնում զատելու (և կցելու Բաթումին)...»<sup>364</sup>: Այստեղ արժի հիշատակել, որ անգլիացիները Բաթումի մարզում մինչև այն Վրաստանին հանձնելը չթույլատրեցին վրացական վարչություն հաստատել: Դա պայմանավորված էր Բաթումի ռազմավարական նշանակությամբ, որը բրիտանական հրամանատարությունը շատ էր կարևորում: Բաթումի մարզի հետ կապված՝ անգլիացիները, ինչպես արդեն նշել ենք, հեռուն գնացող նպատակներ ունեին: Այս կապակցությամբ ՀՅ արտգործնախարար Ս. Տիգրանյանի վերը նշված նամակում կարդում ենք հետևյալը. «...Ամբողջ նահանգում (Կարսի – Շ. Թ.), ընդունում են (անգլիացիները – Շ. Թ.), որ լինի մեր աղմինիստրացիան, Հայաս-

<sup>363</sup> Ըմ. տաճ աշ, ստ. 212.

<sup>364</sup> ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բուստոն, թիվ 4063, նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 193, մաս I, թ. 26, նաև՝ նույն տեղում, գ. 2, գ. 65, թ. 3:

տանի ներքին գործերի մինիստրից կարգված, և մեր ժամդարմերիան մեր զորական մինիստրությունից կախված. այս բոլորը չի լինելու Բաթումի նահանգում Վրաստանի նկատմամբ: ...Բաթումի նահանգում միակ տերն ու տնօրենը նույն շրջանի բրիտանական զորական կառավարիչն է՝ առանց վրաց կառավարության որևէ միջամտությամբ...»<sup>365</sup>:

Փոխտվի՝ գրավումը հիմնավորելու և անգլիացիների մոտ արդարանալու նպատակով վրացիները դիմեցին հայերին զրպարտելու հին ու փորձված մեթոդին՝ վերջիններիս ներկայացնելով իրեն մոլի ռուսասերներ, նաև քաջ գիտակցելով, որ դա անգլիացիներին հայերի դեմ տրամադրելու արդյունավետ միջոց կարող է լինել: Ստորև բերված փաստաթղթերում անգլիացիների քաղաքականության վերլուծությունը ակնհայտ է դարձնում վրացիների վերոնշյալ վարքագի իսկությունը: 1919 թ. հունվարի 13-ին Խատիսյանի կողմից Փարիզ՝ Ա. Ահարոնյանին հղված նամակից տեղեկանում ենք, որ վերջինիս և գեներալ Ֆորեստիր-Ուոկերի միջև Ալեքսանդրապոլում տեղի ունեցած հանդիպման ժամանակ անգլիացի գեներալը հետաքրքրվել է, թե «արդյոք ճի՞շտ է, որ Յայաստանի կառավարությունը համաձայնության է Եկել գեներալ Դենիկինի հետ («Կամավորական բանակ») Վրաստանի անկախությունը ճնշելու... Ես իհարկե համգուտացրի անգլիացի գեներալին, որ թեև մենք լավագույն հարաբերություններ ունենք «Կամավորական բանակի» հետ, բայց ոչ մի համաձայնություն չունենք... Եվ լիովին հարգել ենք և հարգում ենք Վրաստանի անկախությունը, Վրաց կառավարությունն էր, որը ոտնահարեց անկախ Յայաստանի տերիտորիալ իրավունքները Ախալքալաքում ու Բորչալուում, զորական ուժով գրավելով այդ երկրները և հարկադրելով իրեն հպատակվել դրանց հայ բնակչությանը, որը Յայաստանի քաղաքացի է ուզում լինել ու մնալ...»<sup>366</sup>:

1919 թ. փետրվարի 9-ին Թիֆլիսի հայկական դիվանագիտական առաքելության խորհրդական Թումանովի՝ ՀՀ արտգործնախարար Ս. Տիգրանյանին գրած նամակում կարդում ենք. «...Վրացա-

<sup>365</sup> ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, թիվ 4063:

<sup>366</sup> ՀԱԱ, ֆ 200, ց. 2, գ. 65, թ. 1, նաև՝ ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063:

կան շրջանակներն աշխատում են անգլիացիներին համոզել, որ հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և անբավական են անգլիական քաղաքականությունից...»<sup>367</sup>: Թիֆլիսից Ս. Տիգրանյանին ուղարկված 1919 թ.-ի հունվարի 27-ի թվագիր մեկ այլ գեկուցագրում նշված է. «...Վրացիները ձգտում են համոզել անգլիացիներին, որ Հայաստանը միայն երազում է Ռուսաստանի հետ վերամիավորվելու մասին: Մրանից երեք օր առաջ Վրաստանի կառավարության անդամներից մեկն ինձ հավաստիացրեց, որ օրերս Երևանում դաշնակցության ժողովի ժամանակ առաջ է քաշվել քաղաքական բնույթի մի բանաձև, որով պահանջվել է անդրկովկասյան Հայաստանի վերամիավորումը միասնական Ռուսաստանին...»<sup>368</sup>: Չնայած նրան, որ այս գրպարտությունները չնպաստեցին Արդահանի գավառի նկատմամբ վրացիների հավակնությունների կենսագործմանը, սակայն ավելի խորացրին բրիտանական կառավարության կասկածները հայերի ռուսասիրության հարցում և բացասական ազդեցություն ունեցան Կարսի մարզը հայերին հանձնելու գործում:

Օգտվելով անգլիացիների բացահայտ աջակցությունից (Արևմտյան Անդրկովկասի բրիտանական գինվորական կառավարիչ Ֆորեստիր-Ռուկերի և Կարսի մարզի բրիտանական գինվորական նահանգապետ Ք. Թենփոլիի հստակ թուրքամետ գործողություններից՝ 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին Հարավարևմտյան կովկասյան կառավարությունը (Չուրա) կարողացավ ուժ հավաքել և հղորանալ: Վերջինս նույնիսկ սկսեց ուսնձգություններ իրականացնել հարևան տարածքների նկատմամբ: Եվ եթե հունվար ամսին վրացիներն էին ձգտում գրավել Արդահանը, ապա արդեն փետրվարի սկզբին շուրան իր գործակալական ցանցով ապստամբություններ իրակից Ախալքալաքի ու Ախալցխայի գավառների մահմեդականների շրջանում և աջակցելով նրանց՝ այդ գավառներից վտարեց վրացական կայազորերը՝ տարածաշրջանում հաստատելով իր տիրապետությունը (1919 թ. հունվարին հայ-վրացական հաշտության խորհրդաժողովում դաշնակիցների ճնշման ներքո Ախալքալա-

<sup>367</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 181, մաս I, թ. 36:

<sup>368</sup> Նույն տեղում, գ. 193, մաս I, թ. 35, երես II:

քի գավառը անցել էր Վրաստանին): Բարձի ինֆորմացիոն բյուրոյի նախագահ Ա. Մալխազովի՝ 1919 թ. փետրվարի 7-ի թվակիր գեկույցում կարդում ենք հետևյալը. «...Ներկայումս ծևավորվել է իրեն «Հարավարևմտյան» կոչող նոր կառավարություն, որը ներառում է Ղարսի, Բաթումի և Արդահանի գավառները և հավակնում է Ախալցիսայի վրա: Հաստատվում է, որ այդ կառավարությանը գաղտնի աջակցություն է ցուցաբերում անգլիական կառավարությունը: Դրա նպատակն է անմիջական սպառնալիքի ստեղծումը Վրաստանին, որտեղ Ախալցիսայում արդեն բախումներ են տեղի ունենում, և լիակատար կախվածության մեջ դնել նրան դաշնակիցներից, ինչպես Հայաստանին և Աղրբեջանին»<sup>369</sup>:

Ինչպես տեսնում ենք, անգլիացիների թողտվության և շուրայի ագրեսիվ վարքագծի արդյունքում Վրաստանը ևս կանգնեց լուրջ խնդիրների առջև: Այդ էր պատճառը, որ Վրաստանն աջակցեց Հայաստանին՝ պայքարի մեջ մտնելով հարևանությանը ծևավորված նոր թշնամական պետականատիպ կազմավորման հետ: Վրաստանի վարչապետ Նոյ ժորդանիան սուր քննադատության ենթարկեց բրիտանական քաղաքականությունը, որը պատճառ դարձավ վրացական տարածքում խռովությունների տարածմանը: Դեռ ավելին, ժորդանիան վրդովեցուցիչ է համարում Ֆորեստի-Ուլկերի հանդուրժողականությունը Կարսի մահմեդական խայտառակ շուրայի նկատմանը, մի նահանգի, որն իրավացիորեն և ի բնե հայկական էր<sup>370</sup>: Վրաստանի ղեկավարության այս դիրքորոշումն իր արտացոլումը գտավ վրացական մամուլում: Թերթերը հատկապես դրական էին վերաբերվում այն հանգամանքին, որ հայերը իրենց ուշադրությունը հյուսիսից տեղափոխել են արևմտսք՝ դեպի Կարս և Թուրքահայաստան՝ պատճականորեն ճիշտ և բնական ուղղությամբ: Միաժամանակ վրացական վերլուծաբանները, պաշտպանելով Հայաստանի հավակնությունները Կարսի մարզի նկատմանը, հայտարարուն էին մարզի հյուսիսային շրջանների, մասնավորապես Արդահանի

<sup>369</sup> Նույն տեղում, ֆ. 223, գ. 1, գ. 75, թ. 21:

<sup>370</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 230:

գավառի նկատմամբ Վրաստանի իրավունքի մասին<sup>371</sup>: Սա վրացիների ավանդական քաղաքականությունն էր. շեղել Յայաստանը հայ-վրացական վիճելի տարածքների նկատմամբ հավակնություններից (Զավախք, Լոռի), ուղղորդել վերջինիս դեպի արևմուտք՝ Թուրքահայաստան՝ հիմնավորելով, թե Անտանտի տերությունները Փարիզի վեհաժողովում թուրքահայկական վիլայեթների հաշվին մեծ Յայաստան են ստեղծելու, հետևաբար Յայաստանը տարածքների կարիք չի ունենա: Բայց երբ խոսքը գնում էր դեպի Սև ծով Յայաստանին կենսականորեն այնքան անհրաժեշտ ելքի մասին, ապա վրացիները հնարավոր ու անհնարին բոլոր խոչընդուները հարուցում էին՝ ծովային ելքից հայերին գրկելու համար: Նախորդ գլուխներում այս խնդրին հանգամանորեն անդրադարձել ենք:

Կարսի շուրայի լկտի ու ամբարտավան պահվածքը, ինչպես վերևում նշեցինք, լցուց անգիտացիների համբերության բաժակը, և 1919 թ. մարտի 2-ին Կարսի բրիտանական զինվորական նոր նահանգապետ նշանակված գեներալ Վերնի Ասսերը ծեռնամուխ եղավ շուրայի սանձերը քաշելուն: Սակայն շուրան լիովին անկառավարելի էր դարձել, և Կարսից այդ մասին հավաստող զեկուցագրերը համոզեցին Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնին, որ հայկական և վրացական զորքերին պետք է արտոնել՝ Կարսում տեղակայված անգլիական 27-րդ զորաբաժնի աջակցությամբ գրավելու նարզը: Մարտի 14-ին Թոմսոնը հրավիրում է հայ և վրաց պաշտոնատար անձանց՝ վերջիներիս ծանոթացնելու իր տեսակետին և համոզելու երկու երկրներին՝ վերացնելու իրենց տարածայնությունները: Ըստ նրա առաջարկի՝ Յայաստանին պետք է անցնեն Կարսի և Կաղզվանի շրջանները, Վրաստանին՝ Արդահանի հյուսիսային կեսը, իսկ Օլթի գավառը և Արդահանի մնացած մասը պետք է անցներ Բաթումի բրիտանական զինվորական նահանգապետի կառավարմանը: Բացի սրանից՝ գեներալ Թոմսոնն առաջարկում էր նաև, որ Յայաստանը Վրաստանին զիջեր Ախալքա-

<sup>371</sup> См. Үրугадзе Г., Образование и консолидация Грузинской Демократической Республики, Forschung und Materialien, München, 1956, folge 1, с. 86-87.

լաքը և Լոռու հյուսիսային մասը, ներառյալ Ալավերդի գյուղն ու հանքերը, իսկ Վրաստանը ճանաչեր Յայաստանի իրավասությունը մնացյալ Լոռու վրա, ներառյալ Սանահին գյուղն ու կայարանը: Յայոց ներկայացուցիչները, իրապուրվելով Կարսի և Կաղզվանի գավառների վերաբերյալ առաջարկությունից, ոչ մի առարկություն չարեցին հյուսիսային Արդահանում վրացական կառավարման դեմ (հատկապես, որ այդ տարածքի նկատմամբ Յայաստանն ի սկզբանե հավակնություն չէր էլ ցուցաբերել), բայց հմտորեն շրջանցեցին Ախալքալաքի և Լոռու շուրջ վեճի՝ Թոնսոնի անընդունելի լուծումը<sup>372</sup>: Յայ-Վրացական վիճելի տարածքների հարցը, ըստ հայերի, պետք է լուծվեր Փարիզի վեհաժողովի շրջանակներում, եթե երկ-կողմ համաձայնություն ձեռք չբերվեր:

Գեներալ Թոնսոնը, ինչպես նաև նրա վերադաս, Սևծովյան բրիտանական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Միլնը, գտնում էին, որ շուրային կարգի հրավիրելու համար անհրաժեշտ էր ուժեղացնել Կարսի անգլիական կայազորը, սակայն դա հակասում էր բրիտանական կառավարության փետրվարի 15-ի որոշմանը, ըստ որի՝ Կարսից և այլ վայրերից, որոնք հեռու էին ընկած Բաթում-Թիֆլիս-Բաքու երկարուղուց, բրիտանական զորքերը պետք է ետ քաշվեին՝ հենց որ ավարտվեր թուրքական բանակի դուրսբերումը Կովկասից: Սակայն շուրայի խռովադար գործունեությունը և իթրիհատական հակվածությունը ստիպեցին Միլնին և Թոնսոնին ապրիլի 2-ին և 3-ին՝ Բաթումում երկարատև խորհրդակցությունից հետո, շուրան տապալելու որոշում կայացնել՝ թարմ զորքեր տեղակայելով Կարսում<sup>373</sup>: Ելնելով ընդունած որոշումից՝ գեներալ Թոնսոնը ապրիլի 10-ին հայտարարեց Յարավարևմտյան կովկասյան ժամանակավոր կառավարության լուծարման մասին: Ապրիլի 12-ին գեներալ Ասսերին փոխարինած գնդապետ Պրեստոնը, մասնակցելով շուրայի հերթական նիստին, ձերբակալեց նրա ղեկավարներին և լուծա-

<sup>372</sup>Տե՛ս Յովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 232: Յայ-Վրացական տարածքային վեճերը ժամանակավորապես լուծելու Թոնսոնի առաջարկը տես նաև՝ Գ. Գալոյանի և Վ. Ղազախեցյանի կազմամբ, նշվ. աշխ., էջ 99: Այստեղ, սակայն, փաստաթուղթը թվագրված է ապրիլի 14-ով, որը հավանաբար վրիպակ է:

<sup>373</sup>Տե՛ս Յովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 233- 234:

րեց շուրամ<sup>374</sup>: Երեք ամսվա գոյությունից հետո Հարավարևմտյան կովկասյան հանրապետությունը խորտակվեց: Աղրբեջանը և Կոստանդնուպոլսի սուլթանական կառավարությունը դատապարտեցին շուրայի տապալումը, սակայն Վրաստանը ողջունեց վերջինիս վախճանը, մանավանդ որ այն Թիֆլիսի ձեռքից խլել էր Ախալքալաքի և Ախալցխայի նկատմամբ վերահսկողությունը: Եկել էր պատասխան հարված տալու ժամանակը, հատկապես, որ գեներալ Թոնսոնը Վրաստանին արտոնել էր մի փոքրաքանակ զորացուկատ Ախալցխայից մտցնել Արդահանի հյուսիսային մաս<sup>375</sup>:

Տարածաշրջանի բրիտանական զինվորական իշխանությունները վերջապես կայացրին Կարսի մարզը Հայաստանին հանձնելու արդարացի որոշումը: Ապրիլի 19-ին Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը և իր վարչությունը մտան Կարս: Երկու օր անց մարզ մտավ նաև գեներալ Հարություն Շովսեփյանի (Օսիպով) զորացուկատը, իսկ ապրիլի 24-ին վերջինս մուտք գործեց Կարս քաղաք<sup>376</sup>: Այս կարևոր իրադարձությունների ժամանակագրության հետ կապված՝ մեր պատմագրության մեջ կան որոշ տարակարծություններ: Ավելի հավաստի է պրոֆեսոր Գ. Պետրոսյանը, որը, հղում տալով արխիվային փաստաթղթերին, նշում է, որ հայկական զորքերը Կարս են մուտք գործել ապրիլի 23-ին, իսկ հայկական վարչությունը՝ հաջորդ օրը<sup>377</sup>: Փաստորեն, ապրիլի 23-24-ի դրությամբ, ողջ Կարսի մարզը միացավ Հայաստանին՝ բացառությամբ հյուսիսային Արդահանի և Օլթիի, որոնցից առաջինն անցավ Վրաստանին, իսկ երկրորդը գործնականում մնաց թուրքերի տիրապետության տակ, թեպետ անգլիացիները մինչև Կարսի մարզից հեռանալը մտադիր էին Օլթին միացնել Բաքումի մարզին:

<sup>374</sup> Տես նույն տեղում, էջ 239:

<sup>375</sup> Տես նույն տեղում, էջ 241:

<sup>376</sup> Տես նույն տեղում, էջ 242-243:

<sup>377</sup> Տես Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 195:

### **3.2. Արդահանի հարցը հայ-վրացական հարաբերություններում և խնդրի ժամանակավոր լուծումը (1919 թ. մայիս-դեկտեմբեր)**

Չնայած անգլիացիների կայացրած որոշմանը, այնուամենայնիվ, շարունակվում էին վրացիների անհիմն հավակնությունները Կարսի մարզի հյուսիսային գավառների նկատմամբ: Դաշվի առնելով, որ Արդահանի հյուսիսային հատվածը հիմնականում մուսուլմանաբնակ էր, Դայաստանը հրաժարվել էր գավառի այդ հատվածի նկատմամբ հավակնությունից, իսկ Վրաստանի հավակնություններն Արդահանի և Օլթի գավառների նկատմամբ միայն առաջին հայացքից էին տարակուսելի: Իրականում վերջինս, ձգտելով տիրանալ այդ գավառներին, ինչպես նաև Երզրումի նահանգի՝ Օլթին հարակից Թորթում, Սաեր և Բաբերդ գավառներին<sup>378</sup>, որոնց նկատմամբ վրացիներն անթաքույց նկրտումներ էին դրսևորում, կկարողանային Դայաստանը գրկել Տրապիզոնով, Լազիստանով կամ Բաթումով դեպի Սև ծով ելքի հնարավորությունից՝ նրան անբողջովին կոմունիկացիոն կախվածության մեջ գցելով: Ահա սա էր Վրաստանի գլխավոր նպատակը, ինչպես նաև Բարումից մինչև Տրապիզոն՝ Սև ծովի ափի մի պատկառելի հատվածին տիրանալը:

Այդ դժվարին իրավիճակում լրացուցիչ խնդիրներից խուսափելու նպատակով վարչապետ Ա. Խատիսյանը մեկնում է Թիֆլիս՝ Արդահանի գավառի հետ կապված հարցը հարթելու համար: Ինչպես գրում է վերջինս. «...Իմ Թիֆլիս երթալուն արդիւնքը այն եղաւ, որ վրացիներու հետ սահմանը գծուեցաւ հետեւեալ կերպով: Արտահ-

<sup>378</sup> Այս պահանջատիրությունը նույնքան «արդիական» էր կոմունիստ վրացիների շրջանում: Եթե 1945 թ. խոսվում էր Թուրքիայից արևմտահայկական որոշ տարածքներ վերադարձնելու մասին, վրաց կոմունիստ պատմաբանները հանդես եկան դրանց նկատմամբ հավակնություններով: Նրանցից ակադեմիկոսներ Ս. Զանաշշան և Ն. Բերձենիշվիլին հայտարարեցին, որ վրաց ժողովուրդը պետք է ետ ստանա իր պատմական հողերը՝ Արդահանի, Արտվինի, Օլթի, Թորթումի, Սաերի, Բաբերդի, Գյումիշխանեի և Արևելյան Լազիստանի շրջանները: Տե՛ս «Համանական գործություններ», 14 գցելություն, 1945 («Կոմմունիստ», Թիֆլիս, 14 դեկտեմբերի, 1945), նաև՝ «Պրավադա», Մոսկվա, 20 դեկաբրյա, 1945:

նի գաւառի հիւսիսային մասը, Արտահան քաղաքէն վերեւ, Բոսխով չայ գետի միւս կողմը կ'անցնէր Վրաստանին, իսկ ժամանակաւորապես Կարսի շրջանի արեւմտեան մասը, Մերրտենեկէն դէպի արեւնուտք, պիտի մնար անգլիական հրամանատարութեան տակ, իբրեւ շրջան մը, անմիջապէս սահմանակից Պաթումի նահանգին...»<sup>379</sup>: Արխիվային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ որոշվել է նաև, որ Արդահան քաղաքը ևս կիսվում է Կուր գետով. ձախափնյակը՝ հյուսիսային հատվածը՝ Վրաստանին, իսկ աջափնյակը՝ հարավային հատվածը՝ Հայաստանին: Արդահան քաղաքի հյուսիսային և հարավային հատվածներում վարչությունը պետք է լինի հայկական: Հյուսիսային Արդահանում վրաց կառավարությունն իրավունք է ստանում պահելու 50 հոգուց բաղկացած զորացուկատ՝ կարգուկանոն ապահովելու համար, իսկ հարավային Արդահանում հայերը կարող էին ունենալ 100 հոգիանոց ջոկատ<sup>380</sup>: Այս որոշումները, բնականաբար, ընդունվել էին անգլիացիների համաձայնությամբ:

Վրացական զորքերը ապրիլի 18-ին հարձակվում են Արդահան քաղաքի վրա: Արդահանի գրավման տեղեկատվությանը ծանոթանում ենք ռազմագործողությունն իրականացրած գեներալ Կվինիտաձեի ապրիլի 22-ի գեկուցագրից, որտեղ կարդում ենք. «Հակառակորդի ուժերին ապրիլի 18-ին և 19-ին իմ զորքերը մղեցին դեպի լեռնազանգվածի բարձունքները: Ապրիլի 20-ին՝ համառ հարձակումներից հետո, հակառակորդին շարտեցինք այդ բարձունքներից: Նահանջն այնքան հապճեաք էր, որ հակառակորդը չհասցրեց զբաղեցնել Կուրի ձախ ափին գտնվող Արդահանի ամրությունները: Նահանջի ընթացքում հակառակորդը այրել է Կուրի կամուրջները, չնայած մեզ հաջողվեց Ֆիխտելի մոտ գրավել մի կամուրջ: Դա հնարավորություն տվեց ուժերի մի մասը անցկացնելու Կուրի աջ ափը: Հակառակորդը նահանջեց Օլբի և Կարսի ուղղությամբ: Տեղացիների տեղեկություններով հակառակորդի ուժերը գլխավորում են Զեմալ-

<sup>379</sup> Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 156:

<sup>380</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ.275, գ. 5, գ. 138, թ. 59:

բեկ և Ռուման-Բեկ Խիմչիլսները»<sup>381</sup>: Ինչպես տեսնում ենք, ապրիլի 20-ին գրավելով Արդահանի հյուսիսային հատվածը՝ Վրացիներն արդեն իսկ խախտում են ձեռք բերված պայմանավորվածությունը և անցնելով Կուրի աջ ափը՝ գրավում են Արդահան քաղաքի հարավային հատվածը: Գեներալ Կվինիտաձեի ուղարկած վերոնշյալ հակիրծ հաղորդագրությանը, սակայն, նախորդել էին Արդահանի գրավմանն առնչվող մի շարք ռազմաքաղաքական իրադարձություններ, որոնց կանդրադառնանք ստորև:

Մինչ Վրաստանը կհասներ Արդահան, նախ պետք է գրավեր դեռևս 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Թուրքիային անցած, իսկ 1919 թ. հունվարից արդեն շուրջայի վերահսկողության տակ գտնվող Ախալցխան և Ախալքալաքը:

Սակայն, մինչ Ախալցխայի վրա հարձակվելը, բնականաբար, վրաց կառավարությունը պետք է համաձայնություն ստանար անգլիական հրամանատարությունից: Այդ համաձայնությունը ժորդանիան ստացավ 1919 թ. փետրվարի 23-ին Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Զ. Ֆորեստիր-Ուոկերի հետ գրույցում<sup>382</sup>: Ախալցխան և հարակից շրջանները թուրք-թաթարական տարրերից ազատելու գլխավոր հիմնավորումներից մեկը ժորդանիան համարում էր այն հանգամանքը, որ իր տեղեկություններով Կ. Պոլսում Ոհզա փաշայի նախագահությամբ ստեղծվել է մի կոմիտե, որն իր առջև խնդիր է դրել Թուրքիային կցել Վրաստանի բոլոր այն մարզերը, որոնք բնակեցված են մուսուլման վրացիներով<sup>383</sup>: Ի դեպ, այս մասին Վրաստանի կառավարության նախագահը հայտարարել էր նաև փետրվարի 18-ին Վրաստանի խորհրդարանի նիստում ունեցած իր ելույթում<sup>384</sup>:

Ախալցխայի վրա հարձակումը սկսվել էր 1919 թ. մարտի 5-ին: Երկու օր անց վրացական զորքը գրավում է քաղաքը, իսկ մարտի

<sup>381</sup> «Борьба», Тбилиси, 24 апреля, 1919, N 88 (344).

<sup>382</sup> Уabhängмынин төңү Демократическое правительство Грузии и английское командование, сост. С. Е. Сеф, «Красный архив», т. 6(25), Москва, 1927, стр. 98-103:

<sup>383</sup> См. там же, стр. 102.

<sup>384</sup> См. Жордания Н., За два года, Тбилиси, 1919, стр. 201.

12-ին հակառակորդի գինուժը՝ Սերվեր բեկի գլխավորությամբ, հեռանում է Ախալցխայի գավառի սահմաններից դեպի Փոցխով։ Վրացական զորախումբը՝ գեներալ Կվինիտաձեի գլխավորությամբ, մտնում է վերին Փոցխով։ Իսկ մարտի 21-ին վրացական մեկ այլ զորաջոկատ մտնում է Ախալքալաք<sup>385</sup>։ Բայց քանի որ Փոցխովի տեղամասը նաև էր կազմում Արդահանի գավառին, իսկ վրացիների կողմից Արդահանը գրավելուն անգլիացիները դեմ էին, ուստի վերջիններս Թիֆլիսից պահանջեցին դուրս հանել զորքերը Փոցխովից։ Վրաստանի կառավարությունը, ընկրկելով անգլիացիների առջև, գեներալ Կվինիտաձեից պահանջեց հեռանալ Փոցխովից։ Սակայն գեներալը, ըստ իր հուշերի, մերժել է այդ պահանջը նույնիսկ այն ժամանակ, երբ անգլիական հրամանատարության կողմից գեներալի մոտ գործուղված բրիտանական սպան սպառնալից տոնով հարցրել է. «Իսկ դուք չե՞ք համարում, որ պատերազմի մեջ մտնելով Անգլիայի հովանու տակ գտնվող Կովկասի հարավարևմտյան հանրապետության հետ՝ դրանով ձեռք եք բարձրացնում Անգլիայի վրա», որին ի պատճախան վրացի հրամանատարը իրավացիորեն հայտարարել է, որ այդպես չի համարում, քանի որ այդ նույն պետության հարձակումը Ախալցխայի և Ախալքալաքի գավառների վրա ստիպված պիտի լինի դիտարկել որպես Անգլիայի կողմից ձեռնարկված հարձակում<sup>386</sup>։

Գեներալ Կվինիտաձեն մի քանի օր ձգձգեց Փոցխովից զորքերի դուրսքերումը, և ինչպես նշել ենք վերևում, մարտի կեսերին բրիտանացիներն արդեն փոխեցին իրենց վերաբերմունքը շուրայի նկատմամբ, ինչը հնարավորություն տվեց գրավելու նաև Արդահանը։ Գեներալ Կվինիտաձեն կազմավորեց երկու զորաջոկատ՝ առաջինը՝ գեներալ Արտմելաձեի գլխավորությամբ՝ Ախալցխա-Արդահան, երկրորդը՝ գեներալ Սումբատաշվիլիի գլխավորությամբ՝ Ախալքալաք-Արդահան ուղղություններով։ Ինչպես վերևում նշեցինք, ապրիլի 18-ին վրացական զորքերը հարձակվում են Արդահանի վրա։ Ապրիլի 20-ին գեներալ Արտմելաձեն գրավում է Արդահան քա-

<sup>385</sup> Սանրամասն տես **Квинитадзе Г.**, սկզ. թագ., ստ. 94-103:

<sup>386</sup> Ըմ. տակ же, ստ. 107.

դաքը և փախչող թշնամու ետևից զորքերը շարժում է դեպի Գյոլի դաշտը (Կուրի վերին հոսանքները)<sup>387</sup>: Եվս մեկ անգամ համոզվում ենք, որ վրացիները խախտում են միայն Արդահանի տեղամասի հյուսիսային մասը և Փոցխովի տեղամասը գրավելու պայմանավորվածությունը և հասնում մինչև Գյոլ, իսկ ավելի առաջ չեն անցնում, որովհետև ինչպես գեներալ Կվինիտաձեն է նշում, Գյոլի դաշտի մյուս կողմում անգլիացիներն էին<sup>388</sup>:

Իսկ թե ինչու էր գեներալ Կվինիտաձեն երկու օր ուշացումով հղել Արդահանի գրավման մասին գեկուցագիրը, բացատրում է հենց ինքը՝ նշելով, որ խափանվել էր հեռախոսային կապը իր և գեներալ Արտմելաձեի միջև, և միայն ապրիլի 22-ին է Արդահանի ուղղության զորքերի գլխավոր հրամանատարը տեղեկացել քաղաքի գրավման մասին<sup>389</sup>:

Ինչպես տեսանք, Կարսի մարզի ճակատագիրը ի վերջո որոշվեց՝ այն հանձնելով Յայաստանին, մասանք նաև Վրաստանին: Սակայն Վրաստանը, խախտելով պայմանավորվածությունները, գրավել էր շատ ավելի տարածք, որը, բնականաբար, հարուցում էր հայերի և անգլիացիների դժգոհությունը: Այդ դժգոհություններն ավելի խորացան, երբ հայտնվեցին տեղական բնակչության նկատմամբ վրացական զինվորների լկտի և ամբարտավան վարքագծի մասին առաջին տեղեկությունները: Ապրիլի վերջին բրիտանական հրամանատարությունը պահանջեց վրացական կառավարությունից դուրս հանել զորքերը ապօրինաբար գրաված տարածքներից և որպես պատիժ՝ արգելեց հյուսիսային Արդահանում 50 հոգիանոց ջոկատը պահել, ինչին վրաց զինվորական նախարարը հավաստիացրեց անօրակելիորեն ենթարկվելու մասին: Սակայն Արդահանից շուրջ 30 կմ հեռավորության վրա գտնվող Մերդենեկից մի անգլիացի սպա հեռագրում էր, որ վրացական զորքերը առաջացել են մինչև քաղաքի մերձակայքը: Մայիսի 15-ին գեներալ Միլնը նորից թույլատրեց, որ հյուսիսային Արդահանում վրացական 50 հոգիանոց կայազոր

<sup>387</sup> См. там же, стр. 117-124.

<sup>388</sup> См. там же, стр. 124.

<sup>389</sup> См. там же, стр. 123.

պահվի, սակայն որոշումը կրկին չեղյալ համարեց, երբ նոր գեկուցագրեր ստացվեցին վրացի զինվորների «անամոք» գործողությունների մասին<sup>390</sup>: Արդահան քաղաքի հյուսիսային հատվածում վրացական կայազոր տեղակայելուն դեմ էր նաև Բաթումի բրիտանական նահանգապետ Կուկ-Կոլլիսը\*: Մայիսի 31-ին այս մասին Վրաստանի վարչապետին տեղեկացրեց գեներալ Կորին (վերջինս Կովկասում բրիտանական ուժերի հրամանատարի պաշտոնում փոխարինել էր գեներալ Թոմսոնին)՝ ավելացնելով, որ իր կողմից այնտեղ բրիտանական ուժեր ուղարկելուն պես վրացիները պետք է լրեն Արդահանը: Ժորդանիան փորձեց հակադրվել փորձված մեթոդով՝ մեջտեղ բերելով հայերին: Նա հայտնեց, որ տեղեկությունների համաձայն՝ Արդահանի հայկական հատվածից մի սպա է հայտնվել քաղաքի հյուսիսային մասում, որից էլ հետևություն է անուն, որ անգլիական հրամանատարությունը ցանկանում է քաղաքի հյուսիսային մասն էլ դնել հայերի տնօրինության տակ: Կորին պատասխանում է, որ բրիտանական զինուժի գալուվ՝ կվերանա նաև վրացական և հայկական զորամասերի տեղակայման անհրաժեշտությունը: Ժորդանիան ճարահատյալ փորձում է լուծել գոնե Փոցխովի հարցը՝ ասելով, թե վրացական կառավարությունը չի ցանկանում ո՛չ ռազմավարկան, ո՛չ էլ աշխարհագրական տեսանկյունից Փոցխովի շրջանը բաժանել Ախալցխայից: Գեներալ Կորին հավանություն է տալիս սրան<sup>391</sup>: Յյուսիսային Արդահանում վրացական կայազոր պահելու և նրա քանակի հետ կապված խնդիրները հետագայում ևս քազմից քննարկվեցին, որոնց մենք կանդրադառնանք հաջորդիվ:

Արդահանի գավառում վրացական զորքերի ապօրինությունների վերաբերյալ արխիվում պահպանվել են նի շարք փաստաթղթեր: 1919 թ. մայիսի 13-ին Կարսում հայկական զորքերի հրամանատար գեներալ Հովսեփյանը հեռագրում է Հայաստանի զինվորական նա-

<sup>390</sup>ՏԵ՛Ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 241

\* Կուկ-Կոլլիսը դեմ էր Արդահանի ամբողջ գավառում վրացական զորքերի տեղակայմանը, քանի որ նրանք ուսնձգություններ էին իրականացնում Արդինի և Բաթումի ուղղությամբ:

<sup>391</sup>См. Демократическое правительство Грузии и английское командование, сост. С. Е. Сеф, «Красный архив», т. 6(25), стр. 161-162.

խարարին. «Նորից ինձ դիմեցին Գյոլի տեղամասի մուսուլմանների ներկայացուցիչները մեր տերիտորիայի խաղաղ մուսուլման բնակչության նկատմամբ վրացիների պատճառած անօրինականություններից պաշտպանելու խնդրանքով։ Վրացական զորքերը գտնվում են Մերդենեկին մոտակա հետևյալ գյուղերում՝ Օկան, Խուա, Վարդինիս, Արփաշեն»<sup>392</sup>: Գեներալ Սիլիկյանը մայիսի 15-ին հեռագրում է հայկական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Նազարբեկյանին. «Մերդենեկի զորամասի հրամանատարը տեղեկացնում է, որ քրեական բողոքում են վրացիներից, որոնք գրավել են մեր տարածքի մի մասը և տեղաբաշխվել են Վարդինիս, Թելիօղլի, Կիրզիյան և Խուա գյուղերում, թալանում և ոչնչացնում են անասունները։ Բախումից խուսափելու համար խնդրում եմ վրացական զորքերը մեր տարածքից հանել դիվանագիտական ճանապարհով»<sup>393</sup>: Այս փաստաթթերից պարզ երևում է, որ անխուսափելի է դառնում հայ-վրացական բախումը Արդահանի գավառում, եթե վրացական զորքերը չդադարեցնեն բռնություններն ու չհեռանան ապօրինաբար գրավված տարածքներից։ Յայկական կողմը, բնականաբար, ձգտելու էր հարցը լուծել խաղաղ, դիվանագիտական ճանապարհով։ Մեր ձեռքի տակ եղած արխիվային փաստաթթերը հավաստում են դա։ Մայիսի 14-ին գեներալ Յովսեփյանը հեռագրում է Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցիչ L. Եվանգուլյանին՝ խնդրելով դիվանագիտական լուծում տալ հարցին<sup>394</sup>: Կարսի հայկական հրամանատարությունն այս խնդրով դիմում է նաև Կարսում անգլիական ներկայացուցչությանը։ Վերջինս մի սպա է ուղարկում վրացիների մոտ՝ հեռանալու առաջարկով, սակայն առանց դրական արդյունքի։ Մայիսի 15-ին Կարսից գեներալ Յովսեփյանը հեռագրում է վարչապետ Խատիսյանին՝ իրավանք նշելով, որ վրացիների նման վարմունքը խաթարում է մեր վարկանիշը<sup>395</sup>: Ինչ խոսք, գեներալ Յովսեփյանի մտահոգությունը շատ տեղին և հիմնավոր էր։ Եթե

<sup>392</sup> ՀԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 133, թ. 42:

<sup>393</sup> Նույն տեղում, թ. 43:

<sup>394</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 44:

<sup>395</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 36:

չձեռնարկվեին անհրաժեշտ կտրուկ միջոցներ, ապա Արդահանի գավառի բազմազգ բնակչությունը կսկսեր անվստահորեն վերաբերվել հայոց կառավարությանը: Իսկ բնակչության համբերության բաժակն արդեն լցվել էր: Մայիսի 16-ին Գյոլի տեղամասի քուրդ լիազորներ Մահմեդ Արթօղլին, Կասում աղա Յուսեինօղլին և Վաթալօղլին Կարսից հեռագրում են ՀՀ արտգործնախարարին. «Գյոլի տեղամասը բնակեցված է քրդերով, որոնց ապրիլի 26-ից հետապնդում են վրացիները և հույները (տարածքի հունական գյուղերի ավագներին վրացիները տարբեր խոստումներով շեղել են իրենց կողմը-Ը. Թ.): Քրդական 15 գյուղեր հրի և սրի են մատնվել, բնակչության մի մասը փրկվել է՝ փախչելով: Մայիսի 13-ին հույները վրացիների հետ համատեղ գնդացիրներով և թնդանոթներով շրջապատեցին հետևյալ գյուղերը՝ Չորանչեխ, Մոլլահասան, Թիքոշ և Մուջուչ, և սկսեցին գնդակոծել, բնակչության մի մասը փրկվեց փախուստով՝ թողնելով իրենց ողջ ունեցվածքը: ճանաչելով Յայաստանի կառավարությունը և որպես նրա հպատակներ՝ խնդրում ենք միջոցներ ձեռնարկել շտապ կերպով վրաց զորքերը գրաված վայրերից դուրս բերելու համար և հնարավորություն տալ վերադարնալու փախստականներին»<sup>396</sup>: Վերոնշյալ հեռագրերի ամբողջական բռվանդակությունը մեր կողմից բերվում է Արդահանի գավառում վրացական զորքերի կողմից գրավված տարածքներում տիրող ծանրագույն իրավիճակն ավելի հստակ ու պատկերավոր ներկայացնելու նպատակով:

Վրաց կառավարությունը, ճարպկորեն շրջանցելով հայկական կողմի ու բրիտանական իրամանատարության պահանջները, նաև հավաստիացնելով, թե իբր դուրս է բերում զորքերը, շարունակում էր գրաված պահել տարածքները և նորանոր գյուղեր գրավել: Կովկասում բրիտանական ուժերի գլխավոր իրամանատար Կորին մնում է զարմացած, եթե տեղեկանում է, որ վրաց զորքերը շարունակում են գրավել Կուրից հարավ ընկած տարածքները<sup>397</sup>: Մայիսի 22-

<sup>396</sup> Նույն տեղում:

<sup>397</sup> См. **Туманян М.**, Дипломатическая история Республики Армения 1918-1920гг., Ереван, 2012, стр. 149.

ին այս մասին վարչապետ Խատիսյանը տեղեկացնում է Լ. Եվանգույանին՝ խնդրելով նորից դիմել Վրաստանի կառավարությանը<sup>398</sup>: Գեներալ Կորիի ծնշմանն ի պատճախան՝ վարչապետ ժորդանիան վրացական զորքերն Արդահանի շրջանում պահելու անհրաժեշտությունը հիմնավորում է երեք փաստարկներով. նախ որ շրջանի գրավման վրա ծախսել են մեծ քանակությամբ արյուն, ջանքեր և փող, երկրորդ՝ շրջանի հույները խնդրել են դուրս չհանել զորքերը, քանի որ աջակցել են վրացիներին և վախենում են թաթարների արյունոտ հաշվեհարդարից, երրորդ՝ զորքերը դուրս կրերվեն, երբ բրիտանական զինուժ տեղակայվի, քանզի, եթե շրջանում զորքեր չլինեն, ապա կլինի թալան և ավերվածություններ<sup>399</sup>: Հատկապես երրորդ կետը, խորանանկորեն էր ձևակերպված, որովհետև վրացիներն էլ էին արդեն տեղյակ, որ բրիտանական զորքերը Կարսի մարզից հեռանալու հրաման ունեն:

Կարսի մարզում Հայաստանի կառավարության առջև ծառացած խնդիրներից մեկն էլ անգլիական զորքերի մոտալուտ հեռանալը էր: Բրիտանական կառավարության այդ որոշմանը մենք արդեն անդրադառն ենք: Ելնելով Արդահանում վրացիների վարքագծից և մարզի որոշ հատվածներում մահմեդական բնակչության անհնազանդությունից՝ Հայաստանի կառավարությանը ձեռնտու էր անգլիական զորքերի երկարատև մնալը Կարսում: Բայց վարչապետ Խատիսյանի ջանքերն արդյունք չտվեցին, և մինչև 1919 թ. մայիսի կեսերը գրեթե բոլոր բրիտանական զորքերը Կարսից դուրս հանվեցին<sup>400</sup>: Հայաստանի կառավարության վերոնշյալ մտահոգությունները, սակայն, այնքան էլ տեղին չէին, քանի որ, բացառությամբ որոշ տարածքների (Աղբաբա, Օլթի), ընդհանուր առնամբ մարզը խաղաղ էր: Այդ է փաստում նաև Խատիսյանը՝ նշելով, որ Կարսի շրջանի մահմեդական բնակչությունն օրինապահ մնաց դեպի մեր իշխանությունը: Արդահանում կառավարության կողմից գավառա-

<sup>398</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, գ. 5, զ. 133, թ. 35:

<sup>399</sup> См. Демократическое правительство Грузии и английское командование, сост. С. Е. Сеф, «Красный архив», т. 6(25), стр. 155-156.

<sup>400</sup> Տե՛ս Hovannessian R., The Republic of Armenia, 4 Vols, v. 1, Berkeley, Los Angeles, London, 1974, p. 225:

պետ է նշանակվում մահմեղական Կադիմովը, որին շնորհվում է գնդապետի աստիճան: Նրա միջոցով Կարսի նահանգապետը կարող էր խաղաղ վիճակի մեջ պահել մահմեղական բնակչությանը<sup>401</sup>: Վերոնշյալի վերաբերյալ խոսուն փաստ է նաև 1919 թ. մայիսի 5-ին Կարսի մարզի մուսուլմանական ազգային խորհրդի նախագահ դոկտոր Ասատրեկ Յաջիկի հեռագիրը Յայաստանի կառավարությանը, որտեղ մասնավորապես ասվում էր. «Կարսի մարզի մուսուլման բնակչության լիազորմամբ ողջունում եմ Յայաստանի Յանրապետության իշխանությանը և հաստատում եմ բարի հարկանությանը վերադառնալու մեր լիակատար պատրաստականությունը: Այսօր մենք խանդավառությամբ դիմավորում ենք խաղաղություն և կարգուկանոն արճատավորող իշխանությանը: Մենք պարզ հոգով ընդուած ենք գալիս ձեզ՝ միասին պահպանելու ձեր կողմից առաջ քաշված քաղաքացիական իրավահավասարությունը»<sup>402</sup>: Այս հեռագրի մասին է ակնարկում Խատիսյանը մայիսի 6-ին Ա. Ահարոնյանին գրած նամակում, որտեղ նկարագրելով հայկական վարչության և զորքի մուտքը Կարս՝ նշում է, որ թուրք ազգաբնակչությունը շատ կոռեկտ է պահել իրեն, քաղաքը հանդարտ էր, էքսցեներ չեն եղել: Նամակում կարդում ենք նաև, որ թուրք ազգաբնակչությունը գոր է հայկական տիրապետությունից, և «երեկ նրանք հեռագրով իրենց շնորհակալություն են հայտնել Յայաստանի կառավարությունից»<sup>403</sup>: Պետք է նշել, որ Կարսի մարզում հայկական վարչության հաստատումից հետո դադարեցին բախումները նաև քրդերի և հոլյուների միջև, որը, ինչպես գրում է «Աշխատավորը» մայիսի 31-ի համարում, ավելի է բարձրացնում հայկական իշխանության հանդեպ վստահությունը<sup>404</sup>:

Ինչպես տեսանք, սկսած ապրիլի կեսերից, ամբողջ մայիս ամիսը և հետագայում նաև մինչև աշուն շարունակվում է Արդահանի հետ կապված հայ-վրացական վեճը: Ընդհուած մինչև սեպտեմբերի

<sup>401</sup> Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 158:

<sup>402</sup> ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, թիվ 4063:

<sup>403</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 2, գ. 55, թ. 1:

<sup>404</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 291, մաս III, թ. 400:

Վերջերը Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանը վարչապետ Խատիսյանին և այլ պաշտոնատար անձանց հեռագրեր էր հղում վրաց զորքերը դիվանագիտական ճանապարհով Արդահանից դուրս հանելու անհրաժեշտության մասին:

Վրացական զորքը, խախտելով պայմանավորվածությունները, տարբեր պատճառաբանություններով և խուսանավումներով շարունակում էր գրավված պահել Կուր գետից դեպի հարավ և դեպի Մերդենեկ ընկած տարածքները, չնայած դա չէր խանգարում վրաց մենշևսկի ազգայնականներին կեղծ լուրեր տարածելու, թե իբր անգլիացիներն աջակցում են հայերին գրավելու Արդահան-Օլթի շրջանը, որի բնակչության մեջ մասը վրացիներ են<sup>405</sup>:

Ի վերջո անգլիացիներն այնքան են վրդովվում, որ հունիսի 16-ին որոշում են Արդահանի շրջանն անջատել Կարսի մարզից և միացնել Բաթումի մարզին՝ անգլիական գեներալ նահանգապետի կառավարման ներքո<sup>406</sup>: Արդահանի շրջանի գեներալ-նահանգապետ է նշանակվում լեյտենանտ Օլիվերը<sup>407</sup>: Սակայն, չնայած այս որոշումներին, անգլիացիներն այդպես էլ Արդահանի շրջանը, ինչպես նաև Օլթին չմտցրին Բաթումի մարզի մեջ:

Վերլուծելով արխիվային փաստաթղթերը՝ գալիս ենք այն եղանակնան, որ Արդահանի շրջանի հայկական հատվածից վրացական զորքերի դուրսբերման հարցը հիմնականում լուծվել է 1919 թ. սեպտեմբերի վերջ - հոկտեմբերի սկզբին Անտանտի գերագույն կոմիսար, գնդապետ Յասկելի միջնորդությամբ: Այժմ արդեն քննարկվում էր Արդահան քաղաքի հարավային և հյուսիսային հատվածներում հայերի և վրացիների կայազորների քանակի հարցը: Ինչպես արդեն նշել ենք, հայերը պետք է ունենային 100 զինվոր, իսկ վրացիները՝ 50: Սակայն, վրացական կողմի բողոքի արդյունքում քննարկվում էր հայկական կայազորի թիվը կրծատել և հավասարեցնել վրացականին: Յոկտեմբերի 9-ին Թիֆլիսից Յայաստանի դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական թումանյանը

<sup>405</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 444:

<sup>406</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, գ. 5, գ. 133, թ. 65:

<sup>407</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 291, մաս III, թ. 548:

գրում է ՀՀ արտգործնախարարին, որ ինքը բանակցել է գլխավոր կոմիսար Յասկելի տեղակալ գնդապետ Ռեյի հետ և որոշել են, որ Արդահան քաղաքի հարավային մասում հայկական զորամասի թիվը 100-ից պետք է իջեցվի 50-ի: Քանի որ եթե հակառակն արվեր և վրացական ջոկատի թիվը հասցեր 100-ի, ապա ավելի շատ հնարավոր կդառնար նրանց բախումները Արդահան քաղաքի հյուսիսային մասի հայկական վարչության հետ: Ինչպես նշում է խորհրդական Թումանյանը գնդապետ Ռեյի հետ գրույցում, «այժմ էլ կան տեղեկություններ, որ վրաց զինվորականները խաճնվում են հայկական աղմինիստրացիայի գործերի մեջ»<sup>408</sup>: Սակայն, արդեն նոյեմբերին վրաց կառավարությունը դիմում է Հայաստանի կառավարությանը, ինչպես նաև միջնորդության համար՝ գերագույն կոմիսար Յասկելին, որպեսզի վրացական ջոկատի թիվը ևս հասցվի 100 հոգու՝ պատճառաբանելով, թե 50 հոգին բավական չէ Արդահան քաղաքի հյուսիսային մասի կարգուկանոնը պահպանելու համար: Նոյեմբերի 17-ի գրությամբ այս մասին գերագույն կոմիսարի գրասենյակը տեղեկացնում է Թիֆլիսում հայոց դիվանագիտական ներկայացուցչությանը՝ խնդրելով, որ եթե վրաց կառավարության հետ այս հարցում համաձայնություն լինի, իրենց տեղյակ պահեն<sup>409</sup>: Ինչպես երևում է, վրացիները ձգուում էին իրենց կայազորի թիվը հասցնել հայերի թվին, ոչ թե հայերինը նվազեցնել իրենց չափով: Քանի որ վրացիների համար միևնույն էր, թե հայերն ինչքան զինվոր կունենան հարավային Արդահանում, բայց երբ իրենք ավելի շատ զինվոր ունենային, ավելի մեծ հնարավորություններ կունենային միջամտելու հյուսիսային Արդահանի հայկական վարչության գործերին: Ինչեւ, նշենք, որ, այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը համաձայնեց վրացական կողմի առաջարկին<sup>410</sup>: Այսպիսով՝ հայվրացական կնճիռն Արդահանի խնդրում կարծես թե ժամանակավորապես հարթվեց:

<sup>408</sup> Նոյեմ տեղում, ֆ. 275, գ. 5, գ. 138, թ. 59:

<sup>409</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 74:

<sup>410</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 31:

### **3.3. Իրադարձությունների հետագա զարգացումներն Արդահանի հարցում 1920 թ. հունվար-օգոստոս ամիսներին**

1920 թ. հայ-վրացական հարաբերությունները նոր զարգացումներ ունեցան: Արդահանի խնդիրը, ցավոք, շարունակում էր մնալ որպես այդ հարաբերությունները խաթարող գործոններից մեկը:

Չնայած նրան, որ 1919 թ. հունիսի 16-ին Վրաստանը Ադրբեջանի հետ կնքել էր պաշտպանական դաշինք<sup>411</sup>, որին Հայաստանը հրաժարվել էր միանալ, Վրաստանի կառավարությունը 1920 թ. հունվարին<sup>412</sup> առաջարկում է հայ - վրացական ռազմաքաղաքական դաշինք կնքել<sup>413</sup>: Դաշինքի առաջարկն ինքնին երկու կողմի համար էլ ձեռնուու էր, սակայն վրացական կողմն այդ առաջարկին զուգահեռ փորձում էր իր օգտին լուժել տարածքային վեճերը, մասնավորապես Ալավերդու խնդիրը, որն էլ անվստահություն էր առաջացնում հայերի մոտ: Փետրվարի սկզբին Գեգեչկորին և Հայաստանուն Վրաստանի դեսպան Մահմարածեն այցելում են Թիֆլիսում Հայաստանի դեսպան Լ. Եվանգուլյանին և վերստին առաջարկում կնքել ռազմաքաղաքական դաշինք՝ իհմնավորելով, թե Ադրբեջանուն սկսվել է ուժեղ միջկուսակցական պայքար, Մուսավաթը կորցրել է իր հեղինակությունը, մեծանում է իթթիհաթական կուսակցության դերը, որը պանթութքական ազգայնական կուսակցություն է և գտնվում է Թուրքիայի ուժեղ ազդեցության տակ: Քաղաքական խմբավորումները եկել են համաձայնության՝ ստեղծել ուժեղ մուսուլմանական Կովկաս, որի մեջ, բացի ռուսական Ադրբեջանից, պետք է մտնեմ արասկական Ադրբեջանը, Դաղստանը, Թերերի մար-

<sup>411</sup> Տե՛ս **Պետրոսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 266:

<sup>412</sup> Վարչապետ Խաստիսյանը դեսպան Եվանգուլյանին փետրվարի 12-ին գրած նամակում հաղորդում է, որ իր վերջին Թիֆլիս եղած ժամանակ արտգործնախարար Գեգեչկորին և գինվորական նախարար Լորդկիպանիկեն իրեն առաջարկել են թուրքական վտանգի դեմ ռազմական դաշինք կնքել: Խոկ Խատիսյանն այդ շրջանում վերջին անգամ Թիֆլիսում էր եղել 1920 թ. հունվարին: Տե՛ս **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 196:

<sup>413</sup> Տե՛ս ՀՍՍ, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 22:

զը, Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը, Օլքին, Արդահանը, ամբողջ Բաթումի մարզը և Ախալցխայի գավառի մի մասը: Նուրի փաշան և Խալիլ բեյը բոլոր տեղերն ուղարկել են իրենց էմիսարները, բայց ըստ Գեգեչկորիի՝ հայ-վրացական դաշինքի պարագայուն անգլիացիները կընտրեն իրենց և ոչ թե մուսուլմաններին<sup>414</sup>: Այն, որ մահմեդական վտանգն սպառնում էր նաև Վրաստանին, շատ լավ էին հասկանում հայերը, բայց Վրաստանն իրապե՞ս և անկե՞ղծ էր ցանկանում այդ դաշինքը, թե՞ գիտակցելով, որ հայերին խիստ անհրաժեշտ և ձեռնոտու է այն, ու օգտվելով առիթից՝ Յայաստանին ուղում էր մղել զիջումների: Այս կասկածը հիմնավորվում է նրանով, որ վերոնշյալ հանդիպման ժամանակ վրաց գործիչներն առաջարկում էին Ալավերդին նիստել Վրաստանին և իրենց գորամասը Արդահանում ավելացնել երեք վաշտով՝ իբր մահմեդականներից պաշտպանվելու համար<sup>415</sup>: Արդյո՞ք սա չէր արվում հետագայում Արդահանն ամբողջովին գրավելու հիմքեր ստեղծելու համար: Այս տեղեկությունները Եվանգույանը հեռագրում է Խատիսյանին փետրվարի 5-ին, որին ի պատասխան՝ փետրվարի 12-ին վարչապետը գրում է, որ հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի հարցը քննարկվել է և՝ կառավարությունում, և՝ դաշնակցության խորհրդարանական խմբակցությունում և արժանացել է դրական վերաբերմունքի: Սակայն բոլորը դեմ են եղել տարածքային հարցերում զիջումների գնալուն, ինչպես նաև Արդահանում վրացական 300 զինվորների ավելացնանը<sup>416</sup>:

Կայացվում է որոշում, համաձայն որի՝ 1. Վրաստանի հետ ռազմական դաշինքի կնքումը համարվում է օգտակար, 2. դաշինքի հետ կապված բանակցությունների ընթացքում ոչ մի տարածքային զիջում չի կարող արվել, 3. Արդահանում վրացական գորամասի համալրման հարցը դիտարկել բացառապես ռազմական դաշինքի կնքման համատեքստում<sup>417</sup>: Վրացիներն Արդահանում գործի թիվն

<sup>414</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 12-13:

<sup>415</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 14:

<sup>416</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 23:

<sup>417</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 24:

ավելացնելու առաջարկը հիմնավորում էին նրանով, որ քեմալականներն առաջանում էին Կարսի մարզի ուղղությամբ, և Արդահանց անհրաժեշտ էր պաշտպանել Բաթումի թիկունքը: Եվանգույյանն էլ էր կողմն Վրացական գորակազմի ավելացման խնդիրը դրականորեն լուծելուն և առաջարկում է մեր կառավարությանը՝ ավելացնել մեր գինըորների թիվը հարավային Արդահանում<sup>418</sup>: Սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ Վրացիները հայկական կողմի հետ բանակցելուն գուգահեռ՝ մի գորամաս էին մտցրել Արդահանի հարավային հայկական հատվածը՝ խախտելով նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները: Կարսի նահանգապետ Ղորղանյանը և Արդահանի գավառապետ Կադիմովը բողոքում էին՝ գտնելով, որ հարավային Արդահանում վրացական կայազորի գոյությունը ծայրահեռ վտանգավոր է մեր շահերի և հեղինակության համար<sup>419</sup>: Դեռ ավելին, փետրվարի 25-ին Խատիսյանի՝ Եվանգույյանին ուղղված հեռագրից տեղեկանում ենք. «Ղորղանյանը հեռագրում է, որ Վրացիները մեծ քանակությամբ զորք են ուղարկում Արդահանի հյուսիսային և հարավային մասերը: Խնդրում եմ ճշտել և բողոքել հարավային մասի կապակցությամբ, որը մեզ է պատկանում և հյուսիսային մասի կապակցությամբ, որտեղ նրանք կարող են պահել միայն 100 գինվոր...»<sup>420</sup>: Եվանգույյանը նախ բողոքում է արտգործնախարար Գեգեչկորուն, ապա փետրվարի 29-ին տեսակցում Վրաստանի գինվորական նախարար Լորդկիպանիձեի հետ: Յայց դեսպանը ներկայացնում է իր բողոքը, որ առանց հայկական կողմի համաձայնությունը նախօրոք ստանալու՝ Վրացիները իրավունք չունեին զորք մտցնել Արդահան: Լորդկիպանիձեն ևս սկսում է շահարկել հայկական հնարավոր դաշինքի խաղաքարտը՝ հայտարարելով, որ ինքն ընդունում է դեսպանի բողոքի ձևական հիմնավորումները, բայց ըստ եռթյան, ներկայումս Վրաստանի և Յայաստանի շահերը գուգատիպում են, և շատ հավանական է, որ հեռու չէ այն ժամանակը, երբ հայերի ու Վրացիների թնդանոթները միացած կգործեն

<sup>418</sup> Տես նույն տեղում, թ. 31-32:

<sup>419</sup> Տես նույն տեղում, թ. 23:

<sup>420</sup> Նույն տեղում, ֆ. 275, գ. 5, գ. 211, թ. 38:

միւնույն ճակատի վրա ընդհանուր թշնամու դեմ<sup>421</sup>: Մենք ընդունում ենք, որ Վրաստանում իսկապես կային առողջ մտածող շատ մարդիկ, որոնք կարևորում էին հայ-վրացական ռազմական դաշինքի անհրաժեշտությունը: Սակայն պարզից էլ պարզ էր, որ Վրաստանի կառավարությունն այդ դաշինքի գաղափարը խայծ էր դարձրել հայերի համար: Եվ ճիշտ չէր Եվանգուլյանի այն տեսակետը, թե Վրաստանն անհանգստացած է նույուլմանական վտանգից և ժամանակն է նրան կտրել Թուրքիայից և Աղրբեջանից<sup>422</sup>: Վրաստանի նպատակն էր, օգտվելով հայերի նեղ վիճակից, տիրանալ վիճելի տարածքներին: Դետագա իրադարձությունները և հատկապես թուրքիայկան պատերազմի ընթացքում Վրաստանի վարքագիծը դա են ապացուցում:

Վրաստանի կառավարությունը շարունակում էր նվաճողական քաղաքականությունն Արդահանի և Օլբու ուղղությամբ: Դա արվում էր ոչ միայն ռազմական ճանապարհով, այլ նաև ակտիվ քարոզչությամբ: Թաթար-աղրբեջանցի էմիսարների հետ գործակցելով՝ վրացիները կաշառում էին տեղի մահմեդական ազդեցիկ գործիչներին ու ղեկավարներին, նրանց պաշտոնների դեմ, ապստամբներին ապահովում հայկական իշխանությունների դեմ, ապստամբներին ապահովում գենք-զինամբերքով: Դրա վառ ապացույցն է Արդահանի հայերի հայտնի ջարդարար Զալալ բեկ Խիմշիկի նկատմամբ վրացիների ցուցաբերած ջերմ վերաբերմունքը: Արդահանի վրացական հատվածի կոմիսար, ավագ լեյտենանտ Գվարամաճեն հունվարի 15-ին շրջանի հայկական մասում դաշնակիցների կողմից Վրաստանի անկախության ճանաչման առթիվ հանդես է կազմակերպում, որին հայերի դեմ ցույց անելու նպատակով հրավիրում է նաև Զալալ բեկին՝ սիրաշահելով ու պատվելով վերջինիս: Իսկ Խիմշիկն էլ իր հերթին գործակալների միջոցով քարոզչություն էր իրականացնում Արդահանի հայկական հատվածում ընդդեմ Դայաստանի իշխանության և հորդորում էր ժողովրդին միանալ Վրաստանին<sup>423</sup>: Դայկական հե-

<sup>421</sup> Տե՛ս նոյն տեղում, գ. 212, թ. 43, նաև՝ նոյն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 17:

<sup>422</sup> Տե՛ս նոյն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 13:

<sup>423</sup> Տե՛ս «Յառաջ», 4 փետրուար, 1920, թիվ 25:

տախուղական ծառայության մարտ ամսվա տվյալներով՝ Վրացիները չեղացիներին օգնում են զինամթերքով, և որ Զուրգունայում (բնակավայր հարավային Արդահանում՝ Չղջրի տեղանասի վարչական կենտրոնը) են եղել Բախչի բեկը, բժիշկ Հաջիկը (մահմեղական էմիսարներ), երեք վրացական և երեք ադրբեջանական սպաներ, որոնք ասել են նուսուլմաններին, որ շուտով ընդհանուր հարձակում կլինի Օլթից մինչև Չղջրը<sup>424</sup>:

Թիֆլիսում Յայաստանի զինվորական կցորդ գեներալ Քիշմիշի բողոքին ի պատասխան՝ Վրաստանի զինվորական նախարարի օգնական գեներալ Գեղևանովը վստահեցնում է, որ վրացական սպաները Զուրգունայում եղել են բացառապես հակազդելու Սերվեր բեկի (Արդահանի մահմեղականների առաջնորդներից) ծրագրերին, որին վրացական կառավարությունը հետախուզում է և մտադրված է դատի տալ<sup>425</sup>:

Ինչքան էլ արդարանային վրացիները, միևնույն է, Արդահանի նկատմամբ վրացական նկրտումները և այդ հարցում վրաց-ադրբեջանական համագործակցությունը նույնիսկ անգեն աչքով տեսանելի էր: Եվ սա առաջին դեպքը չէր: Դեռևս 1919 թ. աշնանը, երբ հարավային Արդահանից վրացական զորքերի դուրսբերման արդյունքում Արդահանի հարցի շուրջ վեճերը նոր էին դադարել, Ալեքսանդրապոլի գավառական կոմիսարը ՀՀ արտգործնախարարությանը տեղեկացնում է, որ հոկտեմբերի 28-ին Ախալքալաքից գավառ են ժամանել երեք վրացի սպա, որոնք տեղական թաթարների հետ խորհրդակցել են իր համար անհայտ հարցի շուրջ, ապա երեք ընտրված թաթարների հետ մեկնել են Արդահան, ուր ամսի 30-ին եկել են Ադրբեջանից 10 թուրք: Այդ վրացիների և թաթարների միջև ընթանում են բանակցություններ... Տրոհցելու վրաց զորքերի համար նախատեսվում են զորանոցներ<sup>426</sup>:

Առաջին հայացքից թվում է, թե անհասկանալի է Ադրբեջանի կողմից Արդահանի նկատմամբ վրաց հավակնությունների աջակ-

<sup>424</sup> Տես ՂԱԱ, §. 275, գ. 5, գ. 184, թ. 10:

<sup>425</sup> Տես նույն տեղում, թ. 12:

<sup>426</sup> Տես նույն տեղում, §. 200, գ. 1, գ. 99, թ. 151:

ցումն այն ենթատերստում, երբ այդ գավառին անթաքույց հավակնություն էր ցուցաբերում նաև մեծ եղբայր Թուրքիան: Բայց երբ խորանում ենք երևույթի մեջ, պարզ է դաշնում, որ Աղրբեջանը դրանով նախևառաջ անկայունություն էր առաջացնում Հայաստանում. մահմեդականներին համախմբելով հայկական իշխանությունների դեմ՝ ստիպում էր, որ հայկական ավելի շատ զորք կենտրոնացվի Կարսի մարզում՝ թուլացնելով Ղարաբաղի, Չանգեզուրի և Նախիջևանի ձակատները: Բայց ամենակարևորն այն էր, որ գրգռելով Վրացիների ախտրժակը՝ Աղրբեջանը թշնամնը էր սերմանում երկու հարևան երկրների միջև և մի մեծ սեպ խրում բախտակից ու հավատակից ժողովուրդների միջև: Դրանով Վրաստանը, կամա թե ակամա, ներքաշվում էր թուրք-աղրբեջանական տանդեմի հակահայ քաղաքականության մեջ:

Հայերին և Վրացիներին իրար դեմ հանելու թուրքական քաղաքականությունը նորություն չէր: Դրան մենք ականատես ենք եղել նաև Սուլդոսի զինադադարից հետո, երբ նահանջող թուրքերը երկու կողմին էլ խոստանում էին պարպանող տարածքները, կամ 1920 թ. թուրք-հայկական պատերազմը Եզրափակող Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ, երբ Կարաբեքիր փաշան թուրքան պաստ չեղորդության դիմաց Վրաստանին խոստացված վիճելի տարածքները խոստանում էր Խատիսյանին՝ թուրք-Վրացական հնարավոր պատերազմում Հայաստանի չեղորդության դիմաց<sup>427</sup>: Ցավոք, պետք է արձանագրենք, որ առաջին հանրապետությունների հայ և Վրացի ղեկավարները չկարողացան համագործակցության ճիշտ ճանապարհ գտնել, ինչն էլ որոշակիորեն նպաստեց Հայաստանի և Վրաստանի առաջին հանրապետությունների կործանմանը:

1920 թ. ապրիլի սկզբներին Վրացական զորքերը գրավեցին Արտամուջի շրջանը<sup>428</sup>, հյուսիսից իրական վտանգ ստեղծելով Օլթի համար: Օլթի նկատմամբ Վրաստանն ավելի ագրեսիվ վարքագիծ սկսեց դրսևորել հունիս ամսին: Ըստ երևույթին, դա այն պատճառով էր, որ հայկական զորքերին հաջողվել էր այդ նույն ամսին Օլթիի

<sup>427</sup> Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 307:

<sup>428</sup> Տե՛ս ՌԱՍ, ֆ. 275.գ. 5, գ. 121, թ. 73:

ուղղությամբ առաջխաղացում ունենալ: Նրանք հունիսի 18-21-ը գրավել էին Օլթիի մեծ մասը, ներառյալ ածխահանքերը<sup>429</sup>: Այդ և մյուս հաղթանակների կապակցությամբ ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը «Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած արիության համար հայկական բանակի մարտիկներին երախտագիտություն հայտնելու մասին» իրամանում մասնավորապես նշում է. «...Ես հպարտությամբ եմ հիշում այն մեծ հաղթանակը, որ դեպի Սև ծովը տանող Օլթիի ռազմադաշտում մեր զորագունդը տարավ տաճկական կանոնավոր զորաշարքերի վրա՝ խլելով խուճապի մատնված թշնամուց մեծաքանակ զոհեր, ռազմամթերք ու պարեն...»<sup>430</sup>:

Վրացիները ձեռնամուխ եղան կրոնկրետ գործողությունների: Այդ օրերին Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանի պաշտոնական հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Շեղևանի վրայով և մեր տարածքով առաջ են շարժվում 100 վրացական զինվոր 4 գնդացիրներով՝ Օլթիի շրջանը գրավելու համար: Այս կապակցությամբ հունիսի 17-ին վարչապետ Յանո Օհանջանյանը հեռագրով պահանջում է Թիֆլիսում ՀՀ դեսպան Տիգրան Բեկզադյանից շտապ բողոք ներկայացնել վրաց կառավարությանը՝ մեր սահմանները խախտելու դեմ, և պահանջել անմիջապես դուրս բերել վրաց զորքերը Օլթիի շրջանից, որը մեր անվիճելի տարածքն է<sup>431</sup>: Օլթիի նկատմամբ վրացական ոտնձգությունները շարունակվեցին նաև հետագայում: Այդ է փաստում հայոց զորքերի իրամանատարական շտաբի հուլիսի 30-ի հեռագիրը Թիֆլիսում ՀՀ զինվորական կցորդ Քիշմիշևին. «Լուրեր ենք ստանում օլթեցիների հետ ակտիվ բանակցությունների վերաբերյալ (Վրացիների կողմից – Շ. Թ.) այդ շրջանի խաղաղ գրավման նպատակով, և Արդահանի և Օլթիի շրջանները գրավելու համար նոր ուժեր գալու մասին»<sup>432</sup>: Այդ հեռագրին Քիշմիշևը պատասխանում է օգոստոսի 20-ին՝ հաստատելով քարոզչության միջո-

<sup>429</sup> Տես Վրացյան Ս., նշվ. աշխ. էջ 443-444:

<sup>430</sup> «Ռազմիկ», Երևան, 26 հուլիսի, 1920, թիվ 11:

<sup>431</sup> Տես ՐԱԱ, ֆ 275, գ. 5, զ. 211, թ. 171:

<sup>432</sup> Նույն տեղում, գ. 184, թ. 91:

ցով Օլթին գրավելու վրաց կառավարության մտադրությունը: Ըստ Քիշմիշևի ճշտած հետախուզական տվյալների՝ Վրաստանի կառավարությունը տանում է ուժեղացված քարոզչություն՝ խաղաղ ճանապարհով Արդահանի և Օլթիի օկրուգներին, ինչպես նաև Չլդըրի շրջանին տիրելու համար: Իսկ ինչ վերաբերում է Օլթիի շրջանը գինված ուժերով օկուպացնելու մտադրությանը, դա չի համապատասխանում իրականությանը, այնքանով, որքանով որ այդ տեղերի գորակազմը իինն է: Կառավարությունը տանում է բոլոր աշխատանքները միայն լայն քարոզչության և կաշառքների ճանապարհով այդ առաջադրանքները կատարելու համար: Ապա թվարկում է վրացի և մահմեդական այն անձանց անունները, որոնք, կաշառված վրաց կառավարության կողմից, իրականացնում են այդ քայքայիչ գործունեությունը: Նա նշում է նաև, որ Վրաստանի կառավարությունը մի շարք գաղտնի որոշումներ է ընդունել, որոնք ուղղված են այդ շրջանների բնակչությանը խաղաղ ճանապարհով հանրապետությանը միացնելու նախապատրաստությանը<sup>433</sup>: Իհարկե, թույլ է Քիշմիշևի՝ Օլթիի շրջանը վրացական գինված ուժերով օկուպացնելու տեղեկության հերթան իիմնավորումը, քանի որ ակնհայտ էր շրջանում վրացական զորացուկատի առկայության փաստը, և նոր ուժեր մտցնելու տեղեկությունները հայկական կողմը ստացել էր նաև այլ աղբյուրներից: Բացի այդ՝ վրացիները կարող էին դա անել նաև առկա ուժերով՝ առանց համալրումների: Մյուս կողմից հնարավոր է նաև այդ վարկածը, քանի որ 1920 թ. ամռանն ընթացող հայ-վրացական խորհրդաժողովում վրացական կողմը, շահարկելով Օլթիի հարցը, ձգտում էր անքողջությամբ տիրանալ Արդահանին: Այդ խնդրին կանդրադառնամք ստորև:

1920 թ. գարնանը անդրկովկասյան հանրապետությունների միջազգային դրությունը կտրուկ փոխվեց: Թենալ-բոլշևիկյան մերձեցումը հստակ կերպարանք ստացավ, որի արդյունքում ապրիլի 28-ին խորհրդայնացավ Աղրբեջանը: Վերջինս անմիջապես տարածքային պահանջներ ներկայացրեց Հայաստանին և Վրաստանին: Վրացադրբեջանական կնքված բոլոր գաղտնի ու հայտնի պայմանագրե-

<sup>433</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 101:

րը, փաստորեն, դադարեցին գործելուց: Ի դեպ նշենք, որ թուրքական վտանգից զգուշանալով, տարեսկզբին հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինք առաջարկող վրաց կառավարությունն այդ նույն ժամանակ Աղրբեջանի հետ գաղտնի լրացուցիչ համաձայնագիր էր ստորագրել Աղրբեջանի և Հայաստանի միջև գինված կոնֆլիկտի ծագման դեպքում Աղրբեջանի օգտին բարյացակամ չեզոքություն պահպանելու մասին<sup>434</sup>:

Աղրբեջանի խորհրդայնացմամբ ընդհատվեց ապրիլին Թիֆլիսում հրավիրված անդրկովկասյան հանրապետությունների խորհրդաժողովը: Վրաստանն սկսեց խարխսափել դիվանագիտության լաբիրինթոսում: Նա փորձում էր միաժամանակ հարաբերություններ հաստատել և պայմանավորվածություններ ձեռք բերել թե՛ Խորհրդային Ռուսաստանի հետ, թե՛ Վերջինիս կողմից աջակցություն ստացող Խորհրդային Աղրբեջանի, թե՛ իր հարավարևմտյան տարածքներին սպառնացող քենալական Թուրքիայի, թե՛ Հայաստանի և թե՛ Համաձայնության երկրների հետ: Այսպիսի հախուսն և ոչ հստակ արտաքին քաղաքականությունն անարդյունավետ է փոքր երկրների համար: Վերջիններս պետք է հստակ և պարզորոշ արտաքին քաղաքական ուղղվածություն դրսենրեն: Այդ էր պատճառը, որ Վրաստանի դիվանագիտությունն ի վերջո ձախողվեց: Ցավոք, նույնը պետք է ասել նաև Հայաստանի մասին: Երկու կառավարություններն էլ իրենց անհեռատես և չկշռադատված քաղաքականության արդյունքում կանգնեցին պետականության կորստյան փաստի առջև: Մինչդեռ երկու հավատակից հարևանների ռազմաքաղաքական և տնտեսական հաշվենկատ համագործակցությունը շահեկանորեն կնպաստեր հանրապետությունների կայուն ապագային:

Անդրկովկասյան եռակողմ խորհրդաժողովի աշխատանքների ընդհատումից հետո խորհրդաժողովն ընդունեց երկկողմ՝ հայ-վրացական ձևաչափը: Սակայն Վրաստանը, զբաղված լինելով Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Աղրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմամբ, անընդհատ ձգձգում էր հայերի հետ կոնկրետ հարցերի քննարկումը: Վրաստանի կառավարությանն ի

<sup>434</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 13:

Վերջո հաջողվեց մայիս-հունիս ամիսներին պայմանագրեր կնքել վերջիններիս հետ, որից հետո միայն՝ հունիսի 23-ին, տեղի ունեցավ հայ-վրացական խորհրդակցություն, որտեղ որոշվեց վերջնականապես լուծել բոլոր վիճելի հարցերը<sup>435</sup>. Զգձումների քաղաքականությունը վրացիների կողմից դրսևորվեց նաև այստեղ, երբ այս ամենից հետո էլ, տարբեր առաջարկություններ անելով, շարունակ հետաձգում էին նիստերի գումարումը: Ուստի հայկական պատվիրակության անդամ Ստեփան Մամիկոնյանը հունիսի 27-ին այցելում է վրաց արտգործնախարություն և հայտարարում, որ եթե մինչև հուլիսի 1-ը նիստ չգումարվի, իրենք կհամարեն, որ դա կարևոր չի համարվում վրացիների կողմից, և իրենք անձամբ լիազորությունները սպառած կհամարեն ու հրաժարական կներկայացնեն իրենց կառավարությանը<sup>436</sup>: Հայկական կողմի այս քայլը տալիս է իր արդյունքը: Հունիսի 29-ին տեղի է ունենում հայ-վրացական խորհրդաժողովի առաջին նիստը<sup>437</sup>: Խորհրդաժողովի օրակարգում մի շարք փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակում ընդգրկված էր նաև սահմանավեճերի հարցը: Այստեղ վրացական կողմն առաջին անգամ պաշտոնապես առաջ քաշեց Արդահանի խնդիրը: Հայկական պատվիրակության անդամ և Թիֆլիսում ՀՀ դեսպան S. Բեկարյանի՝ խորհրդաժողովի ընթացքի նասին ՀՀ կառավարությանն ուղղած հուլիսի 3-ի գեկուցագրում կարդում ենք. «...Քենց որ անցանք սահմանավեճերի խնդիրն, Ռամիշվիլին հարց յարուցեց Արդահանի եւ անցողակի կերպով Օլրիի նասին. մենք եւ Լորդկիապարհէն<sup>438</sup> առաջարկեցինք սկսել իին վէճերից, իսկ յետոյ անցնել արեւմտեան սահմանների քննութեան, բայց Գեգեչկորին եւ Ռամիշվիլին պնդում էին, որ բոլոր հարցերը քննութեան առնւին

<sup>435</sup> Տե՛ս նույն տեղում, §. 200.g.1, գ. 221, թ. 89:

<sup>436</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 90:

<sup>437</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 92:

<sup>438</sup> Հայ-վրացական խորհրդաժողովում վրացական պատվիրակության անդամներն էին ներքին գործերի նախարար Ռամիշվիլին, արտաքին գործերի նախարար Գեգեչկորին և ռազմական նախարար Լորդկիապարհէն, իսկ հայկական պատվիրակության կազմում ընդգրկված էին Ս. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը և S. Բեկարյանը: Տե՛ս նույն տեղում, §. 275, գ. 5, գ. 212, թ. 99:

միաժամանակ: Մեր դելեգացիան յայտարարեց (թերևս ուշացումով, դա պէտք է միանգամից արվեր – Շ. Թ.), որ նա Արդահանի եւ Օլթի մասին հրահանգ չունի, ուստի եւ բանակցել այդ հարցերի մասին չի կարող: Ես աւելացրի դրան, որ եթէ Արդահանի եւ Օլթի մասին հարց դրւի, ապա մենք պէտք է վերջ տանք մեր աշխատանքներին, որովհետեւ այդ շրջանները, որպէս Հայաստանի անվիճելի հողանասեր, չեն կարող քննութեան առարկայ դառնալ, եւ պահանջեցի նրանցից բացարձակ եւ կտրուկ կերպով արտայայտւել, դնում են արդեօր կոնֆերանսի քննութեան հարցը այդ շրջանների մասին: Ռամիշլիին պատասխանեց, որ Օլթի շրջանի մասին խօսք չի լինի, իսկ Արդահանի շրջանի վերաբերմանը Վրաստանը պրետենզիաներ ունի, ուստի այդ հարցը պէտք է քննութեան առնել...»<sup>439</sup>: Ինչպես տեսնում ենք, վրացինները որդեգրել էին «շատը պահանջելով քչին հասնելու» փորձված մարտավարությունը: Բայց արդյո՞ք դա նշանակում էր, որ Վրաստանն ընդհանրապէս էր հրաժարվում Օլթի նկատմամբ հավակնություններից. միանշանակ ոչ, քանի որ նրանց հետագա վարդագիծի վերլուծությունը ապացուցում է հակառակը: Օրինակ, երբ Վրաստանի կառավարությունը որոշում է Հայաստանին վերադարձնել Թիֆլիսի գանձապետարանում գտնվող Կարսի մարզի գանձապետարանի գործերը, Վերադարձնում է միայն Կարսի և Կաղզվանի շրջաններինը՝ հայտարարելով, թե միայն այդ շրջաններն է ճանաչում Հայաստանի անվիճելի մաս<sup>440</sup>:

Վերոնշյալ գեկուցագրում Բեկզադյանը ցավով արձանագրում է. «Այսպիսով իին վէճերին աւելացւեց եւս մի նոր հարց, որի մասին մեր դելեգացիան պիտի ունենայ կառավարութեան որոշ հրահանգը»<sup>441</sup>: Եվս մեկ անգամ ափսոսանքով նկատենք, որ վրաց մենշևիկները շարունակ հակառակ էին իրենք իրենց: Զավախքի և Լոռու հարցերում փորձելով գիշումներ կորզել՝ Հայաստանին հորդորում էին ուշադրությունը սևեռել թուրքահայկական հողերում մեծ Հայա-

<sup>439</sup> Նույն տեղում, §. 200, գ. 1, գ. 221, թ. 92-93, նաև՝ նույն տեղում, § 275, գ. 5, գ. 212, թ. 99-100:

<sup>440</sup> Տես «Յառաջ», 5 օգոստոս, 1920, թիվ 165:

<sup>441</sup> ՀԱԱ, §. 200, գ. 1, գ. 221, թ. 92-93, նաև՝ նույն տեղում, § 275, գ. 5, գ. 212, թ. 99-100:

տան ստեղծելու գործի վրա: Այդ դեպքում ինչո՞վ հիմնավորել նրանց հավակնություններն այժմ արդեն Յայաստանի արևմտյան տարածքների նկատմամբ: Նրանց բերած հիմնավորումներին մենք ստորև կանդրադառնանք, բայց դրանք այնքան թույլ և փաստագուրկ են այն հիմնավորումների դեմ, որոնք հայկական կողմը բերում էր Յայաստանի ծովային ելքի անհրաժեշտության վերաբերյալ, որի դեմ Վրացիներն այնքան ջանադրաբար և կատաղի պայքարում էին:

Յայ-Վրացական խորհրդաժողովի առաջին նիստում որոշում կայացվեց նաև այն մասին, որ կողմերը հաջորդ նիստին սահմանավեճերի վերաբերյալ առաջարկեն և քարտեզ ներկայացնեն: Յաջորդ նիստը տեղի ունեցավ հուլիսի սկզբին: Վրացական պատվիրակությունը ներկայացրեց իր տարածքային պահանջները՝ միաժամանակ հայտարարելով, որ այդ սահմանները ընդունելի կլինեն իրենց համար, եթե կողմերի միջև առկա բոլոր խնդիրները ամբողջությամբ լուծում ստանան<sup>442</sup>: Սա էլ, ըստ Երևույթին, շանտաժ էր, քանի որ տրամզիտի և մյուս հարցերը սահմանավեճերի հետ կապելով, Վրացիները հայտնվում էին շահեկան վիճակում: Նույնիսկ մեզ համար ամենադժվարին իրադրության մեջ՝ թուրք-հայկական պատերազմի ընթացքում, հայ-Վրացական քննարկումները մենք սկսում էինք տրամզիտի խնդրից, իսկ Վրացիները՝ սահմանավեճերի: Կարծում ենք՝ ամեն ինչ հասկանալի է:

Ներկայացված փաստաթղում մանրամասն նկարագրվում էր հայ-Վրացական սահմանաբաժանումը, ապա նշվում. «Այսպիսով Վրաստանը իրաժարվում է Լոռուց հօգուտ Յայաստանի, վերը բերված սահմաններում, չնայած, որ Լորին և տնտեսապես, և պատմականորեն Վրաստանի անբաժան մաս է կազմում: Բացի դրանից՝ Վրաստանը իրաժարվում է Օլթի շրջանից, չնայած պատմական և ազգագրական տեսանկյունից այդ շրջանի նկատմամբ ևս ունի անառարկելի իրավունքներ: Ինչ վերաբերում է Արդահանի ամբողջ շրջանին, ապա Վրացական պատվիրակությունը հայտարարում է,

<sup>442</sup> Տե՛ս նույն տեղում, §. 200, գ. 1, գ. 221, թ. 99, նաև՝ նույն տեղում, §. 275, գ. 5, գ. 154, թ. 168:

որ բացի պատմական և ազգագրական իրավունքներից, այդ շրջանը ռազմավարական և տնտեսական տեսանկյունից Վրաստանի համար կյանքի կամ մահվան հարց է. բանն այն է, որ Բաթումի մարզը միշտ ապրել է միայն Արդահանի շրջանի սննդամթերքով, բացի դրանից, Բաթումի մարզի պաշտպանությունը, առանց Արդահանի շրջանի հարավային սահմաններին տիրապետելու, անհմաստ է: Սրան պատվիրակությունն իր պարտքն է համարում ավելացնել, որ նախ՝ Արդահանի շրջանը 1919 թ. մաքրվել և ազատագրվել է Կովկասի հարավարևմտյան հանրապետության ոտնձգություններից բացառապես վրացի գինվորների արյանք, և երկրորդ՝ ինչքան հայտնի է պատվիրակությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը երբեք չի հայտարարել Արդահանի և Օլթիի շրջանների նկատմամբ իր հավակնությունների մասին»<sup>443</sup>:

Ցավով պետք է արձանագրենք, որ վիճելի հարցերը լուծելու պատրաստականությամբ խորհրդաժողով հրավիրած բարեկամ կողմերից մեկի այսպիսի մաքսիմալիստական տարածքային պահանջների առաջ քաշումը, մեղմ ասած, չի խոսում իրական բարեկամության մասին, ել ուր մնաց հնարավորություն ստեղծեր ռազմավարական կարևոր հարցերում հետագա համագործակցության համար:

Անդրադառնանք Լոռու և Օլթիի խնդրին: Շիտակ չեն վրաց պատվիրակները՝ ասելով, թե զիջում են վերոնշյալ շրջանները, որովհետև, ըստ փաստաթթվում բերված սահմանների նկարագրության\*, վրացիները պահանջում էին ամբողջ Բորչալուի շրջանը՝ մինչև Սանահինը, ներառյալ և Օլթին<sup>444</sup>, իսկ ինչ վերաբերում է ամբողջ Արդահանի շրջանին տիրապետելու հիմնավորումներին, ապա նկատում ենք, որ վրացիները դա բացատրում են Բաթումի մարզի պարենային և սահմանային անվտանգությանը: Դրանք հիմնագուրկ բացատրություններ էին, քանզի, եթե Արդահանը պատկաներ Հա-

<sup>443</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 99, նաև՝ ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, գ. 154, թ. 168:

\* Մենք տեքստում չերեցինք սահմանների մասնագիտական-տեղանքային նկարագրությունը, քանի որ այն սովորական ընթեցողին ոչինչ չի ասում:

<sup>444</sup> Տես Թիֆլիսի հայոց դիվանագիտական ներկայացուցության թիվ 10 տեղեկագիրը: 25 հուլիսի, 1920 թ., ՂԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 607, թ. 53:

յաստանին, ապա դա Բաթումի մարզի համար ոչ մի առումով սպառ-նալիք չէր հանդիսանա, քանի որ, այսպես թե այնպես, Վրացիները տիրապետում էին հյուսիսային Արդահանին, դրանով հանդերձ՝ նաև Բաթումի մարզի հարավային սահմանը, այնպես որ ամենևին էլ կա-րիքը չկար հավակնելու գավառի հարավային սահմանագծին: Վրա-ցիների մտադրություններն ավելի քան ակնհայտ էին. հավակնելով ամբողջ գավառին՝ նրանք ձգտում էին ձախողել Հայաստանի Կարս-Արդահան-Բաթում կամ Արդահան-Լազիստան (Ոհգե, Աթինե) գծերով սեփական ծովային ելքի ծրագրերը, որոնք այնքան անհրաժեշտ էին Հայաստանի հետագա զարգացման համար:

Արդահանի հետ կապված ևս մեկ խնդիր կար, որը ձգտում էր շրջանցել Վրաստանը: Դա Արդահանի բաժանման վերաբերյալ դեռևս 1919 թ. ապրիլին կնքված հայ-վրաց-անգլիական համաձայ-նությունն էր: Իրենց հիմնազուրկ բացատրություններով Վրացիները փորձում էին չեղարկել այդ համաձայնագիրը: Ինչ վերաբերում է վրաց պատվիրակների այն լրացուցիչ հիմնավորմանը, թե 1919 թ. ապրիլին վրաց զորքերն են ազատագրել Արդահանը, պետք է ա-սենք, որ նախ վրաց զորքերի կողմից հարավային Արդահանի որոշ հատվածներ մուտք գործելն արդեն իսկ ձեռք բերված պայմանա-վորվածությունների խախտում էր, իսկ հայկական բանակն ու վար-չությունն ինչպես ամբողջ Կարսի մարզում, այնպես էլ Արդահանի հարավում վստահորեն տիրապետում էին իրավիճակին, և հետո վրացիները մինչև անկախության հոչակումը երթեք էլ չեն հավակնել Արդահանին: Բավական է վերիիշել 1918 թ. մարտին տեղի ունեցած Տրապիզոնի խորհրդաժողովի անցքերը, որպեսզի համոզվենք, որ վրացիները ձգտում էին Կարսի և Արդահանի հաշվին հագեցնել թուրքերի ախորժակը, որպեսզի կարողանային փրկել Բաթումը: Դեռ ավելին, երբ 1918 թ. մարտի կեսերին հայկական կորպուսի հրամա-նատար Թովմաս Նազարելյանը խնդրում է վրացական կորպուսի հրամանատար գեներալ Գաբաևին հսկողության տակ վերցնել Ար-դահանի շրջանը (Կովկասյան ճակատի գրեթե ողջ ծանրությունն ըն-կած էր հայկական կորպուսի ուսերին, և ուժերի անբավարության պատճառով էր Նազարելյանը դիմել Գաբաևի օգնությանը), վեր-

ջինս մերժում է՝ պատճառաբանելով, թե ինքը դրա համար ուժեր չունի<sup>445</sup>: Իրականում վրացական կորպուսին հետաքրքրում էր միայն Բաթումի մարզի անվտանգությունը, որի սահմաններին էլ կանգնած էին վրացական ստորաբաժանումները: Իսկ վրացական պատվիրակության վերջին լրացուցիչ հիմնավորումը, թե Հայաստանը երբեք հավակնություն չի ցուցաբերել Արդահանի և Օլթի նկատմամբ, լուրջ չէ, քանի որ Կարսի մարզը արդեն միջազգայնորեն ճանաչված էր որպես Հայաստանի մաս, իսկ դեռևս Փարիզի խաղաղության վեհաժողովին հայկական պատվիրակության ներկայացրած պահանջներուն Օլթին և Արդահանի գավառի Կուր գետից հարավ ընկած տարածքները ներառված էին Հայաստանի սահմանների մեջ, ինչին քաջատեղյակ էր Փարիզի վեհաժողովի վրացական պատվիրակությունը:

Հայ-վրացական խորհրդաժողովի երկրորդ նիստում, ի տարբերություն վրացիների, հայկական պատվիրակությունը սահմանավեճերի վերաբերյալ առաջարկ չներկայացրեց: Այս անգամ ձգձգումների քաղաքականություն էր որդեգրել Հայաստանի կառավարությունը: Բանն այն է, որ այդ ժամանակ Փօթիում էր գտնվում Անգլիայի ուղարկած մեծաքանակ ռազմանթերքը, ուստի կառավարությունը որոշել էր երկու-երեք շաբաթ ձգձգել այդ հարցը, մինչև այն անցկացվի Հայաստան: ՀՀ արտգործնախարարությունը երևան կանչեց Վրաստանում ՀՀ պատվիրակության ղեկավար Ստեփան Մամիկոնյանին՝ իրավիճակի մասին գեկուցում տալու և հրահանգներ ստանալու նպատակով, որը նաև վրացիների մոտ հետաձգումների հետ կապված արդարացում կլիներ<sup>446</sup>:

Ի պատասխան վրացիների մեծածավալ տարածքային պահանջներին՝ Հայաստանի կառավարությունն էլ իր հերթին մտադիր էր խորհրդաժողովին ներկայացնել տարածքային պահանջներ, որով Հայաստանի սահմանների մեջ պետք է ընդգրկվեին մինչև Խրամ գետը, ամբողջ Ախալքալաքը, Արդահանի ամբողջ շրջանը և

<sup>445</sup> Տես Հայկական կորպուսն ընդդեմ թուրքական զորքերի, գեներալ Թ. Նազարեկյանի հուշերը, Երևան, 1994, էջ 82:

<sup>446</sup> Տես ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 94:

Բարումի մի մասը՝ ճորոխի հովիտը, որը վրացիների հետ սակար-կությունների հնարավորություն կընձեռէր<sup>447</sup>:

Ինչպես տեսնում ենք, կրկին մեջտեղ է գալիս տարանցիկ փո-խադրումների խնդիրը: Տրանզիտի հարցը հայ-վրացական հարաբե-րություններում հրատապ էր հանրապետությունների գոյության ողջ ընթացքում: Այս հարցին, բնականաբար, խորությանը չենք անդրա-դառնա, քանի որ այն ուսումնասիրության այլ թեմա է: Սակայն այն անուղղակիորեն միշտ առնչվել է տարածքային խնդիրներին, որով-հետև վրացական կողմը անընդհատ շահարկել է տրանզիտի հար-ցը՝ Հայաստանին տարածքային գիշումների մղելու հույսով: Իսկ երբ հայերն էին պայքարում սեփական ծովային ելքի համար, բախ-վում էին վրացիների մերժողական դիրքորոշմանը: Վերջիններս գո-նե չեին էլ փորձում փոխգիշման գնալ, որ Հայաստանի կառավա-րությունն էլ իմանար, թե ինչի դիմաց է հրաժարվում ծովային ելքից: Բայց ոչ. Ախալքալաքը, Լոռին և Արդահանը պետք է իրենց պատկա-նեն, Հայաստանը պետք է սեփական ծովային ելք չպահանջի, և Վերջինիս նկատմամբ թուրք-ադրբեջանական թշնանական վերա-բերնունքի համատեքստում փոխգիշումը պետք է լինի Վրաստանի տրանզիտային բարյացակամությունը: Ենչտ չեր, իհարկե, այս քա-ղաքականությունը: Փորձելով խեղդել բախտակից հարևանին՝ Վրաստանը, անշուշտ, արագացնում էր իր վախճանը: Ցավոտ է փաստել, որ երկու հարևաններն էլ, հաճախ տուրք տալով իրավի-ճակային թվացյալ ձեռքբերումներին, անտեսել են ապագային միտ-ված գլոբալ շահերը: Հանուն արդարության, սակայն, պետք է ասել, որ Վրաստանի մենշևիկ վարիչներն անգերազանցելի էին այս հար-ցում, թեպետ Հայաստանի դաշնակցական կառավարությունն էլ էր սայթաքումներ ունենում:

Հայ-վրացական տարածքային վեճերը հուլիս-օգոստոս ամիս-ներին լուծում չեն ստանում: Վրացիները շարունակում էին պահան-ջել Բորչալուի շրջանը, այդ թվում՝ Սանահինը, ամբողջ Ախալքալա-քի ու Արդահանի շրջանները և Օլթիի մի մասը: Խորհրդաժողովը հուլիսի վերջերից ժամանակավորապես դադարեցնում է իր աշխա-

<sup>447</sup> Տե՛ս նույն տեղում:

տանքները, վերսկսում՝ օգոստոսի կեսերին: Վրացական կողմն առաջարկում է առաջնահերթորեն լուծել չեզոք գոտու հարցը: Լորդ-կիպանիձեն հայտարարում է, որ այն մի չարիք է և երկու երկոների համար՝ մի շատ վտանգավոր վայր ներքին խռովությունների ու բոլշևիկների ոտնձգությունների համար, և նա առաջարկում է տարածքը ժամանակավորապես բաժանել Հայաստանի ու Վրաստանի միջև: Հայաստանի կառավարությունը մերժում է այս առաջարկը՝ գտնելով, որ Բորչալուի մի մասը ժամանակավորապես Վրաստանին տալը հավասարազոր է մշտապես տալուն, ինչպես եղավ Ալսալքալաքի շրջանի պարագայում<sup>448</sup>: Հայաստանի կառավարությունը կողմն էր սահմանավեճերի ամբողջական լուծմանը, հակառակ դեպքում այն պետք է հանձնվեր միջազգային արբիտրաժի դատին:

Մինչ ընթանում էին խորհրդաժողովի աշխատանքները, ամռան ընթացքում շարունակվում էին տարաբնույթ միջադեպերն Արդահանի շրջանում: Մասնավորապես Արդահանի վրացական հատվածից դեպի հայկական հատված էին ներթափանցում ավազակախմբեր՝ անասուններ գողանալու նպատակով: Եվ հայ զինվորներն ստիպված էին լինում նրանց հալածել դեպի հյուսիսային Արդահան, իսկ Բեկզադյանը վրացական իշխանություններից խնդրում էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի Վրաստանի տարածքից ավազակներ չանցնեն Հայաստան<sup>449</sup>:

### **3.4. Արդահանի խնդիրը թուրք-հայկական պատերազմի ընթացքում**

1920 թ. սեպտեմբերին բռնկվեց թուրք-հայկական պատերազմը: Այն փաստացի հանգեցրեց Հայաստանի անկախության կորստին և էականորեն արագացրեց Վրաստանի անկումը: Թե ինչ ընթացք կստանար Արդահանի շուրջ հայ-վրացական վեճը, եթե չլիներ այս պատերազմը կամ, եթե չկործանվեին երկու հանրապետություննե-

<sup>448</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, գ. 607, թ. 83-84:

<sup>449</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, գ. 5, գ. 560, մաս I, թ. 164:

րը, դժվար է ասել. պատմությունը «Եթեներ» չի ընդունում: Պատերազմի ընթացքում այս վեճը լուրջ զարգացումներ ունեցավ, որոնց ուսումնասիրությունը և վերլուծությունը ակամա հանգեցնում են այն եզրահանգմանը, որ Վրաստանը, օգտվելով Հայաստանի ծանր, մղջավանջային վիճակից, թուրքերի հետ համագործակցաբար փորձում էր խլել Արդահանի շրջանը, ինչն արեց նաև Լոռվա պարագայում:

Դեռ նոր էր սկսվել պատերազմը, երբ վրաց իշխանություններն այս ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկեցին: Սեպտեմբերի 30-ին Վրացիները Չլդըրի և Գյոլի շրջաններ են ուղարկում իրենց կողմից նշանակված գավառապետերին: Սա նշանակում էր, որ նրանք ուզում են հայերի ձեռքից խլել հարավյային Արդահանի քաղաքացիական իշխանությունը: Դեսպան Բեկզադյանը բողոքում է վրաց արտգործնախարար Սաբախտարաշվիլուն՝ ակնարկելով, որ վրաց կառավարությունը կարող է կապ ունենալ թուրքերի հետ և (կամ) օգտվում է Հայաստանի ծանր վիճակից, բայց ստանում է հերքող պատասխան և հավաստիացումներ՝ Հայաստանի նկատմամբ բարի վերաբերմունքի մասին: Սակայն այդ ամենը հայկական կողմին հավատ չէր ներշնչում: Այս կապակցությամբ Վարչապետ Օհանջանյանը հեռագրում է Բեկզադյանին. «...Կտրուկ կերպով բողոքեցեք Սաբախտարաշվիլիի առջև: Հասկացրեք, որ բացի իրենց խոստմանը հակասելուց՝ նման քայլերն անթույլատրելի են և կարող են իբրև մեր դեմ թշնամական վերաբերմունք դիտվել: Պահանջեցեք անմիջապես հեռացնել այդ շրջաններից վրաց իշխանության ներկայացուցիչներին, և բացատրեք, որ Արդահան գավառի Քոի աջ սահմանը ոչ մի դեպքում չպետք է խախտվի վրացիների կողմից: ...Երեկ ասացիք Սաբախտարաշվիլու խոսակցությունը, դա չի հաստատում Արդահանում նրանց բռնած դիրքով...»<sup>450</sup>:

Պարզ էր վրացիների բռնած դիրքը: Տրամաբանորեն այն տանում էր զինված ուժերով Արդահանի գրավմանը: Այդ անհանգստությունն արդեն նկատելի էր Հայաստանի կառավարությունում: Յոկտեմբերի 7-ին ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը գրում է

<sup>450</sup> Նույն տեղում, գ. 79, թ. 147-148, նաև՝ նույն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 602, թ. 3:

Բեկզայանին. «...Կկասկածենք, որ վրացիք ուրախ լինեն տաճկական արշավանքին, որ օգտվին գրավելու Արդահանը: Մեզ անհասկանալի է նրանց հանգստությունը Արդահանում: Կկասկածենք, որ երբ ջարդենք տաճիկներին, մեր դեմ ունենանք Արդահանում (Վրացիներին – Շ. Թ.)...»<sup>451</sup>: Յաջորդ օրը Բեկզայանը պատասխանում է, որ Թիֆլիսում իրենք էլ են Արդահանի վերաբերյալ կարծում, որ Վրացիք կարող են օգտվել հանգամանքից և գրավել<sup>452</sup>: Այնուամենայնիվ, Յայաստանի կառավարությունը շատ վճռական էր տրամադրված այս հարցում: Վերջինս գտնում էր, որ եթե Վրացիները զինված ոտնձգություն ցուցաբերեն Արդահանի նկատմամբ, ապա իրենք ոչ մի խնդրի առջև չպետք է կանգ առնեն, և դա պետք է իմանան թե՝ Վրացիները և թե՝ դաշնակիցները<sup>453</sup>:

Վրացիների զինված ներխուժումը հարավային Արդահան երկար սպասեցնել չտվեց՝ արդարացնելով հայկական կողմի հիմնավոր կասկածները: Յավանաբար հոկտեմբերի 9-ին (Թիֆլիս-Երևան նամակագրության ժամանակագրությունն ու բովանդակությունը համադրելով՝ համոզվում ենք, որ հոկտեմբերի 8-ի դրությամբ ներխուժումը դեռ չէր եղել) 30 զինվորներից ու մի քանի սպաներից բաղկացած վրացական մի ջոկատ մուտք է գործում Զուրգունա, որտեղ նրանք բարձրացնում են վրացական դրոշակը: Ստացված տեղեկությունների համաձայն՝ Ախալքալաքից Զուրգունա էր շարժվում նաև վրացական 8-րդ գումարտակը: Այս ամենից վրդովված՝ վարչապետ Օհանջանյանը հեռագրում է Բեկզայանին. «...Արդահանի շրջանի գրավումը վրացիք վերագրում են տեղական ազգարնակ-չության հրավերին: Շտապ և կտրուկ կերպով պահանջեցեք վրացական կառավարությունից անմիջապես հեռացնել իրենց զորքերը Արդահանի մեր սահմաններից: Յակառակ դեպքում հետևանքների ամբողջ պատասխանատվությունը կընկնի նրանց վրա»<sup>454</sup>:

<sup>451</sup> Նույն տեղում, ֆ. 275, գ. 5, գ. 79, թ. 150:

<sup>452</sup> Տես նույն տեղում, թ. 151:

<sup>453</sup> Տես նույն տեղում, թ. 155:

<sup>454</sup> Նույն տեղում, գ. 19, թ. 17:

Մինչև այժմ ականատես էինք լինում վրացիների կողմից Արդահանի նկատմամբ հավակնությունների ամենատարբեր անհիմն բացատրություններին, իհմա արդեն շրջանը գրավելու նույնքան անհիմն ու ստահոդ իհմնավորումների հերթն էր. իբր տեղի բնակչության ցանկությամբ են գրավել շրջանը: Մի՞թե Չլդըրի և Գյոլի քրդերի հիշողությունն այդքան կարծ էր, և նրանք մոռացել էին նոտ մեկուկես տարի առաջ իրենց նկատմամբ վրացի զինվորների կատարած բռնություններն ու բալանը. հազիվ թե: Որպես ապացույց՝ նշենք, որ դեռևս հոկտեմբերի սկզբներին Ախալքալաքից Չլդըր են ժամանում վրացի պաշտոնյաներ և չլդըրիներին առաջարկում ընդունել վրացական հպատակություն, սակայն վերջիններս մերժում են՝ հայտարելով, որ իրենք մնում են Յայաստանի կառավարության հավատարիմ հպատակներ<sup>455</sup>:

Յոկտեմբերի 13-ին Բեկզադյանը տեսակցում է Սաբախտարաշվիլիի հետ: Բողոքելով Արդահանի գրավման համար՝ դեսպանը հայտնում է. «...Այժմ մեր զորքերը պիտի գնան գրավելու մեզ պատկանող Չլդըրը և Գյոլը և, եթե հանդիպելու լինենք այստեղ վրաց զորքերի հետ, հ՞նչ պիտի անինք. մի՞թե կրվինք...»<sup>456</sup>: Ակնարկն ավելի քան հասկանալի էր. մի՞թե սահմանավեճը գենքի ուժով է լուծվելու, մի՞թե հայ և վրաց զինվորներն իրար դեմ են դուրս գալու, իհարկե՝ ոչ, որովհետև ոչ վաղ անցյալի պատմությունից այդպիսի դառը դաս արդեն ունեինք:

Բարեբախտարար, Զուրզունայում գործը դրան չհասավ: Յայ զինվորները հոկտեմբերի 13-ին ձերբակալեցին և բանտարկեցին ներխուժած վրացի զինվորներին<sup>457</sup>, բռնագրավեցին նրանց ձիերն ու հրացանները և պատառութեցին բարձրացված վրացական դրոշակը<sup>458</sup>:

Սաբախտարաշվիլիի հետ վերոնշյալ հանդիպման ժամանակ Բեկզադյանը պաշտոնապես փոխանցում է նաև բողոքի նոտա, որ-

<sup>455</sup> Տե՛ս Ռ. Տեր-Մինասյան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. Ա. Վիրաբյան, Երևան, 2011, էջ 241:

<sup>456</sup> ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, զ. 19, թ. 13:

<sup>457</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 18:

<sup>458</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 23:

տեղ մանրամասն ներկայացնելով վրացական զորամասի կողմից Արդահանի շրջանի Չլդըրի և Գյոլի տեղամասերի գրավումը, այն-տեղ վրացական քաղաքացիական իշխանությունների հաստատումը, Զուրզունայուն վրացական պետական դրոշի բարձրացումը, Ա-խալքալարից դեպի Արդահան վրացական 8-րդ գումարտակի ընթացքը՝ նշում է, որ անթույլատրելի է սեփական տարածքների անձեռնմխելիության համար անողոք թշնամու դեմ վճռական պատերազմի դուրս եկած բարեկամ ժողովրդի նկատմամբ իրականացնել թշնամական գործողություններ՝ ապօրինաբար զավթելով նրա տարածքները: Ընդ որում՝ այդ պատերազմը, ըստ վրաց հանրության միահամուռ կարծիքի, պաշտպանում է նաև հենց Վրաստանի պետական շահերը: Ապա շարունակում է՝ նշելով, որ վրացական իշխանությունների նմանատիպ վարքագիծը Արդահանի շրջանում, զուգադիպելով թուրքական ներխուժման հետ, թշնամու դեմ մարտնչող հայ ժողովրդի մոտ խորը հիասթափություն է առաջացնում Վրաստանի կառավարության նկատմամբ, իսկ այդպիսի զգացողության առկայությունը հազիվ թե նպաստի հարևան հանրապետությունների բնականոն հարաբերությունների ամրապնդմանը, ինչքան էլ վերջիններիս կառավարությունները կամենան: Նոտայի վերջնամասում պահանջվում է վրացական զորքերից շտապ մաքրել հայկական տարածքները<sup>459</sup>: Այս նոտան իր բովանդակությամբ տիպիկ և պատկերավոր կերպով բնութագրում է վրացական մենշևիկյան իշխանությունների հակահայ կեցվածքն ու բացահայտում վերջններիս իրական նպատակները:

Ի վերջո, հայկական կողմի ճնշման ներքո, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը զորքերը հարավային Արդահանից դուրս հանելու կեղծ պատրաստակամություն ցուցաբերեց՝ որդեգրելով ձգձգումների և խուսանավման քաղաքականություն: Այժմ էլ Արդահան մտնելու գլխավոր հիմնավորումներից մեկը իր թուրքական հնարավոր ներխուժման վտանգը կանխելն էր: Վրացական կառավարությունը մեզանից երաշխիքներ էր պահանջում, որ իրենց զորքերը ետ քաշելուց հետո թուրքերը չեն գրավի այդ տարածքը, ո-

<sup>459</sup> Տե՛ս նույն տեղում, §. 200, գ. 1, գ. 602, թ. 17:

որ վիճելի է Հայաստանի և Վրաստանի միջև: Այսպես վրացական կառավարությունը մեկ նետով երկու նապաստակ էր սպանում. մի կողմից վերահաստատում էր գավառի վիճելի լինելու հանգանանքը, մյուս կողմից երաշխիքներ պահանջելով՝ հիմք էր ստեղծում զորքերը շրջանից դուրս չհանելու համար: Այս ամենին գումարվեց նաև վրաց գինվորներին Զուրգունայում բանտարկելու լուրը, որը շատ էր «վրդովեցրել» վրաց կառավարական շրջանակներին: Այս կապակցությամբ հոկտեմբերի 14-ին սուր խոսակցություն է տեղի ունեցել Բեկզայանի և Սարբախտարաշվիլիի միջև, որտեղ վերջինիս դժգոհությանն ի պատասխան՝ Բեկզայանը նշել է, որ նրանք չեն բանտարկվի, եթե ուրիշի հոդի վրա իրենց դրոշը չպարզեին: Ի վերջո, ձեռք է բերվում պայմանավորվածություն, որ հայերը ազատ կարձակեն վրաց գինվորներին, իսկ վրացական զորքը դուրս կգա հարավային Արդահանից<sup>460</sup>: Հայկական կողմը անմիջապես կատարեց իր պարտավորությունը, սակայն վրացիները չեն շտապում դուրս հանել զորքերը: Հաջորդ օրը Բեկզայանը նորից տեսակցություն ունեցավ Սարբախտարաշվիլիի հետ: Կերծինս Արդահանի վերաբերյալ այս անգամ առաջ է քաշում երկու առաջարկ. 1. վրացիք պահում են իրենց զորքերը Արդահանի հարավային մասում և գրավոր երաշխավորում, որ այդ հանգամանքը հետագայում վեճը լուծելիս ոչ մի առավելություն չի տալու, 2. նրանք քաշում են իրենց զորքերը, բայց հայերը երաշխավորում են, որ այդ տարածքը այնքան ամուր կպահեն, որ թուրքերն այնտեղ չմտնեն, ինչպես նաև վրացիներին են հանձնում Ախալքալաք-Արդահան խճուղին<sup>461</sup>:

Ինչպես տեսնում ենք, վրաց արտգործնախարարը տարբեր հնարքներով փորձում է շրջանցել Բեկզայանի արդարացի պահանջները. մի դեպքում ուղղակի համոզում է, որ իրենց զորքերը մնան գրավված տարածքներում՝ քաջ գիտակցելով, որ գրավոր երաշխավորությունը քաղաքական կատեգորիա չէ, հատկապես, որ մեր աչքի առաջ ունեինք Ախալքալաքի դաշն օրինակը, իսկ մյուս դեպքում պահանջում է Ախալքալաք-Արդահան խճուղին, որը գրեթե

<sup>460</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, գ. 5, զ. 19, թ. 18:

<sup>461</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 23-24:

նույն է, ինչ Արդահանի շրջանին տիրելը: Իհարկե, այս խնդիրը քննարկելիս, հայոց դեսպանը հակառակվում է՝ նշելով, որ թերևս կարող է խոսք լինել միայն խճուղուց ազատ օգտվելու իրավունքի մասին: Այս «ներկայացումն» ավարտվում է, և ամեն ինչ պարզ է դառնում, երբ հոկտեմբերի 18-ին Սաբախտարաշվիլին պաշտոնապես գրավոր պատասխանում է Բեկզադյանի հոկտեմբերի 13-ի նոտային: Այստեղ պարզորոշ երևում է վրացական կառավարության՝ Արդահանը գրաված պահելու հստակ դիտավորությունը: Ահա այդ գրության հիմնական դրույթները. «Վրաստանի հանրապետության գործերով և աղմինհստրացիայով Արդահանի գավառի Չլդըրի և Գյոլի շրջանների գրավման առիթով Զեր հղած նոտային ի պատասխան հայտնում եմ հետևյալը. 1. ինչպես Զեզ հայտնի է, Վրաստանի և Հայաստանի միջև վիճելի տարածքային հարցերի թվում է գտնվում նաև Արդահանի գավառը: Հետևաբար, չենք կարող չարտահայտել մեր գարնանքը Զեր հայտարարության հետ կապված, որով Արդահանի գավառի Չլդըրի և Գյոլի շրջանները որակում եք որպես Հայաստանի տարածքի մաս, իսկ գրավումը՝ անթույլատրելի բռնագավթում: Մենք գտնում ենք, որ մինչև այս վիճելի հարցի վերջնական լուծումը վրացական գործերի այդտեղ գտնվելը նույնքան օրինական է, որքան հայկական գործերինը և աղմինհստրացիայինը: 2. Բացի դրանից՝ ուշադրություն դարձնելով այն հանգամանքներին, որոնց հետևանքով Չլդըրի և Գյոլի շրջանները գրավվեցին վրացական գործերի և աղմինհստրացիայի կողմից, ակնհայտ է դառնում, որ գրավումն անհրաժեշտ էր ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի կենսական շահերի պաշտպանության համար: Այդ շրջանների բնակչության մեջ կազմավորվել են ավագակախմբեր ինչպես Վրաստանի դեմ, այնպես էլ հայկական գործերի թիկունքում ռազմական գործողություններ իրականացնելու համար: Միաժամանակ նկատվեց քենալ փաշայի գործերի շարժումը Արդահանի ուղղությամբ, որոնք և կգրավեին այն, եթե վրացական գործերն այնտեղ չմտցվեին: Դրա շնորհիվ թուրքերի հարձակումը Արդահանի վրա կասեցվեց, և դադարեցվեց ավագակախմբերի կազմավորումը...»<sup>462</sup>: Վերոհիշյալ

<sup>462</sup> Նույն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 602 թ. 23:

արժեքավոր արխիվային փաստաթուղթը գրեթե ամբողջությամբ մեջբերեցինք՝ ապացուցելու վրաց մենշևիկների երեսպաշտությունը։ Արդահանճ վիճելի հօչակած վրացի կառավարիչները, հենվելով իրենց իսկ մոգոնածի վրա, օրինական են համարում ուրիշի տարածքի գրավումը։ Նրանք պնդում են, թե իբր այդ գրավումը բխում է նաև Հայաստանի կենսական շահերից։ Եթե Հայաստանի կառավարությունը, ելնելով անհրաժեշտությունից, իր տարածքում տեղաբաշխված զորքերը տեղաշարժում է մի տեղից մեկ այլ տեղ (տվյալ դեպքում Արդահանից Կարսի ճակատ՝ դիմակայելու այդ ուղղությամբ թուրքական առաջխաղացմանը), ապա դա արդյո՞ք նշանակում է ստիպողական տարիանում (Սարբահարացվիլին այդ նույն գրության մեջ հայկական զորքի տեղաշարժը դեպի Կարսի ճակատ «դիտարկում էր» որպես ստիպողական տարիանում, որով և հիմնավորում էր Վրացական զորքի մուտքը Արդահան), և արդյո՞ք դա իրավունք է տալիս Վրաստանի կառավարությանը գրավել այդ տարածքները՝ իբր քենալականներին կանգնեցնելու և ավագակախմբերի դեմ պայքարելու համար։ միանշանակ ոչ։ Իսկ քենալականներն էլ թուրք-հայկական պատերազմի ողջ ընթացքում այդպես էլ Արդահանի ուղղությամբ չառաջացան՝ բացառությամբ Գյոլի տեղանասի հարավային հատվածի (Մերդենեկի ուղղություն), ինչն էլ մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ վաղօրոք Արդահանի և Հայաստանի այլ տարածքների վերաբերյալ թուրք-վրացական զործարք էր կնքվել։ Բայց դրա մասին ավելի ուշ կխոսենք։ Ինչ վերաբերում է ավագակախմբերին, ապա ևս մեկ անգամ հիշենք, որ ողջ ամռան ընթացքում Արդահանի հայկական կայազորը ստիպված էր հալածել վրացական հատվածից ներթափանցած ավագակախմբերին։ Ի վիճակի չլինելով ժամանակին վերջիններիս դեմ անհրաժեշտ պայքար կազմակերպելուն՝ վրաց իշխանավորները դրանով հիմնավորում են ուրիշի տարածք ներխուժումը, և դա այն դեպքում, երբ Արդահանի հայկական հատվածում տեղական վարչության արդյունավետ գործունեության շնորհիվ ոչ մի ավագակախմբի գոյության փաստ չի արձանագրվել։ Գրության վերջում վրաց արտգործնախարարը, կեղծավորությամբ և շողոքորթելով, կրկին պնդում է, թե ԶԼՂը որ և Գյոլի

գրավումը եղել է ռազմավարական անհրաժեշտություն և ոչ մի կերպ չի կարող համարվել հարցի վերջնական լուծում:

Ի դեպ փաստենք, որ ննան վարքագիծը վրաց իշխանավորների համար դարձավ առօրյա գործունեության նարտավարություն: Օգտվելով ռազմաճակատում հայոց բանակի անհաջողություններից՝ վրացիներն անընդհատ կրկնում էին նույն երգը: Որպես ասվածի ապացույց՝ բերենք Բեկզադյանի հերթական՝ հոկտեմբերի 23-ի հեռագիրն Օհանջանյանին. «Այսօր տեսակցեցի Սարախտարաշվիլիի հետ. կտրուկ կերպով հավաստիացրեց, որ Արդահանի շրջանում նոցա միակ նպատակն է պահել քաղաքը և կանխել թուրքերի առաջխաղումը: Ոչ մի ուրիշ նպատակի և մանավանդ շրջանը գրավելու մասին խոսք լինել չի կարող: Յավաստիացրեք ձերոնց, ասաց մինհստրը, որ մենք ոչ մի վեճ հայերի հետ գենքով վճռելու դիտավորություն չունենք: Եթե թուրքերը առաջ խաղային դեպի Արդահան, մենք պիտի կրվեինք և ոչ մի դեպքում չենք կարող միանալ տաճիկների հետ հայերին վնասելու դիտավորությամբ: Յամոզեցեք ձերոնց, որ ձեր պարտությունը մեր պարտությունն է, և մենք սրտատրոփ սպասում ենք ձեր հաղթություններին իբրև մեր փրկության...»<sup>463</sup>:

Եթե իրոք մեր պարտությունը վրացիների պարտությունն էր և մեր հաղթանակը նրանց փրկությունը, և եթե նրանք պատրաստ էին կռվել թուրքերի դեմ Արդահան ներխուժելու դեպքում, ապա ի՞նչն էր խանգարում վրաց կառավարությանը Յայաստանի հետ ուս ուսի տված կռվել ընդհանուր վտանգի դեմ, չէ՞ որ դա էր ենթադրում առողջ տրամաբանությունը, և ոչ թե ոստիսի դեմ անհավասար կռվում մարտնչող հայկական բանակի թիկունքում ներխուժել հայկական տարածք և կանգնեցնել կատարված փաստի առաջ: Կամ թե ինչո՞ւ, ռազմակալելով Արդահանի շրջանը, զինաբափեցին հայ բնակչությանը<sup>464</sup>, չէ՞ որ զինված հայերը թուրքերի դեմ հուսալի դաշնակից

<sup>463</sup> Նոյմ տեղում, ֆ. 275, գ. 5, գ. 19, թ. 31-32:

<sup>464</sup> Տե՛ս «Յառաջ», 10 յոկտեմբեր, 1920, թիվ 221, նաև՝ «Ժողովուրդ», 10 հոկտեմբեր, 1920, թիվ 169:

կլինեին: Մրանք հարցեր են, որոնց մեջևակի վարիչները հաստատ անկեղծ ու շիտակ պատասխան չեն կարող տալ:

Յոկտեմբերի կեսերին Բեկզայանի նկատվող մեղմ և գիշողական պահվածքը Վրաստանի հետ հարաբերություններում նի կողմից պայմանավորված էր տրանզիտի մշտական խնդրով, մյուս կողմից՝ նա հույս ուներ դաշնակիցների կոլեկտիվ ճնշման ներքո Վրաստանին դուրս բերել բոլշևիկների դեմ՝ ուղղորդելով նրան դեպի Ղազախ և Աղստաֆա, որը մեզ հնարավորություն կտար լրացուցիչ ուժեր նետելու դեպի արևմտյան ճակատ՝ թուրքերի դեմ<sup>465</sup>: Բայց արդեն ամսվա վերջին նա հասկացավ, որ Վրաստանի հետ կապված բոլոր հույսերը սին են: Յոկտեմբերի 25-ին Թիֆլիսում տեղի է ունենում հայ և վրաց պատվիրակությունների երկու նիստ, որտեղ էլ քննարկումների արդյունքում պարզ է դառնում, ինչպես դա արձանագրել է իր գեկուցագրում դեսպան Բեկզայանը, որ «Վրացիները մեզ հետ չեն կրւելու եւ այլեւս նրանց վրայ որեւէ յոյս դնելու չէ, եթէ նրանք չխանգարէն մեր մորիլիզացիային (Վրաստանում բնակվող հայաստանահպատակների զորակոչին – Ը. Թ.) եւ տրանզիտին, եւ տան իսկապէս դիւրութիւններ որոշ կարեւոր ապրանքներ արտահանելու այստեղից եւ Բաթումից - դա ամենամեծ աջակցութիւնը պիտի համարել, որը նրանք այժմ տրամադրի են մեզ անելու...»<sup>466</sup>: Սակայն երբ կարդում ենք գեներալ Քիշմիշևի նոյեմբերի 16-ին այս թեմայով Ռուբենին հղված հերթական գեկուցագիրը, հասկանում ենք, որ Վրաստանից Յայաստանին իրական օգնություն չի լինելու. «...Նրանցից օգնություն սպասել չարժե», – գրում է Քիշմիշևը<sup>467</sup>:

Թիֆլիսում բրիտանական ներկայացուցիչ գնդապետ Ստորսը ևս բավկանաչափ ջանքեր թափեց այս ուղղությամբ, սակայն ի վերջո նա էլ եկավ այն համոզման, որ վրացիները հայերին զինված աջակցություն չեն ցուցաբերելու<sup>468</sup>: Անգլիական վերջին զինվորները Բաթումից հեռացել էին դեռևս հուլիսին, դաշնակիցներն այլևս

<sup>465</sup> Տե՛ս ՂԱԱ, ֆ. 275, գ. 5, զ. 19, թ. 20-21:

<sup>466</sup> Նույն տեղում, ֆ. 200, գ. 1, զ. 602, թ. 42:

<sup>467</sup> Նույն տեղում, գ. 221, թ. 148:

<sup>468</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 602, թ. 43:

մեծ ազդեցություն չունեին տարածաշրջանում, այստեղ արդեն գլխավոր խաղացողները բոլշևիկներն ու քեմալականներն էին: Դիշենք նաև, որ հոկտեմբերին ընթանում էին բանակցություններ բոլշևիկների ներկայացուցիչ Լեգրանի հետ՝ հայ-ռուսական հաշտության պայմանագիր կնքելու համար, և մեր դիվանագիտությունն այս հանգանանքը ևս ձգտում էր օգտագործել Արդահանի պաշտպանության համար: Բեկզադյանի՝ Օհանջանյանին ուղղված հոկտեմբերի 23-ի հեռագրում կարդում ենք. «...Ես ուզում եմ առաջարկել նրանց (բոլշևիկներին – Շ. Թ.) մի գինվորական ուղարկել Ղարս՝ մերոնց հետ որոշ համաձայնության գալու Արդահանի շրջանի պաշտպանության մասին...»<sup>469</sup>: Ըստ երևույթին, խոսքը գնում էր շրջանը վրացիներից պաշտպանելու մասին:

Շարունակվում էր մոլեգնել թուրք-հայկական պատերազմը, և հայոց բանակի անհաջողություններին զուգահեռ ավելանում էին Վրաստաճի կառավարության տարածքային պահանջները: Կարսի անկնան լուրջ ստանալու հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, Սարախտարաշվիլին իր մոտ է հրավիրում Բեկզադյանին: Տեղի է ունենում ծանր գրույց, որտեղ վրաց արտգործնախարարը, փաստելով Կարսի անկումը, ասում է. «...Եթե դա այդպես է, բնական է, որ թուրքերը կարող են անցնել Ալեքսանդրապոլ, իսկ այդ դեպքում վտանգվում է նեյտրալ գոնան, որտեղից Վորոնցովկայի վրայով նրանք կարող են անցնել դեպի Վրաստան...»<sup>470</sup>: Եվ, որպեսզի դա տեղի չունենա, Սարախտարաշվիլին Յայաստանի կառավարությանն առաջարկում է թույլ տալ գրավել չեղոք գոտին: Բնականաբար Բեկզադյանը մերժում է այդ առաջարկը՝ այն համարելով ևս մեկ ապացույց, որ վրացիներն օգտվում են հայերի ներ վիճակից, փոխանակ օգնեին միասին ետ մղել տաճիկներին, որի համար հարկավոր էր Մերդենեկում կանգնած վրացական 3000-անոց գնդի աջակցությունը: Սակայն Սարախտարաշվիլին պնդում է առաջարկը՝ մեղադրելով հայերին, որ Արդահանում էլ դեմ էին վրացական գորքի տեղակայմանը, իսկ

<sup>469</sup> Նույն տեղում, ֆ. 275, գ. 5, գ. 19, թ. 32:

<sup>470</sup> Նույն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 150:

հիմա գորքերը քաշում են այնտեղից<sup>471</sup>: Իհարկե, Վրացիները շատ լավ գիտակցում եին, որ արևմտյան ռազմաճակատի վճռորոշ տեղանասը Կարսն էր, որտեղ կենտրոնացել էին ճակատի բոլոր ուժերը, այդ թվում՝ նաև Արդահանում տեղակայված զորամասերը, և շրջանից զորքերի դուրսբերումը միմիայն պայմանավորված էր դրանով, բայց վրացական կառավարությունը, շահարկելով ստեղծված փաստացի իրավիճակը, փոխանակ գինական աջակցություն ցույց տար (ինչպես իրավացիորեն մեղադրում էր Բեկզադյանը), հանդիսատեսի նման թիկունքից հետևում էր հայերի կենաց ու մահու գոյանարտին: Արդահանի շրջանում մնացած միակ հայկական զորախումբը Գյոլի հարավում գտնվող Մերդենեկի զորամասն էր՝ Սեպուհի գլխավորությամբ, որն էլ դեպի Կարսի մատույցները նահանջի հրաման ստացավ հոկտեմբերի 29-ի գիշերը՝ Կարսի կովի նախօրեին<sup>472</sup>:

Վերոնշյալ գրույցի ընթացքում Սաբախտարաշվիլին ևս մեկ առաջարկ ներկայացրեց, որ հայկական կողմը թույլատրի վրացիներին ազատ օգտվել Ախալքալաք-Արդահան խճուղուց<sup>473</sup>: Բայց սա արդեն ձևական առաջարկ էր: Կարսի անկումից հետո թուրքերը առաջացան դեպի Ալեքսանդրապոլ, և Կարսի ռազմաճակատի հայկական բոլոր ուժերը կենտրոնացել էին Ալեքսանդրապոլի մատույցներում: Քեմալականերն այդպես էլ չշարժվեցին Արդահանի վրա, և շրջանը, փաստորեն, միանձնյա տնօրինում էին վրացական զորքերն ու վարչությունը:

Թուրք-հայկական պատերազմն ավարտվեց Հայաստամի պարտությամբ, որը հանգեցրեց Հայաստանի խորհրդայնացմանը: Թվում էր, թե Վրաստանը ծիշտ էր կողմնորոշվել և շահած դուրս եկել այդ իրադարձություններից: Արդահանը գրավել էր, Լոռու չեզոք գտտին ևս ամրագրել էր նոյենբերի 13-ի հայ-վրացական պայմանագրով, Ախալքալաքը գրավել էր դեռևս 1918 թ. դեկտեմբերի սկզբին և ամ-

<sup>471</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 151:

<sup>472</sup> Տե՛ս Ազատ, ամեկան և միացյալ Հայաստանի վերջին օրերը: Ամեայտ գրողի օրագիրը, կազմ. և հրատ. Ս. Հարությունյանը, Երևան, 1993, էջ 106:

<sup>473</sup> Տե՛ս ՐԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 221, թ. 152:

րագրել էր 1919 թ. հունվարյան հայ-վրացական հաշտության խորհրդաժողովում: Սակայն դա այդպես չէր: Դայաստանի հետ հարցերը լուծելուց հետո քենալականները բնդանոթներն ուղղեցին Վրաստանի դեմ: Նրանք Վրաստանից պահանջեցին անհապաղ զորքերը դուրս բերել Արդահանի շրջանից<sup>474</sup>, ապա, խախտելով բուրգ-վրացական ենթադրյալ դաշինքը<sup>475</sup>, 1921 թ. փետրվարի 23-ին գրավեցին Արդահանը, հետո ներխուժեցին Ախալքալաքի գավառ<sup>476</sup>: Արդահանը գրավելու հարցում, ըստ Էռլիքյան, բոլշևիկներն աջակցում

<sup>474</sup> Տե՛ս **Գալոյան Գ.**, Դայաստանը և մեծ տերությունները..., էջ 433:

<sup>475</sup> Այդ դաշինքի մասին հատակ գրել է Ա. Խատիսյանը, ըստ որի՝ Ալեքսանդրապոլի բանակցությունների ընթացքում՝ նոյեմբերի 29-ին, Կարաբերի փաշան ասել է, որ Անգորայի ներկայացուցիչներ Յուսուֆ Քեմալ թեյր և Ալի Ֆուատ փաշան 1920 թ. ամռանը եղել են Թիֆլիսում և Վրաստանի կառավարության հետ դաշինք են կազել, համաձայն որի՝ հայ-բուրգական պատերազմ ծագելու դեպքում Վրաստանը պետք է չեղորդաբար պահպաներ, ինչի դիմաց կստանար Բորչալովի, Ախալքալաքի և Արդահան գավառները (տե՛ս **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 307): Քյազիմ Կարաբերի տեղեկությունը կարելի է և կասկածելի հանրաԵլ՝ ելնելով հայերի և վրացիների մեջ սեպ խորելու բուրգական պահպանական քաղաքականությունից: Սակայն կան հանգամանքներ, որոնք հաստատում են այդ դաշինքի գոյությունը: Խատիսյանը գրում է, որ այդ խոսակցության մասին ինքը հետագայում պատմել է վրաց ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլուն, որն այդ բոլորը հերքել է, սակայն, ըստ Խատիսյանի, հետագայում Մ. Քեմալը հրամայել է քննություն անցկացնել, թե որտեղից է խատիսյանն ստացել այդ տեղեկությունը (տե՛ս նույն տեղում): Այստեղից էլ հետևություն, որ վրաց գործիչները խիստ անհանգստացել են գաղտնիքի բացահայտումից և այդ մասին հայտնել են Անկարա: Առավել գորեն ապացույց է այն, որ, իրոք, վերոնշյալ քեմալական գործիչները եղել են Թիֆլիսում, բանակցել են ժորդանիայի ու Գեգեչկորու հետ և ձեռք են բերել որոշակի պայմանավորվածություններ: Դիմանից հետո Բարքում ընթացող Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին մասնակցող բուրգական պատվիրակության ղեկավար Քեքիր Սամի թեյր, բոլշևիկների հետ ևս համաձայնեցնելով, Բաքվից Ամկարա լակոնիկ և խորհրդավոր հեռագիր է հղում: «ճանապարհները բաց են»: Այս ամենը մանրամասնորեն շարադրված է Կ. Պոլսում լույս տեսնող «Ժուռնալ դը Օրիհան» թերթում հոկտեմբերի 19-ին հրապարակված «ինչպես քեմալականները վճռեցին հարձակվել Դայաստանի վրա» հոդվածում: Դաշորդ օրն այդ հոդվածը արտատպել է «ճակատանարտը» (տե՛ս «ճակատանարտ», Կ. Պոլսի, 20 հոկտեմբերի, 1920, թիվ 584 (2405)): Այս հոդվածն արտատպել է նաև «Սշակը» նոյեմբերի 5-ի և 11-ի համարներում (Տե՛ս **Զոհրաբյան Է.**, 1920 թ. բուրգ-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 149):

<sup>476</sup> Տե՛ս **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 329:

էին քենալականներին: Ինչպես գրում է Նոյ Ժորդանիան, «...պարզ էր, որ այդ ժամանակ Մոսկվան գնել էր Թուրքիայի չեղոքությունը՝ Արդահանի և Արդինի շրջանները զիջելով: Դա հաստատվեց շուտով թիկունքից մեզ վրա թուրքական զորքերի հարձակմամբ...»<sup>477</sup>: Եվս մեկ անգամ ապացուցվեց մայիսի 7-ի ռուս-Վրացական պայմանագրի սնանկությունը:

Քենալ-բոլշևիկյան ճնշման մերքո փետրվարի 25-ին՝ Հայաստանի խորհրդայնացումից մոտ երեք ամիս անց, խորհրդայնացավնակ Վրաստանը:

1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով ողջ Կարսի մարզը, այդ թվում՝ Արդահանի և Օլթի գավառները, բոլշևիկների թերև ձեռքով ամրագրվեցին Թուրքիայի կազմում: Տարածքային հարցերում քենալականները Մոսկվայի խորհրդաժողովում վճռական համառություն ցուցաբերեցին: Այդ առիթով Չիչերինը հեռագրում է Մդիվանուն. «...Թուրքերը ծայրաստիճան համառություն են ցուցաբերում, իսկ մենք ոչ մի դեպքում զիջել չենք կարող: Այժմ առևտուր է գնում: Մենք տալիս ենք Կարսը, Արդահանը, բայց ոչ մի դեպքում չենք կարող հանձնել Բաթումը...»<sup>478</sup>: Պարզ է, որ զիջել չկարողանալը վերաբերում էր Բաթումին, իսկ Կարսն ու Արդահանը բոլշևիկները դյուրությամբ զիջեցին թուրքերին՝ պատճառաբանելով «Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքական դժվարություններով», սակայն իրականում ձգտում էին քենալականներին ետ պահել զուգահեռաբար ընթացող Լոնդոնի խորհրդաժողովում Անտանտի տերությունների գիրկը նետվելու գայթակղությունից:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում վերջին անգամ Արդահանի հարցը շոշափվել է 1945 թ. Պոտսդամի խորհրդաժողովում: Ի պատասխան Թուրքական կողմի ԽՍՀՄ-ի հետ դաշինք կնքելու առաջարկի՝ խորհրդային պատվիրակությունը որպես նախապայման պահանջում է վերադարձնել Հայաստանից և Վրաստա-

<sup>477</sup> **Жордания Н.**, Моя жизнь, стр. 115.

<sup>478</sup> **Քայլան Ս.**, Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1921 թվականներին, Երևան, 2005, էջ 125-126:

նից խլված տարածքները<sup>479</sup>: ԽՍՀՄ արտգործնախարար Վ. Մոլոտովը հայտարարում է, որ 1921 թ.-ին Թուրքերը, օգտվելով Խորհրդային պետության թուլությունից, պոկեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում<sup>480</sup>: Մոլոտովը Խորհրդային Հայաստանից և Վրաստանից խլված տարածքներ հանարում էր Կարսի, Արդահանի և Արդվինի շրջանները<sup>481</sup>: Սակայն Ստալինը Թուրքիայից պահանջվող տարածքների բաշխման սեփական պատկերացումն ուներ: Նա գտնում էր, որ Կարսի շրջանը պետք է մտնի Խորհրդային Հայաստանի կազմի մեջ, իսկ Արդահանի շրջանը՝ Վրաստանի: Ստալինը դա հիմնավորում էր նրանով, որ այդ շրջանները մինչև Առաջին աշխարհամարտը համապատասխանաբար Հայաստանի և Վրաստանի մաս են կազմել<sup>482</sup>: Պարզից էլ պարզ էր, որ Ստալինը խեղաթյուրում էր պատմական իրականությունը՝ Արդահանի, ինչպես նաև Արդվինի շրջանները Խորհրդային Վրաստանին միացնելու միտումով:

Երկու երկար ու ձիգ տարիներ հարևան երկրները վիճեցին Արդահանի համար, բայց այն բաժին հասավ Թուրքիային: Կարծում ենք, որ հայ և վրացի մերօրյա քաղաքագետները, վերլուծաբանները, դիվանագետները, պետական գործիչները և վերջապես իշխանության դեկին կանգնած մարդիկ կանեն անհրաժեշտ հետևություններ, լավ կաերտեն պատմության դառը դասերը և միջազգային ու տարածաշրջանային քաղաքականության համատեքստում ճիշտ կկողմնորոշվեն երկողմ հարաբերություններում:

<sup>479</sup> См. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941-1945гг., т. VI, Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав-СССР, США и Великобритании (17 июля- 2 августа 1945г.), сборник документов, Москва, 1984, стр. 135.

<sup>480</sup> См. там же, стр. 37.

<sup>481</sup> Տե՛ս Կօրխմազյան Բ., Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав-СССР, США и Великобритании, «Սերձավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովրդներ», Երևան, 1996, թիվ 16, էջ 26:

<sup>482</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 27:

\*  
\* \*

Ծովային ելքի իրավունքը պետությունների անքակտելի իրավունքներից մեկն է և անվերապահորեն ճանաչվում է միջազգային իանրության կողմից: Ուստի այսօրվա քաղաքակիրթ աշխարհում ծովեզերք չունեցող պետությունների իրավունքների պաշտպանությունը գտնվում է ժամանակակից միջազգային իրավունքի ուշադրության կենտրոնում: Այս առումով շատ մեծ է միջազգային ծովային իրավունքի նշանակությունը բոլոր պետությունների, այդ թվում՝ նաև ծովեզերք չունեցող, ներմայրցանաքային պետությունների համար, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը: Ծովեզերք չունեցող պետություններն ունեն դեպի ծով մուտքի իրավունք, այդ թվում՝ իրավունք, որպեսզի իրենց դրոշի ներքո նավերը նավարկեն ծովում<sup>483</sup>: Ծովեզերք չունեցող պետությունների իրավունքները հստակորեն ամրագրված են «Ծովային իրավունքի» ՍԱԿ-ի կոնվենցիայում<sup>484</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, ծովային ելքը նախևառաջ անիրաժեշտ է բեռնափոխադրումների և առևտրի համար, հետևաբար միջազգային իրավունքն անդրադարձ է կատարել նաև այս խնդրին: 1965 թ. հուլիսի 8-ին Նյու Յորքում ընդունվել է «Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» կոնվենցիան, որտեղ մանրամասնորեն շարադրված են ծովային պետությունների նավահանգիստները հավասար պայմաններով օգտագործելու, տարանցիկ բեռնափոխադրումների և խնդրի հետ առնչվող բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ ծով չունեցող պետությունների իրավունքները<sup>485</sup>:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է Վերոնշյալ կոնվենցիաներին: Ներկայումս ՀՀ Ազգային ժողովում քննարկվում է 1948 թ. ընդունված «Միջազգային ծովային կազմա-

<sup>483</sup>Տե՛ս **Քոչարյան Վ.**, Միջազգային իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002, էջ 309:

<sup>484</sup> Սամրամասն տե՛ս [http://www.un.am/res/UN%20Treaties/XII\\_1.pdf](http://www.un.am/res/UN%20Treaties/XII_1.pdf)

<sup>485</sup> Սամրամասն տե՛ս [http://www.translation-centre.am/pdf/Translat/EU\\_Other/UN\\_Transit\\_Trade/UN\\_CTTLS\\_am.pdf](http://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Other/UN_Transit_Trade/UN_CTTLS_am.pdf)

կերպության մասին» կոնվենցիային միանալու հարցը, որը 2016 թ.  
հոկտեմբերին դրական եզրակացության է արժանացել ՀՀ ԱԺ ար-  
տաքին հարաբերությունների հանձնաժողովում: Սույն կոնվենցիա-  
յով նախատեսվում է դյուրացնել միջազգային առևտորում ներգրավ-  
ված նավափոխադրումների վրա ազդող կառավարությունների  
խտրական գործողությունների և անհարկի սահմանափակումների  
վերացումը՝ խթանելով նավափոխադրման ծառայությունների մատ-  
չելիությունը համաշխարհային առևտորում:

Ելնելով սրանից, ևս մեկ անգամ փաստենք, որ Թուրքիան,  
շրջափակման ենթարկելով Հայաստանը, կոպտորեն խախտում է  
նաև Հայաստանի ծովային ելքի իրավունքը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ եղան 1918 թ. հունիսի 4-ի Բարումի պայմանագրի հետևանքների վերացման և հայկական պատմական հողերի հաշվին Հայաստանի տարածքների ընդարձակման գործին: Հայաստանի կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկն էլ ծովային ելքի ձեռքբերումն էր: Սակայն, սահմանների ընդլայնման և ծովային ելքի ձեռքբերման համար պայքարում Հայաստանը բախվում է որոշ շահագրգիռ պետությունների անհամաձայնությանը: Դրանց մեջ իրենց կարևորությամբ առանձնանում են հայ-վրացական տարակարծությունները:

Այս խնդիրների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները:

1. Ծովային ելքի հարցը Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքական գերակայություններից մեկն էր: Խնդրի լուծման համար իրական հնարավորություն էր ընձեռում Փարիզի վեհաժողովը: Հետևաբար թե՛ կառավարությունը, թե՛ Փարիզում գործող հայկական զույգ պատվիրակությունները ջանք ու եռանդ չեն խնայում այդ հույժ կարևոր հարցի լուծման գործում:

2. Սկզբնապես հայ պատվիրակները ծովային ելք էին պահանջում և Միջերկրական և Սև ծովերով՝ հիմնավորելով, որ միայն Սև ծով ելքի պարագայում Հայաստանը հնարավորություն չի ունենա սերտ հարաբերություններ հաստատելու Արևմուտքի հետ և առաջվա պես կմնա Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազգեցության տակ: Ուստի Հայաստանը պահանջում էր Կիլիկիան՝ որպես Միջերկրականի ափը դուրս գալու հնարավորություն: Սակայն Կիլիկիայի նկատմամբ Անտանտի տերությունների կողմից ճանաչված ֆրանսիական հավակնությունները հայ պատվիրակներին ստիպեցին հրաժարվել Կիլիկիայի նկատմամբ պահանջից:

